ԱԿԱԴ. Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՅԵՐԿՐՈՐԴԸ
ՅԵՎ
Հ Ռ Ո Մ Ը

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ

ИНСТИТУТ ИСТОРИИ И АРХЕОЛОГИИ

АКАД. Я. А. МАНАНДЯН

ТИГРАН ВТОРОЙ И РИМ

В НОВОМ ОСВЕЩЕНИИ ПО ПЕРВОИСТОЧНИКАМ

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАН-А

ЕРЕВАН 1940

31 AUG 2007

ԽՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(47.925)

ԱԿԱԴ. ՀԱԿՈԲ ՄԱՆԱՆԴՅԱՆ

ՏԻԳՐԱՆ Բ. ՅԵՎ ՀՌՈՄԸ

ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ ԸՍՏ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

ԱՐՄՖԱՆ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1940

24.06.2013

Տպագրվում է ՀՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի
Հայկական Ֆիլիալի նախագահության վորոշմամբ.

Գիտ. քարտուղար՝ ՀՐ. ԲԱՏԻԿՅԱՆ

984
40

1 SEP 2011

Իր սիրելի քրոջ

ԱՍՏՂԻԿ ՀԱՄԱԶԱՍՊԻ ՄԱՆԱՆԴՅԱՆԻՆ

եղբայրական ջերմ զգացմունքով
նվիրում է հեղինակը

1. ԱՌԱՋԱԲԱՆ

Հին Հայաստանի պատմությունը Տիգրան Յերկրորդի շրջանում ուսումնասիրված է սեղմ ու միջանկյալ կերպով, գլխավորապես, յեվրոպական գիտնականների այն յերկերում, վորոնց մեջ քննության է առնված վոչ թե հատկապես Հայաստանի, այլ հռոմեական հանրապետության և կամ պոնտական թագավորության պատմությունը։ Պատմագիտական այդ աշխատություններից ամենից կարևորներն են—գերմանական, ֆրանսական և իտալական յերեք խոշորագույն գիտնականների՝ Մոմզենի, Ռեյնաքի և Ֆեռեռոյի՝ համապատասխան յերկերը[1]*։ Բացի այդ, Լուկուլլոսի հայկական արշավանքները մանրամասն ուսումնասիրված են նաև Լեման-Հաուպտի աշակերտ Կուրտ Եքհարդի ընդարձակ աշխատության մեջ, վորը տպագրված է գերմանական «Կլիո» հայտնի հանդեսում (հատ.* IX, *1909 թ. և հատ.* X, *1910 թ.)*[2]*։*

Պատմական և բանասիրական գրեթե բոլոր հայկական յերկերում, ինչպես և Հին Հայաստանի պատմությանը նվիրված Դոլենս-Խաչի, Տուրնեբիզի, Գևորգ Ասլանի, Մորգանի և Խալաթյանցի ֆրանսերեն ու ռուսերեն աշխատություններում, Տիգրան Բ-ի պատմությունը քաղված է համարյա անփոփոխ, մեծ մասամբ, կամ Մոմզենի և կամ Ռեյնաքի վերոհիշյալ յերկերից։ Բացառություն են կազմում Չամչյանը և դոկտ. Ասատուրյանը, վորոնք ոգտվել են նաև հունական ու լատինական հին աղբյուրներից և ցույց են տվել տեղ տեղ նրանց թերությունները։

Ինչպես շատ ճիշտ դիտել և շեշտել են իրենք յեվրոպական գիտնականները, հիմնական սկզբնաղբյուրները, վորոնք գրված

---

1 Моммсен, Римская история, т. II—III, Москва 1887, Th. Reinach, Mithridate Eupator, roi de Pont, Paris 1890, Г. Ферреро, Величие и падение Рима, т. I, Москва 1895.

2 *Գերմաներեն այս աշխատությունը լույս է տեսել նաև հայերեն թարգմանությամբ՝ «Կուրտ Էքհարդ, Տիգրան Բ. և հայ-լուկուլլեան պատերազմները։ Աշխատասիրեց Հ. Գ. Վ. Գարանֆիլյան, Վիեննա 1926, Ազգային մատենադ. ՃԺԳ»։*

են Տիգրան-Միհրդատի ժամանակաշրջանից մեկ կամ մի քանի դար հետո, մեծ մասամբ, անվստահելի յեն և կասկածելի, վորովհետև նրանք պատմական անցքերը նկարագրել են կողմնապահությամբ և հռոմայեցիների ոգով։ Հայտնի յե արդեն, թե ինչպիսի մեծ վարպետությամբ Հռոմը կարողացել եր ստեղծել իրեն սպասարկող ներբողական պատմագրություն, վորը լռության եր մատնում հակառակ պատմական ճշմարտության Հռոմի համար աննպաստ փաստերը[1]։ Հռոմեական պատմագետների անարժանահավատ լինելն ընդգծել ե դեռ առաջին դարում (մեր թվ. հ.) հռչակավոր հին մատենագիր Հովսեփոս Փլավիոսը։ Սա հրեական պատերազմի իր պատմության առաջաբանում առանձնապես մատնանշել ե, վոր մինչևիսկ ականատես հռոմեական հեղինակները մեծ չափով աղավաղել են փաստերի իսկությունը և, խեղաթյուրելով պատմական ճշմարտությունը, կամ ներբողներ են գրել ի հաճույս Հռոմի և կամ չարախոսություններ սրա թշնամիների մասին։

Պետք ե ասել, վոր հակառակ կողմը ևս, նաև Հայաստանն ու Պոնտոսը, ունեցել են այս ժամանակաշրջանում իրենց ուրույն պատմագրությունը։ Հին աղբյուրների մեջ հիշատակված ե, որինակ, հռոմեատյաց (Misoromaeus) Մետրոդորոս Սկեպսացու ընդարձակ պատմությունը Տիգրան Յերկրորդի մասին, վորը համարվել ե փայլուն ու տաղանդավոր աշխատություն։ Հիշատակված են նույնպես պատմական կարևոր յերկերը Հերակլիդեսի, Տեվկրոսի, Ապոլլոնիդեսի, Դիոփանտեսի և ուրիշ շատ շատերի, վորոնք յեղել են Միհրդատին կուսակից հեղինակներ։ Սակայն Հայաստանի ու Պոնտոսի պարտությունից և հելլենիստական կուլտուրայի քայքայումից հետո այս յերկրներում՝ պահպանվել են, բնականաբար, գլխավորապես, այն յերկերը, վորոնք հաճելի եյին հաղթական Հռոմին։ Տիգրան-Միհրդատյան դարաշրջանի պատմությունը կարող եր, իհարկե, շատ կետերում բոլորովին այլ լուսաբանություն ստանալ, յեթե պահպանված լինեյին նաև վերոհիշյալ հակառակ կուսակցության գրվածքները։

Չնայած բուն հռոմեական աղբյուրների վերև մատնանշված թերություններին, վոր քննության են առնված ու ընդգծված նաև իրենց յեվրոպական պատմագետների ու բանասերների գրվածքներում՝ այդ աղբյուրները, այնուամենայնիվ, միակ ու գլխավոր հիմքն են կազմել Մոմզենի, Ռեյնաքի ու մյուս պատմա-

[1] Տես Cicero, De imperio Cn. Pomp. IX, 25։

գետների ուսումնասիրություններին։ Սրանք անվերապահ կերպով ոգտվել են մինչև իսկ Պլուտարքոսի կենսագրությունների կասկածելի ու անվստահելի վկայություններից, վորոնց մեջ, ինչպես կտեսնենք, չարամտորեն տրված են Տիգրան Բ-ի ու նրա պետության ֆեոդալական կազմակերպության այլանդակ ծաղրանկարները։ Յեվրոպական պատմագետները բավարարաչափ ուշադրություն չեն առել, դժբախտաբար, վոր Պլուտարքոսի և հռոմեական մյուս հեղինակների ստահոդ տեղեկությունները հերքվում են հաճախ փոքրասիական-հելլենիստական չեզոք աղբյուրներում պահպանված վկայությունների ոգնությամբ, վորոնք պարզ կերպով ցույց են տալիս այդ տեղեկությունների անհավաստիությունը։

Մեր այս յեզրակացություններն ու դիտողությունները հարկադրելու եյին մեզ, բնականաբար, նոր քննության ու վերագնահատման յենթարկելու բոլոր կարևորագույն սկզբնաղբյուրները։ Ինչպես մեր այս ուսումնասիրության ընթացքում կտեսնենք, ոգտագործելով այդ աղբյուրները քննադատորեն ու մեծ զգուշավորությամբ՝ Տիգրան Բ-ի ու նրա դարաշրջանի պատմությունը միանգամայն հնարավոր ե պարզել ու լուսաբանել ավելի ճշգրիտ ու ավելի հիմնավոր կերպով, քան այդ արված ե նախկին աշխատություններում։

Յեվրոպական պատմագետների վերոհիշյալ յերկերում Միհրդատ-Տիգրանյան շրջանի պատմության լուսաբանությունն ունի նաև մի ուրիշ մեծ թերություն։

Այս պատմագետները, բացի այն, վոր իրենց լուսաբանության հիմք են ընդունել հռոմեական աղբյուրների միտումնավոր ու գունավորված վկայությունները, իրենք ևս դեպի Արևելքն ու արևելյան ժողովուրդներն ունեցել են աչառու ու անբարյացակամ վերաբերմունք։ Նրանց համակրանքը վոչ թե Միհրդատի կամ Տիգրանի, այլ պարզ կերպով Հռոմի ու նրա զորավարների կողմն ե, վորոնց նրանք աշխատել են հերոսացնել ու իդեալականացնել։

Իտալական գիտնական Ֆեռերոն, որինակ, վորը խոշոր պատմաբանի հռչակ ունի՝ Լուկուլլոս զորավարին, վորն ավերողն ու գերեզմանափորը յեղավ Պոնտոսի հելլենիստական փարթամ կուլտուրայի և շքեղ ու հոյակապ հելլենական քաղաքների՝ անվանում ե հելլենիզմի պաշտպան ու յերկրպագու։ «Ամեն տեղ,— ասում ե Ֆեռերոն,—Լուկուլլոսը կողոպտում եր մեծամեծ հարստու-

թյունները և կատարում եր հրճվանքով հելլենիզմի մեծ հովանավորի իր դերը»[1]: Մոմզենը և Ռեյնաքը վոչ միայն ուշադրության չեն առել Տիգրան Բ-ի կուլտուրական ու բարենորոգչական ձեռնարկումները հետամնաց Հայաստանում, այլ նրանք մինչևիսկ Տիգրանակերտ քաղաքի հիմնումը, վորը կենտրոն ու նեցուկ եր լինելու Հայաստանի հելլենականացման ու քաղաքակրթման՝ վերագրում են բռնակալ Տիգրանի զոռող ու քմահաճ կամակորության: Մոմզենի պատմության մեջ առանձնապես նկատելի յե, բացի այդ, նրա շեշտված հակակրանքը դեպի Արևելքն ու Ասիացիները: Նա մատնանշում ե, որինակ, վոր Արևելքում ամեն մի հպատակ «հավատարիմ ե ու կեղծ, ինչպես շունը»[2]: Նրա կարծիքով՝ «Ասիացիների հատկությունն ե նրանց պատրաստակամությունը ստանձնելու դահճի դեր ի հաճույս սուլթանի»[3]: Ուշադրավ ե հենց այն, վոր Մոմզենը Միհրդատին ու Տիգրանին, վորոնք հելլենիստական տիպի առաջադեմ միապետներ եյին՝ հնարավոր ե համարում անվանել սուլթաններ:

Հռոմի իդեալականացումը և, ընդհակառակը, Արևելքի ստորացումը, վոր վորոշակի նշմարելի յեն յեվրոպական պատմագետների վերոհիշյալ յերկերում՝ հակադիտական ակնբախ մի տենդենց են, վոր չեյին կարող, իհարկե, նրանց կույր ծառայել Տիգրան-Միհրդատյան դարաշրջանի ճշգրիտ գնահատման:

Կտրականապես պետք ե մերժել յեվրոպական պատմագիտության մեջ գերիշխող նաև այն կարծիքը, վոր իբր թե՝ ինչպես վերջին շրջանի պոնտական-հռոմեական, նույնպես և հայկական-հռոմեական կռիվները, կարելի յե բնորոշել իբրև բարբարոս ու միացյալ Արևելքի ընդվզում ընդդեմ քաղաքակրթված Արևմուտքի: Մոմզենը պարզ կերպով շեշտում ե, վոր այդ կռիվները սկիզբն եյին Ասիացիների ազգային ռեակցիայի ու ապստամբության ընդդեմ հռոմայեցիների և արևմտյան ժողովրդների[4]: Նմանապես և Ռեյնաքը մատնանշում ե, վոր այդ կռիվները վերակենդանացումն եյին «Ասիայի ու Յեվրոպայի հակամարտության»[5]:

Սակայն, իրապես, այդ կռիվները, վոր սկսել եյին հանրապետական Հռոմի զորավարներն արևելյան յերկրների ավազակա-

1 Տես „Величие и падение Рима", т. I, Москва 1915, եջ 184:

2 Տես „Римская история", т. II, Москва 1887, եջ 271:

3 Տես նույնը, եջ 290:

4 Տես նույնը, եջ 273:

5 Տես Mithridate Eupator, եջ XI:

յին կողոպտման ու ֆինանսական շահագործման նպատակով՝ մղվում եյին վոչ թե բարբարոս միացյալ Արևելքի, այլ յերկու կիրթ ու առաջադեմ միապետների դեմ, վորոնք թե իրենց յերկրներում և թե ամբողջ Մերձավոր Արևելքում աշխատում եյին զարկ տալ հելլենիստական քաղաքային կենցաղի ու կուլտուրայի և առևտրի ու արդյունաբերության նոր բարգավաճման ու բուռն զարգացման:

Այս տեսակետից միանգամայն ճիշտ պետք ե համարել ֆրանսական գիտնական Մորգանի հետևյալ դիտողությունը: «Ջախջախելով Միհրդատին և Տիգրանին,—ասում ե Մորգանը,—հռոմայեցիները վերջ եյին դնում մակեդոնական կուլտուրային Ասիայում, ուր բոլոր այն պետություններից, վորոնք ստեղծվել եյին Ալեքսանդրի նվաճումներից հետո, մնացել եյին միմիայն փլատակներ ու միմիայն թագավորիկներ, վորոնք անկարող եյին զորավիգ լինել հելլենական փառքին: Պոնտոսի և Հայաստանի յերկու մեծ թագավորները վերջիններն եյին, վորոնք կըկարողանային վերանորոգել իրենց պետություններում Հելլադայի գեղեցիկ քաղաքակրթությունը»[1]:

Առաջավոր Ասիայի հետագա կուլտուրական հետադիմության համար ամենամեծ պատասխանատվությունն ընկնում ե պարզապես Հռոմի վրա: Սա վոչ միայն կողոպտել ու ավերել եր Արևելքը ռազմական արշավանքների, այլև ֆինանսական ու վաշխառուական շահագործման միջոցով: Արևելքից գրեթե անընդհատ Իտալիա ու Հռոմ եյին ուղարկվում իբրև ավար ու շահույթ յերկրի հարստությունները և իբրև ստրուկ՝ աշխատանքային վորակյալ ուժերը: Դժվար չե հետևաբար յենթադրել, վոր ատելության ու հակամարտության այն մեծ վիհը, վոր հաջորդ դարերում գոյություն ուներ իրանական Արևելքի և հռոմեական Արևմուտքի միջև՝ մեծապես խորացրել եր հենց ինքը Հռոմը Տիգրան-Միհրդատյան շրջանում:

Մեր այս ընդհանուր առաջաբանի վերջում անհրաժեշտ ե նաև մատնացույց անել, վոր Տիգրան Բ-ի պատմությունը, վորը Մոմզենի, Ռեյնաքի և Ֆեռեռոյի վերոհիշյալ յերկերում քննարկված ե իբրև մի միջադեպ ու հավելուկ Հռոմի կամ Պոնտոսի պատմության՝ սույն մենագրության մեջ առաջին անգամ ուսում-

1 Տես J. de Morgan, Histoire du peuple arménien, Paris 1919, եջ 80:

նասիրված է Հայաստանի պատմության շրջանակի մեջ, որը բավականաչափ ծանոթ չէ յեղել ոտար պատմագետներին։

Նոր է մեր ուսումնասիրության մեջ, բացի սկզբնաղբյուրների վկայությունների քննական ու համեմատական լուսաբանումներից, նաև այն, որ մեզ հաջողվել է, շնորհիվ պատմականաշխարհագրական նախորդ մեր աշխատությունների՝ ճշտել այժմ Լուկուլլոսի ու Պոմպեյոսի արշավանքների ճանապարհները և լուսաբանել տեղագրական այն վիճելի ու մութ խնդիրները, վորոնք դեռ մինչև այժմ պարզված չեն աղբյուրների բացակայության պատճառով։ Հին այդ ռազմուղիների պարզորոշ բացատրության համար այս աշխատությանը կցված են մանրամասն ու հատուկ քարտեզներ։

2. ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԻԳՐԱՆ Բ-ԻՑ ԱՌԱՋ

Առաջավոր Ասիայի պատմության համար Ալեքսանդր Մակեդոնացու և Սելևկյանների տիրապետությունը սկիզբն յեղավ վոչ միայն նրա տնտեսական զարգացման ու արագ վերելքի, այլ մասամբ նաև նրա սոցիալական կերպափոխման։

Մակեդոնական տիրապետությունն արտակարգ մի շրջան դարավ այստեղ առևտրի, արհեստների ու արդյունագործության բուռն բարգավաճման, բազմաթիվ հունական գաղութների ու քաղաքների հիմնարկման և հելլենիստական քաղաքային կուլտուրայի առաջացման, վորով միանգամայն նոր ընթացք տրվեց Մերձավոր Արևելքի հետագա զարգացման։

Հելլենական Արևմուտքը, նվաճելով 334—330 թվերին (մեր թվ. առաջ) ամբողջ Մերձավոր Արևելքը և հիմնելով այստեղ աշխարհակալ մի մեծ պետություն, վորը տարածվում եր մինչև Հնդկական ովկիանոսը և Իրանի հյուսիս-արևելյան շրջանները, հարուստ այս յերկիրը դարձրել եր հելլենական գաղթավայր և իրեն նպատակ եր դրել, կերպարանափոխելով Արևելքը հելլենիստական ինքնավար քաղաքների ու գաղութների միջոցով՝ միաձուլել նրան իր հետ։ Ալեքսանդր Մակեդոնացուց և նրա հաջորդներից հետո Արևելքի հելլենականացման նույն քաղաքականությունը վարեցին նաև Սելևկյանները, մանավանդ, իրենց տիրապետության առաջին շրջանում։

Սակայն հելլենականացման այդ քաղաքականությունը, ինչպես և լայնատարած Արևելքի տևական միացումը, չափազանց դըժվար ձեռնարկություններ եյին, վոր վեր եյին իշխող հելլեններ համեմատաբար անհամաչափ ու փոքր ուժերից։

Արդեն Սելևկյան ամենահզոր թագավորների ժամանակ սկսվեց հետզհետե նրանց մեծ ու աշխարհակալ պետության անդամատումը և քայքայումը։ Մոտավորապես 305 թվին Սելևկյանները կորցրին նախ և առաջ իրենց հնդկական գավառները

Այնուհետև մոտ 255 թվին Սելևկյան թագավորությունից անջատվեցին Բակտրիան և Սոգդիանեն։ Նույն այդ ժամանակներում կարողացան պահպանել իրենց անկախությունը կամ ինքնուրույնությունը Կապպադովկիան, Պոնտոսը, Հայաստանը և Ատրպատականը։ Այնուհետև յերրորդ ու յերկրորդ դարերում (մեր թվ. առաջ) Սելևկյանների դեմ հանդես յեկան նրանց նոր ախոյանները՝ Պարթև Արշակունիները և Հռոմը։ Այս յերկու հզոր պետությունները ժառանգելու եյին հետզհետե նրանց ամբողջ թագավորությունը։

Պարթևական թագավորության հիմնադիրն է համարվում Արշակ Ա-ը, ծագումով պարթեններին ազգակից Ապարն կամ Պարն թափառական ցեղից։ Մոտավորապես 250 թվին (մեր թվ. առաջ) սա ապստամբել եր իր ցեղակիցների հետ Սելևկյանների դեմ և սպանել եր նրանց սատրապին։ Արշակ Ա-ից հետո՝ նրա յեղբայրը և հաջորդը, Տրդատը կամ Արշակ Բ-ը, հաղթելով Սելևկոս Բ. Կալլինիկոսին (248—210 թ.)՝ վերջնականապես հաստատվեց Պարթևստանում և նվաճեց շուտով նաև հարևան Վրկանը, վորի կենտրոնն եր Զադրակարտա քաղաքը՝ այժմյան Աստրաբադը։

Պարթևական թագավորությունը, վոր կազմվեց Սելևկյան մեծ պետության հյուսիս-արևելյան սահմանում՝ սկզբում, ինչպես տեսնում ենք, մեծ չեր։ Նրա աշխարհակալական ընդարձակումը, վորով վերջ դրվեց Սելևկյանների իշխանության ու հելլենիզմի տարածմանն իրանական արևելքում՝ սկսվեց Միհրդատ Ա-ի ժամանակ (171—138 մեր թվ. ա.)։ Սա ազատվեց Սելևկյանների ներքին յերկպառակություններից և նվաճեց նրանց արևելյան յերկրները՝ հնդկական Կովկասից մինչև Յեփրատ գետը և Կապպադովկիայի սահմանները[1]։ Արևմտյան հելլենիզմը հարկադրված յեղավ այսպիսով քաղաքական ու կուլտուրական իր դիրքերը զիջելու արևելյան իրանիզմին, և այնուհետև Սելևկյանների իշխանության տակ առժամանակապես մնացին միայն հյուսիսային Ասորիքը և Կիլիկիան։

Հենց նույն այս յերկրորդ դարում, յերբ պարթևները տեր եյին դառնում Սելևկյանների արևելյան յերկրներին՝ արևմուտքում ևս հելլենական մանր պետությունների և Սելևկյան թագավորության դեմ հանդես յեկավ Հռոմը։

[1] Տես Justini M. Juniani, Epitoma historiarum Philippicarum Pompei Trogi, XL1, 5, 8:

Նրա ծավալումը Միջերկրական ծովի արևելյան յերկրներում սկսվել եր արդեն փունիկյան յերկրորդ պատերազմից հետո (218—201 թ.)։ Անտիոքոս Մեծի Մագնեսիայի մոտ կրած վճռական ու ծանր պարտությունը 190 թվին հռոմայեցիներին հնարավորություն տվեց ամրացնելու իրենց ազդեցությունը Փոքր Ասիայի մանր պետությունների վրա։ Ինչպես Հունաստանում, նույնպես և այստեղ՝ Հռոմը հրապարակ յեկավ սկզբում՝ իբրև ազատարար ու հովանավոր մանր պետությունների ու ճնշված ժողովրդների։ Սակայն, իրապես, նրա քաղաքականության նպատակն եր դրդել ու թշնամացնել իրար դեմ բարեկամ այդ պետությունները և, ուժասպառ անելով բոլորին՝ հաստատել ամենուրեք իր տիրապետությունը։

Դառնալով տեր ու տնորեն Հունաստանի ու Մակեդոնիայի՝ նա շուտով պատռեց անշահասեր ազատարարի իր կեղծ դիմակը և 133 թվին վոտք դրեց Փոքր Ասիա վորպես նվաճող և հաստատեց իր իշխանությունը Պերգամոնում։ Հռոմեական նենգ ու ճարպիկ դիվանագիտության յեռանդուն գործունեությանը պետք է վերագրել, հավանորեն, Պերգամոնի թագավոր Ատտալոս Գ-ի կտակը, վորի համաձայն նա իր թագավորությունն ու ամբողջ հարստությունը թողեց իբրև ժառանգություն Հռոմին։ Պերգամոնը դառավ այնուհետև հռոմեական նահանգ և անվանվում եր «պրովինցիա Ասիա»։

Իմպերիալիստական Հռոմի այս մուտքն Ասիա, ինչպես կը տեսնենք, սկիզբն եր այն մեծ ավերածության ու աղետի, վորն իր հետևանքներով ահավոր ու կործանարար յեղավ հելլենիստական Արևելքի տնտեսական ու կուլտուրական հետագա զարգացման համար։ Հելլենական աշխարհակալները ևս նվաճել եյին Արևելքը շահագործման նպատակով, սակայն նրանք, ինչպես ասացինք, հիմնելով այստեղ հարյուրավոր քաղաքներ ու գաղութներ և ստեղծելով բարենպաստ պայմաններ առևտրի, արհեստների և արդյունագործության աճման ու զարգացման համար՝ մեծապես նպաստել եյին նրա առաջադիմությանը։ Մինչդեռ հռոմեական հանրապետության տիրապետությունն առաջին դարում (մեր թվ. առաջ) աղետալի մի դարաշրջան եր արևելյան յերկրների տնտեսական ու կուլտուրական հետադիմության՝ անհաշիվ հարստությունների և անթիվ ստրուկների փոխադրման Արևելքից Արևմուտք և, ընդհանրապես, տեղական հելլենիստական պետությունների ու քաղաքների կողոպտման ու կործանման։

Հարկավոր է նաև մատնանշել, որ Ասիայի կողոպտիչներն ու ավերիչներն եյին վոչ միայն հռոմեական հանրապետության հաչակավոր զորավարները, պաշտոնյաները և կապալառուները, վոր ուղարկվում եյին Արևելք, այլ և նրա անվանի ու առաջադեմ համարվող քաղաքական գործիչները: Ժողովրդական տրիբուն Կայոս Գրաքխոսի առաջարկությամբ 123—122 թվերին հրատարակվել եյին մի շարք օրենքներ, վորոնք՝ թեև, մեծ մասամբ, անմիջական կապ չունեյին Արևելքի հետ՝ սակայն մեծապես սաստկացրել եյին պրովինցիա Ասիայի անողոք շահագործումը: Հենց նրա հայտնի հացահատիկային օրենքը (lex frumentaria), վորի համաձայն հռոմեական քաղաքացիները ստանում եյին մայրաքաղաքում եժան հաց՝ հարկադրել եր նրան գանձել պրովինցիա Ասիայից ուղղակի ու անուղղակի նոր ու ծանր հարկեր: Բացի այդ, նա հատուկ օրենքով կարգադրել եր, վոր հարկահավաքումն Ասիայում տրվի կապալով հեծվոր դասին: Նա այդ արել եր պարզապես այն դիտավորությամբ, վորպեսզի ապահովե դրամատեր հարուստ այս դասի համագործակցությունն ընդդեմ ազնվականության: Բացի հարկահավաքումից Սեմպրոնիուսի 123 թվի օրենքով (lex Sempronia judicaria) հեծվոր դասին եր հանձնվել նաև դատական իշխանությունը քրեական գործերում:

Միանգամայն հասկանալի յե, իհարկե, վոր վերոհիշյալ օրենքների շնորհիվ պրովինցիա Ասիան հյուծվելու ու արնաքամ եր լինելու տնտեսապես հռոմեական կապալառուների ու վաշխառուների քմահաճ կամայականությունների ցանցում: Ասիական նահանգի ու հռոմայեցիների դաշնակից փոքրասիական պետությունների ծանր դրությունն անկեղծորեն մատնանշված է Լիվիուսի պատմության մեջ: Նրա ասելով՝ այնտեղ ուր մուտք եյին գործում հռոմեական կապալառուները՝ անզոր եր դառնում հանրային իրավունքը և վերանում եյին դաշնակիցների ազատությունները[2]:

Հռոմից ու Իտալիայից յեկած խոշոր ու մանր վաշխառուները և հռոմեական բանկերի գործակալները դաժանորեն շահագործում եյին վոչ միայն պրովինցիա Ասիան, այլև կեղեքում եյին նաև Փոքր Ասիայի մանր պետությունները՝ Բիթանիան, Գալատիան և Կապադովկիան: Հռոմի այս դաշնակիցները ևս վաղ թե ուշ,

1 Համեմ. V i c t o r C h a p o t, La province romaine proconsulaire d'Asic, Paris 1904, եջ 41—49:

2 Տես XLV, 18:

կորցնելով իրենց խարխուլ անկախությունը՝ զոհ եյին դառնալու հռոմեական գիշատիչ իմպերիալիզմին:

Թե վորքան ծանր եր հռոմեական տիրապետությունն Ասիայում՝ այդ ցայտուն ու պատկերավոր կերպով մատնանշել է գերմանական պատմագետ Թ. Մոմզենը:

«Կայոս Գրաքխոսի վերոհիշյալ օրենքների գործադրումից հետո,—ասում է Մոմզենը,—հռոմեական առանց այն ել ծանր տիրապետությունը վերածվեց [Արևելքում] այնպիսի անտանելի մի ճնշման, վոր վոչ արքայական թագը և վոչ ել շինականի խրճիթն ապահով չեյին գրավումից. ամեն մի հասկ աճում եր այնտեղ հարկահավաքների համար և ամեն մի յերեխա ծնվում եր, հավանորեն, իբրև զոհ ստրկավաճառների համար: …Յեվ յեթե այդ խաղաղ յերկրներում և այնտեղ ապրող փափկակյաց ժողովրդների մեջ յերևան գար մի մարդ, վորն ընդունակ լիներ ազդանշան տալու ընդհանուր ապստամբության՝ կարելի յեր սպասել, վոր այնտեղ տեղի կունենան զարմանալի ու զարհուրելի անցքեր»[1]:

Շուտով, իրապես, ինչպես կտեսնենք, բռնկվեց նախ Փոքր Ասիայում և ապա նաև Հունաստանում մեծ ապստամբություն, վորը հետզհետե փոխարկվեց սոցիալական հեղափոխության: Հրահրողը պատմական այդ ցնցող դեպքերի Միհրդատ Պոնտացին եր՝ հռոմայեցիների հզոր ու անհաշտ ախոյանը:

Պոնտական թագավորությունը, վորը գլխավոր մասնակիցն եր այդ մեծ անցքերի, գտնվում եր Սև ծովի հարավային կողմում՝ Բիթանիայի, Գալատիայի, Կապադովկիայի և Փոքր Հայքի միջև: Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ այս յերկիրը, վորի մեջ ապրում եյին սեմական, արիական և բնիկ փոքրասիական ցեղեր՝ մեծ չափով յենթարկվել եր իրանական կենցաղի ու կուլտուրայի ազդեցության: Նրա ծովափնյա շրջաններում՝ Սինոպում, Ամիսոսում, Տրապիզոնում և մյուս քաղաքներում հաստատվել եյին դեռ Աքեմենյանների աշխարհակալ տիրապետությունից առաջ հունական գաղութներ, վորոնք զորեղ նեցուկներ եյին հելլենական քաղաքակրթության ու լեզվի տարածման: Պարսկական ազնվականությունը, վորը գրավել եր այստեղ հողեր ու կալվածներ, կազմում եր զգալի մասը իշխող դասի: Պարսկական ազնվական ամենաբարձր տոհմից եր նաև Մի-

1 Տես „Римская история", т. II, перевод Н е в е д о м с к о г о, Москва 1887, եջ 269:

հրդատ Ա-ը (302—266 մեր թվ. առ.), որը հիմնադիր է համարվում Պոնտական թագավորության:

Նոր հիմնված այս թագավորությունը, որ բավական ընդարձակվել էր Միհրդատ Ա-ի հաջորդների ժամանակ՝ իր հզորության ու փառքի գագաթնակետին հասավ առաջին դարի սկզբներում (մեր թվ. առաջ) Միհրդատ Եվպատորի թագավորության ընթացքում (111—63 թ.), որին անվանում են նաև Մեծ: Պոնտոսի այս հզոր թագավորը կարճ ժամանակում նվաճել էր հին Կողքիսը՝ մինչև Դիոսկուրիա և մինչև այժմյան Սուխումը, նաև այժմյան հարավային Ռուսաստանում՝ Տավրիկյան Խերսոնեսը ու նրա հարևան սկյութական յերկրները, և Պոնտոսի հարավ-արևելքում՝ Փոքր Հայքը, որը նվաճումից առաջ առանձին թագավորություն էր: Այս մեծ նվաճումներից հետո Պոնտոսը մեծագույն պետությունն էր դառել Փոքր Ասիայում և ամենահզոր հակառակորդը իմպերիալիստական Հռոմի:

Պոնտոսի և Փոքր Հայքի հարավում գտնվում էր Կապպադովկիան, որը սահմանակից էր հայկական հին Ծոփքին և տարածվում էր հարավում մինչև Կիլիկիա, արևմուտքում՝ մինչև Լիկաոնիա և հյուսիս-արևմուտքում՝ մինչև Գալատիա: Այստեղ ևս, ինչպես և Պոնտոսում, Սելևկյանների տիրապետության առաջին տարիներում կազմակերպվել էր առանձին թագավորություն, որի հիմնադիրն էր Արիարաթ Բ-ը (հավանորեն, 301—280 թ.)՝ ծագումով, ինչպես և Պոնտոսի թագավոր Միհրդատ Ա-ը, պարսկական ազնվականության բարձր տոհմից: Դիոդորոս Սիկիլիացու վկայությամբ[1]՝ Արիարաթ Բ-ը կարողացել էր տիրել Կապպադովկիային ոգնական զորքերի աջակցությամբ, որ նա ստացել էր արմենների Արդոատես (Ἀρδοάτης) թագավորից: Կապպադովկիայում ևս, ինչպես և Պոնտոսում, իշխող դասակարգը բաղկացած էր, մեծ մասամբ, կալվածատեր պարսիկ ազնվականներից և յերկիրը Աքեմենյան տիրապետության ժամանակ յենթարկվել էր իրանական պետականության և իրանական կուլտուրայի ազդեցության: Սակայն նաև այստեղ հելլենականությունը հաստատվել էր քաղաքներում և նրա ազդեցությունը զորեղ էր, գլխավորապես, ժողովրդի բարձր խավերի շրջանում:

Բացի Պոնտոսից և Կապպադովկիայից Միհրդատ-Տիգրանյան շրջանի պատմական անցքերին մասնակից էյին նաև Բիթանիան և Գալատիան:

[1] Տես XXXI, 19, 5:

Բիթանիան գտնվում էր Փոքր Ասիայի հյուսիս-արևմտյան անկյունում՝ Սև ծովի, Բոսֆորի և Պրոպոնտիսի ափերին, և տարածվում էր արևելքում մինչև Պափլագոնիա, հարավ-արևելքում՝ մինչև Գալատիա, իսկ հարավում՝ մինչև Միսիա: Այս յերկիրը կոչվում էր Բիթանիա թրակիական բիթանների անունով, որոնք թրակիական ուրիշ ցեղերի հետ գաղթել էյին Փոքր Ասիա Բալկանյան թերակղզուց: Այս գաղթականները հիմնել էյին այստեղ Բիթանիայի թագավորությունը, որն Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ կիսանկախ էր և կազմակերպվել էր իբրև անկախ պետություն յերրորդ դարի սկզբներում: Ինչպես և Փոքր Ասիայի մյուս արևմտյան շրջանները՝ Բիթանիան ևս մեծ չափով յենթարկվել էր հելլենական կուլտուրայի ազդեցության:

Փոքր Ասիայի կենտրոնում գտնվում էր Գալատիան, որը սահմանակից էր Բիթանիային, Պոնտոսին և Կապպադովկիային: Իր անունը սա ստացել էր գալատներից կամ կելտերից, որոնք 277—276 թ. մեր թվ. առաջ Թրակիայի վրայով յեկել էյին Փոքր Ասիա և այստեղ բնակություն էյին հաստատել Փռյուգիայում: Այս յեկվոր ու ռազմիկ ժողովուրդը, որ բաղկացած էր յերեք ցեղային հատվածներից և բաժանված էր առանձին տոհմերի՝ չէր կարողացել ստեղծել միաբան ու միահար պետություն և խաղալիք էր դառել հռոմեական ճարպիկ դիվանագիտության ձեռին:

Գալատները և Բիթանիայի ու Կապպադովկիայի թագավորությունները, ինչպես ներքև կտեսնենք, հլու և հնազանդ դաշնակիցները դառան արշավող հռոմեական իմպերիալիզմի և հռոմեական զորքերի հետ մասնակից յեղան թե հռոմեա-պոնտական և թե հայ-հռոմեական բոլոր մեծ պատերազմներին:

3. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՏԻԳՐԱՆ ՅԵՐԿՐՈՐԴԸ

Աքեմենյան Պարսկաստանի անկումից հետո վոչ Ալեքսանդր Մակեդոնացին, վոչ ել Սելևկյանները չկարողացան տիրել Հայաստանին յերկարատև ու հաստատուն կերպով:

Պարսկական յերկու սատրապությունների փոխարեն հիմնվեցին այստեղ յերեք առանձին իշխանություններ՝ Փոքր Հայքը, Ծոփքը և Մեծ Հայքը, վորոնց կառավարիչները կամ նախկին սատրապների հետնորդներն եյին և կամ բնիկ իշխանները: Հայկական այս իշխանությունները, թեև Սելևկյան թագավորության սատրապություններ եյին համարվում, սակայն նրանց վասսալական կախումը Սելևկյաններից յեղել է հաճախ գրեթե անվանական:

Անտիոքոս Մեծի Մագնեսիայի մոտ կրած պարտությունը (190 թ. մեր թվ. առ.) անկախության ընդհանուր շարժման ազդանշան յեղավ վոչ միայն Փոքր Ասիայում, այլև հայկական լեռնաշխարհում: Այդ պարտությունից հետո, ինչպես վկայում է Ստրաբոնը[1], Անտիոքոս Մեծի յերկու զորավարները, վորոնք կառավարում եյին Մեծ Հայքը և Ծոփքը, Անտիոքոսի հավանությամբ՝ անցան հռոմայեցիների կողմը և հայտարարեցին իրենց անկախ թագավորներ:

Այսպիսով յերկրորդ դարի առաջին կիսում արմենական յերկրները մնացին դարձյալ բաժանված յերեք անջատ մասերի, վորոնք ունեյին իրենց առանձին թագավորները: Փոքր Հայքում իշխում եր Փառնակ Պոնտացու (190—169 թ.) դաշնակից Միհրդատ թագավորը, Մեծ Հայքում՝ Արտաշեսը և Ծոփքում, Ակիսենեյում, Ոդոմանտիսում և մի քանի ուրիշ գավառներում՝ Զարեհը:

Այս թագավորություններից ամենազորեղն ու ամենաընդարձակը, ինչպես յերևում է նշանավոր հույն պատմագիր Պոլիբիոսի

1 Տես XI, 14, 15:

ուշադրավ մի վկայությունից, Մեծ Հայքն եր: Վերոհիշյալ Արտաշեսին Պոլիբիոսն անվանում է «Արմենիայի մեծագույն մասի կառավարիչ»[1]: Նույնը հաստատում է նաև Ստրաբոնը հետևյալ իր վկայության մեջ:

«Պատմում են,—ասում է Ստրաբոնը,—վոր Արմենիան յեղել է առաջ փոքր և մեծացել է Արտաշեսի ու Զարեհի միջոցով: ...Սրանք ընդարձակել եյին իրենց յերկրների սահմանները և շրջակա ժողովրդներից գրավել եյին հետևյալ շրջանները. մեդացիներից՝ Կասպիանեն, Փավնիտիսը և Բասորոպեդան, իբերներից՝ Պարիադրեսի լեռնալանջերը, Խորձենեն և Գոգարենեն, վոր գտնվում է Կուր գետի մյուս կողմում, խալիբներից ու մոսինոյկներից՝ Կարենիտիսը և Քսերքսենեն, վորոնք սահմանակից են Փոքր Հայքին կամ նրա մասերն են, կատաոններից՝ Ակիլիսենեն և Անտիտավրոսի կողմերը գտնվող յերկիրը և ասորիներից՝ Տամոնիտիսը»[2]:

Մեջ բերված այս վկայությունից յերևում է, վոր Արտաշեսը նվաճել եր Կասպյան յերկիրը կամ Փայտակարանը (=Κασπιανή), Վասպուրականը (=Βασοροπέδα), Փավնիտիսը (°), Պարիադրեսի լեռնալանջերը (այսինքն՝ Տայքը), Կղարջքը (=Χορζηνή)[3], Գուգարքը (=Γωγαρηνή), Կարնո գավառը (=Καρηνῖτις), Դերջանը (=Ξερξηνή)[4] և Տմորիքը (=Ταμωνῖτις)[5], իսկ Զարեհը՝ Յեկեղյաց գավառը (=Ακιλισηνή) և Անտիտավրոսի կողմերը գտնվող յերկիրը: Նույն վկայության շարունակության մեջ Ստրաբոնը հաղորդում է նաև, վոր ընդարձակված այս Արմենիայի մեջ նրա ժամանակ բոլորը համալեզու եյին, այսինքն՝ խոսում եյին հայերեն: Ստրաբոնի այս տեղեկությունը կարելի յե ընդունել վորոշ, իհարկե, վերապահությամբ: Հայաստանի զանազան շրջաններում, ինչպես հայտնի յե, նույնիսկ Սասանյանների ժամանակ

1 Տես „Всеобщая история в 40 книгах", перевод Мищенка, т. I—III, Москва 1890—1899, XXV, 2, 12:

2 Տես XI, 14, 5 (528):

3 Χορζηνή-ն Մարկվարտն առաջարկում է ուղղել և կարդալ Χολαρζηνή, տես Eranschahr nach der Geographie des Ps. Moses Xor., Berlin 1901, եջ 116:

4 Ξερξηνή-ն պետք է ուղղել Δερξηνή (ըստ Պլինիոսի Nat. Hist. 5, 83—Derxene, Derzene), տես Հյուբշման, «Հին Հայոց տեղւոյ անունները», թրգմ. Հ. Բ. Պիլեզիկճյանի, Վիեննա 1907, եջ 21:

5 Ստրաբոնի հունարեն բնագրում գրված է Ταμωνῖτις փխ. Ταμωρῖτις, տես Marquart, Eranschahr, եջ 170:

և անգամ նրանց տիրապետությունից հետո կային տարալեզու ցեղեր։ Ուրեմն՝ Ստրաբոնի վկայությունը պետք ե, ըստ յերևույթին, յենթադրել այն իմաստով, վոր Հայաստանում նրա ժամանակ տարածված ու գերիշխող լեզուն յեղել ե հայերենը։

Ընդարձակվել եր նույն այս յերկրորդ դարում (մեր թվ. առ.) բացի Մեծ Հայքից ու Ծոփքից նաև Փոքր Հայքը, վորը նվաճել եր արևմտյան Պարխադրեսի և հյուսիս-արևելյան Պոնտոսի ծովափնյա շրջանները և հասցրել եր իր սահմանները մինչև Սև ծովը։

«Փոքր Հայքը,—ասում ե Ստրաբոնը,—բավական պտղաբեր յերկիր ե։ Այստեղ ևս, ինչպես և Ծոփքում, միշտ կառավարում եյին յերկիրը սեփական իշխանները, վորոնք կամ բարեկամ ու դաշնակից եյին մյուս արմեններին և կամ իրենց գործերը վարում եյին առանձին ու անկախ։ Փոքր Հայքն իրեն հպատակեցրել եր խալդայներին և տիբարեններին, այնպես վոր նրա իշխանությունը տարածվում եր մինչև Տրապիզոն ու Փառնակիա»[1]։

Հայաստանում և Կապպադովկիայի հյուսիսում կազմվել եյին, ինչպես տեսնում ենք, փոխանակ միահար ու միաձույլ մեծ պետության՝ յերեք արմենական անկախ թագավորություններ։ Յեվ միանգամայն հասկանալի յե, իհարկե, վոր արմենների ցրվածությունն ու այս բաժանումը արգելք եյին հանդիսանալու նրանց ընդհանուր ու համերաշխ գործակցության։

Արմենական յերկրների միացման կարևորությունը, հավանորեն, գիտակցվել ե առավելապես նրանց քաղաքական վերելքի այս շրջանում։ Հայտնի յե, վոր Արտաշես Ա-ը, վորն անչափ ընդարձակել եր Մեծ Հայքը՝ ուզեցել եր նաև նվաճել հարևան Ծոփքը։ Սակայն Մեծ Հայքի զորեղացումը և արմենական յերկրների քաղաքական միաձուլումը չեյին կարող հանդուրժել Կապպադովկիան և Պոնտոսը։ Փոքր Հայքն ու Ծոփքը, վորոնց անկախությանը Արտաշեսյան հզոր թագավորության կողմից վտանգ եր սպառնում՝ սերտ կերպով հարեցին ոտար այս պետություններին և ապավինեցին սրանց ոգնության։ Դիոդորոս Սիկիլիացին վկայում ե[2], վոր Արտաշեսին չհաջողվեց իր թագավորությանը միացնել Ծոփքը շնորհիվ Կապպադովկիայի Արիարաթ Ե. թագավո-

[1] Տես XII, 3, 28։

[2] Տես De virt. et vitiis, հատված XXXI, 22։

րի միջամտության։ Այս վերջինի ոգնությամբ ստացավ իր հայրենի թագավորությունը Զարեհի վորդին, Մերուժանը, վորն Արտաշեսի հարձակման ժամանակ փախել եր Կապպադովկիա։

Արտաշեսյան Մեծ Հայաստանի մասին մատենագրական աղբյուրները տալիս են, դժբախտաբար, միայն պատահական ու կցկտուր տեղեկություններ։ Այդ տեղեկություններից առանձնապես կարևոր են Ստրաբոնի և Պլուտարքոսի վկայությունները Արտաշատ մայրաքաղաքի մասին, վորը հիմնել եր Արտաշես Ա-ը, հավանորեն, 166 թվին (մեր թվ. առ.)[1]։

«Հայաստանի քաղաքներն են,—ասում ե Ստրաբոնը,—Արտաքսատան (վորն անվանում են նաև Արտաքսասատա և վորը հիմնել եր Աննիբալն Արտաշեսի համար) և Արքսատան։ Յերկու քաղաքն ել գտնվում են Արաքսի ափին՝ Արքսատան Ատրպատականի սահմանում, իսկ Արտաքսատան Արաքսի դաշտի մոտ։ Այս վերջինը գեղեցիկ ե շինված և յերկրի թագավորանիստ քաղաքն ե։ Նա գտնվում ե գետածոցում, վորը նման ե ցամաքակղզու, և նրա շուրջը, բացի պարանոցի մասից՝ գետի առջև ձգվում ե պարիսպը, իսկ պարանոցը փակված ե խրամով և պատվարով»[2]։

Վոր Արտաշատը շինված եր Աննիբալի խորհրդով և նրա ցուցմունքներով՝ այդ մանրամասն հաղորդում ե նաև Պլուտարքոսը հետևյալ իր վկայության մեջ։

«Պատմում են,—ասում ե Պլուտարքոսը,—վոր յերբ Անտիոքոսը պարտություն կրեց հռոմայեցիներից՝ Կարթագենացի Աննիբալը յեկավ Արտաշես արմենի մոտ և հրահանգիչ ու խորհրդատու դառավ բազմաթիվ ոգտավետ գործերում։ Նկատելով, բացի այդ, այս յերկրում չոգտագործված ու անտես արված հարմարագույն ու խիստ հաճելի մի վայր՝ նա այդ տեղում ուրվագծեց քաղաքի հատակագիծը։ Աննիբալը տարավ Արտաշեսին, ցույց տվեց հատակագիծը և համոզեց հիմնել այդ տեղում քաղաք»[3]։

Պատմագետներից շատերը կասկածելի յեն համարում թե Արտաշատի հիմնումն Աննիբալի խորհրդով և թե Աննիբալի փախուստը Հայաստան։ Սակայն, այնուամենայնիվ, վերոհիշյալ վը-

[1] Տես F a b r i c i u s, Theophanes von Mitylene und Q. Dellius als Quellen der Geographie des Strabons, Strassburg 1888, եջ 32 և 131։

[2] Տես XI, 14, 6։

[3] Տես Lucullus, XXXI, 5։

կայությունները խիստ կարևոր են, վորովհետև նրանք պարզ ու վորոշ հաստատում են, վոր Արտաշատը հիմնված է յեղել յերկրորդ դարում Արտաշես Ա-ի ժամանակ։ Առանձնապես հետաքրքիր են ու կարևոր Արտաշատի տեղագրության ու ամրությունների մասին Ստրաբոնի հաղորդած տեղեկությունները։

Արտաշատի հիմնումն Արարատյան դաշտում կարելի յե համարել Արտաշես Ա-ի կարևորագույն գործերից մեկը։ Այս դաշտն այնուհետև դառավ Հայաստանի քաղաքական ու կուլտուրական միավորման կենտրոնը։

Քաղաքավայրի ընտրությունը աջող եր կատարված թե ռազմական և թե տնտեսական տեսակետներից։ Գտնվելով հայկական լեռնաշխարհի կենտրոնում՝ Արարատյան դաշտն ավելի յեր պաշտպանված արշավող թշնամիներից, քան լեռնաշխարհի սահմաններում գտնվող շրջանները։ Բացի այդ, նրա միջով եր անցնում տարանցիկ առևտրի մեծ ճանապարհը, վորը գալիս եր Միջին Ասիայի ու Չինաստանի կողմերից և Արտաշատի մոտով գընում եր դեպի Սև ծովի նավահանգիստները։

Ինչպես տեսնում ենք, Արտաշեսյան հարստության հիմնադիրն առաջին կազմակերպողն է պատմական Մեծ Հայաստանի, և ընդարձակված այս պետությունն արդեն նրա ժամանակ համարյա ամփոփվել եր բնական իր սահմանների մեջ և տարածվում եր հյուսիսային Միջագետքից մինչև Կուր գետը և Ատրպատականից մինչև Ծոփքը և Փոքր Հայքը։ Այս նոր թագավորությունը, վոր դառել եր Առաջավոր Ասիայի ուժեղ պետություններից մեկը՝ այժմ հաշվի յեր առնվում և վորոշ դեր եր կատարում միջպետական հարաբերություններում։ Պոլիբիոսը, վորն իր պատմության մեջ մանրամասն հիշատակել է Փառնակ Պոնտացու և Փոքր Հայքի Միհրդատ թագավորի 180 թվի կռիվը ընդդեմ Պերգամոնի, Կապպադովկիայի և Բիթանիայի թագավորների՝ մեջ է բերում սրանց ստորագրած խաղաղության դաշինքը և վկայում է, վոր այդ դաշնագրությանը մասնակից է յեղել նաև «Արմենիայի մեծագույն մասի կառավարիչ Արտաշեսը»[1]։

Արտաշեսյան անկախ ու միաձույլ Հայաստանի այս զորեղացումը վտանգավոր համարեց Սելևկյան թագավորությունը, վորը հայկական յերկրների նախկին սյուզերենն եր։ Ինչպես վըկայում են Դիոդորոս Սիկիլիացին և Ապպիանոսը[2], մոտավորա-

1 Տես XXV, 2, 12։

2 Տես Müller, Fragm. hist. graec. II, եջ X և Appianos, Syr., 45 և 46։

պես 165 թվին (մեր թվ. առ.) Հայաստան արշավեց Անտիոքոս Դ-ը (175—164)։ Սակայն Արտաշես Ա-ը, թեև պարտություն եր կրել, կարողացավ շուտով վերականգնել իր հին իրավունքները։

Դիոդորոս Սիկիլիացու մի այլ վկայությունից[1] հայտնի յե դարձյալ, վոր Սելևկյանների սատրապ Տիմարքոսը, վորն ապըստամբել եր ու հայտարարել իրեն Մարաստանի թագավոր (161 թ.)՝ դաշն եր կնքել Արտաշես Ա-ի հետ և սրա ոգնությամբ ընդարձակել եր իր թագավորության սահմանները մինչև Սելևկիա և Զեգմա։

Աղբյուրների աղքատիկ ու պատահական այս տեղեկությունները չեն տալիս, իհարկե, պարզ ու լրիվ պատկեր այն մեծ շըրջադարձի, վոր տեղի յեր ունեցել Արտաշես Ա-ի ժամանակ։ Սակայն վերոհիշյալ կցկտուր հիշատակություններն անգամ ցույց են տալիս, վոր Արտաշեսյան անկախ ու հզոր Հայաստանի կազմակերպումը սկիզբն եր Հին Հայաստանի պատմության նոր դարաշրջանի։

Ուշագրավ է ու առանձնապես հետաքրքիր, վոր Արտաշեսյան այս շրջանի պատմական մեծ դեպքերը նյութ եյին դառել վիպական հին յերգերի և ավանդությունների, վորոնցից ոգտվել եր Մովսես Խորենացին։ Վոր Արտաշատը հիմնած է յեղել Արտաշեսը՝ այդ հայտնի յե յեղել Խորենացուն, ինչպես ինքն է վկայում, «ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան»[2]։ Բացի այդ, ինչպես մատնանշել եմ իմ նախորդ աշխատություններից մեկում[3], Խորենացու մոտ պահպանված են վորոշ հիշողություններ պատմական այն անցքերի ու պատերազմների մասին, վորոնք տեղի եյին ունեցել Հայաստանում Որոնտաս-Յերվանդի և Արտաշես Ա-ի ժամանակաշրջանում և վորոնք նրան հայտնի յեն յեղել նմանապես վիպասանքից կամ հին զրույցներից։ Նոր այս յենթադրությանը կարող են թերևս նեցուկ ծառայել Արմավիրում գտնված հունարեն արձանագրությունները, վորոնք, դժբախտաբար, մինչև այժմ դեռ չեն հրատարակված։

Արտաշես Ա-ից հետո մենք գրեթե տեղեկություններ չունենք Մեծ Հայքի և արմենական մյուս թագավորությունների մասին մինչև Տիգրան Յերկրորդը (95—55 թ. մեր թվ. առ.)

1 Müller, FHG, II, եջ XII։

2 Տես «Մովսիսի Խորենացւոյ, Պատմութիւն Հայոց», աշխատ. Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս 1913, II, գլ. 49։

3 Տես „О торговле и городах Армении“, Эривань 1930, եջ 97։

Յուստինոսի կարևոր մի վկայությունից հայտնի յե միայն, վոր Պարթևական մեծ պետությունը, վորը նվաճել եր հետզհետե Հայաստանի սահմանակից Սելևկյան յերկրները՝ պատերազմ եր մղել նաև հայոց Արտավազդ թագավորի դեմ։ Այս Արտավազդը, հավանորեն, այն Արտավազդն ե, վորը հայկական վեպի մեջ հիշատակված ե իբրև վորդի և հաջորդ Արտաշես Ա-ի[1]։

Վերև մատնանշված վկայության մեջ Յուստինոսը հաղորդում ե, վոր

> «Արտավանին հաջորդեց նրա վորդին Միհրդատը, վորն իր գործերի համար կոչվեց Մեծ։ ...Սա մեծ քաջությամբ վարեց հարևանների հետ բազմաթիվ պատերազմներ և միացրեց Պարթևական թագավորությանը շատ ժողովրդներ։ Նույնպես և Սկյութացիների հետ նա մի քանի անգամ աջողությամբ պատերազմեց և վրեժխնդիր յեղավ նախորդների վիրավորանքների համար։ Վերջը կռվեց արմենների թագավոր Արտավազդի հետ»[2]։

Վո՛չ միայն այս, այլև մատենագրական և ուրիշ վկայություններից հայտնի յե, վոր հենց Միհրդատ Բ. Մեծի ժամանակ միայն (123—88 թ. մեր թվ. առ.) պարթևները կարողացել եյին վերջնականապես նվաճել Միջագետքի յերկրները և Ատրպատականը։ Կարելի յե, ուրեմն, վստահորեն յենթադրել, վոր նրա արշավանքն Արտավազդի դեմ տեղի յեր ունեցել Հայաստանի հարևան յերկրների նվաճումից հետո, ըստ յերևույթին, Ատրպատականի կողմից և, ինչպես յենթադրել ե Մարկվարտը, դաշնակից ու վասսալ Ատրպատականի թագավորի մասնակցությամբ[3]։

Հայ-պարթևական այս պատերազմի ժամանակ, թեև պարթևներին չեր աջողվել նվաճել Հայաստանը, սակայն, հավանորեն, նրանք պարտության եյին մատնել հայերին և, ինչպես վկայում են Յուստինոսը և Ստրաբոնը, պատանդ եյին վերցրել Տիգրան Բ-ին[4]։

Վոր Հայաստանը նվաճված չե յեղել Միհրդատ Մեծի արշավանքի ժամանակ՝ այդ յերևում ե դարձյալ Ստրաբոնի հետևյալ վկայությունից.

> «Պարթևները,—ասում ե Ստրաբոնը,—տիրեցին մեդացիների և բաբելոնացիների յերկրներին, բայց վո՛չ Արմե-

[1] Տես Խորենացի, I, գլ. Լ և II, գլ. Ծ, ԾԱ—ԾԴ, ԾԵ, ԿԱ և ԿԲ։
[2] Տես Just. Epit. XLII, 2, 3—6:
[3] Տես Eranschahr, եջ 109։
[4] Justin., XXXVIII, 3, 1 և Strabo, XI, 14, 15:

> նիային։ Թեև հարձակումներ հաճախ տեղի ունեցան, սակայն յերկիրն ուժով չնվաճվեց։ Ընդհակառակը, Տիգրանը զորեղ կերպով դիմադրեց ու հաղթեց նրանց, ինչպես մենք ասացինք Արմենիայի մասում»[1]։

Պատանդ վերցված Տիգրանի մասին կարևոր են Ապպիանոսի և Ստրաբոնի վկայությունները։ Ապպիանոսի ասելով՝ Տիգրան Բ-ը վորդին եր վո՛չ թե Արտավազդի, այլ Տիգրանի[2]։ Իսկ Ստրաբոնը, խոսելով Արտաշես Ա-ի և Զարեհի մասին՝ վկայում ե, վոր Տիգրան Բ-ը Արտաշես Ա-ի սերնդից եր[3]։

Պատմական ու բանասիրական նորագույն յերկերում Արտաշես Ա-ի հաջորդների և Արտավազդի ու Տիգրան Բ-ի ազգակցության մասին հայտնվել են հակասական կարծիքներ։ Այդ կարծիքներից հավանական ե ըստ իս Ռեյնաքի յենթադրությունը, վորը Տիգրան Բ-ին համարում ե համաձայն Ապպիանոսի վկայության Տիգրան Ա-ի վորդին, իսկ Արտավազդին՝ յեղբայր այս վերջինի[4]։ Պատմագետների ու բանասերների ուշադրությունից վրիպել ե, վոր Ապպիանոսի հաղորդած տեղեկությունը հաստատվում ե Խորենացու պատմության համապատասխան վկայությունների ուշադիր քննությամբ։ Խորենացու մոտ, ինչպես վերև ասացինք, Արտաշեսյան տոհմի առաջին թագավորների մասին պահպանվել են ուշագրավ պատմական հիշողություններ, վորոնք հայտնի յեն յեղել նրան վիպասանքից կամ հին աղբյուրներից։ Հենվելով այդ աղբյուրների վրա՝ Խորենացին վկայում ե, վոր Արտաշեսի վորդին ու հաջորդը, Արտավազդը, զավակ չե ունեցել և վոր Արտավազդից հետո Հայաստանում թագավորել ե նրա յեղբայրը՝ Տիրանը[5]։ Պատմահոր հաղորդած կարևոր այս տեղեկությունները, ինչպես տեսնում ենք, համապատասխանում են Ապպիանոսի վերոհիշյալ վկայության։ Կարող ենք ըստ իս, համաձայն այդ տեղեկությունների, հավանական համարել, վոր Արտաշես Ա-նին հաջորդել եր նրա վորդին, Արտավազդ Ա-ը, և ապա սրա յեղբայրը՝ Տիգրան Ա-ը, վորից հետո թագավորել եր այս վերջինի վորդին՝ Տիգրան Բ-ը։

[1] Str., XVI, 1, 19:
[2] Տես App., Syr., 48:
[3] Տես Str., XI, 14, 15:
[4] Տես Th. Reinach, Mithridate Eupator, եջ 104 և Markwart, Eranschahr, եջ 173։
[5] Տես Խորենացի, II, գլ. ԿԱ։

Մեծ Հայաստանի մասին, ինչպես ասացինք, մենք ունենք մանրամասն տեղեկություններ Տիգրան Բ-ից սկսած։

Տիգրան Բ-ը, որը պատանդ էր պարթևների մոտ՝ գահ էր բարձրացել 95 թվին (մեր թվ. առ.)։ Գահակալության այս թվականը հայտնի է մեզ Պլուտարքոսի վկայությունից։ 70 թվին, երբ Ապպիոս Կլավդիոսը եկել էր նրա մոտ իբրև դեսպան՝ նա, ինչպես վկայում է Պլուտարքոսը[1], արդեն 25 տարի թագավորել էր։ Պատանդությունից ազատվելու և իր հայրենի թագավորությունը ստանալու համար նա, ինչպես վկայում է Ստրաբոնը[2], պարթևներին փրկանք էր տվել յոթանասուն հովիտներ, որոնք, Մարկվարտի կարծիքով[3], այն շրջաններն էին, որ Ատրպատականի կողմերում գրավել էր Արտաշես Ա-ը։

Երբ Տիգրանն ազատվեց ու վերադարձավ իր հայրենի երկիրը՝ նա արքայական իր թագը կապեց, ինչպես վկայում է Ապպիանոսը, Հայաստանի այն վայրում, ուր ինքը հիմնել էր հետո Տիգրանակերտ քաղաքը։ Այս վկայությունից երևում է, որ հին Աղձնիքը, որի մեջ այժմյան Ֆարկինում որոշված է վերջերս հին Տիգրանակերտ քաղաքի տեղը՝ գտնվել է ոչ թե Ծոփքում, այլ Արտաշեսյան թագավորության մեջ՝ Մեծ Հայքում[4]։

Գահ բարձրանալուց հետո Տիգրան Բ-ի առաջին գործը եղավ հարևան Ծոփքի միացումն իր թագավորությանը։ Կապպադովկիան, որը հազիվ էր հռոմայեցիների օգնությամբ պահպանում իր անվանական անկախությունը՝ անկարող եղավ պաշտպանել իր հին դաշնակցին ու բարեկամին։ Տիգրան Բ-ը հարձակվեց Ծոփքի վերջին թագավոր Արտանեսի վրա (94 թ. մեր թվ. առ.) և նրա երկիրը կցեց Մեծ Հայաստանին։

«Արտաշեսի սերնդից էր,—ասում է Ստրաբոնը,—Տիգրանը. նա իշխում էր բուն Արմենիայում, որը սահմանակից էր Մարաստանին, Աղվանքին, Իբերիային մինչև Կողքիս և Սև ծովի մոտ գտնվող Կապպադովկիային։ Իսկ Զարեհի սերնդից էր Ծոփաց երկրի Արտանեսը, որն իշխում էր Արմենիայի հարավային և, գլխավորապես, արև-

1 Տես P l u t., Lucullus, 21։

2 Տես S t r., XI, 14, 15։

3 Eranschahr, էջ 109։

4 Տես M a r k w a r t, Südarmenien und die Tigrisquellen, Wien 1930, էջ 119։

մտյան մասերում։ Տիգրանը սրան հաղթեց և դառավ ինքը տեր բոլոր այդ երկրների»[1]։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Տիգրան Բ-ի իշխանության տակ միացան Արևելյան և Արևմտյան Արմենիան, որոնք թե Աքեմենյանների և թե Սելևկյանների ժամանակ առանձին ու ինքնիշխան երկրներ էին։ Արմենական երրորդ թագավորությունը, Փոքր Հայքը, որը հայկական լեռնաշխարհի բնական սահմաններից դուրս էր գտնվում՝ Ծոփքի նվաճումից առաջ, արդեն երկրորդ դարի վերջերում, նվաճել ու միացրել էր իր թագավորությանը Միհրդատ Պոնտացին։

Ծոփքի միացումից հետո Տիգրան Բ-ի հզոր ու ընդարձակ թագավորությունը սահմանակից էր դառնում արևմուտքում բացի Պոնտոսից նաև Կապպադովկիային։ Հարավում և արևելքում Մեծ Հայաստանին հարևան ու սահմանակից էին պարթևների գերիշխանության տակ գտնվող մանր պետությունները՝ Ոսրոենը, Կորդուքը, Ադիաբենը և Ատրպատականը, իսկ հյուսիսում՝ Աղվանքը և Իբերիան։

94 թվից հետո շուտով սկսվեց Արևելքում Հռոմի ու Պոնտոսի երկարատև ու համառ պայքարը, որին, ինչպես կտեսնենք, մասնակից եղավ նաև Տիգրան Բ-ի հզոր պետությունը։

1 Տես S t r., XI, 14, 15։

4. ՀԱՅ-ՊՈՆՏԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ ՅԵՎ ՏԻԳՐԱՆ Բ-Ի ԱՐՇԱՎԱՆՔԸ ԿԱՊՊԱԴՈՎԿԻԱ

Առաջին դարի սկզբներում (մեր թվ. առ.) հզոր ու մեծ պետություն եր դառել, ինչպես վերև տեսանք, Պոնտոսը, վորը խիստ ընդարձակվել եր Միհրդատ Եվպատորի ժամանակ, վորին անվանում են նաև Մեծ։

Պոնտոսը կամ հին Պոնտական Կապպադովկիան, վորը Աքեմենյանների ժամանակ միացած եր բուն կամ Մեծ Կապպադովկիայի հետ՝ ուներ այս վերջինի հետ կուլտուրական ու կրոնական և մասամբ նաև ցեղային վորոշ կապեր։ Պոնտոսի հարևան Կապպադովկիան ուներ, բացի այդ, ստրատեգիական մեծ նշանակություն, վորովհետև նրա հյուսիս-արևելյան ընդարձակ սահմանները տարածվում եյին մինչև Փոքր Հայքը և մինչև Պոնտոսի գրեթե թիկունքը։ Դժվար չե, ուրեմն, հասկանալ, թե ինչու Միհրդատ Մեծն ամեն կերպ աշխատում եր ցեղակից ու կրոնակից այս յերկիրը միացնել իր թագավորությանը։

Կապպադովկիայի փաստական նվաճումը Միհրդատը հաջողեցրել եր 99 թվին (մեր թվ. առաջ) և թագավոր եր դրել այնտեղ իր ութնամյա վորդուն՝ Արիարաթ Թ-ին։ Սակայն շուտով, 95 թվին, հռոմեական ծերակույտի կարգադրությամբ պոնտական զորքերը հարկադրված յեղան մաքրել այդ յերկիրը և Կապպադովկիայի թագավոր ընտրվեց Արիոբարզան Ա. Հռոմեասերը։

Հռոմայեցիների հենց այս բարեկամի թագավորության ժամանակ Տիգրան Բ-ը գրավել եր 94 թվին Ծոփքը, վորը, ինչպես ասացինք, սահմանակից եր Կապպադովկիային և հին դաշնակիցն եր ու բարեկամը Արիարաթների թագավորության։ Իբրև նախկին պաշտպանն ու հովանավորը Ծոփաց Զարեհյան թագավորության՝ Կապպադովկիան այժմ, բնականաբար, վտանգավոր հարևան եր համարվելու Մեծ Հայաստանի։ Հասկանալի յե նույնպես, վոր Արիոբարզան Ա-ը, հռոմեական քաղաքականության հլու և հնազանդ սպասավորը, խոչընդոտ եր դառնում պոնտական քաղաքականության վերոհիշյալ ձգտումների իրագործման, վորոնցից չեր կարող հրաժարվել Միհրդատ Եվպատորը։

Առաջին դարի սկզբներին Կապպադովկիան, ինչպես տեսնում ենք, ընդհանուր թշնամի եյին համարելու և Տիգրանը և Միհրդատը, և միանգամայն բնական ե, վոր նրանք աշխատելու եյին միանալ իրար հետ ընդդեմ հարևան այդ թագավորության։ Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին ռուսերեն իմ աշխատության մեջ[1], հենվելով Ռեյնաքի յենթադրության վրա՝ յես մատնանշել եյի, բացի այդ, վոր պոնտական թագավորների և հատկապես Միհրդատ Եվպատորի բարեկամական քաղաքականությունը Հայաստանի, Ատրպատականի և Իբերիայի հանդեպ բացատրվում ե պոնտական մեծ առևտրի շահերով[2]։ Այս յերկրների բարեկամությունը խոշոր նշանակություն ուներ Պոնտոսի համար, վորովհետև նրա մեծ նավահանգիստները հավաքատեղեր եյին և հանգուցակետեր համաշխարհային մեծ առևտրի և միջազգային տարանցիկ ճանապարհների, վորոնք գալիս եյին Հեռավոր Արևելքից ու Միջին Ասիայից և Եկբատանայի ու Արտաշատի վրայով գնում եյին, գլխավորապես, պոնտական Ամիսոս և Սինոպ քաղաքները։

Բարեկամական այս հարաբերությունները, վոր գոյություն ունեյին Պոնտոսի և Մեծ Հայաստանի միջև, Տիգրան Բ-ի ժամանակ դառել եյին ավելի սերտ ու մտերիմ։ Աչքի առաջ ունենալով իրենց յերկրների կենսական շահերը Տիգրան Բ-ը և Միհրդատ Եվպատորը 95 կամ 94 թվին կնքեցին հատուկ դաշնադրություն, վորի նպատակն եր վոչ թե նախապատրաստվող հայ-պոնտական պատերազմն ընդդեմ Հռոմի, ինչպես գունավորված ու շփոթ կերպով պատմում ե Յուստինոսը, այլ, հավանորեն, Տիգրան Բ-ի ռազմական աջակցությունը Միհրդատին ընդդեմ հարևան Կապպադովկիայի։ Կնքված դաշինքի համաձայն, վորն ամրապնդել եյին Տիգրանի ամուսնությամբ Միհրդատի աղջկան Կլեոպատրայի հետ, յերկու թագավորները պայմանավորվել եյին, վոր նվաճված քաղաքներն ու շրջանները պատկանելու յեն Միհրդատին, իսկ գերիներն ու շարժական գույքը՝ Տիգրանին։

Յուստինոսի վկայությունն այս դաշինքի մասին հարկ եմ համարում մեջ բերել ընդարձակ բովանդակությամբ։

«Այդ ժամանակ Արմենիայի թագավորն եր,—պատմում

1 Տես „О торговле и городах Армении", եջ 48։

2 Տես Reinach, Mithridate Eupator, եջ 78 և 234։

է Յուստինոսը,—Տիգրանը, որը պատանդ էր տրվել վաղուց պարթևներին և քիչ առաջ հետ էր ուղարկվել իր հայրենի թագավորությունը: Նրան շատ էր ուզում Միհրդատը դաշնակից անել ընդդեմ հռոմայեցիների, որոնց հետ նա վաղուց հետե մտադիր էր պատերազմ սկսել: Յեվ թեև Տիգրանը հռոմայեցիների կողմից չէր կրել որևէ անարգանք՝ նա դրդում է նրան Գորդիոսի միջոցով, որ հարձակվի Արիոբարզանի վրա, որը խիստ թույլ էր: Իսկ որպեսզի չերևա, որ որոշ խորամանկություն կա դրա տակ՝ նա ամուսնացնում է նրա հետ իր աղջկան Կլեոպատրային[1]: Տիգրանի առաջին հենց հարձակման ժամանակ Արիոբարզանը վերցնում է իր գույքը և փախչում է Հռոմ: Յեվ այսպիսով Տիգրանի օգնությամբ Կապպադովկիայում սկիզբ է դրվում նորից Միհրդատի իշխանության: Նույն այս ժամանակ մեռնում է Նիկոմեդեսը և նրա որդուն, որի անունը նույնպես Նիկոմեդես էր, դուրս է վտարում թագավորությունից Միհրդատը: Յերբ սա Հռոմ է գալիս որպես աղաչավոր՝ ծերակույտը վճռում է, որ յերկուսն էլ պետք է վերահաստատվեն իրենց թագավորություններում: Այս գործի համար ուղարկվում են իբրև լեգատներ Մ. Ակվիլիոսը և Մանլիոս Մալթինոսը: Յերբ այս բանն իմացվում է՝ Միհրդատը դաշն է կնքում Տիգրանի հետ, որպես զի պատերազմ սկսե հռոմայեցիների դեմ: Նրանք պայմանավորվել եյին իրար հետ, որ քաղաքները և հողերը պատկանելու յեն Միհրդատին, իսկ մարդիկ և ինչ որ հնարավոր է տանել՝ Տիգրանին»[2]:

Յուստինոսի այս վկայությունը, որ յեվրոպական պատմագիտության մեջ հիմք է ծառայել անհավանական յեզրակացությունների, ինչպես շատ ճիշտ նկատել է Ռեյնաքը, այնքան խառնաշփոթ է, որ կարելի յե համարել կասկածելի[3]:

93—89 թվերի վերոհիշյալ պատմական անցքերը, որ խառն ու հակիրճ կերպով պատմված են Յուստինոսի վկայության մեջ՝ տեղի եյին ունեցել, իրապես, ինչպես յերևում է անկախ Յուստինոսից մատենագրական նաև մյուս աղբյուրների վկայություններից՝ հետևյալ հաջորդականությամբ:

1 Տիգրանի ամուսնության մասին Կլեոպատրայի հետ համեմատե նաև Պլուտարքոս, Լուկուլլոս 22 և Ապպիանոս, Միհրդատականք 104:

2 Տես Յուստինոս, XXXVIII, 3, 1—5:

3 Տես Mithridate Eüpator, էջ 115, ծանոթ. 3:

93 թվին (մեր թվ. առ.), Ծոփքի միացումից անմիջապես հետո, Տիգրան Բ-ը, ինչպես վկայում է Յուստինոսը, Միհրդատի հորդորմամբ հարձակվել էր Կապպադովկիայի վրա, գրավել էր ամբողջ յերկիրը և Արիոբարզան Ա-ը փախել էր Հռոմ: Վերջինիս փոխարեն, նույն 93 թվին, վերահաստատվեց այստեղ իբրև թագավոր Միհրդատի փոքրահասակ որդին՝ Արիարաթը, որի խնամակալն էր Գորդիոսը: Կապպադովկիան նվաճելուց հետո, ինչպես տեսնում ենք, Տիգրանն ինքը վերադարձել էր Հայաստան և իր գրաված ամբողջ յերկիրը հանձնել էր Միհրդատի որդուն: Հենց ինքն այս փաստը հիմք է տալիս ըստ իս յենթադրելու, որ Յուստինոսի մատնանշած վերոհիշյալ դաշինքը, որի համաձայն «քաղաքներն ու հողերը պատկանելու եյին Միհրդատին», կնքված է յեղել, հավանորեն, 93 թվից առաջ:

Հռոմեական ծերակույտի հրամանով, ինչպես հայտնի յե Պլուտարքոսից[1], շուտով Կապպադովկիա յեկավ Կիլիկիայի փոխպրետորը՝ Սուլլան: Սա պարտության մատնեց Գորդիոսի և Տիգրանի զորքերը և նորից հաստատեց Կապպադովկիայի գահի վրա դաշնակից Արիոբարզան Ա-ին: Յերբ Սուլլան գտնվում էր Յեփրատ գետի մոտ՝ նրա մոտ էր յեկել այնտեղ (92 թվին) պարթևների թագավոր Միհրդատ Բ-ի դեսպանը, Որոբազոսը, որը, ինչպես հաղորդում են աղբյուրները[2], բարեկամական բանակցություններ էր վարել Սուլլայի հետ և առաջարկել էր, որ Յեփրատ գետը լինի սահման յերկու պետությունների միջև: Այս վկայությունը պարզ ցույց է տալիս, որ միանգամայն սխալ է Կուրտ Եքհարդի կարծիքը, որը Տիգրան Բ-ի կռիվները պարթևների դեմ և Միջագետքի ու պարթևական մանր վասսալ պետությունների միացումը Հայաստանին դնում է 92 թվից առաջ[3]:

Հավանորեն, 91 թվին՝ Սուլլայի հեռանալուց անմիջապես հետո՝ Միթրաասը և Բագոասը, որոնք, ըստ յերևույթին, Տիգրան Բ-ի զորավարներն եյին՝ նորից հարձակվեցին ու գրավեցին Կապպադովկիան: Արիոբարզանն այս անգամ ևս փախավ Հռոմ և նրա գահը նորից տրվեց Միհրդատի Արիարաթ որդուն[4]:

1 Սուլլա, 5:

2 Տես Պլուտարքոս, Սուլլա, 5, Ապպիանոս, Միհրդատ. 57 և Ֆլորուս 70:

3 Տես K. Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. IX, 4, էջ 403:

4 Ապպիանոս, Միհրդատ. 10:

Նույն 91 թվին, Նիկոմեդես Բ-ի մահից հետո, յերկպառակություններ եյին ծագել նաև Բիթանիայում։ Հռոմն այստեղ թագավոր եր հաստատել Նիկոմեդես Բ-ի մեծ վորդուն՝ Նիկոմեդես Գ-ին։ Սակայն նրա կրտսեր վորդին, Սոկրատեսը, ապավինելով Միհրդատ Եվպատորին և ստանալով սրանից պոնտական զորքեր՝ կարողացավ ինքը գրավել Բիթանիան, իհարկե, առանց Հռոմի համաձայնության։

Յերկու հալածված թագավորները՝ Արիոբարզան Ա-ը և Նիկոմեդես Գ-ը՝ յեկան, ինչպես վկայում են Յուստինոսը և Ապպիանոսը[1], Հռոմ և օգնություն խնդրեցին հռոմայեցիներից։ Հռոմեական ծերակույտն այս անգամ ուղարկեց Արևելք Մանիոս Ակվիլիոսին և Մանլիոս Մալթինոսին, վորոնք 89 թվին, առանց կռվի ու վորևե հակառակության, վերահաստատեցին նրանց իրենց թագավորություններում։

Մեջ բերված փաստական այս տեղեկությունները, վոր վերաբերվում են 93—89 թվերի վերոհիշյալ պատմական անցքերին՝ պարզ ցույց են տալիս, վոր Յուստինոսի վկայությունը վոչ միայն խիստ համառոտ է, այլև տեղ տեղ վիճելի յե ու անհավաստի։

Յուստինոսի մոտ հիշատակված է Տիգրան Բ-ի առաջին միայն հարձակումը Կապպադովկիայի վրա և բաց է թողնված Միթրաաս և Բագոաս զորավարների յերկրորդ արշավանքը։ Նրա վկայությունից ստացվում է պարզապես այն տպավորությունը, վոր Նիկոմեդես Գ-ը ևս, ինչպես և Արիոբարզանը, փախել եր Հռոմ 93 թվին։ Բացի այդ, համաձայն նրա վկայության, Միհրդատի ու Տիգրանի դաշնակցությունը վերաբերվում է վոչ թե 93 և 91 թվերի արշավանքներին, յերբ Տիգրանն ու Միհրդատը գործում եյին, իրապես, համաձայն այդ դաշինքի, այլ 88 թվի հռոմեական-պոնտական մեծ պատերազմին, վորին Տիգրանը, ինչպես կտեսնենք, բնավ չեր մասնակցել։

Յեվրոպական պատմագետները, հավատ ընծայելով Յուստինոսի կասկածելի այս վկայություններին՝ Տիգրան Բ-ի մասնակցությանը 93—84 թվերի անցքերին տվել են, իմ կարծիքով, միանգամայն վիճելի ու անհավաստի լուսաբանություն։ Բավականաչափ հիմնավորված չե ըստ իս, նախ և առաջ, ընդհանրացած այն կարծիքը, վոր իբր թե Տիգրանը հլու և անխոս մի գործիք է յեղել Միհրդատ Եվպատորի քաղաքական նպատակների իրա-

1 Յուստ. XXXVIII, 3, 4 և Ապպիանոս, Միհրդատ., 9—11։

գործման[1]։ Մենք ասացինք արդեն վերև, վոր Տիգրանի մասնակցությունը 93 թվի Կապպադովկիայի նվաճմանը բացատրվում է պարզապես նրանով, վոր Ծոփքի միացումից հետո այդ յերկիրը վտանգավոր հարևան եր դառել Մեծ Հայաստանի արևմտյան սահմանում։ Դժվար չե նաև կռահել, վոր նաև 91 թվի արշավանքը կարևոր նշանակություն ուներ Հայաստանի համար, վորովհետև պարթևների բարեկամական բանակցություններին Սուլլայի հետ (92 թվ.) մասնակցել եր, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը[2], նաև Կապպադովկիայի թագավոր Արիոբարզան Ա. Հռոմեասերը։ Իսկ պարթևների, Հռոմի և Կապպադովկիայի բարեկամական համաձայնությունը չեր կարող ցանկալի լինել, իհարկե, Տիգրան Բ-ին։ Յեվ հասկանալի յե, վոր նա, հանձնելով Կապպադովկիայի թագավորությունն Արիարաթին և Գորդիոսին՝ ապահովում եր իր թիկունքն արևմուտքում և ամրացնում եր իր քաղաքական դիրքերը հայ-պարթևական կռիվների համար։

Մի մեծ թյուրիմացություն է, բացի այդ, Մոմզենի, Մորգանի և ուրիշների կարծիքը[3], վոր իբր թե Տիգրան Բ-ի և Միհրդատ Եվպատորի դաշնադրությունը վերաբերվել է վոչ միայն Կապպադովկիայի, այլև հռոմեական-պոնտական 88—84 թվերի մեծ կռիվներին, վոր նախապատրաստում եյին վաղորոք Միհրդատը և Տիգրանը։ Այս յենթադրությունը նրանց հիմք է ծառայել մեղադրելու Տիգրան Բ-ին, վոր սա խախտել է այդ կռիվների ընթացքում Միհրդատի հետ կնքած դաշինքը[4]։ Մենք կտեսնենք սակայն ներքև, վոր իննսնական թվականների վերջերում (մեր թվ. առ.) վոչ Միհրդատը և վոչ էլ Տիգրանը վորոշած չեյին կարող լինել պատերազմել հռոմայեցիների դեմ։ Միանգամայն նաև անհավանական է, վոր հայ-պարթևական կռիվներից առաջ Տիգրան Բ-ը համաձայնած լիներ անմիտ ու արկածախնդրական մեծ պատերազմ սկսելու ընդդեմ հզոր ու աշխարհակալ Հռոմի։

Ինձ թվում է, վոր ավելի քան հավանական կարելի յե հա-

1 Համեմատե T h. R e i n a c h, Mithridate Eupator, եջ 105, K. E c k h a r d t, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, IX, 1, եջ 403—404, D o l e n s et K h a t c h, Histoire des anciens Arméniens, Genève 1907, և ուրիշները։

2 Տես Պ լ ու տ ա ր ք ո ս, Սուլլա, 5։

3 Տես М о м м с е н, „Римская история“, т. II, Москва 1887, եջ 286, J. M o r g a n, Histoire du peuple arménien, Paris1919, եջ 70, В. Б р ю с о в, Летопись исторических судеб армянского народа, Москва 1918, եջ 24 և այլն։

4 Տես, օրինակ, R e i n a c h, Mithridate Eupator, եջ 311։

մարել, որ Յուստինոսի օգտագործած հռոմեական աղբյուրը, մատնանշելով որ Միհրդատի ու Տիգրանի դաշինքը կնքված է յեղել Մանիոս Ակվիլիոսի Արևելք գալուց հետո, այսինքն՝ 88—84 թվերի հռոմեական-պոնտական պատերազմից առաջ, հավանորեն հատուկ միտում է ունեցել հետագա կռիվների պատասխանատվությունը վերագրելու Միհրդատին ու Տիգրանին։ Սակայն, իրապես, ինչպես ներքև կտեսնենք, այդ մեծ պատերազմի առիթ տվողը ո՛չ թե Միհրդատն էր, այլ Մանիոս Ակվիլիոսը։ Իսկ Տիգրանը, որ ամենևին չէր մասնակցել այդ կռիվներին՝ բոլորովին անհիմն կերպով է մեղադրվում դաշնադրության խախտման համար։ Վերոհիշյալ դաշինքով նա պարտավորություններ էր հանձն առել ո՛չ թե հռոմեական-պոնտական պատերազմի, այլ միմիայն Կապպադովկիայի նկատմամբ։

Որ Յուստինոսի դաշնադրության մասին վկայությունը սխալ է և միտումնավոր՝ այդ ցույց են տալիս, ինչպես կտեսնենք, բոլոր հետագա պատմական փաստերը։

5. ՄԻՀՐԴԱՏՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ (88—84 ԹՎ.)

Միհրդատյան այս պատերազմը և սոցիալական մեծ հեղափոխությունն Արևելքում ու Հունաստանում յես հույս ունեմ, որ կկարողանամ ընդարձակ կերպով քննության առնել հաջորդ իմ ուսումնասիրություններից մեկում։ Իսկ այժմ այդ անցքերի վրա յես կանգ եմ առնելու համառոտ կերպով ու հատկապես այն նկատառումով, որ յեվրոպական պատմագետներից ոմանք, օրինակ, Շպիգելը և Մոմզենը՝ այս պատերազմին սխալմամբ մասնակից են դարձրել նաև Տիգրանյան Մեծ Հայաստանը[1]։

88—84 թվերի պատերազմի մասին գերիշխող է դառել նաև այն կարծիքը, որ իբր թե Միհրդատ Եվպատորը կամ Մեծը համառ կերպով զինվել ու նախապատրաստվել էր կռվի ընդդեմ հռոմայեցիների, նպատակ էր դրել իրեն վտարել նրանց Ասիայից և այդ նպատակով կռվից առաջ դաշն էր կնքել Տիգրան Բ-ի հետ։

Այս յենթադրությունները, իմ կարծիքով, կարոտ են վերաքննության։ Աղբյուրների փաստական վկայություններից պարզ յերևում է, որ Միհրդատն ամեն ջանք գործ էր դրել, որպեսզի կարողանա խույս տալ ահեղ այս պատերազմից։ Նա հսկայական գումարներ էր ծախսել Հռոմում, որպեսզի կաշառված ծերակուտականների միջոցով վիճելի խնդիրները լուծվեն խաղաղ ճանապարհով։ Մշտական գժտությունների առիթ տվող այդպիսի հարցեր էյին ո՛չ միայն Կապպադովկիայի, այլ, մանավանդ, նաև Բիթանիայի թագավորության խնդիրը, որի բարեկամությունն ու չեզոքությունը չափազանց կարևոր էյին Պոնտոսի համար նրա հյուսիս-արևելյան սահմանում գտնվող Բոսփորյան նեղուցի պատճառով։ Միհրդատի ծովեզրյա պետության համար, որի հոյակապ ու հարուստ հելլենիստական քաղաքները խոշոր կենտրոններ էյին

[1] Տես F. Spiegel, Eranische Alterthumskunde, Leipzig 1878, Bd. III, էջ 92 և Моммсен, „Римская история", т. II, перевод Неведомского, Москва 1887, էջ 286 և 287։

համաշխարհային տարանցիկ առևտրի՝ սևծովյան նեղուցների հարցն ուներ, բնականաբար, կենսական նշանակություն:

Վոր Միհրդատը 88 թվին չեր ուզում, իրոք, պատերազմել Հռոմի հետ՝ այդ պարզ յերևում է հենց իրենց իսկ հռոմեական աղբյուրների վկայություններից: Այդ աղբյուրներից մենք գիտենք, վոր՝ չնայած Կապպադովկիայի ու Բիթանիայի խնդիրների քաղաքական ու տնտեսական բացառիկ կարևորությանը Պոնտոսի համար՝ Միհրդատը, այնուամենայնիվ, խուսափելով պատերազմից՝ չհակառակեց, վոր Նիկոմեդեսը և Արիոբարզանը վերահաստատվեն իրենց թագավորություններում:

88—84 թվերի պատերազմի համար պատասխանատու յե, անտարակույս, վոչ թե Միհրդատը, այլ հռոմեական դեսպան Մանիոս Ակվիլիոսը: Սա յեր, վոր դրդեց Նիկոմեդեսին հարձակվելու և կողոպտելու Պոնտոսի հյուսիս-արևելյան շրջանները մինչև Ամաստրիս և ստիպեց նրան պոնտական թալանված բնակչության հաշվին վճարել իրեն և հռոմեական ֆինանսիստներին նրա դահակալության համար արված ծախսերը:

Միհրդատը չդիմադրեց և չկռվեց մինչև իսկ այս ավազակային հարձակման ժամանակ: Նա շարունակեց իր խաղաղ բանակցությունները և խնդրեց միայն, վոր իրեն թույլ տրվի պաշտպանվել և կռվել Նիկոմեդեսի դեմ: Յեվ յերբ հռոմեական դեսպանները մերժեցին նաև այս դիմումը՝ նա համոզվեց, վոր բանակցություններն այլևս անօգուտ են և ինքնապաշտպանության միակ միջոցը պատերազմն է:

> «Չե՞ վոր ավազակի դեմ,—բացականչել եր նա,—ամեն վոք զենքի յե դիմում, յեթե վոչ փրկվելու՝ գոնե վրեժ առնելու համար»[1]:

Միհրդատի խաղաղ բանակցությունները, ինչպես միանգամայն ճիշտ բացատրել է Մոմզենը, վոչ թե դիվանագիտական խորամանկ խաղեր են յեղել, այլ անկեղծ ձգտում խուսափելու պատերազմից, վորը նա չեր ցանկանում և համարում եր դժվար ու վտանգավոր:

> «Թեև բանակցությունների խզումը,—ասում է Մոմզենը,—չեյին ուզում վոչ հռոմեական ծերակույտը, վոչ Միհրդատ թագավորը և վոչ ել Նիկոմեդես թագավորը՝ սակայն այդ ցանկանում եր Ակվիլիոսը, և պատերազմը սկսվեց»[2]:

1 Տես Յուստինոս, XXXVIII, V, 2:

2 Տես „Римская история". II, Москва 1887, եջ 286:

Ընդունելով սակայն, վոր Միհրդատը չեր ուզում պատերազմել Հռոմի հետ՝ Մոմզենը, այնուամենայնիվ, յենթադրում է, վոր իբր թե պատերազմը սկսելուց առաջ նա կնքել եր նոր ու ավելի սերտ դաշնագրություն Տիգրանի հետ և ստացել նրանից ոժանդակ մի զորաբանակ[1]:

Մոմզենի յենթադրությունը նոր դաշինքի կնքման մասին, վոր հիմնված է պարզապես Յուստինոսի վերոհիշյալ վկայության վրա, ինչպես տեսանք, միանգամայն անհավանական է: Թյուրիմացության արդյունք է նույնպես, ինչպես մատնացույց է արել իր հոդվածներից մեկում Ռեյնաքը[2], նաև Մոմզենի մյուս յենթադրությունը, վոր իբր թե պատերազմից առաջ Միհրդատը Տիգրանից ստացել եր ոժանդակ զորաբանակ:

Արմենների զորագունդը, վորը մասնակցել եր այս պատերազմին և բաղկացած եր 10.000 հոգուց՝ հիշատակված է, իրոք, Ապպիանոսի մոտ[3]: Վերջինս բացի Միհրդատի բուն զորքից (τὸ οἰκεῖον)՝ 250.000 հետևակ և 40.000 ձիավոր՝ առանձնապես մատնանշում է նաև Փոքր Հայքի ոգնական 10.000 հեծելազորը (συμμαχικά): Այս այրուձին, ինչպես հայտնի յե աղբյուրների վկայություններից՝ մասնակցել եր Միհրդատի վորդու Արիարաթի և, հավանորեն, Նեմանես կամ Նայմանես արմեն զորավարի առաջնորդությամբ հաղթական յերկու մեծ կռիվներին Ամնիաս գետի և Պրոտոպաքիոնի մոտ: Բայց այս զորքը վոչ թե Տիգրանի ուղարկած ոժանդակ զորաբանակն եր, այլ հեծելագունդն եր Փոքր Հայքի, վորն այդ ժամանակ, հավանորեն, միացված եր Արիարաթի Կապպադովկիայի թագավորության[4]:

Ամնիասի և Պրոտոպաքիոնի մոտ Միհրդատի առաջին հաղթություններից հետո կռիվը Փոքր Ասիայում ստացավ հետզհետե նախ ազգային և ապա սոցիալական հեղափոխության բնույթ: Պոնտական զորքերի հաղթական մուտքն արևմտյան Փոքր Ասիա մեծ վոգևորություն առաջացրեց, գլխավորապես, հելլեն ազգայնականների և, մանավանդ, դեմոկրատների շրջանում: Այս վերջիններն անչափ ատում եյին հռոմեական դաժան իշխանությունը, վորը վերացրել եր հելլենների անկախությունը և, պաշտպանելով ազնվականության ու հարուստների՝ կեղեքում եր ըն-

1 Տես նույնը, եջ 286 և 287:

2 Տես Revue des études grecques, II, եջ 384:

3 Տես Միհրդատ., 17:

4 Տես Reinach, Mithridate Eupator, եջ 122, ծանոթ. 1:

րանց հետ միասին ռամիկ ժողովրդին։ Թե վորքան վայրագ եյին այս կեղեքումները՝ այդ վկայում են իրենք հենց հռոմայեցիները։ Օրինակ, Կիկերոնը մատնանշում ե, վոր հռոմայեցիների անունն Ասիայի համար նողկալի եր, իսկ հարկերը, տասանորդը և մաքսերը միջոցներ եյին մահվան։

Միհրդատը, վորը պատերազմից առաջ ճանապարհորդել եր ծպտված և ծանոթացել Փոքր Ասիայի ներքին այս դրությանը՝ արդեն պատերազմի սկզբում աշխատեց պաշտպան ու հովանավոր լինել կեղեքված փոքրասիական ժողովրդի։ Գերված ասիացի զինվորներին նա վոչ միայն ազատում և տուն եր ուղարկում, այլ նրանց տալիս եր նաև ճանապարհածախս։

88 թվին Միհրդատն ամենակարճ ժամանակում նվաճեց ամբողջ գրեթե Փոքր Ասիան։ Բնակչությունն ընդունում եր նրան գրկաբաց և պատվում եր նրան՝ իբրև ազատարարի ու նոր Դիոնիսիոսի։ Նրան համարում եյին Ալեքսանդր Մակեդոնացու նման հելլենական-ասիական մի նոր աշխարհակալության հիմնադիր։

Հռոմեական իմպերիալիզմի ավելի քան քառասուն տարի տևող անողոք կեղեքումները, ինչպես ասացինք, առաջ եյին բերել Փոքր Ասիայում կատաղի ու անզուսպ ատելություն դեպի Հռոմը և, մանավանդ, դեպի նրա վարձակալներն ու վաշխառուները։ Յեվ միանգամայն հավանական կարելի չի համարել անգլիական պատմաբան Մերիվելի կարծիքը[1], վոր մոտ 80.000 իտալացիների կոտորածը Փոքր Ասիայում ավելի շուտ պետք ե վերագրել այս ատելությանն ու վոխակալությանը, քան Միհրդատի կանխամտածված թաքուն հրահանգներին։

Արդեն 88 թվին ապստամբության հրդեհը հետզհետե տարածվեց Փոքր Ասիայում և ազատագրված յերկրում շուտով տարերային կերպով բռնկվեց սոցիալական ամենամեծ հեղափոխություններից մեկը, վորն անցավ նաև Հունաստան։

88 թվի ամառը Հունաստանում վոտքի յելան և ապստամբեցին աթենացիները, վորոնց Փոքր Ասիայից նրանց դեսպանը հայտնել եր, վոր՝ թոթափելով Հռոմի իշխանությունը՝ նրանք կազատվեն պարտքերից և կվերականգնեն նախկին դեմոկրատիան ու իրենց հին ազատությունները։

88 թվի վերջերում պոնտական զորքերը, Միհրդատի վորդու Արիարաթի առաջնորդությամբ, անցան Յեվրոպա և գրավեցին

[1] Տես General history of Rom, 1875։

ՄԻՀՐԴԱՏ ԵՎՊԱՏՈՐ

Թրակիան ու Մակեդոնիայի մի մասը: Այս Արիարաթի հետ, վորը Կապպադովկիայի և, ըստ յերևույթին, նաև Փոքր Հայքի թագավորն եր՝ այստեղ ևս կռիվներին մասնակցել եր արմենական վերոհիշյալ հեծելազորը: Բացի Թրակիայից և Մակեդոնիայի մի մասից, Աթենքի ապստամբությունից հետո Միհրդատի կողմն անցան Ելլադայի գրեթե բոլոր մանր պետությունները և Եգեյան ծովի բոլոր կղզիները բացի Հռոդոսից:

Պետք է ասել, վոր յեվրոպական պատմագիտությունն այս մեծ անցքերը ներկայացրել է գունավորված ձևով և Միհրդատյան շրջանի խոշոր դեմքերը նկարագրել է վորոշ կողմնապահությամբ: Խիստ բնորոշ է այս տեսակետից, վոր մինչևիսկ հռոմայեցիները, վորոնք վոխերիմ թշնամիներն եյին Միհրդատի, ավելի դրական ու ավելի անաչառ կերպով են տվել սրա բնութագիրը, քան յեվրոպական նորագույն պատմագետները: Կիկերոնը Միհրդատ Եվպատորին համեմատում է Ալեքսանդր Մակեդոնացու հետ և նրան համարում է ամենամեծ թագավորն Ալեքսանդր Մակեդոնացուց հետո[1]: Յուստինոսը վկայում է, վոր Միհրդատն այնպիսի մի մեծություն եր, վորն իր վեհությամբ գերազանցում եր բոլոր թագավորներին թե իր և թե հետագա ժամանակների[2]: Ընդհակառակը, Մոմզենը Միհրդատին անվանում է ամենասովորական կարգի խստասիրտ, նենգադրուժ և անխիղճ արևելցի[3], իսկ Ռեյնաքը համարում է նրան հելլենական դիմակ հագած բարբարոս և ատող միջերկրական քաղաքակրթության[4]:

Միհրդատի անձնավորության նորագույն թե այս և թե նըման գնահատականները միանգամայն անհավանական են և անհիմն: Դժվար չէ կռահել, վոր յեվրոպական վերոհիշյալ պատմագետների հակակրանքը Միհրդատի նկատմամբ բացատրվում է մասամբ նրանով, վոր նա փորձ եր արել քայքայել հռոմեական իմպերիալիզմը վոչ միայն զենքով, այլ և սոցիալական դասակարգային հեղափոխությամբ, վորը պատմագետների մեծագույն մասը մահացու մի հանցանք են համարում ընդդեմ քաղաքակրթության:

Արդեն իր տիրապետության սկզբներում Միհրդատն ուզեց թեթևացնել Փոքր Ասիայի տնտեսական ծանր դրությունը և ա-

---

1 Տես Acad. II, 1, 3:

2 Յուստինոս, XXXVII, 1, 7:

3 Տես „Римская история", II, Москва 1887, եջ 272:

4 Mithridate Eupator, եջ 299:

պատեց իր գրաված ամբողջ յերկիրը թե հարկային հին ապառքներից և թե հետագա հինգ տարվա հարկերից։ Մոմզենն անմտություն է համարում նույնիսկ Միհրդատի այս մեծագործությունը[1]։ Փոքր Ասիայի կեղեքված ժողովրդի համար մեծ նշանակություն ունեցան, բացի այդ, նաև նրա 87 և 86 թվականների սոցիալական և տնտեսական ձեռնարկումները տեղական պլուտոկրատիայի դեմ, վորը մասնակից եր Հռոմի հետ միասին Փոքր Ասիայի շահագործմանը և կողմնակից եր, բնականաբար, հռոմեական իմպերիալիզմի իշխանության։

Իբրև պաշտպան և հովանավոր փոքրասիական ժողովրդի՝ Միհրդատն ազատություն տվեց իրեն հնազանդվող քաղաքներին և քաղաքացիության իրավունքներ տվեց տեղական բնակչությանը և օտարականներին։ Նրա կարգադրությամբ վոչնչացված հայտարարվեցին բոլոր պարտքերը, բաժանվեցին հողեր չքավորներին և ստրուկները ստացան ազատություն։

Մոտ 15.000 ազատագրված ստրուկներ, ինչպես հայտնի յե աղբյուրների վկայություններից, կռվում եյին հռոմայեցիների դեմ Հունաստան ուղարկված պոնտական զորքերի շարքերում։ Ուշագրավ է նույնպես, վոր հռոմայեցիների կողմնակից Քիոս կղզու բնակիչներին աքսոր եյին ուղարկել Կողքիս, հանձնելով նրանց սեփական ստրուկների հսկողության։

Հեղափոխության պատճառով պատերազմը շարունակվեց հռոմայեցիների դեմ քաղաքացիական և դասակարգային կռիվների հետ զուգընթաց։ Յեվ պոնտական պատերազմող բանակի թիկունքում Միհրդատի իշխանության դեմ շուտով վոտքի յելան Փոքր Ասիայի և Հունաստանի ազնվական ու դրամատիրական իշխող դասակարգերը։

Յերբ 87 թվի սկզբներում Սուլլայի զորաբանակը Հռոմից յեկավ Բեոտիա՝ Հունաստանի մեծագույն մասը, վորի մեջ ուժեղ եյին հակադեմոկրատական տարրերը՝ անցավ Հռոմի կողմը։ Հասկանալի յե, ուրեմն, վոր Սուլլայի հաղթական կռիվները Հունաստանում, ինչպես և հռոմեական բանակների հաջողությունները Փոքր Ասիայում՝ պետք է վերագրել վոչ միայն պրոֆեսիոնալ և մարզված հռոմեական զորքերի գերազանցությանը կամ պոնտական Արքեղայոս զորավարի դավաճանությանը, այլև ներքին հակահեղափոխական ապստամբություններին ընդդեմ Միհր-

[1] Տես „Римская история“, II, Москва 1887, եջ 290։

դատի։ Թե վորքան մեծ է յեղել ապստամբների ատելությունն ու զայրույթը դեպի Միհրդատը՝ այդ յերևում է աղբյուրների համապատասխան վկայություններից, վորոնց մեջ մատնանշված է, վոր մոտ 1600 մարդ մահվան եյին դատապարտվել Փոքր Ասիայում, մեղադրվելով իբրև Միհրդատի դեմ մահափորձի դավակիցներ։

Միհրդատյան առաջին պատերազմը վերջացավ 84 թվին և համաձայն Դարդանոսում ընդունված բանավոր դաշինքի պայմանների Միհրդատը հրաժարվեց իր բոլոր նվաճումներից և պարտավորվեց վճարել Սուլլային 2000 տաղանդ ռազմատուգանք և հանձնել նրան 70 կամ 80 ռազմանավ։

Վերոհիշյալ պատմագետները, յենթադրած լինելով վոր Տիգրան Բ-ը մասնակցած է յեղել այս պատերազմին՝ անհասկանալի յեն համարում և տարօրինակ, վոր Դարդանոսի դաշնագրության մեջ չե հիշատակվում Մեծ Հայաստանը։

«Այս դաշնագրության մեջ,—ասում է Մոմզենը,—բոլորովին չեր շոշափված հռոմայեցիների վերաբերմունքը դեպի Հայաստանի Տիգրան թագավորը, վորի հետ նրանք փաստորեն պատերազմել եյին։ Միանգամայն հիմնավոր կերպով Տիգրանն ընդունեց այդ հանգամանքն իբրև լռելյան համաձայնության նշան, վոր նրան թույլատրվում է գրավել Փոքր Ասիայում հռոմեական յերկրները։ Քանի վոր չեր կարելի թույլ տալ, վոր այդ յերկրները զոհ դառնան բարբարոսներին՝ անհրաժեշտ եր կամովին կամ ուժով համաձայնության գալ Ասիայի նոր այդ ուժեղ տիրակալի հետ»[1]։

Մոմզենի այս դիտողությունները չեն կարող ընդունելի համարվել և պարզապես թյուրիմացության արդյունք են։ Տիգրանը, ինչպես վերև տեսանք, չեր մասնակցել և պարտավորություններ չեր ստանձնել մասնակցելու այս պատերազմին, ուստի և միանգամայն հասկանալի յե, վոր հռոմայեցիները հիմք չունեյին մասնակից դարձնելու նրան Դարդանոսի դաշնագրության։

Հռոմեական իմպերիալիզմի վերահաստատումը Փոքր Ասիայում սոսկալի և աղետալի յեղավ այս յերկրի համար։ Հեղափոխությունն այստեղ ճնշվեց ամենադաժան կերպով, մի շարք քաղաքներ յենթարկվեցին ավերածության ու կողոպտման, անթիվ քանակությամբ նոր ստրուկներ ուղարկվեցին Իտալիա և Հռոմ։ Ի

[1] Տես „Римская история“, III, Москва 1887, եջ 32։

պատիժ իր անհավատարմության Փոքր Ասիան վճարելու էր 2000 տաղանդ ռազմատուգանք և, բացի այդ, նաև նախորդ հինգ տարվա (88—84 թ.) հարկերի ամբողջ գումարը: Հռոմեական զորքերը մոտ վեց ամիս լիառատ ապրեցին Փոքր Ասիայի քաղաքներում, որի բնակչությունը պարտավոր էր ամենաճոխ կերպով պահել ու կերակրել նրանց և վճարել յուրաքանչյուրին նրա սովորական ռոճիկի ավելի քան քառասնապատիկը:

Այսպիսով՝ 84 թվից սկսած Փոքր Ասիան շահագործվեց ու թալանվեց այն աստիճան, որ հարկադրված եղավ ծախել բոլոր իր հարստությունները և մինչևիսկ աշխատավոր որակյալ իր ժողովուրդը: Նա անկարող եղավ, այնուամենայնիվ, վճարել ոչ միայն վերոհիշյալ վիթխարի պարտքերը, այլև այդ պարտքերի տոկոսները:

Միհրդատյան առաջին այս պատերազմն անհրաժեշտ էր համառոտ կերպով հիշատակել, որովհետև այդ պատերազմի մասին աղոտ հիշողություններ պահպանված են Խորենացու պատմության և աշխարհագրության մեջ: Կարևոր այդ վկայությունները, որ կարոտ են հատուկ քննության՝ մեջ եմ բերում ամբողջությամբ:

1. Խորենացի II, գլ. ԺԲ, էջ 123 (Տփղիս 1913)՝

«Բայց Արտաշիսի նուաճեալ զցամաքս միջոցաց ծովուցն երկոցունց՝ լնու զՈվկիանոս բազմութեամբ նաւաց, ծառայեցուցանել կամելով զբոլոր արեւմուտս: Քանզի մեծ յոյզք խռովութեանց եղեալ ի Հռովմ՝ ոչ ոք ընդդիմանայ նմա հզօրապէս: Այլ ոչ գիտեմ ասել յորպիսի ազդմանէ, ահագին իմն աղմուկ լեալ շփոթից և բազմութեան զօրացն զմիմեանս կոտորեալ. իսկ Արտաշէս փախուցեալ մեռանի, որպէս ասեն՝ յիւրոց զօրացն, թագաւորեալ ամս քսան և հինգ:

Բայց և յԵլլադայ առեալ պատկերս զԴիոսի, զԱրտեմիտեայ, զԱթենայ, զՀեփեստոս, զԱփրոդիտեայ՝ տայ բերել ի Հայս. որք ոչ ժամանեալ միջամուխ լինել յաշխարհս՝ լսեն զբօթ մահուանն Արտաշիսի. և փախուցեալ ընկենուն զպատկերսն յամրոցն յԱնի. և քուրմք զնոցին զհետ լինելով, դադարեն առ նոսա»:

2. Խորենացի, II, գլ. ԺԳ, էջ 124՝

«և յառաջ. քան յԱսիայ հասանելն՝ յԱտտիկէ դղեկին քարոզեցաւ [Արտաշէս]»:

3. Խորենացի, «Աշխարհացոյց», հրատ. Սուքրյանի, Վենետիկ 1881, էջ 17՝

«Եւբիա մեծ կղզի, և Ատալանդ փոքրիկ կղզեակ ի մէջն. զոր ասեն գտեալ զօրացն Արտաշեսի Հայոց արքայի, զի մի նաւք ռաճկացն յամիցեն, մինչև պաշարեալն էր զգղեակն Զարմանալի. զի ջուրք յանպատճառս այսր անդր հոսէին. և ասեն անդ մեռեալ Արտաշեսի»:

Այս վկայությունների մեջ Զարմանալի դղյակը, ինչպես ուղիղ նկատել է Մարկվարտը[1], Աթենքն է, որը պաշարել էր Սուլլան, իսկ Եվբեա մեծ կղզին գրավել էին, իրապես, Միհրդատի զորքերը: Միանգամայն ճիշտ է նմանապես, որ 88 թվին՝ Թրակիայի, Մակեդոնիայի և Ելլադայի նվաճման ժամանակ՝ Հռոմը չկարողացավ «հզօրապէս ընդդիմանալ» պոնտական զորքերին՝ ներքին մեծ խռովությունների պատճառով:

Սակայն Խորենացին, որին ծանոթ չեն եղել Միհրդատյան պատերազմներին վերաբերող հռոմեական և հունական աղբյուրները՝ չի կարողացել, բնականաբար, տալ պատմական այս շրջանի ճշգրիտ պատմությունը և, շփոթելով դեպքերը, ենթադրել է ինքը, որ վերոհիշյալ անցքերը կարող էին տեղի ունեցած լինել Կրեսոս թագավորի և Արտաշես Աշխարհակալի ժամանակ:

Վերև մեջ բերված առաջին հատվածի վերջում ուշագրավ է Խորենացու վկայությունը, որ Ելլադայից Հայաստան էին բերվել Դիոսի, Արտեմիդեյի, Աթենասի, Հեփեստոսի և Աֆրոդիտեյի արձանները: Այդ արձանների մասին ֆրանսական գիտնական Ա. Կարրիերը կարծիք է հայտնել, որ «հունական կուռքերի Հայաստան մուծվելը ոչ թե իրական որևէ մի դեպքի է համապատասխանում, այլ արդյունք է Խորենացու՝ խորհրդածող երևակայության»[2]:

Կարրիերի այս պնդումը, ինձ թվում է, ավելի քան վիճելի է: Ագաթանգեղոսի և Խորենացու վկայություններից մեզ հայտնի է, որ Դիոսի, Արտեմիդեյի, Աթենասի և Հեփեստոսի արձանները գտնվում էին Անի-Կամախում, Երեզում, Թիլում և Բագաոիճում, որոնք Միհրդատյան պատերազմի ժամանակ դեռ չէին կցվել Հայաստանին և պատկանում էին Միհրդատի պոնտական

[1] Eranschahr, Berlin 1901, էջ 4:

[2] Տես «Հեթանոս Հայաստանի ութ մեհեանները Ագաթանգեղոսի և Մ. Խորենացւոյ համեմատ», թարգմ. Հ. Վ. Տաշյանի, Վիեննա 1899, էջ 39:

թագավորության[1]։ Միանգամայն հնարավոր է ըստ իս, վոր այդ արձանները կարող էին բերված լինել, ինչպես վկայում է Խորենացին, Հունաստանից Միհրդատյան առաջին պատերազմի ժամանակ, վորի մասին Խորենացու մոտ պահպանվել են նաև վերոհիշյալ պատմական հիշողությունները։

[1] Տես Markwart, Die Genealogie der Bagratiden, Caucasica, Fasc. 6, 2 Teil, Leipzig 1930, էջ 63։

6. ՏԻԳՐԱՆ ՅԵՐԿՐՈՐԴԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

Ինչպես վերև տեսանք, իննսունական թվականների վերջերում (մեր թվ. առ.) Տիգրան Յերկրորդը դաշն էր կնքել և բարեկամություն հաստատել Միհրդատ Եվպատորի հետ և ապահովել էր իր թիկունքն արևմուտքում։

Այս դաշնադրությունից և Կապպադովկիայի 93 և 91 թվականների արշավանքներից հետո, Տիգրանն օգտվեց ներքին խառնակություններից, վորոնք ծագել էին Միհրդատ Բ-ի մահից հետո (90 կամ 88 թ. մեր թվ. առ.) պարթևական թագավորության մեջ, և սկսեց իր հաղթական կռիվներն ընդդեմ թշնամի ու մրցակից պարթև Արշակունիների։ Այս կռիվների, ինչպես և Տիգրանի հետագա մեծ նվաճումների ճշգրիտ թվականները և նրանց ժամանակագրական հաջորդականությունը՝ պատմագիտական ու բանասիրական յերկերում հաճախ խառնաշփոթված և սխալ են վորոշված։

Պատերազմ սկսելով պարթևների դեմ՝ Տիգրանը, նախ և առաջ, յետ վերցրեց այն յոթանասուն հովիտները, վոր նա իբրև փրկանք տվել էր նրանց պատանդությունից ազատվելու համար։ Մարկվարտի կարծիքով, այս հովիտներն այն շրջաններն էին, վոր գրավել էր Արտաշես Ա-ը Ատրպատականի կողմերում[1]։ Ստրաբոնի ուշագրավ մի վկայությունից յերևում է[2], վոր Տիգրանը նվաճել էր այժմ բացի յոթանասուն հովիտներից նաև Մեծ Աղբակ գավառը, այսինքն՝ այժմյան Բաշքալեյի շուրջը գտնվող յերկիրը, վորը հետո ատրպատականցիները յետ առան հայերից 33 թվին (մեր թվ. առ.)[3]։ Ստրաբոնի համապատասխան վկայության մեջ Συμβάκη աղավաղված ընթերցվածը Մարկվարտն առաջարկում է ուղղել և կարդալ Ἀλβάκη։

«Մարաստան-Ատրպատականի հզոր հարևաններն են, —

[1] Տես Eranschahr, էջ 109։
[2] Տես XI, 13, 2:
[3] Տես Markwart, Eranschahr, էջ 109։

ասում է Ստրաբոնը,—արմենները և պարթևները, վորոնք հափշտակում եյին հաճախ նրա յերկրամասերը։ Սակայն նա դիմադրում եր և յետ եր առնում խլվածը. հենց այդպես նա յետ եր վերցրել հռոմեական իշխանության տակ գտնվող արմեններից Աղբակը [=Συμβάκην] և բարեկամություն եր հաստատել ինքը Կեսարի հետ»[1]։

Հավանորեն, Աղբակի գրավումից հետո յեր տեղի ունեցել Տիգրանի արշավանքը Ադիաբեն, ուր նա ավերածության եր յենթարկել Նինուեյի և Արբելայի շրջանները[2]։ Հետաքրքիր է ու ուշադրավ, վոր մինչևիսկ այս հեռավոր յերկրում, ինչպես վկայում է Ստրաբոնը, բնակություն եյին հաստատել արմենները, վորոնք կազմում եյին այստեղ բնակչության մի ստվար մասը։

«Ադիաբենի մեծագույն մասը,—ասում է Ստրաբոնը,—դաշտային է։ Լինելով Բաբելոնիայի մասը՝ սա ունի իր սեփական կառավարիչը. բայց յերբեմն միացված է յեղել և Արմենիային։ Մեդացիները, արմենները և բաբելոնացիները, վորոնք ամենամեծ թիվը կազմող ժողովուրդներն եյին միշտ այստեղ՝ սկզբից հենց այնքան եյին հակառակ իրար, վոր հարմար դեպքում միմյանց վրա եյին հարձակվում ու նորից հաշտվում»[3]։

Ադիաբենը և Մարաստան-Ատրպատականը նվաճելուց և իր իշխանությանը յենթարկելուց հետո՝ Տիգրանը հարավ-արևելքում կարողացավ հասնել մինչև պարթև Արշակունիների ամառնային նստավայր Եկբատանա մայրաքաղաքը և այրեց այստեղ նրանց Ադրաբանան ամրոցը, վորը Եկբատանայից գտնվում եր մոտ 10 կիլոմետր հեռավորության վրա[4]։

Պարթևների պարտությունն ունեցավ, բնականաբար, այն հետևանքը, վոր Հայաստանի բոլոր հարևան պետությունները, վորոնք մինչ այդ վասալներն եյին պարթև Արշակունիների՝ հարկադրված յեղան ընդունել Տիգրանի գերիշխանությունը։ Հայաստանի սահմանակից յերկրների՝ Ադիաբենի, Կորդուքի, Մարաստան-Ատրպատականի թագավորները յենթարկվեցին այնուհետև Տիգրանի իշխանության և, ըստ յերևույթին, պարտավոր

1 Տես XI, 13, 2:
2 Տես Ստրաբոն, XI, 14, 15:
3 Տես նույնը, XVI, 1, 19:
4 Տես Իսիդոր Խար., § 6—C. Müller, Geogr. graeci min. I, 250:

եյին նրան վճարել հարկ և օգնել զորքով պատերազմի ժամանակ։ Կասսիոս Դիոնը վկայում է նույնպես, վոր Ատրպատականի Միհրդատ թագավորն ամուսնացել եր Տիգրանի աղջկա հետ[1]։

Հաղթված և պարտված պարթևները վոչ միայն հաշտվեցին այս բոլորի հետ, այլ նաև ստիպված յեղան Տիգրանին տալ ամբողջ Միջագետքը և նրա մեջ գտնվող Միգդոնիան և Օսրոյենը։ Միևնույն ժամանակ, ինչպես դժվար չէ կռահել Յուստինոսի մի վկայությունից[2], նրանք կնքեցին նրա հետ դաշնակցության հատուկ պայմանագիր և հրաժարվեցին «թագավորների թագավոր» տիտղոսից, վորը կրելու յեր այնուհետև Տիգրան Բ-ը։

Տեր դառնալով Հայաստանի հարավային սահմանների մոտ գտնվող Միջագետքին՝ Տիգրանը փոխադրեց հարավային Միջագետքից և բնակեցրեց Օսրոյեն-Եդեսայի շրջաններում արաբական թափառական ցեղեր։ Սրանց նա հանձնարարեց, ինչպես վկայում են Պլուտարքոսը և Պլինիոսը[3], տրանզիտային առևտրական ճանապարհների վերահսկողությունը։ Տիգրանի համար նրանք մաքս եյին գանձելու, գլխավորապես, Յեփրատ գետի անցքի մոտ, վորը գտնվում եր Զեվգմայի արևմտակողմում։ Օսրոյենի հարևան Միգդոնիան, վորի մեջ ստրատեգիական մեծ կարևորություն ուներ Մծբինը, Տիգրանը կազմակերպել եր, ըստ յերևույթին, իբրև առանձին իշխանություն, վորի վերակացությունը նա հանձնել եր իր Գուրաս յեղբորը։

Ինչպես յերևում է աղբյուրների ուշադիր քննությունից, հայ-պարթևական կռիվները և Տիգրանի վերահիշյալ նվաճումները տեղի եյին ունեցել, մեծ մասամբ, Միհրդատյան առաջին պատերազմի տարիներում, մոտավորապես, 89—85 թվականներին։ Սխալ է, անտարակույս, Ասդուրյանի յենթադրությունը, վորը պարթևական յերկրների նվաճումը դնում է Ասորիքի միացումից և 84 թվից հետո[4]։ Գուտշմիդը շատ ուղիղ մատնանշել է, վոր Ասորիքը, վորը սահմանակից չեր Հայաստանին՝ կարելի յեր գրավել նախապես պարթևներին հաղթելուց և Միջագետքը նվաճելուց հետո[5]։

1 Տես XXXVI, 14:
2 Տես XL, 3:
3 Տես Պլուտ., Լուկուլլոս 21 և Պլինիոս VI, 28, 142:
4 Տես «Քաղաքական վերաբերութիւնները ընդմէջ Հայաստանի և Հռոմայ», Վենետիկ 1912, եջ 39:
5 A. von Gutschmid, Untersuchungen über die Geschichte des Königreichs Osroëne, Petersb. 1887, եջ 20, ծանոթ. 4:

Հայ-պարթևական կռիվներից հետո, մոտավորապես 84 կամ 83 թվին (մեր թվ. առ.), Տիգրան Բ-ը կարողացավ նաև տիրել ամբողջ վերին Ասորիքին բացի Անտիոքի մոտ գտնվող Սելևկիա քաղաքից: Ասորիքի գրավման մասին առանձնապես ուշագրավ է Յուստինոսի հետևյալ վկայությունը.

«Երբ յեղբայրների փոխադարձ ատելության և ծնողների թշնամությունների պատճառով,—ասում է Յուստինոսը,—վոր շարունակում եյին նաև վորդիները՝ Ասորիքի և՛ թագավորները և՛ թագավորությունը ուժասպառ յեղան համառ կռիվներում, ժողովուրդն ապավինեց դրսի ոգնության և սկսեց փնտռել իր համար ոտարերկրյա թագավորներ: Արդ՝ ժողովրդի մի մասը կարծում եր, վոր պետք է հրավիրել Միհրդատ Պոնտացուն, մի մասն էլ՝ Յեգիպտոսից Պտղոմեոսին, իսկ վոմանք առարկում եյին, վոր Միհրդատը խճճվել է հռոմեական պատերազմի մեջ և Պտղոմեոսը միշտ թշնամի յե յեղել Ասորիքին. բոլորը սակայն համաձայնության յեկան Հայաստանի Տիգրան թագավորի նկատմամբ, վորն ուներ իր սեփական ուժերը և միաժամանակ պարթևների դաշնակիցն եր և Միհրդատի փեսան եր»[1]:

Ասորիքի և Փյունիկիայի մասին կարևոր է նաև Ստրաբոնի վկայությունը, վորը հակառակ Յուստինոսի տեղեկության մատնանշում է, վոր այս յերկրները Տիգրանը գրավել եր վոչ թե խաղաղ կերպով, այլ զենքի ուժով:

«Իսկ նրա [Տիգրանի] բախտը,—ասում է Ստրաբոնը,—յեղել է փոփոխական. սկզբում նա պարթևների մոտ պատանդ եր. հետո նրան աջողվեց վերադառնալ հայրենիք, տալով նրանց յոթանասուն հովիտ Հայաստանում: Նա այնուհետև զորացավ և վոչ միայն յետ վերցրեց այդ հովիտները, այլև ավերեց նրանց յերկիրը Նինուեյի և Արբելայի շուրջը: Նա հպատակեցրեց իրեն Ատրպատականը և Կորդուքը և սրանց հետ միասին նաև Միջագետքի մնացած մասը: Բացի այդ, անցնելով Յեփրատ գետը՝ նա նվաճեց բռնությամբ Ասորիքը և Փյունիկիան»[2]:

Ինչպես տեսնում ենք, Ստրաբոնի հաղորդած այս տեղեկությունը հակասում է Ցուստինոսի վկայությանը, վորը պարզ ու

[1] Տես. Յուստինոս, XL, 1, 1—3:

[2] Տես XI, 14, 15:

վորոշ ասում է, վոր Տիգրանն Ասորիքին տիրել եր բնակիչների հոժարակամ առաջարկությամբ: Այս հակասության մասին միանգամայն հավանական կարելի յե համարել Ասատուրյանի բացատրությունը: Նրա կարծիքով՝ վերոհիշյալ յերկու վկայությունն էլ կարող են ուղիղ լինել, վորովհետև Տիգրանը՝ հրավիրված լինելով վորոշ կուսակցության կողմից՝ պետք է իրեն հպատակեցրած լիներ զենքով մյուս կուսակցությունը[1]:

Ըստ յերևույթին, Տիգրանի կողմնակիցներն են յեղել Անտիոք քաղաքը և միջազգային տարանցիկ առևտրի հետ կապված վաճառականները: Ասորիքի միացումը Հայաստանին նրանց համար տնտեսական կարևոր նշանակություն ուներ, վորովհետև Զևգմայի վրայով անցնող համաշխարհային գլխավոր ճանապարհը գտնվում եր, Միջագետքի նվաճումից հետո, Տիգրանի ձեռքում:

Հյուսիսային Ասորիքը գրավելուց հետո՝ Տիգրանն այնուհետև նվաճեց նաև արևելյան Դաշտային Կիլիկիան (Cilicia Pedias), վորը Սելևկյան պետության հյուսիս-արևմտյան մասն եր, և, բացի այդ, նույնպես և Կոմագենի փոքր թագավորությունը, վորը գտնվում եր Դաշտային Կիլիկիայի արևելակողմում:

Այսպիսով նա իր պետության արևմտյան սահմանում անմիջական հարևանը դառավ հռոմայեցիների, վորոնք 102 թվին (մեր թվ. առ.) գրավել եյին արևմտյան Լեռնային Կիլիկիան (Cilicia Tracheia):

Անտիոքը, վորը Սելևկյանների մայրաքաղաքն եր և ուներ մոտ կես միլիոն բնակչություն՝ դառավ հարավում Տիգրանի գլխավոր գահանիստ քաղաքը և այստեղ նրա անունով ու պատկերով տպվում եյին այն գեղեցիկ դրամները, վորոնք մեծ քանակությամբ պահպանվել են և պահվում են այժմ թանգարաններում: Իսկ Սելևկյան Ասորիքը նա դարձրեց առանձին կուսակալություն և այնտեղ կառավարիչ նշանակեց, ինչպես վկայում է Ապպիանոսը[2], իր Բագարատ (Μαγαδάτης=*Βαγαδάτης) զորավարին: Մարկվարտի կարծիքով՝ հայկական ավանդությունը, վորը պահպանված է Մար Աբասի մոտ՝ Բագրատունիների նախարարական տոհմի նախահայր է համարում հենց այս Բագարատին[3]: Սուլլայի և Միհրդատի դաշնադրության հետևյալ տարին, ուրեմն՝ արդեն 83 թվականին, ասորական տարեգրերը, ինչպես մատնանշում է

[1] Տես Ասատուրյան, «Քաղաքական վերաբերութիւնները», եջ 34, ծան. 3:

[2] Տես Սիրիականք, 48:

[3] Տես Eranschahr, եջ 174:

Մոմզենը[1], Տիգրանին համարում են տեր իրենց ամբողջ յերկրի և Կիլիկիան ու Ասորիքը հիշատակում են՝ որպես հայկական սատրապություն Բագարատի իշխանության տակ։

Ասորիքում հաստատված հայկական տիրապետության մասին հետաքրքիր է Ռեյնաքի հետևյալ դիտողությունը[2].

> «Ասորիքը,—ասում է նա,—ազատ շունչ քաշեց. և թեպետ նա յենթարկվեց նվաստացուցիչ օտար իշխանության, սակայն տասնչորս տարվա ընթացքում[3] նա ունեցավ խաղաղություն, ապահովություն և բարեկեցություն»։

Աղբյուրների պատահական ու կցկտուր տեղեկություններից յերևում է, որ Ասորիքին 84 83 թվին տիրելուց հետո Տիգրան Բ-ը յերկար ժամանակ կռիվներ է վարել արևելյան Փոքր Ասիայում և Փյունիկիայում, գլխավորապես, ամուր ու անառիկ քաղաքների դեմ։ Փյունիկիայում և հարավային Ասորիքում դիմադրությունը կազմակերպել էր նրա դեմ Սելևկյան Կլեոպատրա կամ Սելենե թագուհին։ Յեվ ավելի քան հավանական է, որ Ասորիքի այս մասերը և Փյունիկիայի ծովափնյա քաղաքները նա գրավել էր հետզհետե համառ ու յերկարատև կռիվներից հետո։

Սուլլայի մահից հետո (78 թ.) և Միհրդատյան յերրորդ պատերազմից առաջ (74—71 թ.) Տիգրանը նորից էր արշավել Կապադովկիա, ըստ յերևույթին, դարձյալ իր աներոջ Միհրդատի սադրանքով։ Այս անգամ Կապադովկիան, ինչպես մատնանշում է Ապպիանոսը[4], ընկել էր իր ցանցի մեջ՝ նա այժմ շրջապատված էր հայկական նոր գրավված յերկրներով ոչ միայն Ծոփքի, այլև Կոմագենի ու Դաշտային Կիլիկիայի կողմերից։ Տիգրանին հաջողվեց գրավել այս արշավանքի ժամանակ Կապադովկիայի Մաժաք մայրաքաղաքը և բազմաթիվ նաև այլ հելլենիստական

1 „Римская история", т. III, перевод А. Веселовского, Москва 1887, էջ 40։

2 Mithridate Eupator, էջ 312։

3 83—69 թ., տես Ապպիանոս, Սիրիականք, 48։ Համաձայն Յուստինոսի՝ (XL, 1, 4) Տիգրանի տիրապետությունը տևել է Ասորիքում 17 տարի։ Նիզեն կարծում է, որ Յուստինոսի տված XVII թիվը կարող է լինել վրիպակ (XVII փխ. XIII), տես Низе, Очерк римской истории и источниковедения. С. Петербург, 1910, էջ 288։ Ռեյնաքի կարծիքով՝ հայկական տիրապետությունը Յուստինոսը ցույց է տվել մինչև Տիգրանի վերջնական պարտությունը 66 թվին, տես Mithridate Eupator, էջ 312, ծան. 6։

4 Տես Միհրդատականք, 67։

քաղաքներ, որոնց բնակիչներին՝ մոտ 300.000 հոգի՝ նա փոխադրեց իր նորակառույց Տիգրանակերտ քաղաքը[1]։

Անհավանական պետք է համարել սակայն Մոմզենի կարծիքը, որ իբր թե, դեռևս այս արշավանքից առաջ՝ Տիգրանը միացրել էր Ծոփքին Մելիտենե քաղաքը և ամբողջ շրջանը[2]։ Այս յենթադրությունը, որն ընդունելի յեն համարել նաև Խալաթյանցը[3] և ուրիշները, չե կարող ճիշտ լինել, որովհետև Սալլուստիոսի և Տակիտոսի վկայություններից հայտնի յե, որ 69 թվի Լուկուլլոսի արշավանքի ժամանակ Յեփրատ գետի արևմտակողմը և Մելիտենե քաղաքը գտնվել են ոչ թե Տիգրանի, այլ Կապադովկիայի թագավորության սահմաններում[4]։

Բացի կապադովկիական քաղաքների բնակչությունից Տիգրանակերտ ու Հայաստան եյին բերվել նաև Դաշտային Կիլիկիայի քաղաքների և, մանավորապես, ծովափնյա Սոլի քաղաքի բնակիչները[5]։

Տիգրան Բ-ի կռիվները Փյունիկիայում և, հատկապես, Պտղոմայիդ քաղաքի նվաճումը հիշատակված են Հովսեպոս Փլավիոսի մոտ։ Պտղոմայիդի նվաճումը տեղի յեր ունեցել ոչ թե 74 թվին, ինչպես մատնացույց է արել Մոմզենը[6], այլ Լուկուլլոսի Հայաստան արշավելուց առաջ՝ 70 թվին (մեր թվ. առ.)[7]։

Հովսեպոսի համապատասխան վկայությունը մեջ եմ բերում ամբողջությամբ։

> «Այդ ժամանակ լուր ստացվեց,—ասում է Հովսեպոսը,—որ Հայոց Տիգրան թագավորը 300.000 զորքով ներս է մտել Ասորիք և գալու յե նաև Հրեաստան։ Տեղեկանալով այս մասին՝ սարսափահար յեղան, բնականաբար, Հրեաստանի թագուհին և ժողովուրդը։ Նրանք ուղարկեցին Տիգրանի մոտ, որը պաշարել էր Պտղոմայիդը, դեսպաններ բազմաքանակ ու արժանավայել ընծաներով։ Իսկ Սելենե թագուհին, որի անունն էր նաև Կլեոպատրա և որն իշխում էր Ասորիքում՝ գրգռում էր բնակիչներին, որ դիմադրեն Տիգրանին։

1 Տես նույնը, 67. համեմատե նաև Ստրաբոն, XII, 2, 9 (539)։

2 Տես „Римская история", III, Москва 1887, էջ 39։

3 Очерк истории Армении, Москва 1910, էջ 160։

4 Տես Sall. IV, frg. 59 և Tac., Annales 15, 27։

5 Տես Պլուտ., Պոմպ. 28, 4. համեմատե նաև Դիոն Կասսիոս XXXVI, 37։

6 „Римская история", III, էջ 40։

7 Համեմատե Պլուտ., Լուկուլ., 21, 2։

Դեսպանները չեկան նրա մոտ և աղաչեցին, որ բարի ու ողորմած լինի դեպի իրենց թագուհին և ժողովուրդը։ Եվ այդ ժամանակվանից Տիգրանը հոգատար վերաբերմունք ունեցավ նրանց նկատմամբ և քաջալերեց նրանց ու հուսադրեց։ Երբ Տիգրանն արդեն վերցրել էր Պտղոմայիդը՝ նրան հայտնեցին, որ Լուկուլլոսը՝ հետապնդելով Միհրդատին՝ չի կարողացել նրան բռնել և վերջինս փախել է Իբերիա։ Նրան նմանապես ազդարարեցին, որ Լուկուլլոսը պաշարել է և ավերում է Հայաստանը։ Երբ Տիգրանն այս իմացավ՝ վերադարձավ իր բուն երկիրը»[1]։

Ինչպես վկայում է նաև Ստրաբոնը, Ասորիքում և Փյունիկիայում տեղի ունեցած այս կռիվների ժամանակ Տիգրանը գերի էր վերցրել Սելենե-Կլեոպատրա թագուհուն։ Վերջինս բանտարկվեց Զեվգմայի դիմաց գտնվող Սելևկիա բերդում և գլխատվեց Տիգրանի հրամանով Լուկուլլոսի 69 թվի արշավանքից առաջ[2]։

Իր քառասունհինգ տարվա թագավորության ընթացքում (95—70 թ. մեր թվ. առ.) Տիգրան Բ-ը, ինչպես տեսնում ենք, կարողացել էր անչափ ընդարձակել իր երկիրը, որն այժմ տարածվում էր Կասպից ծովից և Կուր գետից մինչև Միջերկրական ծովն ու Եգիպտոսի սահմանները և Մեծ Մարաստանից մինչև հռոմեական Լեռնային Կիլիկիան ու Կապադովկիան։ Թեև Հովսեպոսի վկայությունից երևում է, որ Տիգրանը Պաղեստինի վրա չէր հարձակվել, սակայն այդ երկիրը ևս, ըստ երևույթին, որոշ չափով ընդունել էր նրա գերիշխանությունը։ Ուշագրավ է այս տեսակետից Ապպիանոսի հաղորդած տեղեկությունը[3], որի համաձայն Տիգրանի գերիշխանությանը ենթարկված է եղել ամբողջ Ասորիքը մինչև Եգիպտոսի սահմանները։

Գրաված լինելով Դաշտային Կիլիկիան ու Կոմագենը՝ Տիգրանն արդեն ոտք էր դրել Փոքր Ասիա և հարևան էր դառնել, ինչպես ասացինք, հռոմեական Լեռնային Կիլիկիային։ Կապադովկիան, որը հռոմայեցիների դաշնակիցն էր՝ շրջապատված էր այժմ Պոնտոսի, Ծոփքի, Կոմագենի և Դաշտային Կիլիկիայի կող-

[1] Տես Հնախոսություն, XIII, 16, 4. համեմատե նաև Հրեական պատերազմ, I, 5, 3։

[2] Տես Ս տ ր ա բ ո ն, XVI, 2, 3։

[3] Տես Սիրիական, 48—49։

մերից ու գրեթե անպաշտպան էր ստրատեգիական աննպաստ իր դրության պատճառով։

Տիգրանի նվաճումները Միջերկրական ծովի ափերին և, մանավանդ, Հռոմի դաշնակից Կապադովկիայի վերոհիշյալ ավերածությունը, վարկաբեկում էին, բնականաբար, հռոմեական հանրապետության հեղինակությունն արևելյան երկրներում։ Սակայն չնայած դրան՝ Հռոմը չեզոքություն պահպանեց և չպաշտպանեց մինչև իսկ իր դաշնակից Կապադովկիային։

Հռոմի չեզոքությունը միանգամայն հասկանալի է, որովհետև Տիգրանի նվաճումները տեղի էին ունեցել կամ Միհրդատյան պատերազմների ժամանակ և կամ Սուլլայի արյունահեղ դիկտատուրայի ընթացքում, երբ Հռոմը թույլ էր ու անզոր ներքին երկպառակությունների պատճառով։ Ինքը Տիգրանը չուներ, իհարկե, որևէ պատճառ պատերազմելու հռոմայեցիների դեմ, քանի որ սրանք չէին միջամտում և չէին խանգարում Հայաստանի աշխարհակալ ընդարձակումը։

Ահա այս բարենպաստ պայմաններն էին պատճառը, որ 95—70 թվերին Հայաստանը հետզհետե կարողացավ դառնալ հզոր ու մեծ պետություն։

7. ՀԵԼԼԵՆԻԶՄԻ ԶՈՐԵՂԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՅԵՎ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Տիգրան Բ-ի մեծ ու լայնարձակ աշխարհակալությունը, վորը խայտաբղետ մի խառնուրդ եր ցեղերի, լեզուների և տարբեր մշակույթների՝ չե կարող, ինարկե, համարվել միահար, կայուն ու ամուր մի պետություն։ Տիգրանի գերիշխանության տակ միացել եյին թե տոհմա-ցեղային նահապետական շրջաններ, թե ֆեոդալական յերկրներ և թե հելլենիստական քաղաքներ, վորոնք ունեյին իրենց հատուկ կազմակերպությունը։

Հայաստանի հարևան թագավորությունները, վորոնք ճանաչել եյին «թագավորների թագավոր» Տիգրանի գերիշխանությունը, ըստ յերևույթին, պարտավոր եյին նրան տալ վորոշ հարկ, իսկ պատերազմի ժամանակ ոգնելու եյին նրան իրենց զորքով։ Վասալական այս թագավորությունները, ինչպես և բուն Հայաստանի իշխանական ինքնավար յերկրները, պահպանում եյին նախկին իրենց հատուկ կարգերը և իրենց ուրույն կազմակերպությունը։

Տիգրանի այս հսկայական մեծ պետության մեջ առաջնակարգ դեր եր կատարում, անտարակույս, կալվածատեր հայ ազնվականությունը, վորը նրա գլխավոր հենարանն եր, ինչպես վերոհիշյալ հաղթական կռիվներում, նույնպես և պետական ու կառավարչական գործերում։ Յեվ իրավի, մենք տեսանք վերև, վոր Մծբինի վերակացությունը նա հանձնել եր իր Գուրաս յեղբորը, իսկ Անտիոքում կառավարիչ եր նշանակել Բագարատ հայ իշխանին։

Հենց Հայաստանի տիրող կալվածատիրական ու զինվորական ազնվականության զորեղացմամբ և, գլխավորապես, Հայաստանի քաղաքական ու տնտեսական անարգել ու առաջընթաց զարգացմամբ՝ բացատրվում են, հավանորեն, Տիգրան Բ-ի գլխապտույտ հաջողությունները և նրա աշխարհակալման ձգտումները։

«Տիգրան Մեծի հաջողությունները,—ինչպես միանգամայն ճիշտ մատնանշել է Գր. Խալաթյանցը,—պետք է վերագրել տնտեսական այն կուտակված մեծ ուժերին, վոր հավաքվել եյին Հայաստանում դարերի ընթացքում—պարսիկների խաղաղ տիրապետության շրջանում, Սելևկյանների ժամանակ և ավելի ուշ»[1]։

«Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին» ռուսերեն իմ աշխատության մեջ մանրամասն նույնպես ցույց եր տրված[2], վոր հայ ժողովրդի աճման ու տնտեսական զարգացման տեսակետից Հայաստանը խիստ աննպաստ պայմանների մեջ եր գտնվում Պոմպեյոսի հաղթությունից հետո (66 թ. մեր թվ. առ.)՝ յերբ նա դառել եր բուֆեր պետություն Արևմուտքի և Արևելքի մրցող մեծ պետությունների միջև։ Մինչ այդ, Աքեմենյանների խաղաղ տիրապետության, ինչպես և Սելևկյանների ու Տիգրան Բ-ի նախորդների ժամանակ, Հայաստանում քաղաքական պայմանները միանգամայն բարեհաջող են յեղել թե ժողովրդի աճման և թե յերկրի տնտեսական զորեղացման համար։

Կարելի յե, իմ կարծիքով, վստահորեն յենթադրել, վոր հայ ժողովրդի թիվը ավելի մեծ է յեղել Արտաշեսյան թագավորության և Տիգրան Բ-ի ժամանակ, քան հետագա դարերում։ Յեվ, մասնավորապես, Ստրաբոնի վկայություններից ես մենք գիտենք[3], վոր նրա ժամանակ արմենները վոչ միայն գրաված են յեղել ամբողջ հայկական լեռնաշխարհը, այլ մեծ թիվ են կազմել նաև Ադիաբենում և հյուսիսային Միջագետքում։

Հայաստանի բնակչության այս աճումը ևս, ինչպես և տնտեսական ու քաղաքական նրա խաղաղ զարգացումը նախորդ դարերում՝ մեծապես նպաստել եր, անշուշտ, նրա աշխարհակալական ընդարձակմանը Տիգրանի ժամանակ։

Նախորդ մեր աշխատություններից մեկում մենք, բացի այդ, հավանական եյինք համարել, վոր արդեն Արտաշես Ա-ի ժամանակ Հին Հայաստանը գտնվել է նախնական ֆեոդալիզմի շրջանում և ունեցել է ֆեոդալական կազմակերպությանը հատուկ սարքերը և առանձին հիմքերը[4]։ Պլինիոսի կարևոր մի վկայու-

1 Տես Очерк истории Армении, Москва 1910, եջ 161։

2 „О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен", Эривань 1930, եջ 50—53։

3 Տես XVI, 1, 19 և 26։

4 Տես Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Յերևան 1934, եջ 248—251։

թյունից հայտնի յէ, որ Հայաստանը բաժանված էր նրա ժամանակ (23—79 մեր թվ. հ.) 120 շրջանների, որոնք նա անվանում է ստրատեգիաներ, այսինքն՝ «զորավարություններ»[1]: Մեծագույն մասն այս շրջանների, որոնք գոյություն ունեյին, հավանորեն, արդեն Տիգրան Յերկրորդի ժամանակ՝ համարվելու յին, ինչպես այդ մատնանշել է Ադոնցը[2], նախարարական յերկըրներ, որոնց մեջ տնտեսապես և քաղաքականապես գերակշռող դեր էր կատարում կալվածատեր ազնվականությունը և, իմ կարծիքով, ոչ այնքան ստրուկ աշխատավորությունը, որքան կիսազատ և ազատ գյուղացիությունը:

Բացի Պլինիոսի վկայությունից ուշագրավ է նաև Պլուտարքոսի հաղորդած տեղեկությունը չորս թագավորների մասին, որոնք սպասարկում եյին Տիգրանին:

«Շատ թագավորներ,— ասում է Պլուտարքոսը,— սպասավորում են Տիգրանին, բայց նրանցից չորսը միշտ նրա հետ եյին լինում՝ որպես ուղեկիցներ և թիկնապահներ. և յերբ նա գնում էր ձիով՝ նրանք կարճ խիտոններ հագած՝ վազում եյին առջևից. իսկ յերբ նստած էր լինում և պաշտոնական գործերով էր զբաղվում՝ նրանք կանգնած եյին լինում նրա շուրջը՝ իրար ձեռքից բռնած»[3]:

Հիմնվելով Պլուտարքոսի այս հաղորդագրության վրա, որը չափազանցված մի ծաղրանկար է ֆեոդալական հանդիսակարգերի՝ Մարկվարտը կարծում է[4], որ վերոհիշյալ չորս թագավորները, հավանորեն, Հայաստանի չորս բդեշխներն են, որոնց ծագումը հավանական է յենթադրել Տիգրան Բ-ի ժամանակ: Նիկ. Ադոնցը նմանապես հավանական է համարում, որ ֆեոդալական Հայաստանի չորս բդեշխությունները, որոնց մասին մանրամասն տեղեկություններ ունեն Ագաթանգեղոսը, Փավստոսը և Մովսես Խորենացին[5], նախկին փոքր ու ինքնուրույն թագավորությունների միապետներ են, որոնք Տիգրան Բ-ի ժամանակ ճանաչել եյին հայ թագավորների քաղաքական գերիշխանությունը[6]:

1 Տես P l i n., Nat. Hist. VI, 10, 2:
2 Армения в эпоху Юстиниана, С.-Петербург 1908, էջ 392:
3 Պ լ ու տ., Լուկուլ., 21, 6:
4 Eranschahr, էջ 171—173:
5 Տես իմ աշխատությունը «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում», էջ 34—3:
6 Տես Армения в эпоху Юстиниана, էջ 283 և 410—411:

Աղբյուրների թռուցիկ ու պատահական տեղեկությունները, դժբախտաբար, հնարավորություն չեն տալիս մեզ հանգամանորեն քննության առնելու Հայաստանի ներքին կյանքը նախարշակունյան այս շրջանում: Մեզ հայտնի յէ միայն, որ Տիգրան Բ-ի վերանորոգչական գլխավոր գործերն են յեղել Տիգրանակերտի հիմնումը և հելլենիզմի ու հելլենիստական քաղաքային կուլտուրայի տարածման ու զարգացման նրա հատուկ քաղաքականությունը: Նա հասկացել էր, ըստ յերևույթին, որ նահապետական հայ կենցաղի տնտեսական ու կուլտուրական առաջադիմությանը կարող էր մեծապես նպաստել հելլենիստական տիպի քաղաքը, որը կենտրոն էր արհեստների, արդյունագործության ու առևտրի զարգացման:

Պետք է ասել, որ հելլենասիրությունը այդ ժամանակ ընդհանուր յերևույթ էր նաև Հայաստանի հարևան յերկրներում: Դեռևս յերկրորդ դարում Կապպադովկիայի Արիարաթ Ե. թագավորը (163—130 մեր թվ. առ.), որը յերկար ժամանակ ճանապարհորդել էր Իտալիայում և Հունաստանում՝ հրավիրել էր Կապպադովկիա հույն արվեստագետներ ու գրողներ և իր յերկրի Մաժաք ու Տիանա գլխավոր կենտրոնավայրերը դարձրել էր հելլենիստական տիպի ինքնավար քաղաքներ, որոնցից Մաժաքն ընդունել էր ու գործադրում էր, ինչպես վկայում է Ստրաբոնը[1], Խարոնդասի օրենքները:

Հելլենական մշակույթը և հելլենիստական քաղաքների հատուկ վարչակարգն ավելի մեծ չափերով տարածվում եյին Պոնտոսում, գլխավորապես, Միհրդատ Եվպատորի ժամանակ, որին յեվրոպական պատմագետները հնարավոր են համարել համեմատել Պետրոս Մեծի հետ:

Այստեղ Պոնտոսում արդեն հնագույն ժամանակներում հելլենական քաղաքակրթության ու լեզվի տարածման գլխավոր նեցուկներն եյին հունական ծովափնյա քաղաքները՝ Ամաստրիսը, Սինոպը, Ամիսոսը, Տրապիզոնը և հունական մյուս ավելի փոքր գաղութները: Միհրդատ Եվպատորի ժամանակ այս քաղաքները խիստ մեծացել եյին և դառել միջազգային մեծ առևտրի նավահանգստային հարուստ կենտրոններ: Հռոմեական նվաճումից առաջ, ասում է Ռեյնաքը[2], նրանք ոչ միայն իրենք եյին հասել բարեկեցության ու կուլտուրական զար-

1 Տես XII, 2, 9:
2 Mithridate Eupator, էջ 246:

դացման բարձր աստիճանի, այլև, աջակցելով Պոնտոսի և Մեծ Կապպադովկիայի տնտեսական առաջադիմությանը՝ սկսել էին հելլենիզմի կենդանաբար ազդեցությունը տարածել և այդ երկրներում:

Շնորհիվ Միհրդատի առատաձեռն ու հոգատար աջակցության պոնտական բոլոր քաղաքներում կառուցվել էին հոյակապ ու գեղեցիկ նոր շենքեր, մինչևիսկ ամբողջ թաղամասեր, և բուռն թափով զարգանում էին ամեն տեղ հելլենական գեղարվեստն ու գիտությունը, վորոնք վայելում էին թագավորի հատուկ հոգատարությունը: Միհրդատ Եվպատորը պարզապես հետզհետե կերպարանափոխում էր իր երկիրը և տարածում ամենուրեք հունական քաղաքակրթությունը: Նրա ժամանակ վոչ միայն հին Ամասիա մայրաքաղաքը, այլ նույնիսկ վորոշ ավանագյուղեր դարձել էին արդեն հելլենիստական քաղաքներ: Հելլենական մշակույթի տարածման ու զորեղացման պարզ ցուցանիշներ են պոնտական Կոմանա, Կաբիրա, Գազիուրա, Պիմոլիսա և Տալավրա գյուղաքաղաքները, վորոնք պղնձադրամներ էին կտրում հունարեն լեզվով և առասպելական հունական պատկերներով:

Ինչպես և Ալեքսանդր Մեծը, ըստ երևույթին, Միհրդատը ևս իրեն նպատակ էր դրել հաշտեցնել իրար հետ և միաձուլել արևելյան իրանական մշակույթը, վորի ազդեցությանը մեծ չափերով ենթարկվել էր Պոնտոսը, արևմտյան հելլենական մշակույթի հետ, և սկսել էր արդեն վերակառուցել իր երկրի տնտեսական ու կուլտուրական կյանքն այդ նոր հիմքերի վրա:

Թե վորքան զորեղ է եղել իրանիզմի և հելլենիզմի կուլտուրական մերձեցումը՝ այդ ցույց են տալիս, նախ և առաջ, այդ երկու մշակույթների կրոնական հաշտեցումը և պոնտական տեղական աստվածների միաձուլումը հունականների հետ, որինակ՝ Մա և Որմուզդ աստվածների նույնացումը Արտեմիդեյի և Զևս Ստրատիոսի հետ: Այդ մերձեցման մի պարզ ապացույց է նաև այն, վոր Կոմանայում, վորը պոնտական ամենահռչակավոր սրբատեղերից մեկն էր՝ Միհրդատի ժամանակ քրմապետ էր նշանակվել Դորիլաոսը, վորը հույն էր:

Վոր զուգընթաց կուլտուրական ու կրոնական այս մերձեցման տեղի յեր ունենում նաև ցեղային զանազան խմբակցությունների մերձեցումը հույների հետ՝ այդ ևս պարզ երևում է պոնտական Ամասիայում ծնված խոշորագույն աշխարհագրագետ Ստրաբոնի կենսագրությունից (մոտավ. 64 թ. մեր թվ. առ.—

19 մեր թվ. հ.): Սա իր նախնիքների շարքում բացի հույներից հիշում է պարսիկ Մոափերնեսին և պափլագոնացի Տիբիոսին[1]:

Միհրդատ Եվպատորի թագավորության մեջ, ինչպես տեսնում ենք, իրագործվում էր Ալեքսանդր Մակեդոնացու սկսած այն մեծ գործը, վորի նպատակն էր ըստ Դիոդորոսի[2] Ասիայի ու Յեվրոպայի «միաբան համերաշխությունը և տոհմակցական բարեկամությունը»:

Հելլենիստական քաղաքային կուլտուրայի զարգացման և իր երկրի տնտեսական բարեկարգման ու բարգավաճման այդ նույն քաղաքականությունը վարել է նաև Տիգրան Բ-ը Մեծ Հայաստանում:

Վերանորոգչական այս շարժումը, ինչպես մանրամասն մատնացույց եյի արել «Հին Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին» ռուսերեն իմ աշխատության մեջ[3] սկսվել էր դեռևս Տիգրանից առաջ, գլխավորապես, Ծոփքում, վորն անմիջական հարևանն էր Սելևկյանների թագավորության: Ծոփքի զարգացմանը մեծ չափով զարկ էր տվել տնտեսական ու կուլտուրական մեծ հեղաշրջումն Ասորիքում և Միջագետքում: Յեվ Ծոփքում էին հիմնվել, ինչպես հայտնի յե, Հին Հայաստանի հելլենիստական տիպի առաջին քաղաքները՝ Արշամաշատը և Կարկաթիոկերտը:

Հելլենիզմի ազդեցությունը Ծոփքի և Մարաստանի կողմերից վորոշ չափով թափանցած պիտի լիներ, բնականաբար, նաև Մեծ Հայքի հյուսիսային շրջանները: Այդ ազդեցության պարզ ապացույց են Արմավիրում գտնված Սելևկյան շրջանի հունարեն արձանագրությունները: Այստեղ ևս Արարատյան դաշտում Արտաշես Ա-ը հիմնել էր, ինչպես տեսանք, Արտաշատ քաղաքը:

Սակայն ավելի լայն չափերով և ավելի վճռական կերպով հելլենիզմի ու հելլենիստական քաղաքային կուլտուրայի տարածումը տեղի ունեցավ Մեծ Հայաստանում Տիգրան Բ-ի ժամանակ:

Վերանորոգչական այս գործն ավելի դժվար էր, իհարկե, իրականացնել Հայաստանում, քան Պոնտոսում, վորն ուներ արդեն հելլենական բազմաթիվ քաղաքներ: Քաղաքների ու քաղաքային կուլտուրայի զարգացման համար անհրաժեշտ էր կուլտուրական հարևան երկրներից Հայաստան փոխադրել ամբողջ քա-

1 Տես Ստրաբոն, XI, 2, 18 և XI, 3, 4:

2 Տես XVIII, 4, 4:

3 Տես „О торговле и городах Армении", էջ 25—31:

ղաքներ։ Իսկ այդ հնարավոր էր միմիայն բանի միջոցներով։ Ուստի և Տիգրանը հարկադրված յեղավ գաղթեցնել դրսից Հայաստան առևտրականներ, արհեստավորներ և այլ փորձակյալ աշխատավոր տարրականներ, վորոնք հիմք էին դնելու նրա յերկրում հելլենիստական քաղաքային կենցաղի և նեցուկ էին ծառայելու Հայաստանի տնտեսական ու կուլտուրական զարգացման։

Ինչպես վերև տեսանք, հատկապես այդ նպատակով նա բռնի կերպով բնակեցրել էր Հայաստանում Կապպադովկիայի, Կիլիկիայի և, հավանորեն, նաև Ասորիքի, Կորդուքի և Ադիաբենի[1], հելլենիստական այն քաղաքների բնակչությունը, վոր նա գրավել էր իր արշավանքների ժամանակ։

Բացի վերև մատնանշված տեղեկություններից՝ այդ գաղթականության մասին կարևոր են ու հետաքրքիր նաև Ստրաբոնի հետևյալ վկայությունները։

1. Ստրաբոն, XI, 14, 15 (532)՝

«Յերբ Տիգրանը զորեղացավ մինչ այդ աստիճան՝ նա հիմնեց մի քաղաք..., վորն անվանեց Տիգրանակերտ և բերեց այդտեղ իր ավերած 12 հելլենական քաղաքների բնակչությունը»։

2. Նույնը, XII, 2, 9 (539)՝

«Վատ վարվեց Տիգրան արմենը մաժաքցիների հետ, յերբ նա արշավել էր Կապպադովկիա։ Նա ամբողջ բնակչությունը քշեց տարավ Միջագետք և նրանց բնակեցրեց մեծ մասամբ Տիգրանակերտում։ Սակայն հետագայում, Տիգրանակերտի նվաճումից հետո, ով վոր կարող էր՝ վերադարձավ հայրենիք»։

Նույն գաղթականության մասին, վորը բերված է յեղել վոչ միայն Տիգրանակերտ, այլև Արտաշատ ու ուրիշ կենտրոնավայրեր՝ ունեն ուշագրավ վկայություններ նաև Փավստոսը և Մովսես Խորենացին, վորոնց հաղորդած տեղեկությունները[2] մեջ են բերված և քննված են իմ «Ֆեոդալիզմը Հին Հայաստանում» աշխատության մեջ[3]։

1 Պլուտարքոս, Լուկուլ., 26, 2։

2 Տես Փավստոս, IV, գլ. ԻԴ և ԾԵ, Խորենացի, II, գլ. ԺԶ, ԺԹ, ԽԹ, ԿԵ, III, գլ ԼԵ։

3 Տես էջ 216—219։

Տիգրան Բ-ի աշխարհակալական պետության քաղաքական ու կուլտուրական կենտրոնն էր լինելու նրա հիմնած Տիգրանակերտ քաղաքը։ Վո՛չ Հայաստանի Արտաշատ մայրաքաղաքը, վո՛չ էլ Սելևկյանների Անտիոք քաղաքը, վորոնք գտնվում էին նրա մեծ պետության ծայրամասերում, չէին կարող ծառայել այդ նպատակին։ Բացի այդ, ընտրելով Անտիոքն իբրև աթոռանիստ կենտրոն՝ նա կկտրեր իր կապը Հայաստանի հետ, վորը գլխավոր նեցուկն էր ու հիմքը նրա ռազմական աջողությունների։

Տիգրանակերտ քաղաքի մասին բավականաչափ տեղեկություններ տալիս են հռոմեական ու հունական մատենագիրները, վորոնք նկարագրել են Լուկուլլոսի արշավանքը Հայաստան և Տիգրանակերտի պաշարումն ու առումը։

Համաձայն Ապպիանոսի վկայության[1] Տիգրանակերտ քաղաքը շրջապատված էր 50 կանգուն բարձրությամբ պարիսպներով, վորոնք այնքան լայն էին, վոր նրանց մեջ շինել էին ձիերի համար ախոռներ և պահեստանոցներ։ Քաղաքի ներսում գտնվում էր ամուր ու անմատչելի միջնաբերդը։ Իսկ պարիսպներից դուրս Տիգրանը շինել էր տվել իր փառահեղ պալատը, վորի շուրջը գտնվում էին պարտեզներ, զբոսարաններ, վորսատեղեր և ձկնավազաններ։ Բացի այդ, այս տեղերի մոտ կառուցել էին նաև մի ամուր ամրոց։

Բռնի կերպով Տիգրանակերտ էին գաղթեցրել վոչ միայն վերոհիշյալ հելլենիստական քաղաքների բնակիչներին, այլև հայ ազնվականներին ու մեծամեծներին, վորոնց դույքն ընդդիմության դեպքում յենթարկվում էին բռնագրավման։ Պլուտարքոսի վկայությամբ[2] թե այս ազնվականությունը և թե քաղաքի հասարակ ժողովուրդն աշխատում էին հաճոյանալ թագավորին և աջակցում էին քաղաքի կառուցման և ընդարձակման։

Մոմզենը[3] և հայագետ բանասերներից շատերը, վորոնք ոգտվել են նրա պատմությունից, հին Տիգրանակերտը համեմատել են Նինուեյի և Բաբելոնի հետ։ Լեման-Հաուպտը նույնպես կարծում է, վոր Տիգրանի հիմնած քաղաքն ըստ իր տիպարի ու հատակագծի նման է յեղել ասորեստանյան քաղաքներին[4]։ Այս զուգա-

1 Տես Միհրդատականք, 84։

2 Տես Լուկուլ., 26, 3։

3 „Римская история" III, Москва 1885, էջ 41։

4 Տես C. F. Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, Berlin 1910, էջ 396—399։

դրումը, ինչպես ցույց ենք տվել «Հայաստանի առևտրի ու քաղաքների մասին» ռուսերեն մեր աշխատության մեջ[1], ճիշտ չէ։ Բաբելոնը և Նինուեն ո՛չ ըստ իրենց տիպի և ո՛չ էլ ըստ իրենց հատակագծի չեն կարող, իհարկե, նման ու համապատասխան համարվել այն քաղաքներին, որոնք հիմնվում էին հելլենիստական պետություններում։ Ինչպես հայտնի է մատենագրական աղբյուրների նկարագրություններից՝ Բաբելոնում և Նինուեյում անծայրածիր տարածության վրա և առանձին թաղամասերի միջև սփռված էին վարելահողեր, մարգագետիններ, այգիներ և մրգատու անտառակներ։ Այդ քաղաքների բնակիչների գլխավոր պարապմունքն էր ո՛չ այնքան առևտուրը և արհեստները, որքան գյուղական տնտեսությունը։ «Նինուէ,—վկայում է Հովնան մարգարեն,—էր քաղաք մեծ Աստուծոյ՝ իբրև գնացս երից աւուրցս ճանապարհի» (Գ, 2)։ Իսկ Բաբելոնի շրջապատը հավասար էր համաձայն Հերոդոտի վկայության[2] 480 ստադիոնի (=մոտ 85 կիլոմ.)։

Պարզ է ուրեմն, որ Տիգրանակերտը, որը 69 թվին շրջապատել ու պաշարել էին Լուկուլլոսի համեմատաբար փոքրաթիվ զորքերը, չէր կարող բաղդատվել ու նույնացվել վերոհիշյալ քաղաքների հետ, այլ նա ըստ իր հատակագծի և առևտրական-արդյունագործական բնույթի նման ու համապատասխան կարող էր լինել հելլենիստական տիպի քաղաքներին։

Տիգրանակերտի տեղադրության մասին պատմագիտական յերկերում հայտնված են հակասական կարծիքներ։ Նույն անհաշտելի տարաձայնությունները հատուկ են նաև մատենագրական հին աղբյուրներին։ Այդ աղբյուրներից ամենահինը, Ստրաբոնը, Տիգրանակերտի տեղը մատնացույց է անում Միգդոնիայում[3], Պտոլեմեոսը՝ Կորդուքում[4], իսկ Եվտրոպիոսը և Փավստոսը՝ Աղձնիքում[5]։ Առանձնապես ուշագրավ է Տակիտոսի վկայությունը, որը պարզ ու վորոշ հաղորդում է, որ Տիգրանակերտի հեռավորությունը Մծբինից յեղել է 37 հռոմեական մղոն (=մոտավ. 55 կիլոմ.)[6]։

1 Տես „О торговле и городах Армении“, էջ 56։
2 Հերոդ., I, 178։
3 Տես Ստրաբ., XVI, 1, 23։
4 Պտոլեմ., V, 13, 22։
5 Եվտրոպ., VI, 9, 1 և Փավ., IV, ԻԴ։
6 Annales, XV, 5։

Հիմնվելով Ստրաբոնի և Տակիտոսի վկայությունների վրա, Մոմզենը[1], ինչպես և ուրիշ գիտնականներ, Տիգրանակերտի տեղը յենթադրել են Մասիոս լեռան ու Տիգրիս գետի հարավում և Մծբին քաղաքի հյուսիսակողմում[2]։ Իսկ Հ. Կիպերտը, որը Տակիտոսի վկայությունը համարել էր աղճատված և առաջարկել septem et triginta («յերեսուն և յոթը») ուղղել և կարդալ centum et triginta («հարյուր և յերեսուն»), Տիգրանակերտի տեղը մատնացույց է արել հին Արզն քաղաքի ավերակների վայրում (այժմյան Սղերդի մոտ), որոնք գտնվում են Տիգրիս գետի ո՛չ թե հարավում, այլ հյուսիսում[3]։

Տիգրանակերտի տեղը որոշելու համար կարևոր են բացի վերոհիշյալ վկայություններից նաև Պլինիոսի և հին աշխարհագրական քարտեզների ցուցումները։ Այս վերջին վկայությունների մեջ ուշադրության արժանի է նախ այն, որ Նիկեփորիոս գետը, որն ըստ Տակիտոսի[4] գտնվել է Տիգրանակերտի մոտ, Պլինիոսի մոտ հիշատակված է՝ Պարթենիոս գետի հետ միասին՝ իբրև Տիգրիս գետի ձախակողմյան վտակ[5]։ Ուրեմն, ինչպես տեսնում ենք, համաձայն Եվտրոպիոսի և Փավստոսի ցուցումներին ու նաև Պլինիոսի այս վկայության Տիգրանակերտի տեղը որոշվում է Տիգրիս գետի ձախ կողմում և հին Աղձնիքում։ Նույնը հաստատում են նաև Պտոլեմեոսի և Պևտինգերյան հին քարտեզները, որոնց մեջ Տիգրանակերտը նշանակված է դարձյալ Տիգրիս գետի հյուսիսակողմում։

Օգտագործելով աղբյուրների թե այս և թե նման տեղեկությունները՝ գերմանական գիտնականներ Լեմանը և Բելքը մանրամասն կերպով նայել ու քննել են տեղում բոլոր վերոհիշյալ վայրերը և որոշել են, որ հին Տիգրանակերտը գտնվել է, իրոք, Տիգրիս գետի հյուսիսակողմում և այժմյան Ֆարկին քաղաքի տեղում[6]։ Յեվ հետաքրքիր է, որ նույն այս կարծիքը նրանցից առաջ հայտնած է յեղել նաև գերմանական ֆելդմարշալ Մոլտքեն, ըստ յերևույթին, ռազմագիտական նկատառումներով[7]։

1 Տես Die Lage von Tigranokerta, Hermes IX, 1875։
2 Տես նույնը։
3 Տես Monatsberichte der Akademie der Wissenschaften zu Berlin, 1873։
4 Annales, XV, 4։
5 Տես Nat. Hist. VI, 31, 3. Paris 1883, (հրատ. M. Littré)։
6 Համեմատե Lehmann-Haupt, Armenien einst und jetzt, I, էջ 381—429 և 501—523։
7 Տես Moltke H. von, Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei (1835—1839), Berlin, էջ 287։



Ֆարկին-Տիգրանակերտ քաղաքը:

Որ հին Տիգրանակերտի տեղը յեղած պիտի լիներ, իրոք, այժմյան Ֆարկինում՝ այդ հաստատում են այժմ նաև իմ նոր դիտողությունները Պևտինգերյան քարտեզի Zanserio և Cymiza կայարանների տեղադրության մասին, որոնք գտնվում եյին պարզապես Տիգրանակերտի հյուսիսակողմում: Հռոմեական քարտեզի Cymiza կայարանը, ինչպես մատնանշված է «Հայաստանի գլխավոր ճանապարհները» իմ աշխատության մեջ[1], այժմյան Կիլդիզն է (*CYΛΔIZA = CYMIZA), որը գտնվում եր Տիգրանակերտից Արտաշատ տանող ճանապարհագծում և Տիգրանակերտ-Ֆարկինից ճիշտ և ճիշտ 50 հռոմեական մղոն կամ մոտ 75 կիլոմետր հեռավորության վրա, ինչպես այդ ցույց է տրված Պևտինգերյան քարտեզում:

Տիգրանակերտ քաղաքի համար տեղի այդ ընտրությունը կարելի յե համարել աջող ու նպատակահարմար ոչ միայն քաղաքական, այլ նաև ստրատեգիական ու տնտեսական տեսակետներից: Յեվ իրավի, այժմյան Ֆարկինը ընկնում է Տիգրանի հիմնած աշխարհակալության ճիշտ մեջտեղում և, գտնվելով Տավ-

1 Տես էջ 90—92:

րոսյան լեռների հարավային ստորոտներում՝ բավականաչափ պաշտպանված է և պատսպարված: Նաև առևտրական հաղորդակցությունների տեսակետից Տիգրանակերտի տեղադրությունը խիստ հարմար եր, որովհետև նա գտնվում եր Աքեմենյան Պարսկաստանի արքունական մեծ ճանապարհի մոտ և զանազան ուղղություններով կապված եր առևտրական խոշոր կենտրոնների հետ:

Նոր հիմնած այս քաղաքը, ըստ յերևույթին, կենտրոն եր դառնալու ոչ միայն միջազգային առևտրի, արհեստների ու արդյունագործության, այլև հելլենիստական գիտության, արվեստի ու գրականության: Հայաստան եր հրավիրված, ինչպես վկայում է Պլուտարքոսը[1], Աթենքից աքսորված նշանավոր հռետոր Ամփիկրատեսը, որը արհամարհանքով մերժել եր Սելևկյանների հրավերը և ապրում եր Տիգրանի արքունիքում: Մետրոդորոս Սկեպսացին[2], որը հայտնի գրող եր և փիլիսոփա և որին Պլինիոսն անվանում է «ատող հռոմայեցիների» (Misoromaeus)[3], քաղաքական ականավոր գործիչ եր նախ Պոնտոսում և ապա Հայաստանում: Մետրոդորոսը, ինչպես հայտնի յե, գրած է յեղել Տիգրան Բ-ի ընդարձակ պատմությունը, որից, դժբախտաբար, որևէ հետք չե մնացել: Տիգրանակերտում, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը[4], կառուցված է յեղել առանձին թատրոն, որի համար զանազան տեղերից հրավիրված են յեղել հույն դերասաններ: Պլուտարքոսի ուշագրավ մի վկայությունից հայտնի յե, բացի այդ, որ Տիգրանի որդին Արտավազդը գրած է յեղել հունարեն լեզվով ողբերգություններ, ճառեր և պատմական յերկեր, որոնցից մի քանիսը ծանոթ են յեղել հռոմայեցիներին մինչև իսկ Պլուտարքոսի ժամանակ[5]:

Հատուկ ուշադրության արժանի յե նաև այն, որ Հայաստանում ևս, ինչպես և Պոնտոսում ու հելլենիստական այլ յերկրներում, հելլենիզմի ազդեցությամբ տեղի յեր ունեցել կրոնների մերձեցում և հայ հեթանոսական աստվածները միաձուլվել եյին հունականների հետ: Արամազդը համապատասխան եր համարվել Զևսին, Միհրը՝ Հեփեստոսին, Անահիտը՝ Արտեմիդեյին,

1 Տես Լուկուլ., 22, 7:

2 Տես Պլուտ., Լուկ., 22, 3—6, Ստրաբոն, XIII, 1, 55 և Ապոլ. Հռոդ. IV, 133:

3 Nat. Hist., XXXIV, 16, 2:

4 Լուկուլ., 29, 4:

Տես Պլուտ., Կրասոս, 33, 1:



Ցարկին—հյուսիսային պարիսպի ավերակները:

Նանեան՝ Աթենասին, Աստղիկը՝ Աֆրոդիտեյին, Տիրը՝ Ապոլոնին և Վահագնը՝ Հերակլեսին: Կրոնական այս ազդեցությունն այնքան զորեղ եր, վոր Տիգրան Յերկրորդի ժամանակ, ինչպես վերև տեսանք, հայկական մեհյաններում եյին զետեղել Հունաստանից և Փոքր Ասիայից բերված հունական աստվածների արձանները:

Բոլոր այս փաստական տեղեկություններից, վոր վերաբերվում են Տիգրան Բ-ի վերանորոգչական գործունեությանը՝ կարելի յե հետևցնել, վոր վոչ միայն Կապպադովկիայում և Պոնտոսում, այլև սրանց հարևան Հայաստանում հակադիր հոսանք եր սկսվել ընդդեմ տիրող իրանիզմի և հիմք եր դրվել հին կենցաղի հելլենականացման:

Նույն այս փաստերը ցույց են տալիս, վոր դժվար ե համաձայնել Մոմզենի հետ, վորը ինչպես հայ-հռոմեական, նույնպես և Միհրդատյան կռիվները, բնորոշում ե իբրև հետադիմական մի շարժում արևմտյան ժողովրդների դեմ: Առավել ևս սխալ ե, անշուշտ, նրա պնդումը, վոր իբր թե Միհրդատը յեղել ե ասիական այդ ռեակցիայի առաջնորդն ընդդեմ հելլենիզմի[1]:

Տիգրան Բ-ի թագավորության ժամանակը բացառիկ մի շրջան եր Հին Հայաստանի քաղաքական հզորացման և կուլտուրական ու տնտեսական ներքին զարգացման: Ուստի և հասկանալի յե, վոր վերոհիշյալ պատմական անցքերը նյութ եյին դառել անգիր բանահյուսության, պատմվել ու յերգվել եյին Հին Հայաստանում և նրանց հիշողությունները պահպանվել եյին յերկար դարերի ընթացքում:

[1] Տես „Римская история“ II, Москва 1887, եջ 273—275:

Տիգրան Բ-ի մասին նույնիսկ Խորենացու ժամանակ գոյություն են ունեցել վորոշ ավանդություններ և բանաստեղծական առանձին մի գրվածք («Զորս հագներգութիւնք»)[1], վորի հեղինակն ոգտված ե յեղել, հավանորեն, պատմական հին յերգերից և ավանդություններից: Բայց Խորենացին այս աղբյուրների մեջ հիշատակված Տիգրանին, վորը, անտարակույս, Արտաշեսյան տոհմի Տիգրան Բ-ն ե, համաձայն իր սխալ ժամանակագրության համարել ե դաշնակից պարսից Կյուրոս թագավորի:

Ինչպես ցույց ե տվել Մ. Աբեղյանը[2], Տիգրանի մասին այն ընդարձակ հիշողությունները, վոր բերված են Խորենացու պատմության առաջին գրքի ԻԴ—ԼԱ գլուխներում, մեծ մասամբ, պատմական են և համապատասխանում են ոտար աղբյուրների հաղորդած տեղեկություններին:

Յեվ իրավի, վոչ միայն Մարաց տերության նվաճումը, այլև ներքև մեջ բերված վկայությունները վերաբերվում են պարզապես Տիգրան Բ-ին կամ Մեծին:

1. Խորենացի, I, գլ. ԻԴ, եջ 71 (Տփղիս 1913)՝

«Բայց անցցուք այսուհետև որ ինչ յաղագս Տիգրանայ և որ ի նմանէ գործք: Քանզի սա ամենեցունց թագաւորացն մերոց հարստագոյն և խոհեմագոյն, և արանցն այնոցիկ և ամենեցուն քաջ: Որ և... զՄարացն ի բաց բառնալով զիշխանութիւնն, և զՅոյնս ոչ սակաւ ժամանակս ընդ իւրեաւ նուաճեալ հնազանդէր: Եւ զսահմանս մերոյ բնակութեանս ընդարձակեալ՝ ի հինան մեր հասուցանէր յեզերս ծայրից բնակութեան, և ամենեցունց որ առ իւրովքն էին ժամանակօք՝ նախանձելի, և զկենացս ըղձալի ինքն և ժամանակ իւր»:

2. Խորենացի, I, գլ. ԻԴ, եջ 72՝

«Արանց կացեալ գլուխ և արութիւն ցուցեալ՝ զազգս մեր բարձրացոյց, և զընդ լծով կացեալսս՝ լծադիրս և հարկապահանջս կացոյց բազմաց. մթերս ոսկւոյ և արծաթոյ և քարանց պատուականաց և զգեստուց և պէս պէս գունից և

[1] Տես Խ ո ր ե ն ա ց ի, I, գլ. ԻԱ և ԻԴ:

[2] Տես «Հայ ժողովրդական առասպելները», Վաղարշապատ 1901, եջ 448—474, համեմատե նաև Հ. Գ ե լ ց ե ր, «Համառոտ պատմութիւն Հայոց», Թարգմ. Գ ա լ ե մ ք յ ա ր յ ա ն ի, Վիեննա 1897, եջ 8—9:



Ցարկին—արևելյան պարիսպի ավերակները։

անկուածոց՝ արանց միանգամայն և կանանց՝ հասարակաց բազմացոյց. որովք տգեղագոյնքն իբրև զգեղաւորս երևէին սքանչելիք, և գեղաւորքն ըստ ժամանակին առ հասարակ դիւցազնացեալք։ Հետևակամարտքն ի վերայ ուսոց ձիոց բերեալք, և պարսաւորքն առ հասարակ գիպաղեղունք, և շերտաւորքն ի սուսեր և ի տէգ նիզակի վառեալք. մերկքն վահանօք և զգեստուք երկաթեօք պարածածկեալք։ Որոց ի մի վայր հասելոց բաւական էր տեսիլն միայն, և որ ի նոցայն պահպանակաց և զինուց փայլմունք և շողիւնք՝ զթշնամիսն արտահալածել։ Խաղաղութեան և շինութեան բերող, իւղով և մեղու զամենայն հասակ պարարեալ»։



Արշակունի հայ թագավորի հունարեն արձանագրությունը։
(Ցարկինի հյուսիսային պարիսպի վրա)։

3. *Խորենացի, I, գլ. Լ, եջ 82—83՝*

«Պատմի և այս, թէ զկնի այսպիսի իրաց կատարման՝ յուղարկէ թագաւորազէս զքոյր իւր Տիգրանուհի մեծաւ ամբոխիւ ի Հայս, յաւանն՝ զոր շինեաց յիւր անունն Տիգրան, որ է Տիգրանակերտ»:

4. *Խորենացի, III, ԻԸ, եջ 290՝*

«Եւ նզախարխար արարեալ զայն [զպարիսպն Տիգրանակերտի], որ ի հայկազնոյն Տիգրանայ հոծեալ և յարմարեալ որմունքն, քակեալ ընկեցին»:

Այս վկայություններից առաջինում ճշտությամբ արտահայտված ու պահված է Տիգրան Բ-ի կարճատև տիրապետությունը Սելևկյան թագավորության հողների վրա[1]*: Յերկրորդ վկայության մեջ, վորն առանձնապես կարևոր է ու հետաքրքիր, մատնացույց է արված հայկական զորաբանակի վերակազմությունը և նկարագրված են նաև Հայաստանի լիառատ ու բարեկեցիկ վիճակը և այն մեծ հարստությունները, վոր կային յերկրում Տիգրանի ժամանակ: Յերրորդ և չորրորդ վկայությունները ևս միանգամայն ստույգ են և պատմական և վերաբերվում են Տիգրանակերտի շինության Աղձնիքում:*

Վերոհիշյալ յերկրորդ վկայության մեջ, ինչպես մատնանշել եյինք ռուսերեն մեր աշխատության մեջ[2]*՝ «իւղով և մեղու զհասակս ամենեցուն պարարեալ» արտահայտությունը հռետորական մի չափազանցություն է, վորը ճիշտ կարող է լինել, գլխավորապես, իշխող դասերի նկատմամբ: Միանգամայն սակայն հնարավոր է և հավանական, վոր հարստացած ու փարթամացած այս դասերի զորեղացման և սրանց իշխանության ու արտոնությունների ընդարձակման հետ միասին կարող եր ծանրացած լինել իրավական դրությունը շինական դասի:*

Վոր Խորենացու մոտ պատմական են ու արժանահավատ նաև վերոհիշյալ հիշողությունները Հայաստանում կիտված դրամական ու այլ հարստությունների մասին՝ այդ հաստատում են, ինչպես կտեսնենք ներքև, Պլուտարքոսի վկայությունները հսկայական այն գումարների մասին, վոր տարել եյին Հայաստանից Լուկուլլոսը և Պոմպեյոսը:

1 *Տես Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները, եջ 454:*

2 „О торговле и городах Армении", *եջ 65—66:*

8. ՄԻՀՐԴԱՏՅԱՆ ՅԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵՎ ՄԻՀՐԴԱՏԻ ՓԱԽՈՒՍՏԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Միհրդատյան առաջին պատերազմից հետո Սուլլայի և Միհրդատի միջև կայացել եր միայն բանավոր համաձայնություն և Դարդանոսում կնքված դաշնադրությունն (84 թ. մեր թվ. առ.) ուներ ավելի շուտ ժամանակավոր զինադադարի բնույթ, քան հաստատուն ու տևական խաղաղության:

Թե վորքան անկայուն եր բանավոր այս հաշտությունը՝ այդ նկատվեց դաշնադրությունից արդեն մեկ տարի հետո:

83 թվին հռոմեական Ասիայի կառավարիչ Մուրենան, անտես առնելով Դարդանոսի դաշինքը՝ ինքնագլուխ կերպով, առանց հռոմեական ժողովրդի ու ծերակույտի հավանության, վերսկսեց պատերազմը Միհրդատի դեմ: Միհրդատյան այս յերկրորդ պատերազմը, վորը տևեց մոտ յերեք տարի (83—81 թ. մեր թվ. առ.), դադարեցվեց Սուլլայի հրամանով միայն այն ժամանակ, յերբ հռոմեական պարտված զորքերը հարկադրված եյին յետ նահանջել Պոնտոսից:

Այս յերկրորդ պատերազմից հետո՝ Միհրդատը, վորն անկեղծ կերպով կողմնակից եր խաղաղության՝ ուղարկեց Հռոմ հատուկ դեսպանություններ (79 և 78 թվ.) և խնդրեց, վոր Դարդանոսի դաշնադրությունը ձևակերպվի գրավոր կերպով և վավերացվի հռոմեական ծերակույտի կողմից: Յեվ յերբ նրա այս դիմումները մնացին անհետևանք՝ նա համոզվեց, վոր կռիվը անխուսափելի կերպով վերսկսվելու յե հակառակ իր ցանկության:

Յեթե Միհրդատյան յերրորդ պատերազմը բռնկվեց այս բանակցություններից հինգ տարի հետո՝ դրա պատճառն այն եր, վոր Սուլլայի մահից հետո (78 թ. մեր թվ. առ.) Հռոմում կառավարության դեմ վոտքի յեր կանգնել դեմոկրատական կուսակցությունը և Իսպանիայում վտանգավոր ընթացք եյին ընդունել վտարանդի դեմոկրատների կռիվները Սերտորիուսի հանճարեղ ղեկավարությամբ:

Հինգ տարվա այս հանգիստը Միհրդատը մեծապես օգտագործեց և ամենայեռանդուն կերպով նախապատրաստվեց պատերազմի, վորն անխուսափելի յեր։ Նախորդ կռիվների ժամանակ նա արդեն համոզվել էր, վոր փոքր, բայց մարզված և ուժեղ զորքն ավելի կարևոր նշանակություն ունի, քան արևելյան մեծ զորաբանակները, վորոնք՝ չնայած իրենց թվական գերակշռությանը՝ չեն կարող դիմադրել ու կռվել հռոմեական վարժված զորքի հետ։ Նա աշխատում էր այժմ զինել, մարզել և կազմակերպել իր բանակը հռոմեական զորքի նմանությամբ և այդ բանում նրան օգնում էին իտալացի փախստականները, վորոնք ապաստան էին գտել նրա մոտ քաղաքացիական կռիվների ընթացքում։ Նրա նոր զորքը, թեև թվով այնքան շատ չէր ինչպես առաջին պատերազմի ժամանակ, սակայն իր վորակով յետ չէր մնում հռոմեական լեգեոնական զորքերից։

Ապպիանոսը վկայում է, վոր Միհրդատը, բացի այդ, հրամայել էր պատրաստել մեծ քանակությամբ նավեր ու զենքեր և մթերել էր ավել զորքի պարենավորման համար յերկու միլիոն մեդիմն ցորեն (= մոտ 5 միլիոն փութ)։

«Միհրդատի պատերազմակիցներն էին,—ասում է Ապպիանոսը,—բացի նախկին ուժերից խալյուբները, արմենները, սկյութները, տավրերը, հույները, հենիոքները, սպիտակ ասորիները և նրանք, վորոնց յերկիրը գտնվում է Թերմոդոնդ գետի շրջանում և անվանվում է ամազոնուհիների յերկիր»[1]։

Ապպիանոսի այս վկայության մեջ արմենները, վոր հիշատակված են խալյուբներից հետո՝ ակներևաբար Փոքր Հայքի արմեններն են, վորոնք, ինչպես վերև տեսանք մասնակցել էին նաև Միհրդատյան առաջին պատերազմին։

Հետաքրքիր է առանձնապես և ուշագրավ, վոր ինչպես Միհրդատյան առաջին պատերազմից, նույնպես և այս յերրորդ պատերազմից առաջ, Տիգրանը, ինչպես վերև մանրամասն հիշել էինք, նորից հարձակվել էր Կապպադովկիայի վրա[2] և Հայաստան էր գաղթեցրել Մաժաք ու այլ քաղաքների բնակչությունը։ Այս հարձակումը, վորը տեղի յեր ունեցել ընդհանուր թշնամու Արիոբարզան Ա-ի դեմ, ըստ յերևույթին, Միհրդատի խընդրիքով՝ պետք է, հավանորեն, ապահովեր այս վերջինի թիկունքը Կապպադովկիայի կողմից։ Հռոմի դաշնակից այս թագավորության յերկիրը, ինչպես վերև ասացինք, նրա համար ռազմական նշանակություն ունեցող կարևոր մի միջանցք էր և պատերազմի ժամանակ վտանգավոր էր թե Պոնտոսի և թե Հայաստանի համար։

[1] Տես Ապպ., Միհրդատականք, 69։

[2] Ըստ Ռեյնաքի 77 թվին մեր թվ. առ., տես Mithridate Eupator, էջ 313

Մենք վերև նույնպես տեսանք, վոր հայ-պոնտական դաշինքը վերաբերվել է վոչ թե հռոմեա-պոնտական պատերազմներին, այլ Կապպադովկիային։ Թեև պատմագիտական յերկերում գերիշխում է այն կարծիքը, վոր իբր թե Տիգրանը պարտավորվել էր ըստ այդ դաշինքի պատերազմել Միհրդատի հետ հռոմայեցիների դեմ և վոր նա հռոմեա-պոնտական յերրորդ պատերազմում լքել էր Միհրդատին և խախտել իր կնքած դաշինքը՝ սակայն այս պնդումները միանգամայն անհավանական են և չեն հաստատվում սկզբնաղբյուրների ուշադիր ու քննական ուսումնասիրությամբ։

Միհրդատի դաշնակիցը յեղել է յերրորդ պատերազմում վոչ թե Տիգրանը, վորի նոր հիմնած մեծ պետությունն ապահովված չէր պարթևական հարձակումների վտանգից, այլ հռոմեական դեմոկրատիայի առաջնորդ Սերտորիուսը, վորը հավաքել ու կազմակերպել էր Իսպանիայում Հռոմի պահպանողական կառավարության դեմ հզոր մի զորաբանակ։ Միհրդատը շատ լավ հասկանում էր, վոր վիթխարի ու զորեղ Հռոմը գրեթե անպարտելի յէ։ Նա վորոշել էր չկռվել այժմ յերկու հռոմեական կուսակցությունների հետ միաժամանակ, ինչպես նա այդ արել էր առաջին պատերազմի ընթացքում։ Նրա գլխավոր հույսն այժմ այն էր, վոր նա կկարողանա փրկել մոտալուտ վտանգից իր յերկիրը, դաշնակցելով ու համաձայնության գալով դեմոկրատական կուսակցության հետ ընդդեմ իշխող կառավարության։

Միհրդատին աջողվեց համաձայնության գալ Սերտորիուսի հետ, ուղարկելով նրա մոտ Իսպանիա Պոնտոս փախած Լուցիուս Փաննիուս և Լուցիուս Մագիուս հռոմայեցի սպաներին, վորոնք Սուլլայի ու նրա կողմնակիցների կատաղի հակառակորդներն էին։ Դաշինքը նրա հետ կնքվեց հետևյալ պայմաններով՝ պրովինցիա Ասիան մնալու յեր հռոմայեցիների իշխանության ներքո, իսկ Բիթանիան, Պափլագոնիան և Կապպադովկիան, վորոնք մշտական կռվախնձոր էին Հռոմի և Պոնտոսի միջև և վորոնք Պոնտոսի համար ունեին կենսական նշանակություն՝ ստանալու յեր Միհրդատը։ Այս վերջինն ուղարկեց Սերտորիուսին Իսպանիա 40 նավ և 3000 տաղանդ դրամական նպաստ։

Միհրդատյան յերրորդ պատերազմի առիթ եր ծառայել Բիթանիայի միացման խնդիրը Հռոմին: 74 թվի[1] վերջերում վախճանվել եր Բիթանիայի Նիկոմեդես թագավորը և իր թագավորությունն ու հարստությունները կտակել եր Հռոմին: Բիթանիան, վորն արդեն վաղուցհետե շահագործում ու հարստահարում եյին հռոմեական կապալառուներն ու վաշխառուները, ուներ արգավանդ հողեր, ձկնորսարաններ, հանքատեղեր, հարուստ քաղաքներ, նավահանգիստներ ու շահութաբեր մաքսատներ: Բնական ե, վոր այդ հարստությունները ձեռքից բաց չեյին թողնելու շահագրգռված իտալական դրամատերերը: Թեև Բիթանիայի գրավումը խախտում եր Դարդանոսի դաշնագրությամբ հաստատված քաղաքական հավասարակշռությունը և համազոր եր պատերազմի հայտարարության Միհրդատին՝ նրանք ամեն ջանք գործ դրին և աջողեցրին այդ գրավումը ծերակույտի վորոշմամբ:

Հռոմը, հաստատելով այժմ իր տիրապետությունը Բիթանիայում՝ վոչ միայն դառնում եր Պոնտոսի անմիջական հարևանը, այլ և տեր ու տնօրենն եր դառնում սևծովյան նեղուցների: Այնուհետև նա, յերբ ուզենար՝ կարող եր փակել նեղուցները և քայքայել Պոնտոսի ու Բոսփորի առևտրական մեծ քաղաքների տնտեսական բարեկեցությունը:

73 թվի գարնանը, յերբ հռոմայեցիները չունեյին դեռևս Փոքր Ասիայում բավականաչափ զորք՝ պոնտական զորքերը հանկարծակի շարժվեցին, առանց պատերազմ հայտարարելու, դեպի Կապպադովկիա և դեպի Բիթանիա, իսկ նավերը՝ Բիթանիայի ափերով դեպի նեղուցները: Կապպադովկիա ուղարկված զորաբանակը, ըստ յերևույթին, պետք ե պաշտպաներ Պոնտոսի թիկունքը հարավից՝ հռոմեական Կիլիկիայի կողմից: Իսկ յերկրորդը, գլխավոր ու գործող բանակը, իրեն նպատակ եր դրել գրավել Բիթանիան և տիրապետել նեղուցներին:

Մեծ այս յերկրորդ զորաբանակն ամենակարճ ժամանակում անցավ Պափլագոնիայի և Գալատիայի միջով և մտավ անակընկալ կերպով Բիթանիա, փախուստի մատնելով հռոմեական ֆի-

[1] Միհրդատյան յերրորդ պատերազմի ժամանակագրության վերաբերյալ վիճելի հարցերը քննության են առնված Ֆեռեռոյի պատմության առաջին հատորի վերջում, տես „Величие и падение Рима", I, եջ 338—343: Սակայն ըստ իս ավելի հավանական են ժամանակագրական դիտողություններն ու ճշտումները Ռեյնաքի ուսումնասիրության մեջ, տես Mithridate Eupator, եջ 321 ծան. և այլն:

նանսիստներին ու պաշտոնյաներին, վորոնք ատելի եյին դառել տեղական բնակչությանը: Հռոմեական զորքերն ու նրանց զորավարը, պրոկոնսուլ Կոտտան, վորոնք գտնվում եյին Բիթանիայում, ամրացան Բոսփորի ափի մոտ Քաղկեդոն քաղաքում: Իսկ Հռոմեական մյուս զորավարը, պրոկոնսուլ Լուկուլլոսը, վորին Կոտտայի հետ միասին հանձնարարված եր պատերազմի վարումը և վորն այդ ժամանակ գտնվում եր իր զորաբանակով Փրյուգիայում՝ շտապեց ոգնության հասնել իր ընկերոջ:

Սակայն Կոտտան չուզեց հաղթության պատիվը բաժանել Լուկուլլոսի հետ: Յեվ նա, հենվելով միայն իր զորքի վրա՝ ընդունեց մարտը Քաղկեդոնի պարիսպների մոտ և Բոսփորի նեղուցում: Այս կռվում հռոմեական զորքը ծանր պարտություն կրեց ցամաքի և ծովի վրա: Հռոմը կորցրեց այստեղ իր ռազմածովային նավատորմը, վոր բաղկացած եր ավելի քան վաթսուն նավերից: Նա չուներ այնուհետև Պրոպոնտիսում և վոչ մի նավ: Միհրդատի նավերն ազատ կարող եյին անցնել նեղուցներով Պրոպոնտիս և այնտեղից Եգեյան ծով: Հաղթական ճակատամարտն ունեցավ նաև այն հետևանքը, վոր ամբողջ Բիթանիան անձնատուր յեղավ Միհրդատին:

Նույնպիսի արագությամբ պոնտական մյուս բանակը ևս, հավանորեն, գրաված ե յեղել Կապպադովկիան: Մնում եր, ուրեմն, նվաճել նաև պրովինցիա Ասիան և այնտեղ հաստատել, համաձայն Սերտորիուսի հետ կնքված դաշինքի, հռոմեական դեմոկրատների իշխանությունը:

Քաղկեդոնի մոտ հաղթություն տանելուց հետո՝ թվում եր, վոր այդ ևս ունի աջողության վորոշ հավանականություն: Այս յերրորդ պատերազմի ժամանակ պոնտական զորքերը մտնում եյին հռոմեական պրովինցիան վոչ թե նվաճողական նպատակներով, ինչպես առաջին պատերազմում, այլ իբրև Սերտորիուսի դաշնակիցներ: Նրանց ուղեկցում եր Մարկուս Մարիուս զորավարը, վորը նշանակված եր պրովինցիա Ասիայի կառավարիչ և պրոկոնսուլ:

Ինչպես և առաջին պատերազմի ժամանակ՝ Միհրդատն այս անգամ ևս աշխատեց հռոմեական Փոքր Ասիայում առաջ բերել դասակարգային կռիվ և վոտքի հանել ժողովրդի ճնշված ու կեղեքված ստորին խավերն ընդդեմ Սուլլայի հաստատած դաժան կառավարության: Նա ուղարկում եր այդ նպատակով զանազան ուղղությամբ հեծելազորի թռուցիկ ջոկատներ, վորոնք

իրապես, ապստամբություն առաջ բերին Փոքր Ասիայի հարավում՝ հռոմեական Կիլիկիայում, Իսավրիայում և Պիսիդիայում։ Վորոշ հաջողություն ունեցավ նաև պրոկոնսուլ Մարկուս Մարիուսը պրովինցիա Ասիայի հյուսիս-արևմտյան շրջաններում։ Այստեղ մի շարք քաղաքներ, օրինակ՝ Լամփսակոսը, Պարիումը, Պրիապուսը և ուրիշները նրան անձնատուր յեղան։ Մարկուս Մարիուսը, մտնելով այս քաղաքները՝ ազատություն եր շնորհում նրանց Սերտորիուսի անունից և զեղջում պարտքերի վորոշ մասը։

Պետք է սակայն ասել, վոր հեղափոխությունն այս անգամ չտարածվեց նույն արագությամբ, ինչպես առաջին պատերազմի ժամանակ։ Բնակչության բարձր ու հարուստ խավերն ամեն կերպ աշխատեցին խոչընդոտել ու կանխել ապստամբությունը։ Յեվ վորովհետև այս խավերն ուժեղ ու ազդեցիկ եյին խոշոր քաղաքներում, ուստի և մեծ քաղաքներից գրեթե և վոչ մեկը չհարեց ապստամբությանը։ Լուկուլլոսի զորաբանակի համար, վորը Կոտտայի պարտությունից հետո մեն մենակ պետք է պաշտպաներ հռոմեական Ասիան՝ սրանց հավատարմությունը և օգնությունն ուներ, իհարկե, մեծ նշանակություն։

Քաղկեդոնի մոտ տեղի ունեցած մեծ ճակատամարտից հետո՝ Միհրդատի զորքերը, շարժվելով դեպի հարավ՝ մտան պրովինցիա Ասիա, գրավեցին այստեղ Լամփսակոս քաղաքը և տեղավորվեցին Պրոպոնտիսի և Հելլեսպոնտի յերկարությամբ։ Լուկուլլոսը, վոր մոտից հետևում եր Միհրդատի զորքերի տեղաշարժումներին՝ վորոշեց խուսափել վճռական ընդհարումից։ Նա գիտեր, վոր թշնամու զորքերը իրենց վորակով յետ չեն մնում հռոմեականից և թվով ավելի շատ են, քան իր զորքը։ Յեվ վորովհետև Միհրդատի բանակի ամենաթույլ կողմը պարենի մատակարարման դժվարություններն եյին, ուստի և նա, վտանգավոր համարելով կռիվը բաց ճակատամարտում՝ վորոշեց խանգարել ու կասեցնել պարենի հայթայթումը նրա բանակին։

Յեվ նրան այդ իսկապես աջողվեց։ Միհրդատի բանակի պարենավորումը խիստ դժվարացավ ցամաքով, իսկ ծովով՝ Լամփսակոսի վրայով առաքվող սննդամթերքը չեր բավարարում զորքի պահանջները։ Պարենավորման դժվարացման պատճառով Միհրդատը պետք է կամ յետ քաշվեր սևծովյան իր նավահանգիստները և կամ գրավեր Պրոպոնտիսում նաև մի ուրիշ ավելի մեծ նավահանգիստ, ուր կարելի լիներ բեռնաթափել Պոնտոսից բերվող պարենամթերքը։

Հպարտ ու համարձակ թագավորը, փոխանակ յետ նահանջելու՝ վորոշեց պաշարել ու գրավել Կիզիկոս քաղաքը, վորն ամենամեծ նավահանգիստն եր և ամենաուժեղ ամրությունն այժմյան Մարմար ծովի ափին։ Սակայն այստեղ Կիզիկոսի առջև սկսեց բախտը դավաճանել նրան։ Կիզիկոսի պաշարման հենց սկզբում սոսկալի փոթորիկի պատճառով խիստ վնասվեցին Միհրդատի պատերազմական մեքենաները և զորքի հետ միասին ջրասույզ յեղան քաղաքը պաշարող նրա նավերը։ Բացի այդ, փոթորիկների պատճառով սկսեց ընդհատվել պարենի փոխադրումը ծովով և պաշարող զորքերը հետզհետե ուժասպառ յեղան սովից ու հիվանդություններից։ Վերջ ի վերջո, պոնտական հյուծված զորաբանակը հարկադրված յեղավ յետ նահանջել դեպի Լամփսակոս և Բիթանիա։ Յեվ այդ նահանջի ժամանակ նա դարձյալ մեծ կորուստներ կրեց Լուկուլլոսի հետապնդող լեգեոններից։

72 թվի գարնանը Միհրդատն իր մեծ զորքի մնացորդների հետ կարողացավ պատսպարվել Լամփսակոս և Պարիում քաղաքներում։ Բայց այնուհետև ևս չար ճակատագիրը դարձյալ ուղեկցում եր նրան։ Պոնտական հարյուրավոր նավեր նորից խորտակվեցին փոթորիկի պատճառով Կիզիկոս և Պարիում քաղաքների մոտ։ Չնայած դրան Միհրդատը դեռ ելի մոտ վեց ամիս շարունակեց պատերազմը ծովի վրա։ Յեվ միայն իր նավատորմի վերջնական պարտությունից հետո նա ստիպված յեղավ յետ քաշվել Պոնտոս։

Բայց նրա ռազմական ուժերի համար աղետալի ու կործանարար յեղավ նաև այս վերջին նահանջը։ Բոսփորից դուրս գալուց հետո նորից փոթորիկի զոհ դարձան նրա ավելի քան վաթսուն նավերը և մոտ տասը հազար զորքը։ Յեվ նա հազիվհազ կարողացավ վերադառնալ իր յերկիրը գրեթե մեն մենակ։

Կռվի բեմը դարձավ այնուհետև Միհրդատի բուն յերկիրը, Պոնտոսը, վորն այժմ գրեթե անպաշտպան եր։

72 թվի յերկրորդ կեսին Լուկուլլոսը ներս մտավ Պոնտոսի արևմտյան մասերը և թույլ տվեց իր զինվորներին ավերել ու կողոպտել հարուստ ու բարեկեց այս շրջանները։ Պլուտարքոսի վկայությամբ[1]՝ պատերազմական ավարն այնքան շատ եր այնտեղ, վոր հռոմեական բանակում մեկ յեզն արժեր 1 դենար (= մոտ 35 կոպ. վոսկի փողով)[2], իսկ մեկ ստրուկը՝ 4 դենար (= մոտ 1 ռբ.

1 Լուկուլ., 14, 1։

2 Տես Hultsch, Griechische und römische Metrologie, Berlin 1882, եջ 711 (=0,702 Mark)։

40 կոպ.): Այստեղից Լուկուլլոսի զորքերն առաջ շարժվեցին և պաշարեցին պոնտական յերկու նավահանգիստ՝ Ամիսոսը և Թեմիսկիրան:

Միհրդատը թողեց, վոր իր քաղաքները պաշտպանվեն իրենց սեփական ուժերով, իսկ ինքը սկսեց հավաքել նոր զորքեր և, ամրանալով իր յերկրի լեռնային շրջաններում՝ աշխատեց նախապատրաստել նոր դիմադրություն: Միևնույն ժամանակ նա օգնություն խնդրեց իր վորդուց՝ Մաքարեսից, վորը Բոսփորի փոխարքան եր, նաև պարթևներից, սկյութներից ու Տիգրան Բ-ից:

Սակայն նրա նոր նախաձեռնությանն այլևս վոչ վոք հավատ չեր ընծայում պոնտական զորքերի ծանր անհաջողություններից հետո: Թշնամու կողմն էյին անցնում այժմ շատերը մինչև իսկ Պոնտոսի մեծամեծներից: Նրան դավաճանում էյին նույնիսկ սեփական իր դեսպանները:

Միհրդատի հարազատ վորդին Մաքարեսը վոչ միայն չօգնեց հորը, այլ ինքը հարմար առիթի յեր սպասում և հռոմայեցիների հետ ուզում եր կնքել անջատ հաշտություն:

Տիգրանի մոտ ուղարկված դեսպանության մասին Պլուտարքոսը պատմում է հետևյալը:

«Մետրոդորոսը Միհրդատի կողմից,— ասում է Պլուտարքոսը[1],— ուղարկված եր Տիգրանի մոտ իբրև դեսպան խնդրելու օգնություն հռոմայեցիների դեմ: Սրան հարցրել եր Տիգրանը՝ «իսկ դու ինքդ, ո՜վ Մետրոդորոս, ինչ խորհուրդ կտաս այդ մասին»: Յեվ նա՝ կամ Տիգրանին օգտակար լինելու համար և կամ չցանկանալով վոր Միհրդատը փրկվի՝ ասում է՝— «իբրև դեսպան խորհուրդ եմ տալիս, իսկ իբրև խորհրդատու՝ խորհուրդ չեմ տալիս»:

Միհրդատի դիմումի մասին Տիգրանին ուշագրավ մի վկայություն ունի նաև Մեմնոնը:

«Միհրդատը... ուղարկեց,— վկայում է Մեմնոնը[2],— դեսպաններ սկյութացոց թագավորների, պարթևաց թագավորի և յուր փեսայի՝ Տիգրան արմենի մոտ: Սակայն առաջիններից նա ստացավ մերժում, իսկ Տիգրանը, վորին շարունակ անհանգստացնում եր ու աղերսալից խնդրում Միհրդատի դուստրը՝ վերջ ի վերջո խոստացավ օգնել»:

1 Տես Լուկուլլոս, 22, 4:

2 Գլ. 43, Lipsiae 1816, եջ 64:

Տիգրանի այս խոստումը մնացել եր, ըստ յերևույթին, իբրև սոսկ խոստում: Սկզբնաղբյուրների մեջ նրա իրական օգնության ու աջակցության մասին վոչ միայն չկան վորևե տեղեկություններ, այլ ընդհակառակը՝ կան ակնարկներ նրա չեզոքության մասին, վոր նրանք համարում են աններելի մի սխալ: Ռեյնաքի կարծիքով, Տիգրանին են վերաբերվում, հավանորեն, Սալլուստիուսի հետևյալ խոսքերը՝

«Դու չգիտես, վոր յեթե վորևե տներ կրակն ուժգնորեն հրդեհել է, այնքան էլ հեշտ չե կանխել, վորպես զի չայրվեն նաև հարևան տները». [„non tu scis, si quas aedes ignis cepit acriter, haud facile sunt defensu quin et comburantur proximae“][1]:

Ինչպես յենթադրում է դարձյալ Ռեյնաքը, հենց այս տողերի ազդեցությամբ գրված է, հավանորեն, նաև Հորացիուսի հետևյալ տողը՝

«յերբ հարևան պատն այրվում է՝ վտանգը քեզ էլ է վերաբերվում» [„tua res agitur paries cum proximus ardet“][2]:

Պատմագիտական նորագույն յերկերում ևս Տիգրանի չեզոքությունը համարում են քաղաքական մեծ սխալ, վորովհետև այժմ վճռվում եր վոչ միայն Պոնտոսի, այլև Հայաստանի ու Առաջավոր Ասիայի բախտն ու ապագան:

Այս գնահատությունը, իհարկե, ուղիղ է, սակայն Տիգրանին դատապարտողները պետք է նկատի ունենան միևնույն ժամանակ նրա դժվար կացությունը: Հանդես գալով հռոմայեցիների դեմ՝ նա հարկադրված պիտի լիներ պատերազմելու վոչ միայն սրանց, այլ նաև իր վոխերիմ թշնամիների՝ պարթևների հետ[3]: Չպետք է նաև մոռանալ, վոր հռոմեական նենգ ու ճարպիկ դիվանագիտությունն աշխատել եր իր հերթին, ինչպես դժվար չե կռահել Պլուտարքոսի վկայություններից[4], տպավորություն ստեղծել իր խաղաղ տրամադրության մասին Տիգրանի հանդեպ:

1 Տես Reinach, Mithridate Eupator, եջ 335, ծան. 1, նաև Sallustius, fr. III, 37:

2 Տես նույնը, եջ 335. ծան. 1:

3 Գուտշմիդը կարծում է նույնիսկ, վոր Տիգրանի վերջին կռիվը պարթևների դեմ շարունակվում եր նաև յոթանասնական թվականների սկզբներին՝ յերբ Միհրդատի դեսպանները յեկել էյին օգնություն խնդրելու նրանցից, տես Geschichte Irans, Tübingen 1888, եջ 82—83:

4 Պլուտ., Լուկուլլոս, 14, 4—7:

71 թվի գարնանը կռիվը Միհրդատի դեմ վերսկսվեց Պոնտոսի կենտրոնական շրջանում Կաբիրայի մոտ (այժմ Նիկսար կամ Նեոկեսարիա—Կելկիտ-Լիկոս գետի ափին)։ Միհրդատը կարճ ժամանակվա ընթացքում կարողացել էր հավաքել ու կազմակերպել այստեղ մի նոր զորաբանակ տեղացիներից ու սկյութական վարձկաններից։

Լուկուլլոսի առաջշարժումը դեպի Կաբիրա բավական ծանր էր ու վտանգավոր, որովհետև նրա բանակի պարենավորմանը դժվարություններ ու արգելքներ էր հարուցանում Միհրդատի հեծելազորը, որը խիստ ուժեղ էր և թվով ավելի շատ էր քան հռոմեական այրուձին։

Թեև Կաբիրայի մոտ սկզբում Միհրդատն ունեցավ որոշ աջողություններ, սակայն շուտով նրան դավաճանեցին զորավարներից մի քանիսը, որոնց կաշառել էր Լուկուլլոսը։ 71 թվի ամառը պոնտական զորքերը ծանր պարտություն կրեցին Կաբիրայի մոտ և Միհրդատը հազիվ կարողացավ փախչել փոքրաթիվ զորախմբով նախ Կոմանա, և ապա այստեղից Տալավրայի վրայով, որի տեղադրությունը դեռևս բավարար կերպով լուսաբանված չէ, յեկավ Հայաստան ու խնդրեց իր փեսայից տալ իրեն ոգնություն և ապաստարան։

Հայաստանում նրան տրվեց, իրոք, ապաստարան. սակայն Տիգրանը, կամենալով չեզոքություն պահպանել՝ նրան չհրավիրեց իր մոտ արքունիք, այլ հրամայեց թագավորավայել պատիվներ մատուցանել աներոջը և պահել նրան իր պետության հեռավոր ու սահմանային յերկրներից մեկում[1]։

Պատմագետներից ոմանք, հավատ ընծայելով Պլուտարքոսի անհավաստի տեղեկություններին՝ մեղադրում են Տիգրանին, որ նա չի ուզեցել հանդիպել ու մխիթարել իր դժբախտ ազգականին և որ նա ուղարկել է Միհրդատին վատառողջ ու ճահճային մի վայր[2]։ Նրանք աչքաթող են արել, որ Պլուտարքոսի թե այս և թե այլ նման գունավորված տեղեկությունները, որոնք չեն համապատասխանում մյուս աղբյուրների վկայություններին, հավանորեն, հնարովի հերյուրանքներ են և չունեն պատմական նշանակություն[3]։

Տիգրանի վարքագիծը պարտված ու իր մոտ փախած Միհրդատի հանդեպ ունեցել է, իրապես, քաղաքական դրդապատճառներ։ Տիգրանը ինչպես Միհրդատյան յերրորդ պատերազմի ընթացքում, նույնպես և Միհրդատի վերջնական պարտությունից հետո, աշխատել էր պարզապես խույս տալ պատերազմից, հույս ունենալով որ չեզոքության պահպանմամբ նա կըկարողանա պահպանել նաև խաղաղությունը Հռոմի հետ։

Որ այս սխալ ու կարճատես քաղաքական հաշիվ էր՝ այդ ցույց տվեց մոտ ապագան։

---

1 Տես Մեմնոն, գլ. 46 և Ապպիանոս, Միհրդատականք, գլ. 82։

2 Տես Պլուտ., Լուկուլ., 22, 1։

3 Պլուտարքոսի վերոհիշյալ անհավաստի վկայություններին հավատ են ընծայել Ռեյնաքը, Եքհարդը և ուրիշները, տես Reinach, Mithridate Eupator, էջ 346, Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, IX, 4, էջ 402 և ուրիշ.։

9. ԼՈՒԿՈՒԼԼՈՍԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՀԱՆՁՆԵԼ ԻՐԵՆ ՄԻՀՐԴԱՏԻՆ ՅԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՊԱՏԵՐԱԶՄԻ

Միհրդատի վերջնական պարտությունից հետո հռոմեական զորքերը տարածվեցին Պոնտոսի կենտրոնական ու արևելյան շրջաններում և Փոքր Հայքում: Ազնվականությունը և պաշտոնեությունը գրեթե ամեն տեղ անձնատուր յեղան հռոմայեցիներին և հանձնեցին նրանց յերկրի հարստությունները: Շարունակում եյին սակայն կռվել ու համառ դիմադրություն եյին ցույց տալիս հելլենական մեծ քաղաքները:

71—70 թթ. ձմեռը Լուկուլլոսը անցկացրեց իր նոր նվաճած Կաբիրա քաղաքում Հայաստան փախած Միհրդատի պալատում: Կաբիրայի մոտ տեղի ունեցած մեծ կռվից հետո, հավանորեն, 71 թվի վերջերին, նա ուղարկեց Տիգրանի մոտ իր կնոջ յեղբորն Ապպիոս Կլավդիոսին և պահանջեց, վոր Տիգրանը հռոմայեցիների ձեռքը հանձնե պոնտական թագավորին:

Այս դեսպանության մասին մանրամասն տեղեկություններ հաղորդում է Պլուտարքոսը Լուկուլլոսի կենսագրականում, վորի մեջ նա հերոսացրել ու փառաբանել է Լուկուլլոսին և աշխատել է նվաստացնել ու անվանարկել նրա հակառակորդներին: Յեվրոպական և հայկական գրեթե բոլոր պատմական ու բանասիրական նոր յերկերում առանց ստուգման մեջ են բերված, գլխավորապես, հենց այդ կասկածելի տեղեկությունները: Պատմագետները, դժբախտաբար, ուշադրություն չեն առել, վոր Պլուտարքոսի խեղաթյուրումները հեշտությամբ յերևան են գալիս ուշադիր քննությամբ:

Պլուտարքոսի համապատասխան այդ վկայությունները, վոր կարոտ են վերաքննության, մեջ ենք բերում առանց կրճատումների:

1. Պլուտարքոս, Լուկուլլոս, 19, 2՝

«Յեվ նա [Լուկուլլոսը] նվաճեց խալդայներին և տիբարեններին, գրավեց նաև Փոքր Հայքը և իրեն յենթար-

վեց ամրոցներն ու քաղաքները: Այնուհետև նա ուղարկեց
Ապպիոսին Տիգրանի մոտ պահանջելու Միհրդատի հանձնումը,
իսկ ինքը գնաց Ամիսոս, վորի պաշարումը դեռևս շարու-
նակվում եր»:

2. Նույնը, Լուկուլլոս, 21, 1—2՝

«Ապպիոս Կլավդիոսին, վորն ուղարկված եր Տիգրանի
մոտ (Կլավդիոսը Լուկուլլոսի այն ժամանակվա կնոջ
յեղբայրն եր)՝ ուղեկցում եյին սկզբում թագավորի առաջ-
նորդները, վորոնք անտեղի կերպով նրան ման եյին ածում
յերկրի վերին կողմերում ինչ վոր մանվածապատ զառուղի
ու յերկար ճանապարհներով: Իսկ հետո, յերբ ստրկությու-
նից ազատ արձակված մի մարդ, ազգով ասորի, ցույց տվեց
նրան ուղիղ ճանապարհը՝ նա յետ դարձավ յերկար ու ոլ-
խալ այս ճանապարհից, արձակեց բարբարոս առաջնորդ-
ներին և մի քանի որում անցավ Յեփրատը և հասավ Ան-
տիոք, վորն անվանվում է Եպիդափնե: Ապպիոսին հրաման
տրվեց սպասել Տիգրանին, վորը բացակա յեր և նվաճում եր
Փյունիկիայի մի քանի քաղաքները: Այդ միջոցին Ապպիոսն
իր կողմը գրավեց իշխանավորներից շատերին, վորոնք
ներքուստ մեծ դժվարությամբ եյին հնազանդվել Տիգրան
արմենին: Սրանցից մեկն եր և Զարբիենոսը՝ Կորդվաց թա-
գավորը: Նաև Տիգրանի նվաճած քաղաքներից շատերին,
վորոնք նրա մոտ ծածուկ սուրհանդակներ եյին ուղարկել՝
Ապպիոսը խոստացավ, վոր Լուկուլլոսը կոգնի նրանց, բայց
հրամայեց, վոր այժմ դեռ հանգիստ մնան»:

3. Նույնը, Լուկուլլոս, 21, 7—9՝

«[Տիգրանին ներկայանալուց հետո] հենց վոր խոսքը
տրվեց Ապպիոսին՝ նա ուղղակի ասաց, վոր յեկել է Միհր-
դատին տանելու, վորը հարկավոր է Լուկուլլոսի հաղթա-
հանդեսի համար: Հակառակ դեպքում՝ հայտարարում է Տիգ-
րանին պատերազմ: Թեև Տիգրանը նրա խոսքերն աշխա-
տում եր լսել ժպտերես ու կեղծ ծիծաղով, սակայն ներկա
յեղողների համար աննկատելի չմնաց, վոր նրա դեմքը, յերի-
տասարդ Ապպիոսի համարձակ ճառը լսելիս, այլայլվեց: Ջե
վոր նա միայն այժմ ազատ խոսք եր լսում քսանհինգ
տարվա ընթացքում. հենց այդքան ժամանակ եր նա թա-
գավորել կամ ավելի ճիշտ սանձարձակ կերպով մոլեգնել:
Այնուհետև նաև Տիգրանը պատասխանեց Ապպիոսին, վոր

նա մտադիր չէ հանձնել Միհրդատին։ Իսկ յեթե հռոմայեցիները պատերազմ կսկսեն՝ ինքը կպաշտպանվի։ Տիգրանը բարկացած լինելով Լուկուլլոսի վրա, վոր սա իր գրության մեջ անվանել եր իրեն թագավոր և վոչ թագավորների թագավոր՝ ինքը ևս իր պատասխանի մեջ նրան չեր անվանել իմպերատոր։ Իսկ Ապպիոսին նա ուղարկեց փարթամ նվերներ, և վորովհետև սա չեր վերցնում՝ ավելացրեց ուրիշ նվերներ ևս։ Սակայն Ապպիոսը, վորպեսզի չկարծեն թե ինքը թշնամաբար է մերժել՝ վերցրեց միայն մեկ գավաթ, իսկ մյուս նվերները յետ ուղարկեց ու շտապեց վերադառնալ Լուկուլլոսի մոտ»։

Պլուտարքոսի այս վկայություններից, նախ և առաջ, անհավատալի յե ու հնարովի նրա հաղորդած հիմնական տեղեկությունը, վոր իբր թե Ապպիոս Կլավդիոսը, մերժում ստանալով Տիգրանից՝ նրան հայտարարել եր պատերազմ։ Այդ չէ կարող ճիշտ լինել, վորովհետև հռոմեական ծերակույտը, ինչպես հայտնի յե, չեր լիազորել Լուկուլլոսին պատերազմ հայտնելու Տիգրանին։ Միանգամայն անհավանական է, բացի այդ, վոր 71 թվի վերջերին Լուկուլլոսը պատերազմ հայտարարած լիներ Տիգրանին, վորովհետև նա դեռևս չեր նվաճել պոնտական խոշոր քաղաքները և չեր ապահովել իր թիկունքը։ Յեվ վերջապես, կարո՞ղ եր միթե Լուկուլլոսն այնքան անհեռատես ու անզգույշ լինել, վոր հայկական իր արշավանքը սկսելուց մոտ մեկ ու կես տարի առաջ պատերազմ հայտարարեր Տիգրանին, ժամանակ տալով նրան ու հնարավորություն նախապատրաստելու ռազմական իր ուժերը պատերազմի համար։

Պլուտարքոսի վերոհիշյալ վկայության սխալ լինելն այնքան ակներև է, վոր նրա այդ տեղեկությունն անտես է արված ականավոր պատմագետների յերկերում, որինակ՝ Մոմզենի, Ռեյնաքի և ուրիշների ուսումնասիրություններում։ Այդ սխալը մեջ է բերված սակայն Եքհարդի, Ասատուրյանի և Դոլենս-Խաչի աշխատություններում[1]։

Ապպիոս Կլավդիոսի ընդունելության մասին Անտիոքում ավելի վստահելի յեն, անտարակույս, Մեմնոն Հերակլեյացու հա-

[1] Տես K. Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, X, 1, եջ 74 և 75,—դոկտ. Հ. Յ. Ասատուրյան, «Քաղաքական վերաբերություններ ընդմեջ Հայաստանի և Հռոմայ», եջ 49 և Ն. Դոլենս և Ա. Խաչ, Պատմություն հին հայերի, պրակ Գ, Թիֆլիս 1910, եջ 43։

ղորդած տեղեկությունները, վորովհետև սա, պատկանելով փոքրասիական հույն հեղինակների խմբին՝ Հռոմի հակառակորդների նկատմամբ չունի այն միտումնավորությունն ու աչառու վերաբերմունքը, վոր հատուկ են հռոմեական պատմագիրներին։ Յեվ ուշագրավ է, վոր պատերազմի հայտարարության մասին Մեմնոնը, ըստ յերևույթին, վոչինչ չգիտե։ Բայց նա հանգամանորեն մեջ է բերում Տիգրանի պատասխանն Ապպիոսին, վորը միանգամայն հիմնավոր եր ու արդարացի, և հավանորեն, հենց այդ պատճառով չէ հիշատակված Պլուտարքոսի ու հռոմեական պատմագիրների յերկերում։

«Լուկուլլոսը, — վկայում է Մեմնոնը[1], — ուղարկել եր Տիգրանի մոտ իբրև դեսպան Ապպիոս Կլավդիոսին և պահանջում եր իրեն հանձնել Միհրդատին։ Սակայն Տիգրանը չտվեց, ասելով վոր բոլոր մարդիկ իրեն կըպախարակեն, յեթե նա Լուկուլլոսի ձեռքը հանձնե իր կնոջ հորը։ Այլ թե ինչպիսի վատ մարդ է Միհրդատը՝ այդ ինքն ել գիտե․ սակայն խաղք ու խայտառակ կլինի իր ազգականության առաջ։ Նա նաև նամակ է գրում Լուկուլլոսին, վոր բովանդակում եր իր մեջ նրա ասած այդ խոսքերը»։

Ուշադիր քննության յենթարկելով Պլուտարքոսի նաև մյուս վկայությունները՝ դժվար չէ նույնպես կռահել, վոր անհավանական է նմանապես նրա այն տեղեկությունը, վոր իբր թե Տիգրանի ուղարկած առաջնորդները դիտավորյալ կերպով ման են ածել Ապպիոսին յերկար ու զարտուղի ճանապարհներով։ Իսկ, իրապես, Ապպիոսը հենց ինքն եր շահագրգռված այս բանում և ինքն եր, հավանորեն, ճարպիկ կերպով կազմակերպել իր շրջագայությունը լրտեսության հատուկ նպատակով։

Պլուտարքոսի վկայություններից կարելի յե վստահորեն հետևցնել, վոր Ապպիոսը գաղտնի հրահանգ եր ունեցել գրգռելու ու ապստամբեցնելու Տիգրանի դեմ Ասորիքի հունական քաղաքները և Տիգրանին հպատակված ոտար ժողովուրդները։ Պլուտարքոսն աշխատել է, ըստ յերևույթին, քողարկել դեսպանի լրտեսական շրջագայությունը Հայաստանում և միանգամայն անաջող ու անմիտ կերպով բացատրում է, վոր Ապպիոսին դիտավորյալ կերպով սխալ ճանապարհով եյին առաջնորդել Տիգրանի ուղարկած ուղեկիցները։

[1] Տես գլ. XLVI։

Ապպիոսը, ինչպես մատնանշում է վերոհիշյալ իր վկայության մեջ Պլուտարքոսը, աջողությամբ էր կատարել Լուկուլլոսի հանձնարարությունները։ Նա հռոմայեցիների կողմն էր գրավել, հավանորեն, իր շրջագայության ժամանակ, դժգոհ իշխաններից վոմանց, վորոնց թվումն էր Կորդվաց Զարբիենոս թագավորը։ Իսկ Ասորիքի մի քանի քաղաքներին, վորոնք խոստացել եյին ապստամբել Տիգրանի դեմ՝ նա խորհուրդ էր տվել սպասել մինչև Լուկուլլոսի գալը։

Ապպիոսի Հայաստան յեղած ժամանակ շարունակվում էր դեռ պոնտական մեծ քաղաքների՝ Ամիսոսի և Սինոպի պաշարումը, վորոնք կատաղի կերպով դիմադրում եյին և չեյին համաձայնում անձնատուր լինել հռոմայեցիներին։ Հելլենական քաղաքների այս հավատարմությունը և նվիրվածությունը Միհրդատին խիստ ուշագրավ ու պերճախոս մի փաստ է, վորը ցույց է տալիս, վոր Միհրդատը յեղել է, իրապես, պաշտպան ու հովանավոր հելլենիզմի և հելլենական քաղաքների։ Նրա հելլենասիրական ու առաջադիմական քաղաքականությունը և նրա հելլենական քաղաքային կուլտուրայի տարածման ջանքերը, վոր վերև մանրամասն մատնանշել եյինք, չեյին կարող, իհարկե, հաճելի լինել Պոնտոսի կալվածատեր պահպանողական ազնվականությանը։ Յեվ, ըստ յերևույթին, հենց այդ է պատճառը, վոր Միհրդատին հաճախ դավաճանում էր, գլխավորապես, ազնվականությունը, վորը առանց վորևէ լուրջ դիմադրության հանձնել էր հռոմայեցիներին յերկրի ամրությունները և հարստությունները։

70 թվի գարնանը հռոմայեցիները յերկար պաշարումից հետո կարողացան գրավել Հերակլեան և Սինոպը, իսկ 70 թվի աշնանը՝ նաև Ամիսոսը։ Այս քաղաքների անկումից հետո՝ Հռոմը տեր էր դառնում ամբողջ Պոնտոսի և պատերազմը Միհրդատի հետ կարելի յեր համարել վերջացած։

Նվաճված յերկիրը, մանավանդ, նրա հելլենական հարուստ ու շքեղ քաղաքները մատնվեցին անխնա կողոպուտի։ Հռոմեական զորքերը հրդեհեցին ու խսպառ ավերեցին փարթամ ու հոյակապ Հերակլեա քաղաքը և հռչակավոր ու գեղեցիկ Ամիսոսը, վորը համարվում էր Պոնտոսի Աթենքը։ Յեվ բնորոշ ու հատկանշական է, վոր պատմագիտական մեծահռչակ մի քանի յերկերի մեջ զորավար Լուկուլլոսը, հռոմայեցի ամենախոշոր ավարառուն ու կողոպտիչը, վորը քանդել ու հիմնովին կործանել էր հելլենիստական մեծ ու ճոխ կուլտուրան Պոնտոսում՝ համարվում ու անվանվում է պաշտ-

պան հելլենական քաղաքակրթության և «հելլենիզմի ջերմ յերկրպագու»[1]։

Քաղաքները նվաճելուց հետո՝ Լուկուլլոսը նույն այս 70 թվին վերադարձել էր Պոնտոսից պրովինցիա Ասիա։ Յեվ խիստ ուշագրավ է ու հետաքրքիր, վոր նա Հայաստան արշավելուց առաջ անհրաժեշտ էր համարել թեթևացնել հռոմեական Ասիայի տնտեսական հուսահատական դրությունը։

Այս նահանգն առաջին Միհրդատյան պատերազմից հետո (88—84 թվ.), ինչպես վերև տեսանք, վճարելու յեր ի պատիժ իր անհավատարմության, բացի հինգ տարվա հարկերից, նաև քսան հազար տաղանդ ռազմատուգանք։ Նա այժմ կատարելապես սնանկացել ու արյունաքամ էր յեղել, վճարելով հսկայական իր պարտքի վաշխառուական տոկոսները։ Հռոմեական ֆինանսիստները, վորոնք դրամական փոխատվություն եյին տվել աղքատացած այս յերկրին՝ իրենց ստանալիք տոկոսների դիմաց բռնագրավում եյին այստեղ տները, վարելահողերը, այգիները, հասարակային շենքերը, հափշտակում ու Իտալիա եյին տանում արվեստի իրերը, արձանները, պատկերները, տնակահույքը, վոսկեղենն ու արծաթեղենը, և վերցնում եյին, բացի այդ, նաև պարտապանների յերեխաներին կամ հենց իրենց պարտապաններին ու վորպես ստրուկ ուղարկում նույնպես Իտալիա։ Չնայած սակայն ամբողջ այս նահանգի կատարյալ սնանկացման՝ նրա սկզբնական քսան հազար տաղանդ պարտքը 84 թվից հետո վոչ միայն չէր պակասել, այլ դառել էր 70 թվին քառասուն հազար տաղանդ։ Ընդունելով ըստ Հուլչի, վոր մեկ տաղանդը հավասար է յեղել այդ ժամանակաշրջանում մոտավորապես 4200 գերմանական վոսկի մարկի՝ ամբողջ այդ պարտքը կլինի 168 միլիոն մարկ կամ 84 միլիոն վոսկի ռուբլի[2]։

1 Տես, որինակ, Ферреро, Величие и падение Рима, I, перевод А. Захарова, Москва 1915, եջ 161 և 184։ Նման յերկերի ազդեցությանը պետք է վերագրել Միհրդատի ու Լուկուլլոսի սխալ բնութագրերը Կովալևի դասագրքում։ Միհրդատին Կովալևը համարում է «հունական կրթություն ստացած խորամանկ ու ճարպիկ բարբարոս», իսկ Լուկուլլոսը, նրա ասելով՝ «համոզված արիստոկրատ էր, խիստ հարուստ, հայտնի յեր իր ընտիր հյուրասիրություններով («Լուկուլլյան խնջույքներ»), և անձնապես ազնիվ մարդ էր...». Տես С. И. Ковалев, История античного общества. Эллинизм и Рим, 1936, եջ 192 և 207։

2 Տես Fr. Hultsch, Griechische und römische Metrologie, Berlin 1882, եջ 298 և 711։

Վճարել այս հսկայական գումարը և նրա վրա բարդվող տոկոսները հռոմեական Ասիայի ուժերից վեր եր և այլևս հնարավոր չեր: Հարստահարվող բնակչությունը չափից դուրս գրգռված եր հռոմայեցիների և, բնականաբար, նաև հռոմեական իշխանության դեմ: Լուկուլլոսն անհրաժեշտ համարեց հանդարտացնել բնակչության այդ դժգոհությունը և աշխատեց թեթևացնել նրա տնտեսական դրությունը, վոր դառել եր արդեն անտանելի: Նա սահմանեց տուրք տների ու ստրուկների վրա, նաև 25% յեկամտահարկ[1]: Մասնավոր պարտքերի համար նա արգելեց վերցնել 12%-ից ավելի, արգելեց նմանապես ավելագրել չվճարված տոկոսների վրա նոր տոկոսներ և կարգադրեց, բացի այդ, վոր պահանջվող տոկոսների գումարը չպետք է ավելի լինի քան սկզբնական պարտքի գումարը[2]: Յեթե պարտապանները չեյին վճարում իրենց պարտքերը՝ պարտատերերն իրավունք ունեյին վերցնելու նրանց յեկամուտի միայն մեկ քառորդ մասը[3]:

Յեվրոպական գիտնականներից շատերը, որինակ, Ֆեռեռոն և Շապոն, Լուկուլլոսի ֆինանսական այս միջոցառումները յենթադրում են Միհրդատյան յերրորդ պատերազմի առաջին տարվա ընթացքում, այսինքն՝ 73 թվին[4]: Այս յենթադրությունը միանգամայն անհիմն է: Թե Պլուտարքոսը և թե Ապպիանոսը, վորոնք գլխավոր ու միակ աղբյուրներն են վերոհիշյալ վկայությունների՝ պարզ կերպով մատնանշում են, վոր Լուկուլլոսի վերադարձը հռոմեական Ասիա և վերևում նշված նրա բարեփոխությունները տեղի եյին ունեցել Ամիսոս քաղաքի գրավումից և Ապպիոս Կլավդիոսին Հայաստան ուղարկելուց հետո[5]:

Վոր իր բարենորոգումները և հռոմեական Փոքր Ասիայի խաղաղացումը Լուկուլլոսը կարևոր ու անհրաժեշտ եր համարել Հայաստան արշավելուց առաջ՝ այդ ուշագրավ մի փաստ է, վորն ուշադրության չի առնվել պատմագիտական յերկերում: Շատ պարզ է, վոր նա, վորոշած լինելով պատերազմել Տիգրանի դեմ՝ պետք է ապահովեր իր թիկունքն արևմուտքում, վորոշ զիջումներ անելով հռոմեական Փոքր Ասիայի հուսահատված ու հուզված բնակչությանը:

---

[1] Ապպիանոս, Միհրդատականք, 83:

[2] Պլուտարքոս, Լուկուլ., 20, 3:

[3] Նույնը, Լուկ., 20, 3:

[4] Տես Ферреро, Величие и падение Рима, т. I, եջ 340 և V. Chapot, La province romaine proconsulaire d'Asie, Paris 1904, եջ 40—41:

[5] Տես Պլուտ., Լուկ., 19, 2 և Ապպիանոս, Միհրդ., 83:

Պատմագիտական յերկերում բնավ չի լուսաբանված նաև Լուկուլլոսի Հայաստան արշավելու նենգ ու խորամանկ ծրագիրը, վորն առանց դժվարության քողազերծվում ու մերկացվում է սկզբնաղբյուրների ուշադիր քննությամբ:

Տիգրանի դեմ իր արշավանքը Լուկուլլոսը կազմակերպում եր բոլորովին թաքուն կերպով: Նա աշխատել եր ըստ իս քնեցնել Տիգրանի աչալրջությունը և ծրագրել եր հանկարծ ու անսպասելի հարձակվել ու ջախջախել նրան, նախ քան նա հավաքած ու նախապատրաստած կլիներ իր ցրված զորամասերը:

Միանգամայն բնական է ու հասկանալի, վոր Լուկուլլոսի այդ հարձակումն առանց պատերազմի հայտարարության, վորով վոտնահարվում եյին միջազգային որինականության կարգերը, չեն ուզում բացահայտ կերպով խոստովանել հռոմեական աղբյուրները և, մասնավորապես, Պլուտարքոսը, վորը գրել եր Լուկուլլոսի վոչ թե անաչառ պատմությունը, այլ ներբողյանը: Սակայն պարզ ակնարկներ կան այդ մասին Ապպիանոսի մոտ, վորն իր պատմության այս մասում ոգտվել եր, հավանորեն, վոչ թե հռոմեական, այլ փոքրասիական չեզոք հույն աղբյուրից:

Ապպիանոսի համապատասխան վկայությունից, վոր ամբողջությամբ մեջ ենք բերում, յերևում է, վոր Լուկուլլոսը՝ վերադառնալով 70 թվին[1] հռոմեական Փոքր Ասիա՝ նախ աշխատել եր տպավորություն գործել, վոր իբր թե պատերազմը վերջացել է և ապա շարժվել եր հանկարծ ու արագ յերթերով դեպի Հայաստան:

«Արդ՝ հենց այսպես,—պատմում է Ապպիանոսը,—Լուկուլլոսն ավերեց Սինոպը և Ամիսոսը: Նա բարեկամություն հաստատեց Միհրդատի վորդու Մաքարեսի հետ, վորը Բոսփորի թագավորն եր և ուղարկել եր իրեն վոսկե պսակ: Ապա նա Տիգրանից պահանջեց Միհրդատին: Իսկ ինքը, վերադառնալով Ասիա, վորը դեռ վճարում եր Սուլլայի սահմանած տուգանքները, վորոշեց վոր վճարեն յեկամուտի մեկ քառորդ մասը, և հարկ դրեց նաև տների ու ստրուկների վրա: Այնուհետև նա իր հաղթության առթիվ զոհաբերության հանդիսատոներ կատարեց, վորպես թե պատերազմը աջող կերպով ավարտված է: Յեվ զոհաբերություններից

---

[1] Լուկուլլոսի վերադարձը Փոքր Ասիա պետք է յենթադրել վոչ թե Սինոպ ու Ամիսոս քաղաքների առումից առաջ 71 թվին, ինչպես Պլուտարքոսի հաղորդագրության համաձայն կարծում են Ռեյնաքը, Մոմզենը և ուրիշները (տես Mithridate Eupator, եջ 152 և „Римская история", III, եջ 52), այլ այդ քաղաքների առումից հետո 70 թվին, ինչպես վկայում է Ապպիանոսը:

հետո նա ռազմի յելավ Տիգրանի դեմ, վորը չեր տվել իր ձեռքը Միհրդատին»[1]։

Վոր Լուկուլլոսն արշավել եր Հայաստան ծածկաբար ու հանկարծ՝ այդ ինչպես կտեսնենք, ակնարկում են նաև Սալլուստիուսը և Մեմնոնը։ Յեվ ինձ թվում ե, վոր իր գաղտուկ ու գողաբարո հենց հարձակման պատճառով Լուկուլլոսը, վորի անունն աղճատված ձևով պահվել ե հայ ժողովրդական ավանդության մեջ[2]՝ խիստ վատ հիշատակ ե թողել Հայաստանում և հիշվում ե Վայկուն անունով իբրև «յելուզակ», այսինքն, իբրև ավազակ, վորը վրդովել եր հայ յերկրի խաղաղությունը և հարկադրել եր Տիգրանին վերադառնալ Պտղոմայիդ քաղաքից Հայաստան։

Լուկուլլոս-Վայկունի մասին այդ հին ավանդությունը հիշատակված ե Խորենացու պատմության հետևյալ հատվածում։

Խորենացի, II, գլ. ԺԴ, Տփղիս 1913, եջ 128—129՝

«Եւ նոյն հետայն դիմէ [Տիգրան] յաշխարհն Պաղեստինացւոց՝ վրէժս պահանջել ի Պտղոմայիդ Կղէոպատրայ յաղագս Դիոնիսի որդւոյ նորա առ հայր իւր յանցանաց։ Առեալ գերի բազում և ի Հրէից՝ նստի շուրջ զՊտղոմայիդ քաղաքաւ։ Իսկ դշխոյն Հրէից Աղեքսանդրիայ, որ և Մեսաղինայ, որ էլ լեալ կին Աղեքսանդրի, որդւոյ Յոհաննու, որդւոյ Շմաւոնի, եղբօր Յուդայ Մակաբէի, որ զայնու ժամանակաւ ունէր զթագաւորութիւնն Հրէից, ինչս բազումս տալով՝ դարձոյց զնա անտի։ Քանզի էր լուեալ և համբաւ, թէ Վայկուն ոմն անուն յելուզակ խռովէր զերկիրն Հայոց, զլեառն ամուր կալեալ, որ մինչև ցայժմ յանուն յելուզակին կոչին Վայկունիք»։

Վոր Լուկուլլոսն արշավել եր Հայաստան հանկարծակի ու առանց պատերազմ հայտարարելու՝ այդ կարելի յե համարել, ինչպես կտեսնենք նաև ներքև, միանգամայն անվիճելի։

---

[1] Աւպ., Միհրդատականք, 83 և 84։

[2] Գրիգոր Խալաթյանցի յենթադրությունը, վոր իբր թե Խորենացին կամայական կերպով Լուկուլլոսին դարձրել ե «Վայկուն յելուզակ» հավանական չե։ Խորենացու այդ վկայությունը հիմնված ե ըստ իս ժողովրդական ավանդության վրա. տես Г. Халатьянц, Армянские Аршакиды, Москва 1903, եջ 64, 375։

10. ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ՅԵՎ ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ՀԱՅԵՐԻ ՀԵՏ

Լուկուլլոսի ծրագրած հանկարծակի ու անսպասելի հարձակումը և պատերազմը Տիգրանի դեմ նախապատրաստվում եր, ինչպես տեսանք, թաքուն կերպով ու դավադրաբար։

Տիգրանը չեր սպասում և ամենևին չեր նախազգում իր յերկրին սպառնացող մեծ վտանգը։ Նա գիտեր, ըստ յերևույթին, վոր հռոմեական ծերակույտը չեր լիազորել Լուկուլլոսին նոր պատերազմ սկսելու Հայաստանում։ Նրան նաև հայտնի յեր, հավանորեն, վոր հռոմեական ծերակույտը՝ վտանգավոր համարելով պատերազմը հզոր Հայաստանի դեմ՝ չեր համաձայնել միջամտել Ասորիքի գործերին և գահ բարձրացնել Սելևկյան որինավոր ժառանգներին։ Ծերակույտի խաղաղասեր այդ հակումները, ինչպես և պատերազմի վերջացման առթիվ Լուկուլլոսի Եփեսոսում կազմակերպած հանդեսները՝ պիտի վստահություն ներշնչած լինեյին Տիգրանին, վոր պատերազմի վտանգը հռոմայեցիների հետ կարելի յե համարել կանխված։ Ուստի և նա վոչ միայն չեր նախապատրաստվում պատերազմի, այլ, ընդհակառակը, անհոգ ու հանգիստ զբաղված եր Տիգրանակերտ քաղաքի շինարարության ավարտման աշխատանքներով։

Նրա միամիտ այս լավատեսությունը քաղաքական մեծ սխալ եր, վորը, ինչպես կտեսնենք, որհասական հետևանքներ ունեցավ նրա մեծ պետության համար։ Այս սխալը դժվար կարելի յե արդարացնել, վորովհետև Միհրդատը, ինչպես աղբյուրների վկայություններից հայտնի յե, նրան նախազգուշացրել եր, վոր հռոմեական վայրագ ու անկշտում իմպերիալիզմն անխուսափելի կերպով արշավելու յե Հայաստան։ Յեվ իրավի, Հռոմը վաղ թե ուշ հաշիվ եր պահանջելու Տիգրանից Ասորիքի նվաճման ու Կապադովկիայի ավերածությունների համար, վորոնք նրա դաշնակիցներն եյին։ Նա չեր կարող, իհարկե, թույլ տալ, վոր փոքրասիական իր գաղութների թիկունքում՝ Կոմմագենում, Արևելյան

Կիլիկիայում և Միջերկրական ծովի ափերին՝ վերջնականապես կազմակերպվի ու ամրանա աշխարհակալ ու հզոր Հայաստանը, վորը մշտական մի սպառնալիք էր լինելու նրա տիրապետության համար Արևելքում:

Դժվար չէր, ուրեմն, կռահել, վոր հռոմեական զորեղ ու ռազմատենչ հանրապետության ամրացումն ու հարևանությունը Հայաստանի արևմտյան սահմաններում ավելի վտանգավոր էր լինելու հայկական նորակազմ աշխարհակալության համար, քան նրա արևելյան սահմաններում գտնվող համեմատաբար թույլ ու անկայուն Պարթևական թագավորության հարևանությունը: Ուստի և Տիգրանը, ինչպես իրավացի կերպով ակնարկում են հռոմեական աղբյուրները՝ չպետք է հանդուրժեր իր թիկունքն ապահովող Պոնտոսի խորտակումը և իր աներոջը Միհրդատին օգնություն պետք է ուղարկած լիներ Կաբիրայի կռվից առաջ:

69 թվի գարնանը Լուկուլլոսը, առանց պատերազմ հայտարարելու Տիգրանին և հակառակ հռոմեական ծերակույտի ցանկության՝ իր անձնական նախաձեռնությամբ ու պատասխանատվությամբ, սկսեց հայկական արշավանքը: Ինչպես հաղորդում է Սալլուստիոսը[1], ամենաարագ յերթերով նա անցավ Կապպադովկիայի միջով և շտապեց դեպի Յեփրատ գետը, վորը բաժանում էր Հայաստանին կցված հին Ծոփքը Արիոբարզանի թագավորությունից: Այստեղ Մելիտենեի մոտ[2] Կապպադովկիայի թագավորը ծածկաբար պատրաստել էր տվել ձմեռվա ընթացքում լաստանավեր[3], վորոնցով Լուկուլլոսը հեշտությամբ անցավ Յեփրատ գետը և դուրս յեկավ Ծոփք: Վոր Լուկուլլոսը Յեփրատ գետն անցել էր թաքուն ու անակնկալ կերպով՝ այդ բացի Սալլուստիոսից վկայում է նաև Մեմնոնը[4]:

Հռոմեական զորքը Մելիտենեից մինչև Յեփրատ յեկել էր, անշուշտ, կարավանների հին ճանապարհով, վորը մանրամասն նկարագրված է Պևտինգերյան քարտեզում: Այդ ճանապարհը վորոշվում է ճշտիվ այժմյան Իզողլուի (գրվում է նաև Իզոլի) և նշանավոր հին Տոմիսայի մոտով, վորը գտնվում էր Յեփրատի ձախ

[1] Տես fr. IV, 11 (Leipzig 1856):

[2] Համեմատե Tacitus, Annales, XV, 26—27:

[3] Մոմզենի յենթադրությունը, վոր Տիգրանը նվաճած է յեղել նաև Մելիտենեն, ինչպես վերև ասացինք, ճիշտ չէ:

[4] Տես Մեմնոն, գլ. 56: «Լուկուլլոսը,—ասում է այս վկայության մեջ Մեմնոնը,—դուրս գալով Կապպադովկիա և ունենալով իբրև բարեկամ նրա Արիոբարզան իշխանապետին՝ անակընկալ կերպով անցավ վոտքով Յեփրատը...»:

ափին: Համաձայն Ստրաբոնի վկայության՝ Լուկուլլոսը նվիրել էր Տոմիսա ամրոցը Կապպադովկիայի Արիոբարզան Ա. թագավորին այն օգնության համար, վոր ստացել էր նրանից պատերազմի ժամանակ[1]:

Մեջ բերված այս փաստական տեղեկությունները, վորոնք պատմական են և միանգամայն արժանահավատ՝ լռության են տրված Պլուտարքոսի կողմից, վորը, հավանորեն, աշխատել է սքողել այս արշավանքի գաղտագողի ու յելուզակային բնույթը, վոր պատվաբեր չէր Լուկուլլոսի համար: Այս տեղեկությունների փոխարեն, վորոնք հայտնի յեն յեղել իրեն, գլխավորապես, Սալլուստիոսի պատմական յերկից՝ Պլուտարքոսը տալիս է հրաշքներով լի հեքիաթական մի պատմություն, վորի սկզբնաղբյուրը կարող է յեղած լինել, ինչպես յենթադրում է Ռեյնաքը[2], Արքիաս Անտիոքացու բանաստեղծական շինծու վիպերգը:

Պլուտարքոսի հաղորդած տեղեկությունները, վոր սովորաբար մեջ են բերվում պատմագիտական յերկերում, ավելորդ չեմ համարում տալ թարգմանաբար առանց կրճատումների:

«Լուկուլլոսը,—ասում է Պլուտարքոսը[3],—մեծ արագությամբ անցնելով ճանապարհը մինչև Յեփրատ գետը՝ գտավ այդ գետը խիստ հորդացած ու պղտորված անձրևների պատճառով: Նա անհանգիստ էր, վորովհետև հարկադրված էր ժամանակ վատնել ու աշխատանք գործ դնել և պետք է լաստանավեր շինել տար ու պատրաստեր նավակամուրջ: Սակայն յերեկոյան դեմ ջուրը սկսեց իջնել և այնքան պակասեց գիշերվա ընթացքում, վոր լուսաբացին Լուկուլլոսը գետի հունը տեսավ ցամաքած: Յերբ տեղական բնակիչները տեսան գետանցքում յերևացող փոքրիկ կղզյակներ և նրանց մոտ ջուրը ծանծաղած՝ նրանք ծնկաչոք յերկրպագեցին Լուկուլլոսին, վորովհետև այդ առաջ քիչ էր պատահել, իսկ այժմ սանձահարված ու ընտելացած գետը հոժարակամ անձնատուր էր լինում նրան և նրա տրամադրության տակ էր դնում իր դյուրին ու անարգել անցքը: Արդ՝ օգտվելով այս աջող դեպքից՝ Լուկուլլոսը տեղափոխեց իր զորքը: Գետն անցնելու ժամանակ նրան յերևաց կարևոր մի նախանշան: Այստեղ արածում էյին սրբազան յերինջները պարսկական

[1] Տես Ստրաբոն, XII, 2, 1:

[2] Mithridate Eupator, էջ 442:

[3] Տես Լուկուլ., 24, 2—8:

Արտեմիսի, վորին բարբարոսները, վոր ապրում եյին Յեփրատի մյուս ափին՝ ավելի եյին պաշտում, քան մյուս աստվածներին։ Նրանք այս յերինջներից ոգտվում եյին միմիայն զոհաբերությունների համար, իսկ ընդհանրապես այդ տեղերում յերինջներն ազատ շրջում եյին և ամեն մեկը կրում եր իր վրա խարանադրոշմ մի ջահ, վորն աստվածուհու նշանն եր։ Յեթե նրանցից մեկը հարկավոր լիներ՝ նրան այնքան ել հեշտ չեր վերցնել և բավական մեծ աշխատանք եր պետք դրա համար։ Յերբ զորքն անցնում եր Յեփրատ գետը՝ դրանցից մեկը բարձրացավ սրբազան մի ժայռի վրա, վորը նվիրված եր աստվածուհուն, կանգնեց նրա գագաթին և, խոնարհեցնելով գլուխը, ինչպես այդ անում են թոկով տարվող յերինջները՝ տրամադրեց ինքն իրեն Լուկուլլոսին զոհաբերման համար։ Բարեաջող գետանցի համար Լուկուլլոսը զոհաբերեց նաև Յեփրատին մի ցուլ»։

Պլուտարքոսի հաղորդած այս տեղեկությունները չունեն հարկավ պատմական վորևե արժեք։ Յեվ, ինարկե, իզուր են նրանք մանրամասն մեջ բերված պատմական նորագույն մի քանի յերկերում առանց վերոհիշյալ փաստական ու արժանահավատ վկայությունների հիշատակության[1]։

Յեփրատ գետն անցնելուց հետո հռոմեական զորքն առաջ շարժվեց Լուկուլլոսի առաջնորդությամբ և դարձյալ արագացրած յերթով գնաց Ծոփքի միջով դեպի Տիգրիս գետը, նպատակ ունենալով հանկարծակիի բերելու Տիգրանին և անակնկալ կերպով հարձակվելու Տիգրանակերտ քաղաքի վրա։ Ծոփքի բնակչությունը վոչ միայն ցույց չեր տվել վորևե դիմադրություն, այլ, ըստ յերևույթին, ինքը հոժարակամ հնազանդվել եր Լուկուլլոսին և, հայթայթելով հռոմեական բանակին անհրաժեշտ պարեն՝ մեծապես հեշտացրել եր նրա առաջխաղացումը դեպի Տիգրանակերտ։

Հռոմեական զորքի առաջշարժումը Ծոփաց աշխարհի միջով նկարագրված ե Ապպիանոսի ու Պլուտարքոսի ներքև մեջ բերված վկայություններում, վորոնք իրար հետ համերաշխ են և իրար լրացնում են։

1. Ապպիանոս, Միհրդատական, 84՝

«Յեփրատ գետն անցնելուց հետո՝ Լուկուլլոսն առաջ

[1] Տես Լեո, Հայոց պատմություն, Թիֆլիս, 1917, եջ 406 և այլն, նաև Գալենս և Խաչ, Պատմություն հին հայերի, պրակ Գ, Թիֆլիզ 1910, եջ 50—51 և ուրիշ։

շարժվեց բարբարոսների միջով, պահանջելով նրանցից միայն այն՝ ինչ վոր հարկավոր եր։ Իսկ ժողովուրդն այս չեր կռվում և չեր ուզում վորևե վնաս կրել, մինչև վոր Լուկուլլոսը և Տիգրանը կըվերջացնեյին իրար դեմ պատերազմը»։

2. Պլուտարքոս, Լուկուլլոս, 24, 8՝

«Յեվ այդ որը նա [Լուկուլլոսը] գիշերեց այստեղ [Յեփրատի ձախ ափին], իսկ հետևյալ և հաջորդ որերը նա առաջ շարժվեց Ծոփքի միջով առանց վորևե վնաս հասցնելու բնակիչներին, վորոնք հարում եյին նրան և հոժարությամբ ընդունում նրա զորքը։ Յեվ յերբ զինվորներն ուզեցին վերցնել մի բերդ, վորի մեջ կարծում եյին թե կան մեծ գանձեր՝ նա, ցույց տալով նրանց Տավրոսը հեռվում, ասաց՝ «Մենք պետք ե ավելի շուտ խորտակենք այն բերդը, իսկ սրանք այստեղ կըմնան հաղթողների համար»։ Յեվ նա, արագացնելով իր յերթը և անցնելով Տիգրիս գետը՝ ներխուժեց Հայաստան»։

Ուշագրավ ե, վոր մի ուրիշ վկայության մեջ ևս Պլուտարքոսն առանձնապես մատնանշում ե, վոր բացի արաբներից և գորդվացիներից Լուկուլլոսի կողմն եր անցել նաև Ծոփաց աշխարհի բնակչությունը[1]։ Այս վկայություններից անհավանական չի լինի յեզրակացնել, վոր հռոմեական դեսպան Ապպիոս Կլավդիոսի Հայաստան յեկած ժամանակ վոչ միայն Կորդուքը, այլ և Ծոփքը համաձայնած ե յեղել ոգնելու Լուկուլլոսին։ Թե վորքան մեծ կարևորություն ուներ սրա արշավանքի աջողության համար հռոմեական ռազմերթի ճանապարհի վրա գտնվող այս յերկու յերկրների դավաճանական համագործակցությունը հռոմայեցիների հետ՝ այդ հասկանալի յե ինքն ըստ ինքյան։

Արշավող զորքի ճանապարհի ուղղությունը Յեփրատ գետից մինչև Տիգրիս գետը պատմագիտական յերկերում վորոշված ե միանգամայն բավարար ճշտությամբ։ Լուկուլլոսի յերթուղու այս մասը յենթադրում են այժմյան Խարբերդի դաշտի միջով ու Արղանայի վրայով դեպի Տիգրիս գետն Ամիդ-Դիարբեքիրի մոտուրեքն՝ այն հին ճանապարհագծով, վորն Աքեմենյան Պարսկաստանի «արքայական ճանապարհի» մի մասն եր[2] և համապատասխանում եր Պեվտինգերյան քարտեզում նկարագրված Melitene—ad Tygrem ուղեգծին։

[1] Պլուտ., Լուկուլ., 29, 8։

[2] Տես „О торговле и городах Армении“, եջ 14—15։

Տիգրիս գետն անցնելուց հետո[1]՝ հռոմեական զորքը, ինչպես վկայում է Պլուտարքոսը[2], ներս էր խուժել Հայաստան։ Այս կարևոր վկայությունը, որ բավարարաչափ ուշադրության չի առնվել, լուսաբանում է Հին Հայաստանի պատմական աշխարհագրության ամենամութ խնդիրներից մեկը։ Պլուտարքոսը, ինչպես պարզ երևում է նրա վկայություններից՝ Ծոփքը, որը Տիգրան Բ-ը միացրել էր Մեծ Հայաստանին, համարում է առանձին երկիր ու նրա և բուն Հայաստանի սահման է ընդունում արևմըտյան Տիգրիս գետը[3]։ Կարելի չէ, ուրեմն, ենթադրել, որ Տիգրիս գետի ձախ կողմում գտնվող Աղձնիքը, որի մեջ էր Տիգրանակերտ քաղաքը, գտնվել է ոչ թե Ծոփաց Զարեհյանների պետության մեջ, ինչպես այդ կարծում են Հյուբշմանը և Մարկվարտը[4], այլ եղել է Արտաշեսյան Հայաստանի հարավային երկրներից մեկը։

Մեր այս հետևությունն անուղղակի կերպով հաստատում է նաև Ապպիանոսը։ Նրա ասելով՝ Տիգրանակերտ քաղաքը հիմնված է եղել այն տեղում, որտեղ «Տիգրանը առաջին անգամ իր գըլխին դրել էր Հայաստանի թագը»[5]։

Այս վկայությունից ևս երևում է, որ Ապպիանոսը, ինչպես և Պլուտարքոսը՝ Աղձնիքը ու նրա մեջ գտնվող Տիգրանակերտը համարում են բաղադրամաս Արտաշեսյան Հայաստանի։ Ուշագրավ է առանձնապես, բացի այդ, և այն, որ նաև ըստ հայկական ավանդության, որը մեջ է բերված Մար Աբասի և Խորենացու պատմական երկերում, հայերի հնագույն գաղթավայրը ցույց է տրված հենց նույն այս կողմերում Հայկական Տավրոսի հարավում։

Ուրեմն՝ Մեծ Հայաստանի հարավային սահմանը Տիգրան

[1] Եքհարդի կարծիքով, հռոմեական զորքը Տիգրիս գետն անցել էր, հավանորեն, այժմյան Ամիդ-Դիարբեքիրից մոտ քսան կիլոմետր հեռավորության վրա այժմյան Շարխանի մոտ, տես Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, Heft 1, էջ 87—88։

[2] Տես Լուկուլ., 24, 8։

[3] Համեմատե Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus Klio, Bd X, Heft 1, էջ 83։

[4] Տես Հյուբշման, «Հին հայոց տեղւոյ անունները», Վիեննա 1907, էջ 77 և Markwart, Eranschahr, Berlin 1901, էջ 178։ Համեմատե սակայն Մարկվարտի ճիշտ կռահումը նրա Südarmenien und die Tigrisquellen աշխատության մեջ՝ էջ 119։

[5] Ապպիանոս, Միհրդատ., 67։



Լուկուլլոսի արշավանքը Մելիտենեից դեպի Տիգրանակերտ

Մեծի և նրա նախորդների ժամանակ կարող էր յեղած լինել, իրապես, ինչպես վկայում է Պլուտարքոսը՝ Տիգրիս գետը։

Տիգրիս գետից մինչև Տիգրանակերտը (այժմյան Ֆարկինը), ուր շտապում էր հասնել հռոմեական զորքը, ընդամենը միայն մոտ 150 կիլոմետր էր[1]։ Լուկուլլոսի նենգ ու խորամանկ ծրագիրը իրականանում էր, ինչպես տեսնում ենք, ամենամեծ աջողությամբ։ Թշնամին կիպ մոտեցել էր Տիգրանակերտին և ահավոր վտանգը կախված էր արդեն Հայաստանի գլխին, իսկ Տիգրանը դեռ վոչինչ այդ մասին չգիտեր և վոչ զորք էր հավաքել և վոչ էլ կարող էր վորևե կերպ սպառնացող այդ վտանգը կանխել։

Հռոմեական զորքի անակնկալ ներխուժման լուրը թվաց Տիգրանակերտում միանգամայն անհավատալի։ Ապպիանոսի վկայությամբ՝ Տիգրանն այդ լուրը տարածողին համարել էր գրգռիչ ու խռովարար։

«Տիգրանին,—վկայում է Ապպիանոսը[2],—վոչ վոք տեղեկություն չէր տվել Լուկուլլոսի ներխուժման մասին։ Առաջին մարդը վորն այդ ասել էր՝ կախաղան էր հանվել նրա հրամանով, վորովհետև նա կարծել էր, վոր այդ մարդը խուճապ է գցում քաղաքներում»։

Խիստ գունավորված ու չափազանցված ձևով լրաբերի մահապատժման մասին պատմում է Պլուտարքոսը, վորի կասկածելի վկայություններն անտեղի կերպով մեջ են բերված, գլխավորապես, հայկական յերկերում[3]։

«Վորովհետև,—ասում է Պլուտարքոսը,—Լուկուլլոսի ժամանման մասին առաջին լուր տվողը վոչ միայն ոգուտ չստացավ, այլև գլխատվեց Տիգրանի հրամանով, ուստի և վոչվոք այլևս նրան չէր հաղորդում այդ մասին. և յերբ պատերազմի հուրն արդեն բորբոքվել էր՝ նա նստած էր անտեղյակ։ Այդ ժամանակ շողոքորթ խոսքեր էր նա լսում, վոր մեծ հրամանատար կըհամարվի Լուկուլլոսը, յեթե կարողանա նրան դիմակայել Եփեսոսում և յեթե Ասիայից իսկույն չփախչի, տեսնելով նրա անհամար զորքերը»[4]։

[1] Հռոմեական զորքի ճանապարհը Տիգրիս գետից մինչև Ֆարկին-Տիգրանակերտ սխալ է լուսաբանված Մոմզենի, Խալաթյանցի և մի շարք այլ յերկերում, վորովհետև այդ աշխատություններում սխալ է վորոշված Տիգրանակերտի տեղը։

[2] Տես Միհրդատ., 84։

[3] Տես Լ և ո, Հայոց պատմություն, էջ 407 և Դ ո լ ե ն ս և Խ ա չ, Պատմություն հին հայերի, պրակ Գ, էջ 51—52։

[4] Տես Պ լ ո ւ տ., Լուկուլ., 25, 1։

Պլուտարքոսի այս վկայության մեջ հետաքրքիր է, գլխավորապես, այն, վոր Տիգրանի արքունիքում, ըստ յերևույթին, համոզված են յեղել, վոր Լուկուլլոսը դեռևս գտնվել է Եփեսոսում։ Ինձ թվում է, վոր վերոհիշյալ մեր նոր հետևությունը, վոր Լուկուլլոսը յեկել էր Հայաստան վոչ թե Պոնտոսից, ինչպես մինչև այժմ յենթադրել են, այլ Եփեսոսից՝ անուղղակի կերպով ակնարկված է նաև Պլուտարքոսի սույն հատվածում։

Լրաբերի հաղորդած տեղեկության հաստատումն առաջ բերեց Տիգրանակերտում շփոթություն ու իրարանցում։ Տիգրանը, վորը պատերազմի պատրաստություններ դեռ չէր տեսել՝ ստիպված յեղավ մասնակի կերպով քաղաքը դատարկել և հեռանալ ապահով մի տեղ։ Վորպեսզի կարողանա ժամանակ շահել՝ նա իր զորավարներից մեկին, Մեհրուժանին (=Mithrobouzanēs)[1], տվեց մի փոքր զորամաս և հրամայեց, վոր նա, ինչ գնով էլ վոր լինի, կանգնեցնե գոնե ժամանակավորապես թշնամու շարժումը դեպի Տիգրանակերտ։

Մեհրուժանի զորամասի հռոմեական զորքի դեմ ուղարկման մասին միանգամայն վստահելի ու արժանահավատ տեղեկություն է հաղորդում դարձյալ Ապպիանոսը, վորն, ինչպես վերև ասացինք, իր պատմության այս մասում ոգտվել էր փոքրասիական չեզոք աղբյուրից։

«Յերբ Տիգրանն այնուհետև,—վկայում է Ապպիանոսը[2],—հաստատ իմացավ [Լուկուլլոսի ներխուժման մասին], նա ուղարկեց Մեհրուժանին յերկու հազար հեծելազորով, վորպեսզի նա ուշացնե Լուկուլլոսի գրոհը։ Իսկ Մանկայոսին հանձնարարեց Տիգրանակերտի պաշտպանությունը»։

Պլուտարքոսը տալիս է նաև տեղեկություն Մեհրուժանի մահվան մասին հանդուգն ու անհավասար կռվում։ Սակայն թեև նրա այս վկայությունների հիմքը պատմական է, բայց վորոշ մանրամասնությունները հնարովի ու անհեթեթ հերյուրանքներ

[1] Վոր Պլուտարքոսի ու Ապպիանոսի վկայություններում հիշատակված Mithrobarzanes անունը պետք է կարդալ Mithrobouzanēs՝ այդ համաձայն Ապպիանոսի ձեռագրների ընթերցվածների քննության պարզաբանված է Մարկվարտի ուսումնասիրություններից մեկում (տես Untersuchungen zur Geschichte von Eran, Philologus, Bd. 55, էջ 68—69)։ Ինչպես բացատրված է նույն այդ ուսումնասիրության մեջ, Mithrobouzanēs անունը համապատասխանում է հայկական Մեհրուժանին։

[2] Տես Միհրդատ., 84։

են, վորոնց միջոցով նա աշխատում է ըստ իր սովորության անվանարկել Տիգրանին։

«Նրա [Տիգրանի] բարեկամներից առաջինը Մեհրուժանն էր,—պատմում է Պլուտարքոսը[1],—վոր համարձակություն ունեցավ նրան ճշմարտությունը հայտնելու։ Սակայն սրան էլ ազատ խոսքի շնորհն ոգուտ չբերեց։ Սա իսկույն ուղարկվեց Լուկուլլոսի դեմ յերեք հազար հեծելազորով և բազմաթիվ հետևազորով։ Յեվ նրան հրաման տրվեց բռնել զորավարին ու բերել կենդանի, իսկ մյուսներին կոտորել։ Լուկուլլոսի զորքի մի մասն այդ ժամանակ տեղավորվում եր արդեն ճամբարում, իսկ մյուս մասը դեռ ճանապարհին եր։ Յերբ հետախույզները նրան հայտնեցին բարբարոս զորքի մոտեցման մասին՝ նա վախեցավ վոր նրանք, հարձակվելով իր ցրված ու չկարգավորված զորքի վրա, կառաջացնեն շփոթմունք։ Ուստի և ինքը շարունակեց հարդարել ճամբարը, իսկ Սեքստիլիուս լեգատին, վորն ուներ հազար վեցհարյուր հեծելազոր և մի փոքր ավելի ծանր զինված ու թեթև զինված հետևազոր՝ ուղարկեց թշնամու դեմ և հրամայեց մոտ գնալ ու նրանց դիմադրել, մինչև վոր լուր կըստանա, վոր իր հետ յեկած զորքը տեղավորվել է արդեն ճամբարում։ Արդ՝ Սեքստիլիուսն ուզում եր հենց այդպես անել, սակայն նա յենթարկվեց հարձակման Մեհրուժանի կողմից, վորն անվեհեր կերպով մտավ ձեռնակռվի։ Տեղի ունեցած ճակատամարտում Մեհրուժանը կռվելիս սպանվեց, իսկ մյուսները գրեթե բոլորը բացի քչերից մեռան փախուստի ժամանակ»։

Այս վկայության մեջ ակներև, անշուշտ, մի անհեթեթություն է Պլուտարքոսի հաղորդած սարքովի տեղեկությունը, վոր իբր թե Մեհրուժանի փոքրաթիվ զորքին հրաման եր տրված կենդանի բռնել Լուկուլլոսին և վոչնչացնել հռոմեական ահագին զորաբանակը։ Նա ուղարկված եր, իրապես, ինչպես տեսանք, վորպեսզի ուշացնե հռոմեական զորքի առաջխաղացումը դեպի Տիգրանակերտ։ Յեվ բնորոշ է, վոր անգամ Պլուտարքոսի այդ վկայությունը, վորի անմիտ լինելը պարզ է ու անվիճելի, անվերապահ կերպով մեջ է բերված պատմագիտական յերկերում[2]։

---

1 Տես Լուկուլ., 25, 3—6։

2 Տես, որինակ, Reinach, Mithridate Eupator, եջ 359, Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. 10, 1, եջ 90 և ուրիշ.։

Պլուտարքոսի վերոհիշյալ վկայության մեջ սուտ է, անտարակույս, նաև այն, վոր իբր թե Տիգրանը, ուղարկելով Մեհրուժանին Լուկուլլոսի դեմ՝ ուզեցել է նրան պատժել, վորովհետև նա յեր յերկրորդ անգամ իրեն հայտնել հռոմեական զորքի հարձակման մասին։ Մեհրուժանը, ինչպես պարզել է Մարկվարտը՝ Ծոփքի թագավորական տան արքայազններից եր[1]. ուստի միանգամայն հասկանալի յե, թե ինչու նա յեր ուղարկվել Լուկուլլոսի դեմ, վորը գալիս եր Ծոփքի միջով։

«Այնուհետև Տիգրանը,—պատմում է Պլուտարքոսը,—թողնելով իր հիմնած Տիգրանակերտ մեծ քաղաքը՝ նահանջեց դեպի Տավրոս և սկսեց զանազան կողմերից հավաքել իր ուժերն այնտեղ։ Իսկ Լուկուլլոսը, ժամանակ չտալով նրան պատրաստվելու՝ ուղարկեց Մուրենային, վորպեսզի նա դըժվարացնե ու արգելե զորքերի համակենտրոնացումը Տիգրանի մոտ, և ուղարկեց նաև Սեքստիլիուսին, վորպեսզի նա յետ մղե արաբական մեծ զորամասը, վորը գնում եր թագավորի մոտ։ Արդ՝ Սեքստիլիուսը անհապաղ հարձակվեց արաբների վրա, վորոնք բանակ եյին դնում, և նրանց մեծագույն մասը կոտորեց, իսկ Մուրենան հետապնդեց Տիգրանին նեղ ու անհարթ ձորում և, ոգտվելով հարմար առիթից՝ գրոհեց նրա յերկայնաձգված զորքի վրա։ Յեվ Տիգրանը կարողացավ ինքը փախչել, թողնելով ամբողջ իր աղխը. սակայն շատերը հայերից այդտեղ սպանվեցին, իսկ մեծագույն մասը գերի ընկան»[2]։

Ինչպես տեսնում ենք, Լուկուլլոսի վերոհիշյալ ծրագիրը, վորով նա նախատեսել եր հանկարծակիի բերել Տիգրանին՝ իրագործված եր այժմ լիովին։ Հռոմեական զորքը գտնվում եր արդեն Տիգրանակերտ քաղաքի մոտ բուն Հայաստանում, իսկ Տիգրանն անկարող եր հակահարված տալ թշնամուն, վորովհետև նա դեռ չեր տեսել պատերազմի վորևե պատրաստություն։

Հռոմեական աղբյուրների արհամարհական ակնարկները Տիգրանի նկատմամբ բացատրվում են, հավանորեն, նրանով, վոր հռոմայեցիների զորավարը և հռոմեական ճարպիկ ու վարպետ դիպլոմատիան մեծ աջողությամբ կարողացել եյին նրան գլխահան անել ու խաբել։

---

1 Տես Markwart, Eranschahr, եջ 176։

2 Տես Պլուտ., Լուկուլ., 25, 7—8։

11. ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ ՅԵՎ ՏԻԳՐԱՆԻ ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՀՐԴԱՏԻ ՀԵՏ

Լուկուլլոսի հանկարծակի ու սրընթաց շարժումը դեպի Տիգրանակերտ առաջացրել եր այստեղ, ինչպես ասացինք, խուճապ ու շփոթ: Տիգրանի փախուստը քաղաքից կատարվել եր այնքան արագ ու հապճեպ, վոր նա չեր կարողացել հետը վերցնել իր կանանոցն ու գանձերը:

Նահանջելով Տավրոսյան լեռներով[1], հավանորեն, այժմյան Ներջիկի ու Շենիկի վրայով[2] դեպի իր թագավորության կենտրոնական ու հյուսիսային շրջանները՝ Տիգրանակերտի պաշտպանությունը Տիգրանը հանձնարարել եր Մանկայոս զորավարին: Սա պետք ե դիմադրեր ու պահեր քաղաքը, մինչև վոր ինքը զանազան կողմերից կըհավաքեր իր զորքերը և կըգար նրան ոգնության:

Լուկուլլոսի հանկարծակի հարձակումը և Տիգրանակերտ գալը տեղի յեր ունեցել, իմ կարծիքով, վոչ թե 69 թվի ամառը, ինչպես յենթադրում ե Ռեյնաքը[3], այլ 69 թվի գարնանը: Ի նկատի ունենալով ընդհանուր տարածությունը, վոր Յեփրատ գետից մինչև Տիգրանակերտ-Ֆարկինը մոտ 300 կիլոմետր ե, պետք ե յենթադրել, վոր հռոմեական զորքը, Յեփրատ գետն անցնելուց հետո (69 թվի գարնանը)՝ արագացրած յերթով կարող եր հասած լինել Տիգրանակերտ առ առավելն յերկու շաբաթվա ընթացքում, վոչ ուշ քան մայիս ամսին:

Հավանական ե, ուրեմն, վոր հռոմայեցիները Տիգրանակերտը պաշարել եյին արդեն 69 թվի գարնանը: Քաղաքի պաշարման

---

[1] Տես Պլուտ., Լուկուլ., 25, 7:

[2] Տիգրանակերտից Տարոն ու այնտեղից Արտաշատ տանող մեծ ճանապարհը, վորը մանրամասն նկարագրված ե հռոմեական հին աշխարհաքարտեզում, քննված ե ու լուսաբանված իմ «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» աշխատության մեջ, եջ 85—114:

[3] Տես Mithridate Eupator, եջ 359:

ՏԻԳՐԱՆ ՅԵՐԿՐՈՐԴ

նախապատրաստությունները Լուկուլլոսը հանձնարարել էր Սեքստիլիուսին, վորը, ինչպես վկայում է Ապպիանոսը[1].

«Շրջափակելով Տիգրանակերտում Մանկայոսին՝ իսկույն գրավել էր թագավորական պալատը՝ վորը գտնվում էր քաղաքի պարիսպներից դուրս, իսկ քաղաքը և միջնաբերդը պատել էր պատնեշով ու փոսով, պատրաստել էր մեքենաներ և պարսպի տակ փորել էր ավել ականներ»։

Բերդապահ զորքը բաղկացած էր, գլխավորապես, հույներից և կիլիկեցիներից։ Ըստ յերևույթին, այս զորքը կազմված էր Տիգրանակերտի քաղաքացիական իրավունքներ ստացած նորաբնակներից, վորոնց այստեղ էր գաղթեցրել Տիգրանը Կիլիկիայից ու Կապպադովկիայից։

Հռոմայեցիների բոլոր ջանքերը գրավելու քաղաքը գրոհով և պատերազմական մեքենաների ոգնությամբ մնացին ապարդյուն ու անհետևանք։

Մանկայոսի[2] առաջնորդությամբ բերդապահ զորքը համառ ու տոկուն կերպով դիմադրում էր հռոմայեցիներին, թափելով նրանց գլխին նետերի տարափ։ Իսկ պաշարման մեքենաների վրա պաշարվածները վերևից ածում էին այրվող նավթ, վորը վոչընչացնում էր մեքենաները[3]։

Այսպիսով ամիսներ շարունակ Տիգրանակերտը մնաց կանգուն ու անպարտելի մինչև Տիգրանի վերադարձը նոր կազմված զորաբանակով։

Ուշագրավ է ու հետաքրքիր, վոր Պլուտարքոսը ավելորդ է համարել մատնանշել հռոմեական զորքի սկզբնական այս անաջողությունը։ Նա վոչինչ չի հաղորդում նաև հայկական հեծելազորի աջող ու հաղթական այն գրոհի մասին, վոր հանգամանորեն հիշատակված է յերկու փոքրասիական չեզոք աղբյուրներում, վորոնցից լայնորեն ոգտվել էին Մեմնոնը և Ապպիանոսը։

Այդ արժանահավատ աղբյուրներից հայտնի յե, վոր Տիգրանակերտի պաշարման սկզբներում Տիգրանն այստեղ ուղարկել

---

1 Միհրդատականք, 84։

2 Մանկայոս անունը համապատասխանում է ըստ Ադոնցի հայկական Մամիկ անվան և, վորովհետև այդ անունը հանդիպում է Մամիկոնյանների տոհմում և նրանց նախահոր անունն է, ուստի և Ադոնցը կարծում է, վոր Մանկայոս-Մամիկը, հավանորեն, հայ զորավար էր Մամիկոնյանների տոհմից, տես Армения в эпоху Юстиниана, եջ 411 և 415։

3 Կասսիուս Դիոն, գր. 36, գլ. 1 b (հրատ. Boissevain-ի)։

եր մի ընտիր հեծելազունդ, վորին հանձնարարել եր պաշարված քաղաքից ազատել իր կանանոցն ու մեծագին գանձերը։ Մեմնոնի ու Ապպիանոսի մոտ պահպանված այդ տեղեկությունը, վոր անտես են արել հռոմեական աղբյուրները՝ թարգմանաբար մեջ ենք բերում առանց կրճատումների։

1. Մեմնոն, 56՝

«Յերբ Հայաստանը շատ կողմերից այսպես պաշարված եր՝ Տիգրանը մարդ ուղարկեց և իր մոտ հրավիրեց Միհրդատին. նա նույնպես զորք ուղարկեց Տիգրանակերտ քաղաքը, վորի մեջ գտնվում եր նրա կանանոցը։ Սրանք գալով այնտեղ և, կռվելով նետաձգությամբ հռոմեական ճամբարից դուրս գալու ճանապարհը՝ դուրս բերին գիշերով նախապես Տիգրանի կանանոցն ու թանկագին ամենաարժեքավոր իրերը։ Իսկ լուսաբացին հռոմայեցիները և նրանց հետ նաև թրակացիներն արիաբար կռվեցին, շատերին հայերից սպանեցին և կենդանի բռնվածներից շատերին ել գերի վերցրին։ Սակայն այն, ինչ վոր նախապես ուղարկված եր՝ փրկվեց ու հանձնվեց Տիգրանին»։

2. Ապպիանոս, Միհրդատականք, 85՝

«Սեքստիլիուսը զբաղված եր հենց այս գործերով [Տիգրանակերտի պաշարմամբ], իսկ Տիգրանը, հավաքելով մոտ յերկու հարյուր հիսուն հազար հետևազոր և մոտ հիսուն հազար հեծելազոր՝ ուղարկեց նախ նրանցից մոտ վեց հազար հոգի Տիգրանակերտ։ Սրանք բռնի կերպով հռոմայեցիների միջով անցան, գնացին դեպի միջնաբերդը, դուրս բերին այնտեղից թագավորի կանանց և վերադարձան։ Իսկ զորքի մյուս մասով Լուկուլլոսի վրա հարձակվեց ինքը Տիգրանը։ Յեվ այդ ժամանակ նրա մոտ յեկավ առաջին անգամ տեսության Միհրդատը և խորհուրդ տվեց, վոր նա հռոմայեցիների հետ կռվի չբռնվի, այլ միայն հեծելազորով ասպատակե ու ավերե յերկիրը և աշխատե, յեթե կարելի յե, նրանց սովածության մատնել. այնպես, ինչպես և իրեն Լուկուլլոսն առանց կռվի ուժասպառ եր արել Կիզիկոսի մոտ և վոչնչացրել եր զորքը»։

Մեմնոնը և Ապպիանոսը, ինչպես տեսնում ենք, համերաշխ ու միաբան վկայում են, վոր Տիգրանի ուղարկած զորամասը աջողությամբ կատարել եր նրա հանձնարարությունը և, պատռելով Տիգրանակերտը պաշարող հռոմեական զորաշղթան՝ դուրս եր բե-

րել այնտեղից թագավորի կանանոցը և գանձերը։ Հ. Ասատուրյանը կարծում է սխալմամբ, վոր այս դեպքը տեղի յեր ունեցել Ծոփքում, ուր հռոմայեցիները պաշարել եյին Բնաբեղ բերդը[1]։

Հայկական հեծելազորի այդ մեծ աջողությունը չե հիշատակել Պլուտարքոսը, հավանորեն, այն պատճառով, վոր նա, ինչպես մատնանշել և Ռեյնաքը[2], անպատվաբեր է համարել այդ դեպքը Լուկուլլոսի համար։

Վերոհիշյալ վկայություններից յերկրորդի մեջ հայկական զորամասի գիշերային գրոհը Ապպիանոսը դնում է Տիգրանի հակահարձակման ժամանակ 69 թվի աշնանը։ Սակայն Եքհարդը, հիմնվելով Մեմնոնի հաղորդած ավելի ստույգ տեղեկության վրա՝ յենթադրում է, վոր այդ գրոհը տեղի յեր ունեցել Տիգրանակերտից Տիգրանի հեռանալուց անմիջապես հետո, ուրեմն՝ 69 թվի գարնանը։ Եքհարդը միանգամայն իրավացի կերպով մատնանշում է, վոր Տիգրանակերտ ներս մտնելը համեմատաբար հեշտ կարող եր լինել և հնարավոր քաղաքի պաշարման սկզբում, յերբ դեռևս չեյին ավարտվել նրա շրջափակման աշխատանքները[3]։

Վերոհիշյալ վկայություններում առանձնապես ուշագրավ է նաև այն, վոր թե Մեմնոնը և թե Ապպիանոսը, հենվելով պարզապես փոքրասիական չեզոք սկզբնաղբյուրների վրա՝ հաղորդում են, վոր Միհրդատը հրավիրված է յեղել Տիգրանի մոտ վոչ թե Լուկուլլոսի Հայաստան արշավելուց առաջ, ինչպես յենթադրել են, համաձայն Պլուտարքոսի սխալ տեղեկության, բոլոր ոտար և հայ պատմագետները, այլ պատերազմը սկսվելուց հետո, յերբ Տիգրանը, հեռանալով իր պետության ներքին նահանգները՝ սկսել եր նախապատրաստվել պատերազմի, այսինքն՝ 69 թվի գարնանը և կամ ամառը։

Ապպիանոսը, ինչպես վերև տեսանք (վկ. 2), պարզ ու վորոշ վկայում է, վոր Միհրդատն առաջին անգամ տեսության եր յեկել Տիգրանի մոտ սրա Լուկուլլոսի վրա հարձակվելուց առաջ։ Նմանապես և Մեմնոնի վերոհիշյալ հատվածում (վկ. 1) Միհրդատի հրավիրումը Տիգրանի մոտ ցույց է տրված դարձյալ Տիգրանակերտի պաշարումից անմիջապես հետո, թեև նրա մոտ այդ տե-

[1] Տես Ասատուրյան, «Քաղաքական վերաբերութիւններ», Վենետիկ 1912, եջ 53։

[2] Տես Mithridate Eupator, եջ 360, ծան. 1։

[3] Տես K. Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, 1, եջ 92։

սակցության մասին մանրամասն տեղեկություններ են հաղորդված նաև նախորդ 55-րդ գլխում։

Չնայած սակայն Մեմնոնի ու Ապպիանոսի միանգամայն արժանահավատ այս վկայություններին՝ բոլոր պատմագետները, ինչպես ասացինք, գերադասություն են տվել Պլուտարքոսի տեղեկություններին։ Նրանք ուշադրության չեն առել, վոր Պլուտարքոսը և կամ նրա սկզբնաղբյուրը դիտավորյալ կերպով խարդախել են պատմական իրական յեղելությունը, վորպեսզի թաքցընեն Լուկուլլոսի արշավանքի նենգ ու անիրավ բնույթը և ցույց տան, վոր Տիգրանն ու Միհրդատը, դեռ Լուկուլլոսի արշավանքը չսկսված՝ իրար հետ գաղտնի բանակցություններ եյին վարել և իրենք հենց նախապատրաստել եյին ու սկիզբ դրել պատերազմական գործողությունների։

Վոր Տիգրանի ու Միհրդատի տեսակցության մասին մեր նոր բացատրությունը միանգամայն ստույգ է՝ այդ պարզ ցույց է տալիս նաև ներքև մեջ բերված Մեմնոնի մի այլ կարևոր ցուցումը, վորը բավարարաչափ քննված ու ոգտագործված չէ յեղել պատմագիտական նախորդ յերկերում։

«Միհրդատը,—պատմում է Մեմնոնը[1],—մնալով մեկ տարի ու ութն ամիս Հայաստանի կողմերում՝ դեռևս չեր ներկայացել և չեր տեսնվել Տիգրանի հետ։ Յեվ յերբ Տիգրանը խնդրեց, վոր Միհրդատը իրեն տեսության գա՝ նա նրան ընդունեց շքով և արժանի համարեց թագավորավայել պատիվների։ Մոտ յերեք որ նա գաղտնի խորհրդակցություն ունեցավ Միհրդատի հետ և ապա բարեկամաբար նրան պարգևեց փարթամ զգեստներ, տվեց տասը հազար հեծելազոր և ուղարկեց Պոնտոս»։

Մեմնոնի այս վկայության համաձայն Տիգրանի տեսակցությունը Միհրդատի հետ տեղի յեր ունեցել վերջինիս Հայաստան գալուց քսան ամիս հետո։ Արդ՝ վերև մենք տեսանք, վոր Միհրդատը Հայաստան յեկել եր 71 թվի աշնանը[2], ուրեմն՝ նրա տեսակցությունը Տիգրանի հետ, համաձայն Մեմնոնի այդ վկայության, պետք է տեղի ունեցած լիներ վոչ թե պատերազմից առաջ, այլ պատերազմը սկսվելուց հետո՝ 69 թվի գարնան վերջերին կամ ամառվա ամիսներին, ինչպես վերև մենք մատնանշել ենք։

[1] Տես Մեմնոն, գլ. 55։

[2] Համեմատե նաև Reinach, Mithridate Eupator, եջ 348։

Վոր Տիգրանը միայն այժմ, մոտ յերկու տարուց հետո միայն, թագավորական շքով ընդունեց Միհրդատին՝ այդ միանգամայն հասկանալի յե, վորովհետև Լուկուլլոսի անսպասելի արշավանքից և պատերազմը սկսվելուց հետո Տիգրանի զգուշավոր ու զուսպ դիրքը Հռոմի հանդեպ, ինչպես և նրա չեզոքությունը, վորով նա մտածում եր պատերազմից խուսափել՝ կորցնում եյին այլևս իրենց իմաստը։ Յեվ բնական է, վոր նա միայն այժմ, հասկացած լինելով իր քաղաքական սխալը՝ կարիք ուներ Միհրդատի ոգնության ու գործակցության։

Տիգրանի ու Միհրդատի տեսակցության ժամանակ տեղի ունեցած զրույցի մասին Պլուտարքոսը տալիս է դարձյալ խիստ գունավորված ու կասկածելի տեղեկություններ։

«Արդ՝ գաղտնի զրույցի ժամանակ,—ասում է Պլուտարքոսը,—վոր ունեցան [Տիգրանն ու Միհրդատը]՝ նրանք կասկածանքներ իրար հայտնեցին ի վնաս բարեկամների և սրանց համարեցին դժբախտությունների պատճառ։ Դրանցից մեկն եր և Մետրոդորոս Սկեփսացին, վորն անհաճելի չեր իբրև խոսող և բազմակողմանի յեր իբրև գիտնական։ Մետրոդորոսի բարեկամությունը Միհրդատի հետ այնքան սերտ եր, վոր նա անվանվում եր թագավորի հայր։ Ինչպես պատմում են, սա Միհրդատի կողմից ուղարկված եր Տիգրանի մոտ հռոմայեցիների դեմ ոգնություն խնդրելու։ Յեվ Տիգրանը նրան հարցրել եր. «Իսկ դու ինքդ, ո՛վ Մետրոդորոս, ի՞նչ խորհուրդ կըտաս այդ մասին»։ Իսկ նա, կամ Տիգրանին ոգտակար լինելու համար և կամ չցանկանալով վոր Միհրդատը փրկվի՝ ասել եր.—«Իբրև դեսպան՝ խորհուրդ եմ տալիս, իսկ իբրև խորհրդատու՝ խորհուրդ չեմ տալիս»։ Տիգրանն այս պատմեց Միհրդատին և մեղադրեց նրան, չմտածելով վոր դրանով վտանգի յե յենթարկվում Մետրոդորոսը։ Յեվ սա իսկույնևեթ սպանվեց, իսկ Տիգրանը զղջաց. բայց մտածեց, վոր ինքը չե միայն պատճառ Մետրոդորոսի դժբախտության, այլ այդ բանի խթան է հանդիսացել նաև Միհրդատի ատելությունը նրա նկատմամբ։ Վաղուց ի վեր, իրոք, Միհրդատը նրան թշնամացել եր և այդ ակներև յեղավ, յերբ բռնագրավեցին Միհրդատի գաղտնի գրությունները, վորոնց մեջ եր նաև Մետրոդորոսի սպանման կարգադրությունը։ Սրա դիակը Տիգրանը մեծ շքով թաղել տվեց. նա վոչ մի

ծախս չխնայեց մեռածի համար, վորին կենդանության ժամանակ ինքը մատնել եր»[1]:

Պլուտարքոսի ընդարձակ այս վկայության մեջ, վորը գրված ե Տիգրանին վարկաբեկելու հատուկ նպատակով, սարքովի յե ու սուտ, իմ կարծիքով, նախ և առաջ, Մետրոդորոսի սպանության վերաբերյալ տեղեկությունը: Ստրաբոնի մի այլ վկայությունից, վոր ներքև մեջ ենք բերելու, պարզ յերևում ե, վոր Մետրոդորոսը վախճանվել եր 71 թվին: Ուրեմն՝ շատ պարզ ե, վոր նա չեր կարող սպանված լինել Տիգրանի ու Միհրդատի տեսակցությունից հետո՝ 69 թվին (նախ քան մեր թվ.):

Ստրաբոնի վկայությունը թարգմանաբար մեջ եմ բերում ամբողջությամբ:

«Յեվ [Սկեփսացի յեր] բացի նրանից [Դեմետրիոսից],—ասում ե Ստրաբոնը[2],—Մետրոդորոսը, վորը փիլիսոփա յեր և անցել եր քաղաքական կյանքի ասպարեզ: Լինելով իր գրվածքներում առավելապես ճարտասան՝ նա գործ եր ածում ինչ վոր անսովոր նոր վոճ և զարմանք եր պատճառում շատերին: Շքեղ հարսանիքի մեծամոլության պատճառով, վոր տեղի յեր ունեցել Քաղկեդոնում՝ նա աղքատ եր և համարվում եր քաղկեդոնացի: Ծառայության մտնելով Միհրդատ Եվպատորի մոտ՝ նա իր կնոջ հետ գնաց նրա մոտ Պոնտոս. առանձնապես հարգված եր այստեղ և պաշտոն եր ստացել դատարանում, վորի վճռի դեմ դատապարտվածն իրավունք չուներ վերադատության գանգատ տալու թագավորին: Սակայն նրա բախտավորությունը հարատև չեղավ, այլ նա՝ գրգռելով իր դեմ անարդար մարդկանց թշնամությունը՝ թագավորի մոտից հեռացավ և գնաց իբրև դեսպան Տիգրան արմենի մոտ: Իսկ սա դժկամությամբ յետ ուղարկեց նրան Եվպատորի մոտ, վորն արդեն փախչում եր հայրենի յերկրից: Մետրոդորոսը ճանապարհին մահացել եր՝ կամ թագավորի հրամանով և կամ հիվանդությունից: Հաղորդում են թե այս և թե մյուս տեղեկությունը»:

Ստրաբոնը, ինչպես տեսնում ենք, պարզ վկայում ե, վոր Մետրոդորոսը վախճանվել եր Տիգրանի մոտից Պոնտոս վերադառնալիս, յերբ Միհրդատն արդեն փախչում եր հայրենի յերկրից, այսինքն՝ 71 թվին: Ուրեմն՝ միանգամայն սխալ են Ռեյնաքի,

[1] Տես Պլուտ., Լուկուլ. 22, 2—6:

XIII, 1, 55:

Եքհարդի և այլ պատմագետների պնդումները[1], վորոնք՝ հավատ ընծայելով Պլուտարքոսին՝ Մետրոդորոսի սպանությունը յենթադրել են Տիգրանի ու Միհրդատի հանդիպումից հետո, վորը տեղի յեր ունեցել 69 թվին (նախ ք. մեր թ.):

Պլուտարքոսի ու Ստրաբոնի մոտ ըստ իս կասկածելի յեն և անհավատալի նաև նրանց վկայությունները Մետրոդորոսի սպանության մասին: Այդ տեղեկությունները, վոր վերև մեջ բերված վկայություններում խիստ հակասական են՝ բղխում են, ըստ յերևույթին, հակամիհրդատյան աղբյուրներից և հնարված են, հավանորեն, Միհրդատին վարկաբեկելու և անարգելու համար: Ինձ թվում ե, վոր ավելի հավանական կարելի յե համարել Ստրաբոնի ձեռքի տակ յեղած մյուս աղբյուրների տեղեկությունը, վորոնք վոչինչ չգիտեն Մետրոդորոսի սպանության մասին և վկայում են, վոր նա մահացել եր հիվանդությունից[2]:

Ուշագրավ ե նաև, վոր Պլուտարքոսի և Մեմնոնի վկայությունները իրար չեն համապատասխանում նույնպես մի այլ կարևոր կետում: Մեմնոնը մատնանշում ե, վոր յերեք որ տևող խորհրդակցությունից հետո Միհրդատը, ստանալով Տիգրանից տասը հազար հեծելազոր՝ գնաց Պոնտոս, իսկ Պլուտարքոսն այդ տեղեկությունը չունի: Սակայն նա մի այլ հատվածում, վոր ներքև մեջ ենք բերում, հաղորդում ե, վոր խորհրդակցությունից հետո Տիգրանը և Միհրդատը մտադիր եյին Կիլիկիայի ու Լիկաոնիայի վրայով ներխուժել հռոմեական Փոքր Ասիա:

«Յերբ Լուկուլլոսն իմացավ,—պատմում ե Պլուտարքոսը,—վոր Միհրդատը և Տիգրանը դեռ նոր են տեղափոխելու իրենց զորքերը Լիկաոնիա և Կիլիկիա, վորպեսզի իրենք նախապես ներխուժեն Ասիա՝ նա զարմացավ, վոր Տիգրան արմենը, վորը մտադրություն եր ունեցել հարձակվելու հռոմեյեցիների վրա՝ Միհրդատին պատերազմի համար չեր ոգտագործել, յերբ նա դեռ հզոր եր, և չեր միացրել իր ուժերը նրա մեծ ուժերի հետ, այլ թույլ եր տվել, վոր դրանք պարտվեն ու ջախջախվեն. իսկ այժմ, յերբ այդ ուժերն անկարելի

[1] Տես Reinach, Mithridate Eupator, եջ 357. Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Bd. X, 1, եջ 89 և ուրիշ.:

[2] Ռեյնաքը, հիմնվելով, ըստ յերևույթին, ինչ վոր աղբյուրի վրա, վոր ինձ անծանոթ ե, յենթադրում ե, վոր Մետրոդորոսն իրեն թունավորել և հանկարծամահ եր յեղել, տես Mithridate Eupator, եջ 357:

յն արդեն վերականգնել՝ նա պատերազմը սկսել է չնչին ուժերով, մատնելով իրեն կործանման»[1]:

Պլուտարքոսի այս տեղեկությունը, որը ստույգ ու արժանահավատ է համարվել պատմագիտական բոլոր հին և նոր յերկերում[2], ոչ միայն անհավանական է, այլ պարզապես սխալ է: Տիգրանը, ինչպես վերև տեսանք, ոչ միայն չէր նախապատրաստվել պատերազմի, այլև չէր սպասում, որ Հռոմը պատերազմ է սկսելու նրա դեմ: Շատ պարզ է, բացի այդ, որ Տիգրանը և Միհրդատը, որոնց հանդիպումը և խորհրդակցությունը տեղի էյին ունեցել Լուկուլլոսի արշավանքից ու Տիգրանակերտի պաշարումից հետո՝ չէյին կարող այդ արշավանքից առաջ ծրագրած լինել նախահարձակ լինելու և ներխուժելու հռոմեական Փոքր Ասիա:

Պլուտարքոսը կամ այն աղբյուրները, որոնցից նա օգտվել էր՝ ցանկացել են, ըստ յերևույթին, սարքովի այս տեղեկության միջոցով պատերազմի պատասխանատվությունը դնել Տիգրանի ու Միհրդատի վրա և ուզեցել են, հավանորեն, արդարացնել Լուկուլլոսի նենգ հարձակումը Հայաստանի վրա, որ նա սկսել էր հանկարծակի ու գաղտնաբար և առանց պատերազմ հայտարարելու:

1 Տես Պլուտ., Լուկուլ., 23, 6:

2 Տես Моммсен, Римская история, т. III, էջ 56, Reinach, Mithridate Eupator, էջ 358, Халатьянц, Очерк истории Армении, էջ 191 և ուրիշ.:

12. ՄԵԾ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ՄՈՏ

Տիգրանակերտ քաղաքը, որը պաշարված էր 69 թվի գարնանը՝ ամիսներ շարունակ դիմացավ պաշարմանը և համառորեն դիմադրեց հռոմայեցիներին, սպասելով որ իրեն օգնության կըգա Տիգրանի նոր կազմակերպված զորաբանակը: Իսկ այդ ժամանակ Տիգրանը հետզհետե իր զորքերը հավաքեց զանազան շըրջաններից, նաև իրեն ստորադրված վասալական թագավորություններից և իշխանություններից: Նրան օգնության յեկան, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը[1], Ատրպատականի ու Ադիաբենի թագավորները, նաև զորամասեր Աղվանքից, Վրաստանից, Արաբիայից և ուրիշ յերկրներից:

69 թվի աշնանը Տիգրանը և նրա զորաբանակը ճանապարհ ընկան և Տավրոսյան լեռներով իջան հարավ ազատելու պաշարված Տիգրանակերտը: Տիգրանի այս ճանապարհը Եքհարդը յենթադրում է Մշո դաշտից դեպի այժմյան Ներջիկ և այնտեղից դեպի ձախ շեղելով՝ Բատման-սուի ձախ կողմով մինչև Ֆարկինսուի և Բատման-սուի գետախառնուրդը[2]:

Հենց նույն այս ժամանակ Տիգրանի մոտ յեկան, ինչպես վկայում են Մեմնոնը և Պլուտարքոսը, Միհրդատի ուղարկած պատգամավորությունը և նրա հմուտ ու փորձված զորավար Տաքսիլեսը: Սրանք նախազգուշացրին Տիգրանին, որ նա խուսափի վճռական պատերազմից, որովհետև հռոմեական մշտական ու մարզված զորքը գրեթե անպարտելի յե: Նրանք խորհուրդ տվին, որ նա արգելե, ըստ կարելույն, հռոմեական զորքի պարենավորումը և նրանց մատնե սովածության[3]:

1 Տես Լուկուլ., 26, 6:

2 Տես Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, Heft 1, էջ 94:

3 Ապպիանոսի վկայությունը, որ Միհրդատն ինքն էլ էր մասնակցել Տիգրանակերտի ճակատամարտին և որ ինքն էր տվել այդ խորհուրդը (տես Միհրդատականք, 85)՝ չի համապատասխանում Պլուտարքոսի և Մեմնոնի վկայություններին (տես Պլուտ. Լուկ., 29, 1 և Մեմն., 58), ուստի և համարվում է անհավանական:

Տիգրանին դժվար եր սակայն հետևել այդ խորհուրդներին, վորովհետև նա, ըստ յերևույթին, չեր ուզում և չեր կարող, յերկարացնելով պատերազմը՝ զոհ բերել Տիգրանակերտ քաղաքը, վորը կարիք ուներ շտապ ու անհապաղ օգնության:

Ինչպես վերև մենք տեսանք, հելլենիստական այս նոր քաղաքի կառուցման վրա, վոր կուլտուրական մեծ ու հոյակապ մի գործ եր՝ ծախսված եյին ու գործադրված հսկայական միջոցներ ու աշխատանք: Այս քաղաքը, համաձայն Տիգրանի ծրագրի, լինելու յեր նրա պետության լուսատու կենտրոնը և հետզհետե հեղաշրջելու և նորոգելու յեր նրա հայրենի յերկրի հետամնաց նահապետական կյանքը: Տիգրանակերտը, ինչպես ասացինք, նպաստելու յեր նաև առևտրի ու արդյունագործության զարգացմանը Հայաստանում և օժանդակելու յեր նույնպես հելլենիստական քաղաքակրթության և հելլենական արվեստի ու գիտության տարածմանը: Պարզ է, ուրեմն, ու հասկանալի, թե ինչու Տիգրանը չհետևեց Միհրդատի ու նրա զորավարի խորհրդին և, օգնության շտապելով Տիգրանակերտին, ուզեց դադարեցնել նրա պաշարումը:

Ուշագրավ է, վոր Լուկուլլոսն ինքը ես, ինչպես վկայում է Պլուտարքոսը[1], պաշարելով Տիգրանակերտը՝ հասկացել ու նախատեսել եր, վոր Տիգրանը չի կարող այդ հանդուրժել և անպայման գալու յե և ճակատամարտ է տալու իր նոր մայրաքաղաքը փրկելու համար:

69 թվի հոկտեմբեր ամսի սկզբներին Տիգրանի զորաբանակը մոտեցավ Տիգրանակերտին և ընդհարումը հռոմայեցիների հետ դարձավ անխուսափելի:

Տիգրանակերտի ճակատամարտը տեղի յեր ունեցել, ինչպես յերևում է սկզբնաղբյուրների վկայություններից՝ Նիկեփորիոն գետի մոտ, վորից մոտավորապես 750 մետր հեռավորության վրա գտնվում եր մի ցած բլրակ: Պլուտարքոսը վկայում է, վոր պաշարված Տիգրանակերտցիները տեսել և ցույց եյին տվել հռոմայեցիներին ռազմադաշտի տեղը, ուր բանակել եյին Տիգրանի զորքերը:

Հիմնվելով սկզբնաղբյուրների և, գլխավորապես, Պլուտարքոսի նկարագրության ու ցուցումների վրա՝ ճակատամարտի տեղը Ֆարկինի մոտ յենթադրաբար վորոշել է գերմանական գիտնական Բելքը, վորի հոդվածից[2] ավելորդ չեմ համարում մեջ բերել մի քանի հատվածներ:

«Ֆարկին-սուի լայնանիստ ձորադաշտից հանդարտ ցած

[1] Տես Լուկուլ., 26, 4:

[2] Տես Zeitschrift für Ethnologie, 1899, եջ 272 և այլն:

իջնելով դեպի հարավ-արևելք,—ասում է Բելքը,—մոտ քսան կիլոմետր անցնելուց հետո՝ հասնում ենք մի մեծ դաշտ, ջրառատ Բատման-սուի գետադաշտը, վորը հյուսիսում սկսվում է մեր գտնված տեղից մոտ 20 կիլոմետր հեռավորության վրա գտնվող մեծ կամուրջի տակից և շարունակվում է այնուհետև 12—15 կիլոմետր դեպի հարավ, և ապա վերջանում է: Դաշտի լայնությունը տարբեր տեղերում մեկից մինչև յերեք կիլոմետր է.....: Սա կատարյալ մի հարթավայր է առանց վորևե յելևեջների և այնքան ընդարձակ, վոր կարող է իբրև բանակատեղ ծառայել ամենաստվար զորքի: Իսկ գետը... վորը պետք է անցներ Լուկուլլոսը՝ Բատման-սուն եր, վորը 30, 40 և կամ 50 մետր լայնությամբ, հանդարտ ու անաղմուկ, սակայն սրընթաց՝ հոսում և թափվում եր իր հորդառատ ջրերը ավելի փոքր Դիարբեքիրի գետի մեջ...... Ուղիղ [Բատման-սուի] դեմը... գտնվում է մի մեծ սարահարթ, վորը գրեթե դահավիժորեն իջնում է արևմտյան ուղղությամբ դեպի Բատման-սուն, վորը սարահարթի ստորոտից հեռու չե գտնվում մոտ 5—6 կիլոմետր, իսկ հարավ-արևմտյան ուղղությամբ ցածրանում է, ընդհակառակը, աստիճանաբար դեպի գետը... Այստեղ հենց, այս մեղմ սարալանջի վրա, բանակել եր Տիգրանի մեծ զորքը, վորը 150—200 մետր համեմատական բարձրություն ունեցող այս կետից կարող եր տեսնել Տիգրանակերտը և պաշարող զորքի վրանները: Նմանապես և պաշարվածները կարող եյին սրանց տեսնել. վորովհետև այն տեղից պարզ տեսնվում է ամբողջ տարածությունը՝ սարահարթը, մեղմ սարալանջը, Բատման-սուն և հարթավայրը»:

Բելքի այս բացատրության համաձայն, վոր ընդունելի յե համարվում, Տիգրանակերտի ճակատամարտի տեղը յենթադրվում է, ուրեմն, Ֆարկին քաղաքի հարավ-արևելյան շրջանում, այժմյան Ֆարկին-սուի և Բատման-սուի միավորման մոտ գտնվող ձորադաշտում: Վոր ճակատամարտը տեղի յեր ունեցել իրոք, այժմյան Ֆարկին-սուի մոտ՝ այդ միանգամայն անկասկածելի յե, վորովհետև դասական հեղինակների մոտ այդ գետն անվանվում է Նիկեփորիոն կամ Նիկեփորիոս, այսինքն՝ «Հաղթաբեր», իսկ այդ անունը, ինչպես մատնանշել է Մարկվարտը[1], նա ստացել եր Լուկուլլոսի հաղթության պատճառով:

[1] Տես Südarmenien und die Tigrisquellen, Wien 1930, եջ 132:

Յերբ հայկական զորքն արդեն Տիգրանակերտի մոտ եր գտըն-վում՝ Լուկուլլոսն անհրաժեշտ համարեց, ինչպես հաղորդում ե Պլուտարքոսը[1], *գումարել ռազմական խորհուրդ։ Խորհրդակցու-թյան ժամանակ ժողովականներից ոմանք առաջարկեցին վե-րացնել քաղաքի պաշարումը և բոլոր ուժերով գնալ թշնամու դեմ։ Իսկ ոմանք, վտանգավոր համարելով Տիգրանակերտի քաղաքա-պահ զորքի ներկայությունն իրենց թիկունքում՝ խորհուրդ տվին մնալ Տիգրանակերտի մոտ և ընդունել ճակատամարտը նրա պա-րիսպների տակ։*

Պլուտարքոսի ասելով՝ Լուկուլլոսն այդ կարծիքներն ընդու-նելի չհամարեց և ինքը վճռեց զորքի մի մասով շարունակել Տիգրանակերտի պաշարումը, իսկ մյուս մասով արշավել Տիգրանի դեմ։ Տիգրանակերտի առջև նա թողեց 6000 զորք, նաև իր զո-րապետներից Մուրենային, իսկ մնացած բանակով, վորը բաղ-կացած եր ըստ Պլուտարքոսի 10.000 հետևազորից, 3000 հեծելա-զորից և 1000 թեթևազեններից, ինքը գնաց Տիգրանի դեմ։

Պլուտարքոսի այս թվերը և, ընդհանրապես, հնագույն աղ-բյուրների համապատասխան նաև մյուս վկայությունները հռո-մեական ու հայկական զորքերի թվի մասին՝ կարոտ են, ինչպես իրավամբ մատնանշվում ե նորագույն ուսումնասիրություններում, ուշադիր ու մանրազննին քննության ու ճշտման։ Ամենակարե-վորներն այդ վկայություններից, վոր մեծ չափով իրար հակա-սում են, մեջ ենք բերում ներքև մանրամասն կերպով։

Ա. Հայաստան արշավող հռոմեական զորքի թիվը.

1. *Պլուտարքոս* (Lucullus, 24, 1)՝
   12.000 հետևակ և մոտ 3000 ձիավոր։
2. *Եվտրոպիուս* (Breviarium, VI, 9, 1)՝
   18.000 ռազմիկ (milites):
3. *Ապպիանոս* (Mithrid., 84)՝
   յերկու ընտիր լեգեոն և 500 ձիավոր։

Բ. Հռոմեական զորքի թիվը Տիգրանակերտի կռվում.

1. *Պլուտարքոս* (Lucullus, 28, 2)՝
   24 վաշտ (cohors)՝ *վոչ ավել քան 10.000 ծանրազեն, ամբողջ հեծելազորը, այսինքն՝ 3000 ձիավոր և 1000 պար-սավոր ու աղեղնավոր։*

[1] Տե՛ս Լուկուլ., 27, 1։

2. *Փրոնտինուս* (Strateg., II, 1, 14)՝
   15.000 զինվոր (armati):

Գ. Հայ զորքի թիվը Տիգրանակերտի կռվում.

1. *Պլուտարքոս* (Lucullus, 26, 9)՝
   20.000 աղեղնավոր և պարսավոր, 55.000 ձիավոր, վո-րոնցից 17.000 զրահավոր, 150.000 ծանրազեն հետևակ, 35.000 կամուրջ ու ճանապարհ շինող և այլ աշխատավոր-ներ։
2. *Ապպիանոս* (Mithr., 85)՝
   250.000 հետևակ և 50.000 ձիավոր։
3. *Եվտրոպիուս* (Breviarium, VI, 9, 1)՝
   7.500 ձիավոր զրահավոր և 100.000 հետևակ։
4. *Մեմնոն, գլ. 57*՝
   80.000 զորք։
5. *Փլեգոն*[1] (Olympiades, fr. 12, Müller, Fr. H. Gr. III, 606)՝ *30.000 ձիավոր և 40.000 հետևակ։*

Պատմագիտական ուսումնասիրություններից շատերում[2] *վստահելի ու արժանահավատ են համարել, գլխավորապես, Պլու-տարքոսի վերոհիշյալ թվերը, վորովհետև սա ոգտված ե յեղել հռոմեական սկզբնաղբյուրներից՝ Սալլուստիուսից, Տիտուս Լիվի-ուսից և, հավանորեն, նաև այն պաշտոնական գրություններից, վոր Տիգրանակերտի ճակատամարտից հետո Լուկուլլոսն ուղար-կած ե յեղել ծերակույտին։ Հենվելով այդ թվական տվյալների, ինչպես և Պլուտարքոսի մոտ մեջ բերված Տիտուս Լիվիուսի վը-կայության վրա*[3]՝ *Մոմզենը և նրան հետևելով նաև ուրիշ պատ-մագետներ Տիգրանի զորքի թիվը համարել են հռոմեական զոր-քի թվից քսան անգամ ավելի։*

Սակայն պատմագիտական ավելի նոր ուսումնասիրություն-ներում, որինակ՝ Ռեյնաքի, Ֆեռեռոյի, Եգհարդի յերկերում՝ Պլուտարքոսի վկայությունը, հատկապես Տիգրանի զորքերի թվի

[1] Փլեգոնի այս վկայությունը վերաբերվում ե, Եգհարդի կարծիքով, վոչ թե Արածանիի, այլ Տիգրանակերտի ճակատամարտին, տե՛ս Klio, Bd. X, Heft 1, *եջ 98, ծան. 5։*

[2] Համեմատե Моммсен, Римская история, III, *եջ 57,* Нич, История римской республики, Москва 1908 *և ուրիշները։*

[3] Տիտուս Լիվիուսի ասելով՝ Տիգրանակերտի ճակատամարտում յուրա-քանչյուր հռոմայեցի ունեցել ե իր դեմ քսան թշնամի, տե՛ս Պլուտարքոս Լուկուլ., 28, 12։

մասին, համարվում է ակներև մի չափազանցություն[1] և գերագնահատություն է տրվում փոքրասիական չեզոք հեղինակների, Մեմնոնի և Փլեգոն Տրալլացու, վերոհիշյալ վկայություններին, ըստ վորոնց հայ բանակի զորաթիվը ցույց է տրված վոչ թե 260.000, այլ միայն 70.000 կամ 80.000: Վոր այս վերջին թվերը նախընտրելի յեն՝ այդ, իհարկե, անտարակուսելի յէ, վորովհետև, ինչպես հայտնի յէ, հռոմեական զորավարներն իրենց պաշտոնական զեկուցագրերում թշնամու քանակի մասին տալիս եյին միշտ չափազանցված ու սուտ տեղեկություններ: Եքհարդը մատնանշում է, բացի այդ, վոր տեղափոխել Տավրոսյան լեռներով ու նեղ արահետներով 260.000 զորք գրեթե անհնարին եր:

Հռոմեական զորքի թվի նկատմամբ գրեթե բոլոր պատմագետները համամիտ են և, հենվելով Պլուտարքոսի և Փրոնտինուսի վերոհիշյալ վկայությունների վրա՝ Տիգրանակերտի կռվին մասնակցողների ընդհանուր թիվը յենթադրում են 14.000—15.000: Սակայն Ռեյնաքը և Եքհարդն իրավացի կերպով մատնացույց են արել[2], վոր Պլուտարքոսի վկայություններն իրար չեն բռնում: Տիգրանակերտի ճակատամարտի առթիվ Պլուտարքոսի մոտ տրված են, ինչպես տեսանք, հետևյալ թվերը՝ 6000 զորք Մուրենայի, իսկ Լուկուլլոսի հետ՝ 10.000 ծանրազեն, 3000 հեծելազոր և 1000 պարսավոր ու աղեղնավոր, ուրեմն՝ ընդամենը 20.000 զորք: Իսկ Հայաստան արշավող հռոմեական ամբողջ զորքի քանակը նրա մոտ նշանակված է՝ 12.000 հետևակ և 3000 հեծելազոր, ընդամենը՝ 15.000: Եքհարդի կարծիքով, այս վերջին թվի մեջ չեն հիշատակված Մուրենայի 6000 զորքը և 1000 թեթևազենները: Այս ուղղումն անելուց հետո Հայաստան արշավող հռոմեական զորքի թիվը ստացվում է նրա մոտ վոչ թե 15.000, այլ 22.000:

Յեթե ընդունելու լինենք Եքհարդի ուղղումը հավանական, ինձ թվում է, այնուամենայնիվ դժվար է համաձայնել, վոր Լուկուլլոսը հնարավոր եր համարել փոքրաթիվ այդ ուժերով ռազմական մեծ արշավանք սկսել ընդդեմ Տիգրան Բ-ի, վորին, ինչպես նա շատ լավ գիտեր, միանալու յեր նաև Միհրդատը: Պատմա-

[1] Տես Reinach, Mithridate Eupator, եջ 360, Ферреро, Величие и падение Рима, I, եջ 182, Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, Heft 1, եջ 96—100:

[2] Տես Reinach, Mithridate Eupator, եջ 358, ծան. 1 և Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, Heft 1, եջ 78—82:

բանները, ինչպես շատ ճիշտ նկատել է Ասատուրյանը[1], աչքաթող են արել, վոր հռոմեական աղբյուրները մատնանշել են միմիայն հռոմեական զորքերի թիվը, բայց չեն հիշատակել Հռոմի դաշնակիցների փոքրասիական զորքերը: Իսկ վոր այդ ոգնական զորքերը գործոն մասնակցություն եյին ունեցել հայկական կռիվներին՝ այդ յերևում է հենց իրենց իսկ հռոմեական կամ նաև այլ աղբյուրներից:

Ստրաբոնի ուշագրավ մի վկայությունից դժվար չէ, որինակ, կռահել, վոր Լուկուլլոսը, հավանորեն, ոգնական զորքեր եր ստացել Կապպադովկիայի Արիոբարզան թագավորից, վորին ռազմական այդ գործակցության համար նա տվել եր իբրև վարձատրություն Ծոփաց յերկրում գտնվող նշանավոր Տոմիսա բերդը[2]: Մենք կտեսնենք ներքև, վոր Տիգրանակերտի ճակատամարտին մասնակցել եյին Թրակացի և գալատացի թեթևազեն հեծելագունդերը, վորոնք, հավանորեն, նույնպես ոժանդակ զորքեր եյին և չեյին համարվում բաղադրիչ մասեր հռոմեական վերոհիշյալ զորքի: Բացի այդ, Սալլուստիուսի մոտ ևս իբրև ոգնական զորքեր հիշատակված են բյութանացիները, վորոնք 68 թվի աշնանը հռոմեական մյուս զորամասերից առաջ հասել եյին Արածանիի գետափին[3]:

Ուրեմն, ինչպես տեսնում ենք, փոքրասիական ոգնական ու դաշնակից զորքերի մասնակցությունը հայկական կռիվներին միանգամայն անժխտելի յէ: Ոգնական այդ զորքերը, վորոնցից վորոշակի հիշատակված են գալատացիները, Թրակացիները և բյութանացիները՝ կազմում եյին, ըստ յերևույթին, Լուկուլլոսի զորաբանակի նշանակալի մասը: Ուստի և մենք սխալված չենք լինի, յեթե Լուկուլլոսի ամբողջ զորքի թիվն ընդունենք Տիգրանակերտի ճակատամարտում վոչ թե 15.000 կամ 22.000, ինչպես այդ յենթադրվում է պատմագիտական յերկերում, այլ անհամեմատ ավելի:

Այսպիսով հռոմեական ու հայկական բանակների վերոհիշյալ մեկ առ քսան հարաբերությունը, վոր մատնանշված է Մոմզենի, Նիզի և այլ պատմագետների մոտ, ինչպես տեսնում ենք, ակներև մի սխալ է: Ընդունելով վոր ոգնական դաշնակից զորամասերի

[1] Տես «Քաղաքական հարաբերությիւններ ընդմէջ Հայաստանի և Հռոմայ», եջ 338—343:

[2] Տես Ստրաբոն, XII, 2, 1 (535):

[3] Տես Sallustius, IV, fragm. 74:

թիվը պակաս չէր լինի հռոմեական զորքերի թվից՝ դժվար չէ համոզվել, վոր Տիգրանի զորքը կարող էր Լուկուլլոսի զորքից ավելի լինել վոչ թե քսան, այլ առ առավելն յերկու անգամ։

Տիգրանակերտի ճակատամարտը տեղի ունեցավ, ինչպես հայտնի յե, 69 թվի հոկտեմբերի 6-ին։ Մեծ այդ ճակատամարտի մասին կարևորագույն աղբյուրներն են՝ Պլուտարքոսը, Ապպիանոսը, Մեմնոնը և Փրոնտինուսը, վորոնք թեև հիմնական վորոշ կետերում իրար չեն հակասում, սակայն մանրամասնությունների նկատմամբ իրար հետ բոլորովին անհաշտելի յեն։ Նրանց տարաձայնությունները, ինչպես կտեսնենք, այնքան են մեծ, վոր միանգամայն անհնարին է մանրամասնաբար վերականգնել ճակատամարտի ամբողջ ընթացքը, թեև այդ վստահ ու անվերապահ կերպով արված է պատմագիտական բազմաթիվ յերկերում[1]։

Ճակատամարտի ամենամանրամասն նկարագրությունը տվել է Պլուտարքոսը, վորի պատմության այդ մասը համեմված է այնպիսի թատերական ու դրամատիկական միջադեպերով, վորոնք հավանական ցուցանիշներ են համապատասխան այդ հատվածների անհավաստության։ Նման կասկածելի զրույցներից է, իմ կարծիքով, ճակատամարտի նկարագրության հենց սկզբում տրված նրա հետևյալ տեղեկությունը։ Ճակատամարտը դեռ չսկսված, պատմում է Պլուտարքոսը, յերբ Լուկուլլոսի զորքը բանակ էր գցում գետի մոտ՝ Տիգրանը, տեսնելով փոքրաթիվ այդ զորքը՝ հեգնանքով բացականչել էր,—«Յեթե դրանք իբրև դեսպաններ են յեկել՝ շատ են, իսկ յեթե իբրև զինվորներ՝ քիչ են»[2]։ Այս վկայությունը չի կարող ճիշտ լինել, վորովհետև Պլուտարքոսի մատնանշած հռոմեական ու հայկական զորքերի վերոհիշյալ թվական հարաբերությունը, ինչպես տեսանք, չափազանցված ու սխալ է։

«Լուսաբացին,—ասում է այնուհետև Պլուտարքոսը,—Լուկուլլոսը ճամբարից դուրս բերեց իր զինված զորքը։ Բարբարոսական զորքերը գտնվում էին գետի արևելյան կողմում, և վորովհետև սրա հոսանքը շեղվում էր դեպի արևմուտք, վորտեղ նա հեշտությամբ անցանելի յեր, և վորովհետև Լուկուլլոսը հենց այդ ուղղությամբ արագորեն տանում էր իր զորքը թշնամու դեմ՝ Տիգրանը կարծեց, վոր նա նահանջում է։ Տիգրանը ծիծաղելով կանչեց Տաքսիլեսին և ասաց,—«Միթե դու չես տեսնում, վոր հռոմեական զորքերը փախչում են առանց ճակատ տալու»։ Իսկ Տաքսիլեսը պատասխանեց,—«Յես կուզենայի, ով թագավոր, վոր այդպիսի մի բան քո բախտից հանկարծ պատահեր, սակայն ճանապարհ գնալիս՝ վոչ փայլուն հանդերձանքներ են հագնում, վոչ էլ մաքրված վահաններ ու մերկ սաղավարտներ. ինչպես է, վոր այժմ դուրս են հանված զենքերը կաշվե պատյանների միջից. այդ պայծառությունը սակայն սպասվող ճակատամարտի և, անշուշտ, թշնամու դեմ յելուստի համար է[1]»։

[1] Տես Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, 1, եջ 100—104, Drumann, Geschichte Roms, Bd. IV, Berlin 1899, եջ 147 և այլն, Sachau, Ueber die Lage von Tigranokerta, Abhandl. der kgl. Akademie der Wissensch. zu Berlin, 1880, և ուրիշ։

[2] Նույն այս վկայությունն ունի նաև Մեմնոնը (գլ. 57)։ Նրա մոտ Տիգրանակերտի ճակատամարտին վերաբերող ամբողջ հաղորդագրությունը հիմնված է, ըստ յերևույթին, հռոմեական աղբյուրների վրա։

Տիգրանակերտի մեծ ճակատամարտը, վոր այնուհետև տեղի ունեցավ գետի ձախ ափին, նկարագրել են, ինչպես ասացինք, Պլուտարքոսը, Ապպիանոսը, Մեմնոնը և Փրոնտինուսը, վորոնցից հատկապես առաջին յերկուսի ընդարձակ ու հիմնական վկայությունները այնքան խառնակ են ու իրար հակասող, վոր միանգամայն անհնարին է տալ նրանց օգնությամբ ճակատամարտի ու պատերազմական իրադարձությունների ճշգրիտ ու մանրամասն պատկերը։ Ցույց տալու համար այդ հակասությունները, վոր ներքև քննության ենք առնելու՝ մեջ ենք բերում վերոհիշյալ հեղինակների նկարագրությունները բառացի թարգմանությամբ։

1. Պլուտարքոս, Լուկուլլոս, 27, 7—9 և 28, 1—9՝

«Ուրեմն՝ մեծ աղմուկով զորքը դասավորվեց այսպես մարտակարգով։ Ինքը թագավորը վերցրեց կենտրոնը, Ադիաբենի թագավորին տվեց ձախ թևը, իսկ մեդացիների թագավորին՝ աջ թևը. առջևում սրա մոտ գտնվում էր նաև մեծագույն մասը զրահավոր հեծելազորի։ Յերբ Լուկուլլոսն ուզեց գետն անցնել՝ զորագլուխներից վոմանք նրան խորհուրդ տվին զգուշանալ, վորովհետև այդ օրն այն դժբախտ օրերից մեկն էր, վորն անվանվում է սև. այդ օրը կոտորվել էր Կեպիոնոսի հետ միասին հռոմեական զորքը, վորն ընդհարում էր ունեցել կիմբրացիների հետ։ Լուկուլլոսը սակայն նրանց պատասխանեց և ասաց հետևյալ անմոռանալի

[1] Տես Պլուտ., Լուկուլ., 27։

խոսքերը,—«Իսկ յես հռոմայեցիների համար այդ որը կը-դարձնեմ բախտավոր»։ Ցեվ եր այդ հոկտեմբերյան նոնների նախորեյին [=6 հոկտ.]։

Այդ խոսքերն ասելուց հետո՝ նա հրամայեց աչալուրջ լինել, անցավ այնուհետև գետը և թշնամիների դեմ գնաց առաջինը։ Նա հագել եր յերկաթե թեփուկապատ շողշողուն զրահ, ծոպազարդ թիկնոց և հանել եր անմիջապես մերկացրած սուրը, վորովհետև պետք ե իսկույն նետաձիգ մարդկանց դեմ գնար ձեռնակռվի և պետք ե արագ ու բուռն գրոհով գրավեր նետամատչելի տարածությունը։ Յերբ նա ապա տեսավ, վոր զրահավոր հեծելազորը, վորի մասին շատ եյին խոսում, դասավորված ե մի հարթ ու լայն գագաթ ունեցող բլրի տակ և տեսավ նաև, վոր բլրի վերելքը, վորն ուներ չորս ստադիոն[1] յերկարություն, վոչ առանձնապես թեք ե և վոչ ել դժվարամատչելի՝ նա հրաման տվեց թրակացի և գալատացի հեծելազունդին, վորն ուներ իր հետ, վոր նրանք զրահավորների վրա հարձակվեն կողքից և սրերով նրանց նիզակները մղեն յետ։ Միակ պաշտպանությունը զրահավոր հեծելազորի հենց այդ նիզակներն եյին. ուրիշ վոչ մի բան նրանք վոչ իրենց պաշտպանելու համար, վոչ ել թշնամու դեմ չեյին կարող գործածել. պատճառը հանդերձանքների ծանրությունն եր և ահագին այն զանգվածը, վորի մեջ կարծես նրանք փակված եյին իբր շենքերի մեջ։ Ինքը Լուկուլլոսը, իր հետ վերցնելով յերկու վաշտ (cohors)[2], շտապեց դեպի բլուրը։ Նրա յետևից արիաբար գնացին նաև զինվորները, վորովհետև սրանք տեսնում եյին, վոր Լուկուլլոսը՝ զինված ու հետիոտն՝ առաջինը հենց ինքն եր իրեն յենթարկում դժվարությունների և բոլոր ուժերով իրենց գործակցում։ Բլուրը բարձրանալուց հետո՝ Լուկուլլոսը կանգնեց բոլորի համար տեսանելի տեղում և, բարձր գոչելով՝ ասաց,—«Մենք հաղթում ենք, ո՜վ մարտակիցներ, մենք հաղթում ենք»։ Այդ ասելուց հետո՝ նա զորքը առաջնորդեց զրահավոր հեծելազորի դեմ և հրամայեց բոլորին տեգերը չգործադրել, այլ գնալ ձեռնակռվի և հարվածել թշնամիների ազդրերը և սրունքները (զրահավոր հեծվորների մարմնի

[1] Հռոմեական մեկ ստադիոնի յերկարությունը մոտ 185 մետր եր։
[2] Կոհորտը լեգեոնի տասներորդ մասն եր և բաղկացած եր ամենաշատը 600 հոգուց։



Տիգրանակերտի ճակատամարտն ըստ Պլուտարքոսի և Նքհարդի։

այդ մասերն եյին միայն մերկ ու անպաշտպան)։ Այս ճակատամարտը կարիք չուներ, իրոք, վորևե այլ գործողության, քանի վոր սրանք չդիմացան հռոմայեցիների հարձակմանը, այլ մեծ աղմուկով ու ամենախայտառակ կերպով փախան թե իրենք և թե իրենց ձիերը և ընկան խռնված հետևազորքի վրա, նախ քան սրա կռվի բռնվելը։ Այսպիսով առանց վերք ստացվելու և առանց արյուն թափելու բազմաբյուրավոր այս զորաբանակը կրեց պարտություն։ Այնուհետև սկսվեց արդեն փախչողների մեծ կոտորածը, մանավանդ նրանց, վորոնք նոր եյին ուզում փախչել։ Շարքերի

խառնության ու խորության պատճառով այս վերջիններն անկարող եղին փախչել և արգելք եղին հանդիսանում իրենք իրենց։ Իսկ Տիգրանը դեռ սկզբում, դուրս գալով քչերի հետ՝ փախավ, և տեսնելով, որ իր որդին էլ հաղորդակից է նույն բախտին՝ վեր առավ գլխից խույրը և արտասվելով հանձնեց նրան ու հրամայեց, որ նա ինքն իրեն ազատե մի այլ ճանապարհով, ինչպես որ կարող է։ Իսկ պատանին չհամարձակվեց խույրը դնել իր գլխին, այլ տվեց պահելու իր ամենահավատարիմ ծառային։ Սա պատահմամբ գերի ընկավ և տարվեց Լուկուլլոսի մոտ, ու այսպիսով միյուս ավարի հետ վերցրել եղին նաև Տիգրանի խույրը։ Ասում են, որ հետևազորից կոտորվել եր ավելի քան 100.000 մարդ, իսկ հեծելազորից շատ քչերն եղին ազատվել։ Հռոմայեցիներից վիրավորվել եղին 100 մարդ և սպանվել 5 մարդ»։

2. Ապպիանոս, Միհրդատականք, գլ. 85՝

«Լուկուլլոսը տեսնելով Տիգրանի թիկունքում հարմար մի բլուր՝ իր հեծելազորին հրամայեց, որ նա թշնամուն նեղե ճակատի կողմից, նրան քաշե դեպի իրեն և կամավոր կերպով յետ նահանջե, որպեսզի հետապնդող բարբարոսների շարքերը քայքայվեն։ Իսկ ինքը հետևազորի հետ միասին, անցնելով թշնամու թիկունքը՝ գաղտնաբար բարձրացավ բլուրը։ Յեվ յերբ նա տեսավ, որ թշնամիները հեծելազորը հալածելիս, իբր թե հաղթած լինելով՝ բոլորովին ցրիվ եղին յեկել, բայց նրանց ամբողջ զրահապատ գումակը գտնվում եր իր առջև՝ գոչեց,—«Մենք հաղթում ենք, ընկերներ», և ապա վազելով՝ նախապես հարձակվեց գումակի վրա։ Իսկ զրահապատ գումակն իսկույն ազմկելով փախավ և ընկավ հետևազորի վրա, և հետևազորը՝ հեծելազորի վրա։ Այնուհետև պարտությունը յեղավ լիակատար, որովհետև հռոմեական հեծելազորը էլ յետ դառավ ու կոտորեց նրանց, որոնք հարձակվելիս ցրվել եղին հեռուները։ Իսկ զրահապատ գումակը, սեղմված լինելով՝ ընկել եր մյուսների վրա։ Յեվ այդ մեծ խուճապի մեջ շատերը տրորվել եղին ոտքերի տակ, բայց չգիտեյին ճշտիվ, թե վորտեղից եր սկսվել այդ արհավիրքը։ Կոտորածը շատ մեծ յեղավ, վորովհետև վոչ վոք ժամանակ չեր կորցնում կողոպուտի վրա. այդ խստիվ արգելել եր Լուկուլլոսը. ուստի և, ձեռք չտալով



Տիգրանակերտի ճակատամարտն ըստ Ապպիանոսի։

նույնիսկ ապարանջաններին ու մանյակներին՝ նրանք առաջ եղին գնացել մոտ 120 ստադիոն, մինչև վոր վրա յեր հասել գիշերը։ Իսկ այնուհետև միայն նրանք վերադարձան ու կողոպտեցին դիակները, վորովհետև այդ այժմ թույլ եր տվել Լուկուլլոսը»։

3. Մեմնոն, գլ. 57՝

«Սա [Տիգրանը], հավաքելով 80.000 զորք, իջավ ցած, վորպեսզի հարստահարիչների ձեռքից Տիգրանակերտն ազատե և թշնամիներին հեռացնե։ Կամենալով այդ շուտ վերջացնել և տեսնելով, վոր հռոմայեցիների զորաբանակը սակա-

վաթիվ է՝ նա ասաց,—«Յեթե նրանք ուզում են վորպես դեսպաններ ներկայանալ՝ մեծ բազմությամբ են յեկել, իսկ յեթե վորպես թշնամիներ են յեկել՝ չափազանց քիչ են»։ Յեվ այդ ասելուց հետո՝ նա բանակ դրեց։ Իսկ Լուկուլլոսը վարպետությամբ ու զգացողությամբ ճակատամարտի համար մարտակարգ կազմեց և, քաջալերելով իր զորքը՝ իսկույն փախուստի մատնեց աջ թևը, հետո սրա միջոցով յետ մղեց հարևան զորքը և ապա հերթով՝ ամբողջ զորքը։ Հայերն ահաբեկված ու անզուսպ կերպով դիմեցին փախուստի և մարդկանց թվի համեմատ եր նաև նրանց կոտորածը։ Իսկ Տիգրանն իր արքայական խույրը և ապարոշը տվեց վորդուն և ինքը փախավ իր ամրոցներից մեկը»։

4. Փրոնտինուս (Strategmaton, II, գլ. 1, 14)՝

«Թեև Տիգրանակերտի մոտ Մեծ Հայաստանում Տիգրանի ու Միհրդատի դեմ ինքը Լուկուլլոսն ուներ վոչ ավելի քան 15.000 զինվոր (armati), իսկ թշնամին ուներ անթիվ բազմություն, վորը նույն այդ պատճառով դժվարաշարժ եր—նա թշնամու այս անհարմարությունից ոգտըվեց, հարձակվեց նրա դեռևս չկարգավորված մարտաշարքերի վրա և իսկույնևեթ այնպես ցրիվ տվեց, վոր նույնիսկ իրենք թագավորները, դեն գցելով պատվանշանները՝ փախան»։

5. Նույնը (Strategmaton, III գլ. 2, 4)՝

«Լուկուլլոսը, վորը Տիգրանակերտի մոտ Մեծ Հայաստանում մարտնչելու յեր Տիգրանի ու Միհրդատի դեմ՝ իսկույն իր զորքի մի մասով գրավեց մոտակա բլրի հարթ գագաթը, սլացավ ապա ցածում գտնվող թշնամիների վրա և հարձակվեց նրանց հեծելազորի վրա կողքից։ Անմիջապես հետամուտ լինելով խանգարված թիկունքից նաև նրանց հետևազորին՝ փայլուն հաղթություն տարավ»։

Ուշադիր կերպով ծանոթանալով բոլոր այս նկարագրություններին՝ դժվար չէ համոզվել, վոր Տիգրանակերտի ճակատամարտի մասին մեր ձեռքը հասել են յերկու տարբեր հաղորդագրություններ, վորոնք հիմնված են յերկու տարաձայն ավանդությունների վրա՝ հռոմեական և փոքրասիական։ Հռոմեական ավանդությունը պահպանված է Պլուտարքոսի մոտ, վորն ոգտվել եր Սալլուստիուսի և Տիտուս Լիվիուսի պատմական յերկերից, իսկ փոքրասիականը՝ Ապպիանոսի մոտ, վորը Լուկուլլոսի

արշավանքներին վերաբերող տեղեկությունները քաղել եր, գլխավորապես, փոքրասիական հելլենական վորևէ աղբյուրից, թերևս, ինչպես յենթադրում է Ռեյնաքը[1], Նիկողայոս Դամասկացու պատմությունից։

Վերև մեջ բերված մյուս համառոտ վկայությունները համապատասխանում են հռոմեական ավանդությանը։ Փրոնտինուսի վկայությունները քաղված են, անտարակույս, Լիվիուսից։ Փրոնտինուսը ևս, հետևելով Լիվիուսին՝ սխալ տեղեկություն է հաղորդում, վոր իբր թե Տիգրանի հետ միասին Տիգրանակերտի ճակատամարտին մասնակցել եր նաև Միհրդատ Եվպատորը։ Նմանապես և Մեմնոնի ամփոփ նկարագրությունը համաձայնում է ըստ եության ավելի շուտ հռոմեական ավանդության և Պլուտարքոսի վկայությունների հետ, քան Ապպիանոսի։

Տիգրանակերտի ճակատամարտի ամբողջ ընթացքը, ինչպես և Պլուտարքոսի ու Ապպիանոսի վերոհիշյալ ընդարձակ հաղորդագրությունները, վերջերս մանրամասն քննված ու հետազոտված են Լուկուլլոսի արշավանքներին նվիրված Եքհարդի աշխատության մեջ[2]։ Եքհարդը, համաձայն չլինելով Դրումանի և Ռեյնաքի հետ, վորոնք աշխատել եյին լրացնել ու ճշտել Պլուտարքոսի հաղորդագրությունը Ապպիանոսի վկայությունների ոգնությամբ, արժանահավատ է ընդունում միմիայն Պլուտարքոսի տված նկարագրությունը։ Ճակատամարտի ընթացքը նա, հետևելով Պլուտարքոսին, հետևյալ կերպ է լուսաբանում։

Գետն անցնելուց հետո, ինչպես ասված է Պլուտարքոսի վերոհիշյալ հաղորդագրության մեջ՝ Լուկուլլոսը հրամայել եր թրակացի ու գալատացի հեծելազունդին, վոր նա կողքից հարձակվի թշնամու զրահավոր հեծելազորի վրա, վորը գտնվում եր աջ թևում։ Իսկ ինքը, իր հետ վերցնելով յերկու վաշտ հետևազոր՝ շտապել եր գրավել մոտակա բլուրը, վորը խիստ կարևոր մի դիրք եր Տիգրանի զորքերի թիկունքում։ Այստեղից նա ինքը ևս իսկույն հարձակվել եր զրահավոր հեծելազորի վրա յետևից։ Յեվ ծանրաշարժ այս ձիավորները, չկարողանալով դիմանալ հռոմայեցիների հարձակմանը թիկունքից ու աջ թևից՝ անկարգ կերպով մատնվել՝ եյին փախուստի և իրենց ձիերի հետ միասին ընկել

1 Տես Mithridate Eupator, եջ 443—449։

2 Տես Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, 1, եջ 100—110։

եյին խռնված ու խուճապի մատնված հետևակ զորքի վրա։ Այսպիսով Տիգրանի ամբողջ զորքը պարտություն եր կրել առանց ճակատամարտ տալու։ Ապպիանոսի տված հակառակ տեղեկությունները Եքհարդը համարում ե խառնաշփոթ ու անարժեք և յենթարկում ե ամենախիստ քննադատության։

Ապպիանոսի տված ճակատամարտի նկարագրությունը, ինչպես տեսանք, բոլորովին տարբեր ե։ Համաձայն նրա տեղեկությունների Լուկուլլոսը ճակատամարտի սկզբում հրամայել եր իր հեծելազորին նեղել թշնամուն ճակատի կողմից և, կեղծորեն յետ փախչելով՝ նրան հեռացնել ու ցրել։ Իսկ ինքը գաղտնաբար անցել եր իր հետևազորի հետ թշնամու թիկունքը և բարձրացել մոտակա բլուրը, վորի ստորոտում գտնվում եր թշնամու գրաստագումակը։ Հարձակվելով այդտեղից գրաստագումակի վրա՝ նա փախուստի յեր մատնել սրան և ձգել հետևազորի վրա, վորը բոլորովին բարոյալքված ընկել եր իր հերթին հեծելազորի վրա։ Այսպիսով Տիգրանի ամբողջ զորքը պարտվել եր առանց մարտի բռնվելու։

Կարելի՞ ե արդյոք Ապպիանոսի այս նկարագրությունը մերժել, համարելով ճշգրիտ ու արժանահավատ հռոմեական միայն ավանդությունը։

Իմ կարծիքով, իզուր ե Եքհարդը յենթադրում, վոր Պլուտարքոսի նկարագրությունը պարզ ե ու անառարկելի, իսկ Ապպիանոսինը՝ անհարիր ե և լի ե հակասություններով։ Ընդհակառակը, Ապպիանոսի անպաճույճ ու ավելի բնական հաղորդագրությունն արժանի ե ավելի մեծ ուշադրության, քան թատերային միջադեպերով համեմված Պլուտարքոսի նկարագրությունը։

Միանգամայն ըստ իս հավատալի ե ու հնարավոր, վոր Լուկուլլոսը կարող եր, իրապես, Տիգրանին խաբելու համար նրա դեմ ճակատի կողմից ուղարկած լինել միմիայն իր արագաշարժ հեծելազորը, իսկ ինքը, վերցնելով հռոմեական ամբողջ հետևազորը, դեռ ռազմադաշտ չհասած՝ կարող եր անցած լինել թշնամու թիկունքը և հարձակված լինել այնտեղից գրաստագումակի վրա, ինչպես այդ վկայում ե Ապպիանոսը։ Այս վկայությունն ավելի հավանական ե թվում, քան Պլուտարքոսի տված տեղեկությունը, վոր իբր թե Լուկուլլոսը, մերկացրած սուրը ձեռին, գնացել եր ձեռնակռվի և աննկատելի կերպով անցել եր թշնամու թիկունքը։ Հավատալի՞ ե միթե, վոր Լուկուլլոսը, վորն ուներ իր հետ յերկու վաշտ հետևազոր և վորը գտնվում եր թշնամուն դեմ առ դեմ՝

կարող եր թաքուն կերպով գրավել բլուրը սրա թիկունքում։ Յեթե հռոմեական սկզբնաղբյուրները չեն հիշատակում Տիգրանի գրաստագումակը և Լուկուլլոսի ու հռոմեական ամբողջ հետևազորի հարձակումը գումակի վրա՝ այդ բացատրվում ե, հավանորեն, նրանով, վոր այդ գրոհը չեր կարող համարվել քաջարի և առանձնապես պատվաբեր մի գործ։

Լուկուլլոսի հաղթության բացառիկ ու առանձնահատուկ բնույթը մատնանշված ե Սալլուստիուսի հատվածներից մեկում։ Միհրդատի պարթևաց թագավորին գրած նամակում, վոր մանրամասն մեջ ե բերված նրա մոտ՝ Տիգրանակերտի ճակատամարտին են վերաբերվում հետևյալ տողերը.

«Վորովհետև տեղի նեղվածությունը,—ասված ե Միհրդատին վերագրված այդ նամակում,—զորքի բազմությանն արգելք եր հանդիսանում ճակատամարտ տալու՝ Տիգրանի անխոհեմությունը նրանք [հռոմայեցիները] ցուցադրում են իբրև հաղթություն»[1]։

Ռազմադաշտի այս նեղվածության առթիվ պետք ե սակայն նկատի ունենալ, վոր Տիգրանը, վորն իր նոր մայրաքաղաքը կառուցել եր պաշտպանված ու դժվարամատչելի լեռնային տեղում՝ Տիգրանակերտի շրջակայքում չեր կարող, բնականաբար, ընտրել ավելի բաց ու ավելի արձակ տեղ։

Տիգրանի զորքերի կորուստների մասին հռոմեական հեղինակների տեղեկությունները հիմնապես հակասում են դարձյալ փոքրասիական չեզոք աղբյուրների վկայություններին։ Այդ կորուստների մասին, ինչպես վերև տեսանք, Պլուտարքոսը, հավանորեն, համաձայն Լուկուլլոսի պաշտոնական տեղեկագրի՝ տալիս ե միանգամայն սուտ ու չափազանցրած թվեր։ Նրա ասելով՝ Տիգրանի հետևազորից կոտորվել եր ավելի քան 100.000 մարդ և հեծելազորից շատ քչերն եյին ազատվել. իսկ հռոմայեցիներից վիրավորվել եյին 100 մարդ և սպանվել 5 մարդ։ Ինչպես հայտնի ե, նման սուտ թվերը սովորական եյին նաև Սուլլայի պաշտոնական զեկուցագրերում։ Քերոնեայի 67 թվի ճակատամարտում պոնտական զորքերի կորուստը նա ևս ցույց եր տվել 60.000 մարդ, իսկ հռոմայեցիներինը՝ ընդամենը 14 մարդ։ Թե ինչ արժեք ունեն հռոմեական զորավարների ինքնապարծ ու սուտ հաշվետվությունները՝ այդ շատ լավ գիտեն բոլոր պատմաբանները։ Ուստի և նրանք ևս հավատ չեն ընծայել վերոհիշյալ թվերին։

[1] Տես Sallust., IV, frgm. 69։

Ռեյնաքը և նրան հետևողները՝ Գարագաշյանը, Դոլբաշյանը և ուրիշները՝ գերադասել են Որոսիուսի տված տեղեկությունը[1], վորի համաձայն սպանվածների թիվը հայ զորաբանակից. ցույց է տրված ընդամենը 30.000 մարդ: Սակայն այս տեղեկությունը ևս, վորը հիմնված է դարձյալ հռոմեական աղբյուրների, հավանորեն, Տիտոս Լիվիուսի հաղորդագրության վրա՝ վերոհիշյալ իր ուսումնասիրության մեջ չի ընդունում Եքհարդը: Սրա կարծիքով, իրականին կարող է համապատասխան լինել ավելի շուտ Փլեգոն Տրալլացու վկայությունը, վորի մոտ Տիգրանի զորքի ամբողջ կորուստը ցույց է տրված մոտավորապես 5000 մարդ[2]: Այս փոքր թիվը ինձ ևս ավելի ստույգ ու գերադասելի չի թվում, վորովհետև Փլեգոնի տեղեկությունը ակներևաբար քաղված է փոքրասիական չեզոք աղբյուրից, իսկ այդ աղբյուրները, ինչպես մեր այս ուսումնասիրության ընթացքում տեսանք, ավելի արժանահավատ են, քան հռոմեական կողմնապահ ու աչառու յերկերը:

Բացի վերոհիշյալ թվերից հռոմեական աղբյուրներում հնարովի յեն, անտարակույս, և սուտ, ինչպես այդ միանգամայն ճիշտ մատնանշել է Մոմզենը[3], նաև Տիգրանի արքայական խույրի վերաբերյալ պատմությունը:

Այդ միջադեպը, ինչպես վերև տեսանք, տարբեր կերպ է պատմված Մեմնոնի, Պլուտարքոսի և Ֆրոնտինուսի վկայություններում[4]: Մեմնոնը, վորն իր պատմության այս մասում օգտվել եր, հավանորեն, հռոմեական վորևե աղբյուրից՝ պատմում է, վոր Տիգրանն արքայական իր խույրն ու ապարոշը տվել եր վորդուն և ինքը փախել եր իր ամրոցներից մեկը: Պլուտարքոսն ավելացնում է դրան, վոր վորդին՝ չհամարձակվելով իր գլխին դնել խույրը, տվել եր պահելու իր ամենահավատարիմ ծառային, և սրան արքայական խույրի հետ միասին գերի յեր վերցրել Լուկուլլոսը: Իսկ Ֆրոնտինուսը, ընդհակառակը, վկայում է, վոր վոչ միայն Տիգրանը, այլև մյուս թագավորները ևս դեն եյին գցել իրենց պատվանշանները և փախել:

---

1 Տես Orosius, Historia adversus paganos, VI, 3, 6, նաև Reinach, Mithridate Eupator, եջ 362, Գարագաշյան, Քննական պատմություն, II, եջ 145, Դոլբաշյան, Ստույգ Հայոց պատմություն, եջ 93 և ուրիշ.:

2 Տես fr. 12, Müller, Fr. Hist. Gr., III, եջ 606:

3 Տես Римская история, III, եջ 57:

4 Խույրի վերաբերյալ միջադեպը չի հիշատակված Ապպիանոսի մոտ, վորը պատմության իր այս մասում օգտվել եր, ինչպես ասացինք, փոքրասիական չեզոք աղբյուրից:

Աղբյուրների այս տարաձայնությունները իրենք հենց հավանական մի նշան են մեջ բերված վկայությունների անհավաստիության: Յեվ միանգամայն իրավացի յե ըստ իս Մոմզենը, վորն այս միջադեպը, ինչպես և վերոհիշյալ շինծու թվերը, թխված ու հերյուրված է համարում Սուլլայի հատուկ վոճով:

Տիգրանի կրած պարտությունը Տիգրանակերտի մոտ, ինչպես յերևում է մեր այս քննությունից, խիստ չափազանցված է թե հռոմեական աղբյուրներում և թե պատմագիտական նորագույն յերկերում: Այս ճակատամարտը, իրապես, վոչ թե իսկական արյունահեղ դիմամարտ եր, այլ խուճապ և փախուստ առանց կռվի:

Խիստ ծանր եյին սակայն այս պարտության հետևանքները Տիգրանի նորաստեղծ աշխարհակալության համար: Պարտության գլխավոր հետևանքը յեղավ, ինչպես կտեսնենք, Տիգրանակերտ քաղաքի կորուստը և հայկական մեծ պետության քայքայումը:

13. ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՌՈՒՄԸ ՅԵՎ ՏԻԳՐԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԿԱԼ ՄԵԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Հոկտեմբերի 6-ի մեծ ճակատամարտից և Տիգրանի զորաբանակի պարտությունից հետո Լուկուլլոսը, ապահոված լինելով իր թիկունքը՝ կարող եր Տիգրանակերտի պաշարումն աներկյուղ ու համարձակ շարունակել:

Այս քաղաքը, վորը Մանկայոսի առաջնորդությամբ մոտ հինգ ամիս արիաբար դիմադրել եր հռոմայեցիներին՝ այլևս չեր կարող վորևե օգնություն ակնկալել արքայական բանակից: Չնայած դրան նա անձնատուր չեղավ և թշնամու դեմ շարունակեց համառորեն կռվել: Յեվ յեթե հռոմայեցիներին, այնուամենայնիվ, աջողվեց շուտով Տիգրանակերտը գրավել առանց արյունահեղ ընդհարումների ու մեծ կորուստների՝ դրա պատճառը, ինչպես միաձայն վկայում են Ապպիանոսը, Պլուտարքոսը, Մեմնոնը և Կասսիուս Դիոնը, հույն վարձկան զորքերի ապստամբությունն եր ու դավաճանությունը:

Մեջ բերված այս չորս կարևորագույն աղբյուրները թեև տարբեր կերպ են պատմում այդ մասին, սակայն նրանցից յերեքը՝ Ապպիանոսը, Պլուտարքոսը և Դիոնը՝ հիմնականում գրեթե իրար չեն հակասում:

Ամենից ընդարձակ են Ապպիանոսի հաղորդած տեղեկությունները: Նրա պատմելով՝ Տիգրանի պարտությունից հետո Մանկայոսն այլևս վստահություն չուներ հելլենական վարձկան զինվորների վրա և հրամայել եր նրանց զինաթափ անել: Սակայն սրանք, ապստամբելով իրենց առաջնորդի դեմ՝ գրավել եյին Տիգրանակերտի պարսպի յերկու աշտարակի միջև յեղող մասը և, բանակցության մեջ մտնելով հռոմայեցիների հետ՝ ներս եյին թողել նրանց ու մատնել քաղաքը թշնամուն: Պլուտարքոսը միայն հիշատակում ե, վոր Լուկուլլոսը կարողացել եր քաղաքը վերցնել շնորհիվ հույների ապստամբության: Կասսիուս Դիոնն այդ ապստամբությունը վերագրում ե քաղաքի ոտար բնակչության, հատկապես, Կիլիկիայից գաղթեցրած հույներին, վորոնք ներս եյին մտցրել գիշերով հռոմայեցիներին և մատնել քաղաքը կողոպուտի: Իսկ Մեմնոնը, լռելով հույն վարձկանների դավաճանության մասին՝ Տիգրանակերտի անկման համար պատասխանատու յե համարում Միհրդատի զորավարներին, վորոնք գտնվում եյին այնտեղ և քաղաքը դավաճանաբար մատնել եյին Լուկուլլոսին, գլխավորապես, իրենց անձնական փրկության համար:

Ավելորդ չեմ համարում մեջ բերել բոլոր վերոհիշյալ վկայությունները հունարենից բառացի թարգմանությամբ:

1. Ապպիանոս, Միհրդատականք, գլ. 86՝

«Մանկայոսը, վորը տեսել եր Տիգրանակերտից տեղի ունեցած պարտությունը՝ կասկածելով հելլենների վրա, վորոնք ծառայում եյին նրա մոտ վարձով, բոլորին զինաթափ արեց: Սրանք, վախենալով վոր իրենք կըկալանավորվեն, բրերով զինված միասին գնացին և բանակ դրին բացոթյագում: Իսկ յերբ Մանկայոսը նրանց դեմ զինված բարբարոսներ ուղարկեց՝ նրանք, վերնազգեստները վահանների փոխարեն կապկպելով ձախ ձեռքերին՝ խիզախաբար հարձակվեցին դրանց վրա: Յեվ ում վոր սպանում եյին՝ իսկույն նրա զենքերը բաժանում եյին իրար մեջ: Իսկ յերբ նրանք իրենց, վորքան կարող եյին, բավարարեցին՝ գրավեցին յերկու աշտարակների միջև յեղող պարսպի տարածությունը, կանչեցին դրսից հռոմայեցիներին և ներս թողին վեր յեկողներին: Այսպես առնվեց Տիգրանակերտը և նրա մեծ հարստությունները մատնվեցին կողոպուտի»:

2. Պլուտարքոս, Լուկուլ., 29՝

«Իսկ Տիգրանակերտ քաղաքում հելլեններն ապստամբել եյին բարբարոսների դեմ և մատնել եյին քաղաքը Լուկուլլոսին. ուստի և սա հարձակվեց նրա վրա և վերցրեց»:

3. Մեմնոն, գլ. 57՝

«Բայց Լուկուլլոսը, վերադառնալով Տիգրանակերտ՝ պաշարեց քաղաքն ավելի համարձակորեն: Իսկ քաղաքում գտնվող Միհրդատի զորավարները, վոր բոլորովին հուսահատվել եյին՝ իրենց փրկելու համար հանձնեցին քաղաքը Լուկուլլոսին»:

4. Կասսիուս Դիոն, գք. 36, գլ. 2, 3՝

«Բայց վորովհետև հայերի դեմ ապստամբել եյին ոտա-

բական բնակիչները՝ նրանցից Տիգրանակերտն առնվեց։ Ապստամբների մեծագույն մասը կիլիկեցիներ էին, վորոնց բռնի կերպով գաղթեցրել էին այստեղ, և նրանք գիշերը ներս թողին հռոմայեցիներին։ Իսկ այնուհետև ամեն ինչ կողոպուտի մատնվեց բացի սրանց ունեցվածքից»։

Մեջ բերված այս վկայություններից, ինչպես տեսնում ենք, միայն յերրորդը Տիգրանակերտի անկումը հակառակ մյուս վկայությունների վերագրում է Միհրդատի զորավարների դավաճանության։ «Միհրդատի զորավարներ» ասելով Մեմնոնը, հավանորեն, հասկանում է Միհրդատի նախկին զորավարներին, վորոնք Պոնտական թագավորության նվաճվելուց հետո յեկել էին, ըստ յերևույթին, Տիգրանի մոտ և ստանձնել էին Տիգրանակերտում բարձր պաշտոններ։ Ռեյնաքը յենթադրում է, վոր Միհրդատի զորավարները նույն և կիլիկեցի զորքի հրամանատարներն էին[1]։ Սակայն պատմագիտական գրեթե բոլոր մյուս յերկերում Մեմնոնի վկայությունն անտես է արված և ավելի վստահելի ու արժանահավատ են համարված Ապպիանոսը, Պլուտարքոսը և Կասսիոս Դիոնը, վորոնք համերաշխաբար վկայում են, վոր քաղաքը հռոմայեցիներին մատնած են յեղել նույն վարձկան զինվորները և Կիլիկիայից գաղթեցրած նորաբնակները։

Հռոմայեցիները, մտնելով Տիգրանակերտ՝ անխնա կողոպտեցին քաղաքը։ Պլուտարքոսի պատմելով[2]՝

«Լուկուլլոսը ինքը գրավել էր նրա մեջ գտնվող գանձերը, և քաղաքը, վորը բացի այլ հարստություններից ուներ նաև ութը հազար տաղանդ դրամով, տվել էր կողոպտելու զինվորներին։ Բացի այդ, պատերազմական ավարից նա տվել էր նրանցից ամեն մեկին ութհարյուրական դրաքմե»։

Ութ հազար տաղանդն արծաթ դրամով հավասար կլինի, ինչպես յերևում է գերմանական գիտնական Հուլչի հաշվումներից[3], մոտ 34 միլիոն գերմանական վոսկի մարկի, այսինքն՝ մոտ 17 միլիոն վոսկի ռուբլու, իսկ ութը հարյուր դրաքմեն կամ արծաթ դենարն այժմյան դրամով հավասար է մոտ 560 վոսկի մարկի

[1] Տես Reinach, Mithridate Eupator, էջ 363։

[2] Տես Լուկուլ., 29։

[3] Տես Fr. Hultsch, Griechische und ömische Metrologie, Berlin 1882, էջ 297—299 և 711։

կամ 280 վոսկի ռուբլու։ Այս մեծ գումարները ցույց են տալիս, վոր Տիգրանակերտը, չնայած վոր նոր էր հիմնված, ուներ իր մեջ անչափ մեծ հարստություններ։

Տիգրանակերտում, ինչպես վկայում է դարձյալ Պլուտարքոսը[1], իր նորակառույց թատրոնի բացման համար Տիգրանը հավաքած է յեղել բազմաթիվ հույն դերասաններ։ Սրանք այժմ օգտագործվեցին Լուկուլլոսի հաղթության նվիրված հանդեսների և թատերախաղերի համար։

Տիգրանակերտի անկումով մահացու հարված ստացավ Տիգրանի ծրագրած ու սկսած այն առաջադիմական մեծ գործը, վորի նպատակն էր զարգացնել հետամնաց Հայաստանում հելլենական քաղաքային կուլտուրան և հելլենիստական քաղաքակրթությունը։ Լուկուլլոսն իրենց հայրենի քաղաքներն ու յերկրներն ուղարկեց հույներին ու ստրականներին, վորոնց, ինչպես վերև տեսանք, վերաբնակեցրել էր Տիգրանն իր նորակառույց մայրաքաղաքում։

Այդ մասին ունենք տեղեկություններ Պլուտարքոսը և Ստրաբոնը։

1. Պլուտարքոս, Լուկուլլոս, 29՝

«Հելլեններին նա [Լուկուլլոսը] ուղարկեց իրենց հայրենիքը, տալով նրանց ճանապարհածախս։ Նույնպես վարվեց և բարբարոսների հետ, վորոնց բռնի կերպով բնակեցրել էին այստեղ։ Այսպիսով թեև այդ մեկ քաղաքը քանդվեց՝ բնակչություն ստացան բազմաթիվ այլ քաղաքներ, վորոնք նորից հյուրընկալեցին իրենց նախկին բնակիչներին։ Յեվ Լուկուլլոսը նրանցից մեծարվում էր իբրև բարեգործ ու վերահաստատող»։

2. Ստրաբոն, XI, 14, 15 (532)՝

«Յերբ Տիգրանը զորեղացավ մինչ այդ աստիճան՝ նա հիմնեց Իբերիայի (°) մոտ, նրա և Յեփրատի ափին գտնվող Զեվգմայի միջև՝ մի քաղաք, վորն անվանեց Տիգրանակերտ և այդտեղ բերեց իր ավերած 12 հելլենական քաղաքների բնակչությունը։ Սակայն շուտով վրա հասավ Լուկուլլոսը, վորը պատերազմում էր Միհրդատի դեմ և նրա բնակիչներին արձակեց իրենց հայրենիքը։ Իսկ քաղաքը, վորը շինված էր

[1] Տես Լուկուլ., 29։

կեսով չափ՝ Նա գրոհ տալով քանդեց և նրա տեղ թողեց միայն մի փոքր գյուղ»։

3. Ստրաբոն, XII, 2, 9 (539)՝

«Վատ վարվեց Տիգրան արմենը մաժաքցիների հետ, երբ նա արշավել էր Կապպադովկիա։ Նա ամբողջ բնակչությունը քշեց տարավ Միջագետք և նրանց մեծ մասամբ բնակեցրեց Տիգրանակերտում։ Սակայն հետագայում, Տիգրանակերտի նվաճումից հետո, ով որ կարող էր՝ վերադարձավ հայրենիք»։

Մեջ բերված վկայություններից ուշադրության արժանի է, մանավանդ, Ստրաբոնի հաղորդած առաջին վկայությունը (վկ. 2), որի մեջ մատնանշված է, որ Լուկուլլոսը քանդել էր Տիգրանակերտը և տեղը թողել էր միայն մի փոքր գյուղ։ Այս տեղեկությունը չպետք է ըստ իս հասկանալ տառացիորեն։ Տիգրանակերտը, ինչպես հայտնի է մատենագրական հետագա վկայություններից[1], նշանավոր բերդաքաղաք է համարվել և բազմամարդ մեծ կենտրոն է եղել նաև Լուկուլլոսի արշավանքից հետո։ Նրա բարձր ու անմատչելի պարիսպները հիշատակված են, օրինակ, Տակիտոսի «Տարեգրություններ»-ում[2]։ Դժվար չէ, ուրեմն, այդ վկայություններից եզրակացնել, որ 69 թվի աշնանը՝ Տիգրանակերտի առման ժամանակ, հավանորեն, քանդված չեն եղել ոչ նրա պարիսպները և ոչ էլ ամրությունները։ Ստրաբոնի վերոհիշյալ վկայությունը կարելի է թերևս հասկանալ այն իմաստով, որ հելլենների և այլ օտարականների ցրմամբ Տիգրանակերտը տարալուծվել էր և կործանվել իբրև հելլենիստական քաղաք-«պոլիս», այսինքն՝ իբրև քաղաքային ինքնավար կազմակերպություն։ Այդ հոյակապ քաղաքը, որ Առաջավոր Ասիայի ամենամեծ հելլենիստական քաղաքների, Սելևկիայի ու Անտիոքի, մրցակիցն էր լինելու, կորցնելով այժմ իր օտար բնակչության մեծագույն մասը, նաև քաղաքային իր հատուկ հասարակակարգը և կազմակերպությունը՝ դառնում էր, բնականաբար, մի փոքր գյուղ կամ ավան։ Ինչպես հայտնի է, գյուղ կամ ավան էին համարում և անվանում նաև հելլենիստական Սելևկիա քաղաք-«պոլիս»-ի մոտ գտնվող Տիգրոնը, որը պարթևների գահանիստ կենտրոնն էր։

Տիգրանի աշխարհակալ մեծ պետության համար Լուկուլլոսի

[1] Տես, օրինակ, Plinius VI, 10 (հրատ. Littré, Paris 1883)։

[2] Տես Tacitus, Annales, XV, 4։

հաղթությունը և Տիգրանակերտի առումն ունեցան քաղաքական խիստ ծանր հետևանքներ։ Տիգրանի նվաճած բոլոր երկրները, որոնք Տավրոսյան լեռնաշղթայից և Տիգրիս գետից դեպի հարավ էին գտնվում՝ Հյուսիսային Միջագետքը, Կորդուքը, Կոմագենը, Ասորիքը և Արևելյան Կիլիկիան՝ անջատվեցին Մեծ Հայաստանից և ընդունեցին Հռոմի գերիշխանությունը։ Միայն Միջագետքի մի մասը և Մծբին քաղաքը մնացին առժամանակ Տիգրանի եղբոր Գուրասի իշխանության տակ։

Տիգրանակերտի անկումից հետո Լուկուլլոսի մոտ եկան, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը[1], և նրան հնազանդվեցին արաբների ցեղապետները։ Կասսիուս Դիոնի մոտ[2] այդ ցեղապետներից ամենահզորն անվանված է Ալքաուդոնիոս, որը նույնն է, անտարակույս, Ստրաբոնի հիշատակած Համբայցոց վաչկատուն ցեղի համանուն Ալքայդամնոս ցեղապետի հետ[3]։ Լուկուլլոսին հպատակություն հայտնեց նաև Կոմագենի Անտիոքոս իշխանը, որը Սելևկյան Անտիոքոս Գրիպոսի թոռն էր։ Լուկուլլոսը սրան թագավոր կարգեց Կոմագենի։ Նմանապես նաև Սելևկյան Անտիոքոս Ասիացուն, որը Բագադատես հայ կուսակալի հեռանալուց հետո վերադարձել էր Անտիոք՝ Լուկուլլոսը և հռոմեական ծերակույտը ճանաչեցին Ասորիքի թագավոր։ Այս Անտիոքոսը որդին էր Ասորիքի նախկին թագավոր Անտիոքոս Եվսեբեսի և Սելինե-Կլեոպատրայի, որն ըստ Ստրաբոնի[4] բանտ էր դրված Սելևկիա ամրոցում, իսկ ապա՝ հայերի նահանջի ժամանակ Ասորիքից՝ սպանվել էր Տիգրանի հրամանով։

Տիգրանակերտի անկումից հետո, 69/68 թվին, Լուկուլլոսը և նրա զորքը ձմերեցին Կորդուքում։ Մենք վերև արդեն տեսանք, որ Կորդուքը, ինչպես և Ծոփքը, դավաճանել էին Տիգրանին և գաղտնի կերպով համաձայնության էին եկել Ապպիոս Կլավդիոսի հետ ու անցել հռոմայեցիների կողմը։ Տիգրանը, որ դեռ Լուկուլլոսի արշավանքից առաջ տեղեկություն էր ստացել Կորդվաց Զարբիենոս թագավորի դավաճանության մասին՝ հրամայել էր նրան սրի անցկացնել ընտանիքի հետ միասին։ Հռոմեական զորքը կարողացավ այժմ հայերին թշնամացած այս երկրում ոչ

[1] Տես Լուկուլ., 29։

[2] Տես գք. 36, գլ. 2, 5։

[3] Տես Ստրաբոն, XVI, 2, 10 (753)։

[4] Տես XVI, 2, 3 (749)։

միայն հանգիստ ու աներկյուղ ձմեռել, այլև ստանալ պարենավորում և օգտվել այստեղ լքված հացի առատ պաշարներից։

Կորդուքում Լուկուլլոսը հանդիսավոր կերպով կատարեց իր դաշնակից Զարբիենոս թագավորի թաղումը և ի պատիվ նրան կառուցել տվեց շքեղ մի մահարձան։

Հռոմեական զորքի ձմեռման մասին Կորդուքում վերոհիշյալ տեղեկություններն ունի միմիայն Պլուտարքոսը, որի կարևոր այդ վկայությունները մեջ ենք բերում բառացի թարգմանությամբ։

Պլուտարքոս, Լուկուլլոս, գլ. 29՝

«Ձե՞ որ և արաբների թագավորները յեկել եյին նրա [Լուկուլլոսի] մոտ և հնազանդվել յուրայինների հետ միասին, նաև Ծոփքի ժողովուրդը հարել եր նրան. իսկ կորդվացիներին այնպես եր դեպի իրեն տրամադրել, որ նրանք ուզում եյին իրենց քաղաքները թողնել և ուղեկցել նրան յերեխաների ու կանանց հետ միասին։ Նրանք այդ կամենում եյին հետևյալ պատճառով։ Զարբիենոսը, Կորդվաց թագավորը, նեղվելով Տիգրանի բռնակալությունից, ծածկաբար, ինչպես ասում են Ապպիոսի միջոցով Լուկուլլոսի հետ բանակցություններ եր վարել դաշնակցության մասին։ Յերբ այդ հայտնի յեղավ՝ Զարբիենոսը սպանվեց և նրա հետ միասին սպանվեցին, նախ քան հռոմայեցիների Հայաստան ներխուժելը, նաև նրա կինն ու յերեխաները։ Այդ բանը Լուկուլլոսը չեր մոռացել. ուստի և, գալով Կորդվաց յերկիրը՝ նա կատարեց Զարբիենոսի թաղման ծեսը և, զարդարելով խարույկը զգեստներով, թագավորական վոսկեղենով և Տիգրանից առնված կողոպուտով՝ մոտեցավ ինքը խարույկին, վառեց և հանգուցյալի բարեկամների ու ընտանիքի անդամների հետ զոհ մատուցեց, անվանելով Զարբիենոսին իրեն ընկերակից և հռոմայեցիների դաշնակից։ Նա հրամայեց, բացի այդ, կանգնեցնել հանգուցյալին թանգարժեք մահարձան։ Զարբիենոսի արքունիքում գտել եյին մեծ քանակությամբ վոսկի և արծաթ, իսկ պահեստներում կար յերեք միլիոն մեդիմն ցորեն[1]։ Այսպիսով և զինվորները հարստացան և Լուկուլլոսը զարմացավ, որ ինքը, մեկ դրամ անգամ չստանալով հասարակային գանձարանից, պատերազմը վարում եր միայն իր միջոցներով»։

[1] Յերեք միլիոն մեդիմն ցորենը հավասար է այժմյան կշռով մոտ 120 միլիոն կիլոգր. կամ 120 հազար տոննի։

Կորդուքում յեղած ժամանակ Լուկուլլոսը, ինչպես հաղորդում են Պլուտարքոսը, Եվտրոպիոսը և Ռուփուսը[1], պատրաստվելիս է յեղել պատերազմի ընդդեմ պարթևների։ Ինչպես վկայում է Պլուտարքոսը, նոր այս արշավանքին մասնակցելու համար նա հրամայել եր Պոնտոսում գտնվող իր Սորնատիոս տեղակալին, որ նա գա Կորդուք և միանա իրեն հռոմեական զորամասի հետ, որ ինքը թողել եր Պոնտոսում։ Սակայն, Պլուտարքոսի ասելով, այս արշավանքը գլուխ չեր յեկել հռոմեական զորքերի հակառակության ու ըմբոստության պատճառով։

Պարթևական արշավանքի մասին այս տեղեկությունները, որ չեն հիշատակված Մեմնոնի, Ապպիանոսի և Կասսիուս Դիոնի մոտ, ստույգ և պատմական են ընդունել Ռեյնաքը, Ֆերերոն[2] և ուրիշները, սակայն միանգամայն արդարացի կերպով կասկածելի ու անվստահելի յեն համարել Մոմզենը և Էքհարդը[3]։ Ավելի քան անհավանական է, անշուշտ, որ Լուկուլլոսը հրամայած լիներ դուրս հանել Պոնտոսից հռոմեական պահապան զորքերը և, թողնելով իր թիկունքում Տիգրանին և Միհրդատին՝ ուղենար շարժվել դեպի Տիզբոնը և սկսել մի նոր պատերազմ։ Ըստ յերևույթին, վերոհիշյալ տեղեկությունը սարքովի մի հերյուրանք է, որի հեղինակը կարող է լինել Պլուտարքոսը։ Վերագրելով իր փառաբանած զորավարին նաև յերրորդ պատերազմի նախապատրաստումը՝ Պլուտարքոսը, հավանորեն, կամեցել է ցույց տալ, որ Լուկուլլոսը ևս Ալեքսանդր Մակեդոնացու նման մեծ գործ կատարած կլիներ, յեթե նրան խանգարած չլինեյին հռոմեական զորքերը։

Մենք կըտեսնենք ներքև, որ Լուկուլլոսը վոչ մի դիտավորություն չեր ունեցել պատերազմելու պարթևների դեմ, այլ ընդհակառակը, ուզեցել եր, իր թիկունքն ապահովելու համար, կնքել նրանց հետ բարեկամական դաշինք։

[1] Տես Պլուտարքոս, Լուկուլ., 30, Եվտրոպիոս, VI, 9 և Սեքստուս Ռուփուս, գլ. 15։

[2] Տես Reinach, Mithridate Eupator, էջ 366 և Ферреро, Величие и падение Рима, I, էջ 190։

[3] Տես Моммсен, Римская история, III, էջ 61 և Eckhardt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, Heft 2, էջ 195։

14. 68 ԹՎԻ ԿՌԻՎՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՅԵՎ ՄԻՋԱԳԵՏՔՈՒՄ

Տիգրանակերտի մոտ կրած ծանր պարտությունից հետո՝ Տիգրանը և նրա անձնապահ հեծելազունդը կարողացան դուրս գալ մարտադաշտից և փախան ու պատսպարվեցին մոտակա մի ամրոցում։

Մեծ եյին ու անսահման հուսահատությունը և լքումը հայկական արքունիքում։ Տիգրանի լայնածավալ ծովից ծովից տարածվող պետությունը, վոր նա մոտ քսանհինգ տարվա ընթացքում մեծ դժվարությամբ ի մի յեր համախմբել՝ այժմ արդեն կիսով չափ քանդված եր։ Թագավորների թագավորի ու Հայաստանի դեմ շուտով վոտքի կարող եյին յելնել բոլոր թշնամիները և, առաջին հերթին, պարթևական թագավորությունը, վորը Տիգրանը հիմնապես քայքայել և նվաստացրել եր։

Վհատության այս ծանր ժամին, ինչպես հաղորդում է Պլուտարքոսը[1]*, Միհրդատ Եվպատորը, վորն իր հեծելազորով դեռ նոր եր գալիս դեպի ճակատատեղին, պատահելով ճանապարհին փախստականների և վիրավորների խմբերին՝ լսեց Տիգրանի պարտության մասին և շտապեց գնալ նրա մոտ։ Միհրդատը Տիգրանին քաջալերեց և նրան հուսադրեց ապագայի նկատմամբ*[2] *և այնուհետև նրանք սկսեցին յեռանդուն կերպով պատրաստվել նոր պատերազմի։ Համաձայն Մեմնոնի և Ապպիանոսի վկայությունների*[3]*՝ Տիգրանն ուշադրության առավ Միհրդատի մեծ*

1 *Տես, Լուկուլ., 29, համեմատե նաև Մեմնոն, գլ. 58։*

2 *Յեվրոպական գիտնականները՝ Մոմզենը, Ռեյնաքը և ուրիշները* (Моммсен, Римская история, III. *եջ 58 և* Reinach, Mithridate Eupator, *եջ 363), նկարագրելով Միհրդատի ու Տիգրանի այս հանդիպումը՝ նշում են Տիգրանի անարիությունն ու փոքրոգությունը։ Այդ նախատինքներն անհիմն են ու կամայական և չեն համապատասխանում սկզբնաղբյուրների տված տեղեկություններին։*

3 *Մեմնոն, գլ. 58 և Ապպ., Միհրդ., գլ. 87։*

փորձառությունը, վոր նա ձեռք եր բերել հռոմեական պատերազմներում, և նրան հանձնարարեց թե առաջիկա պատերազմի նախապատրաստումը և թե, ընդհանրապես, ռազմական գործերի ղեկավարությունը։

Արդ՝ Միհրդատը, վորն այժմ Տիգրանի ամենամոտ խորհրդատուն եր՝ աշխատեց, ամենից առաջ, հաշտեցնել իր փեսային նրա վոխերիմ թշնամիների՝ պարթևների հետ։ 70/69 թվին վախճանվել եր պարթևների Սանատրուկ թագավորը և նրան հաջորդել եր Հրահատ Գ-ը (70/69—57 թ. մեր թվ. առ.)։ Տիգրանը սրա մոտ ուղարկեց, Միհրդատի խորհուրդով, դեսպաններ, համաձայնեց զիջել նրան բոլոր յերկրները, վոր ինքն առել եր պարթևներից՝ Միջագետքը, Ադիաբենը և «մեծ հովիտները»,— հավանորեն Ստրաբոնի հիշատակած «յոթնասուն հովիտները»[1]*,— և խնդրեց միանալ իր հետ ընդդեմ հռոմայեցիների*[2]*։ Դեսպանները զգուշացրին Հրահատին, վոր յեթե հռոմայեցիները Տիգրանին հաղթեն՝ նրանք այնուհետև պատերազմ կսկսեն նաև պարթևների դեմ*[3]*։*

Այս բանակցությունների առնչությամբ Սալլուստիուսի մոտ բերված է Միհրդատի նամակը[4] *Հրահատ Գ-ին, վորը թեև, ինարկե, վավերական չէ, սակայն այնուամենայնիվ հետաքրքրական է, վորովհետև արտացոլում է իր մեջ քաղաքական տիրող տրամադրությունները և հարաբերությունները։ Այդ նամակի մեջ Միհրդատը նկարագրում է հռոմայեցիների անզուսպ ու անկասելի առաջխաղացումը դեպի Արևելք, նրանց մեծ կռիվներն իր հետ, նվաճումների ու ավազակային կողոպուտների նրանց անհագ ծարավը, վորին անխուսափելիորեն զոհ եյին դառնալու նաև պարթևները, և աշխատում է Հրահատին համոզել, վոր նա իրեն ու Տիգրանի հետ միանա ընդդեմ ընդհանուր թշնամու։*

Պատերազմող կողմերի համար պարթևների բռնելիք դիրքն ուներ, անշուշտ, մեծ կարևորություն։ Ուստի նաև Լուկուլլոսը, լուր առնելով հայերի բանակցությունների մասին պարթևների հետ՝ ուղարկեց Հրահատ Գ-ի մոտ իր նոր դաշնակիցներին և աշխատեց նրան գրավել հռոմայեցիների կողմը։ Լուկուլլոսը, ինչպես հաղորդում է Դիոնը[5]*, նպաստավոր խոստումներ տվեց Հրահատին*

1 *Տես Ստրաբոն,* XI, *14, 15։*

2 *Տես Մեմնոն, գլ. 58, Ապպիանոս, Միհրդատ., գլ. 87։*

3 *Տես Կասսիոս Դիոն, գք. 36, գլ. 1, 1—2։*

4 *Սալլուստիուս,* IV, frg. 20, Leipzig 1856.

5 *Տես գք. 36, գլ. 3, 1։*

և, հիշեցնելով նրան Միհրդատ Բ-ի 92 թվի բարեկամական համաձայնությունը Սուլլայի հետ, պահանջեց կամ իր հետ դաշնակից լինել և կամ չեզոք մնալ ու ամենևին չմասնակցել հռոմեական-հայկական պատերազմին[1]:

Խորամանկ պարթևը չմերժեց Տիգրանի ու Միհրդատի առաջարկը, սակայն միևնույն ժամանակ Լուկուլլոսին պատասխանեց, վոր նրա հետ պատրաստ է կնքելու բարեկամական դաշինք: Շուտով Լուկուլլոսը դաշնադրության կնքման համար Տիզբոն ուղարկեց իր Սեքստիլիուս տեղակալին: Բայց այս վերջինը, վորն ավելի զինվորական էր, քան դիվանագետ՝ կասկածներ առաջացրեց, վոր յեկել է, ըստ յերևույթին, իբրև լրտես և աշխատում է ծանոթանալ պարթևական յերկրի ու, գլխավորապես, նրա ռազմական ուժերի հետ: Հրահատ Գ-ը, կորցնելով վստահությունը դեպի հռոմայեցիները՝ այլևս չուզեց միանալ ու օգնել հռոմայեցիներին և վճռեց չեզոքություն պահպանել[2]: Նրա կարծիքով, յեթե պատերազմը յերկու կողմերի միջև տեղի ունենար հավասար ուժերով ու առանց իր մասնակցության՝ այդ նպատակավոր ու շահավետ կլիներ հենց իր անվտանգության համար:

Պարթևների թագավորի այս անակնկալ վորոշումն ընդունվեց Հայաստանում մեծ գոհունակությամբ: Տիգրանն այժմ կարող էր վորոշ չափով հույս ունենալ, վոր առաջիկա պատերազմի ընթացքում նրա թիկունքը չէր յենթարկվի հարձակման պարթևների կողմից:

69/68 թվի ամբողջ ձմեռը Տիգրանը և Միհրդատը շատ կերպով պատերազմի պատրաստություններ եյին տեսնում: Նրանք շրջում եյին, ինչպես վկայում է Ապպիանոսը[3], ամբողջ յերկրում և հավաքում եյին նոր զորք, վորի ղեկավարությունը Տիգրանը հանձնել էր հմուտ ու փորձված իր աներոջը: Նրանք պատրաստել եյին տալիս զենքեր և ռազմապիտույքներ և մթերում եյին հարմար ու ամուր տեղերում ցորենի ու գարենի պաշարներ:

Ապպիանոսի ասելով՝ սկզբում Միհրդատը հրամայել էր զինվորագրել բոլոր յերիտասարդ հայերին, բայց հետո զինվորության համար նրանցից ընտրել էր ամենաուժեղներին: Հռոմեական զորքի ձևով նա բաժանել էր նոր բանակը ջոկատների ու վաշտերի և հանձնարարել էր իր հետ յեկած պոնտական զինվո-

1 Տես Ապպիանոս, Միհրդատ., 87:

2 Տես Դիոն, գք. 36, գլ. 3, 2—3:

3 Միհրդատականք, գլ. 87:

րականներին, վոր այդ բանակը վարժեցնեն ու մարզեն հռոմեական լեգեոնների նմանությամբ[1]: Նախկին պատերազմների փորձը համոզել էր նրան, վոր արևելյան զորքերի մեծ բազմությունը վոչ միայն անօգուտ է, այլև արգելք է հանդիսանում ռազմունակ զորամասերի մարտական գործողություններին:

Տիգրանի նոր զորաբանակի մեջ բացի հայերից հիշատակված են[2] նմանապես դաշնակից իբերները, մարդերը և, հատկապես, նաև մեդացիները, վորոնք կռվում եյին Ատրպատականի Միհրդատ թագավորի առաջնորդությամբ, վորը հայոց թագավորի փեսան էր ու հավատարիմ վասալը:

Տիգրանի ու Միհրդատի հավաքած զորքի թիվը Ապպիանոսի մոտ[3] ցույց է տրված ավելի քան հարյուր հազար՝ յոթանասուն հազար հետևազոր և այս թվի կեսի չափ հեծելազոր: Եքհարդի կարծիքով՝ թեև Ապպիանոսի մոտ այս զորաթվերը նախորդ տարվանից պակաս են ցույց տրված, սակայն պետք է համարվեն դարձյալ չափազանցված[4]:

68 թվի հռոմեական-հայկական պատերազմը Մոմզենը, ինչպես նաև Ռեյնաքը, բնորոշել են իբրև ազգային և կրոնական պատերազմ միացյալ Արևելքի ընդդեմ Արևմուտքի[5]:

«Կաբինետային պատերազմը,—ասում է Մոմզենը,—դառնալու չէր այժմ ազգային ասիական պատերազմ: Ասիայի թագավորները և ժողովրդները միանալու եյին ընդդեմ ամենազոր ու հանդուգն արևմտյան նվաճողների: ...Այս պատերազմը դժվար չէր ներկայացնել իբրև ազգային կռիվ Արևելքի ընդդեմ Արևմուտքի, վորովհետև պատերազմն ուներ հենց, իրապես, այդ բնույթը: Կարելի չէր հեշտությամբ նրան դարձնել նաև կրոնական և տարածել լուր, վոր Լուկուլլոսի արշավանքի նպատակն է պարսկական Նանեայի կամ Անահիտի տաճարի գրավումը Ելիմայիսում կամ այժ-

1 Տես Ապպիանոս, Միհրդ., 87 և Փլեգոն (Fragm. Hist. Gr. III, էջ 606): Փլեգոնի մոտ հայկական բանակի ուսուցումն ըստ նմանության հռոմեական զորքի սխալմամբ մատնանշված է Տիգրանակերտի ճակատամարտից առաջ:

2 Համեմատե Պլուտ., Լուկուլ., 31:

3 Միհրդատ., գլ. 87:

4 Տես Klio, Bd. X, 2, էջ 197:

5 Տես Моммсен, Римская история, III, էջ 58—60 և Reinach, Mithridate Eupator, էջ 365:

մյան Լուրիստանում։ Այդ տաճարն ամենից շատ մեծարված և հարուստ սրբավայրն էր Յեփրատ գետի ամբողջ առափնյա շրջանում։ Ասիացիները խմբերով հավաքվում էին մոտից և հեռվից թագավորների դրոշների տակ, վորոնք նրանց կանչել էին պաշտպանելու Արևելքը և նրա աստվածներին անաստված ոտարերկրացիներից»։

Մոմզենի այս կարծիքը, վոր ընդունելի չի համարվել և մեջ է բերվում նաև բազմաթիվ այլ յերկերում[1]՝ միայն վերջերս քննության է առնված ու մերժված Եքհարդի աշխատության մեջ[2]։ Եքհարդն իրավացի կերպով մատնանշում է, վոր 68 թվին հայերը պատերազմում էին հռոմայեցիների դեմ, գլխավորապես, իրենց սեփական ուժերով և ունեյին իրենց հետ համեմատաբար ավելի քիչ դաշնակիցներ, քան 69 թվին։ Արևելքի մեծագույն մասը, որինակ՝ Կորդուքը, Ծոփքը, արաբները, պարթևները՝ կամ անցել էին հռոմայեցիների կողմը, կամ մնացել էին չեզոք։ Բացի այդ, ասիացիների կրոնական միությունը ևս, ինչպես իրավամբ նշում է Եքհարդը, թեև կարող է հարմար ու տեղին լինել Իսլամի սրբազան պատերազմների նկատմամբ, սակայն բնավ վոչ հին ժամանակների համար, յերբ ամեն մի գավառ ուներ իր սեփական կրոնական կենտրոնավայրը։

Մոմզենի և Ռեյնաքի սխալ այդ դիտողությունները հիմնըված են, իրավի, բացառապես միայն մի վիճելի հատվածի վրա Կիկերոնի ճառից, վորը թարգմանաբար մեջ եմ բերում առանց կրճատումների։

«Յերբ Լուկուլլոսը,—վկայում է Կիկերոնը[3],—մոտավ իր զորքով նրա [Տիգրանի] թագավորությունը՝ շատ ցեղեր արդեն գրգռված էին մեր հրամանատարի դեմ։ Մեկ կողմից՝ ահով լցվել էին այն ցեղերը, վորոնց յերբեք հռոմեական ժողովուրդը մտադիր չի յեղել անհանգստացնել կամ պատերազմի միջոցով նվաճել։ Իսկ մյուս կողմից՝ բարբարոս ցեղերի մեջ մի դաժան ու գրգռիչ կարծիք էր ստեղծվել և տարածվել, վոր իբր թե մեր զորքը յեկել էր այդ յերկըրները, վորպեսզի կողոպտի ամենահարուստ ու ամենանվիրական սրբատեղին։ Այսպիսով բազմաթիվ և մեծ ցեղեր գրգռվել էին և նորից մատնվել ահ ու սարսափի»։

Կիկերոնի ճառի այս հատվածը, ինչպես տեսնում ենք, նըշում է միմիայն այն ահ ու սարսափը, վորը տիրել էր բազմաթիվ ցեղերին Լուկուլլոսի վոչ թե 68, այլ՝ ինչպես ճիշտ դիտել է Եքհարդը[1]՝ 69 թվի արշավանքի ժամանակ։ Նաև անկախ այս առարկությունից, ինձ թվում է, վոր մեջ բերված հատվածի բովանդակությունից ևս դժվար է յեզրակացնել, վոր իբր թե 68 թվի պատերազմը յեղել էր կրոնական և ընդհանուր արևելյան։ Քաղաքների, տաճարների և հարստությունների կողոպտումը հռոմեական զորավարների ու զորքի կողմից, ինչպես հայտնի յե, միշտ էլ յեղել է հռոմեական արշավանքների հիմնական նպատակներից մեկը։ Ուստի ժողովրդների գրգռումը և կրոնական հուզմունքը սովորական յերևույթ էին բոլոր արշավանքների ժամանակ, և դրանից չի կարելի, իհարկե, անել այն լուրջ հետևությունները, վոր արված են 68 թվի պատերազմի նկատմամբ։

68 թվի գարնանը Լուկուլլոսը, տեսնելով վոր հայոց թագավորը վոչ նոր ճակատամարտ է տալիս, վոչ էլ խնդրում է նրանից հաշտություն՝ պատերազմը վերսկսեց ինքը, հույս ունենալով, վոր՝ ներս խուժելով ու ավերելով Հայաստանի հյուսիսային շըրջանները և կամ սպառնալով Հայաստանի Արտաշատ մայրաքաղաքին՝ կըհարկադրե հայերին տալ վճռական ճակատամարտ և կընքե նրանց հետ վերջնական հաշտություն։

68 թվի գարնան վերջերին հռոմեական զորքը թողեց բարեկամ ու դաշնակից Կորդվաց յերկիրը, ուր նա լիառատ ապրել ու հանգիստ ձմերել էր, և ճանապարհ ընկավ Տիգրանակերտի մոտով և Տավրոսյան լեռներով դեպի Մշո դաշտը և Յեփրատ-Արածանիի հովիտները։

Արշավանքի ճանապարհը Կորդուքից դեպի հյուսիս Մոմզենը, Խալաթյանցը և Լեոն[2] յենթադրել են այժմյան Բիթլիսի կիրճով և Վանա լճի արևմտյան ափերի մոտով։ Սակայն Եքհարդը[3], վորը հանգամանորեն քննության է առել այս խնդիրը՝ հանգել է այն յեզրակացության, վոր զորքերի շարժման համար ամենից հարմար ճանապարհն է այդտեղ վոչ թե Բաղեշի, այլ Ներջիկ-Տե-

---

[1] Տես, որինակ, Халатьянц, Очерк истории Армении, եջ 198, J. Morgan, Histoire du peuple arménien, եջ 75, Լեո, Հայոց պատմություն, եջ 411։

[2] Տես Klio, Bd. X, 2, եջ 195—197։

[3] Տես De imperio Cn. Pompeii, գլ. 9, § 23։

[1] Klio, Bd. X, 2, եջ 196։

[2] Տես Моммсен, Римская история, III, եջ 61, Халатьянц, Очерк истории Армении, եջ 200 և Լեո, Հայոց պատմություն, եջ 413։

[3] Տես Klio, Bd. X, 2, եջ 202—206։

նիկի գիծը։ Հենց այս վերջին ճանապարհագծով գնացել եյին, ինչպես համոզիչ կերպով լուսաբանել է գերմանական գիտնական Կարբեն[1], նաև Քսենոփոնը ու նրա հետ նահանջող հույները։ Երհարդի ու Կարբեյի այս յեզրակացությունները հաստատվում են այժմ նաև Պեվտինգերյան քարտեզի ուսումնասիրությամբ։ Այդ քարտեզի վրա, ինչպես մանրամասն պարզաբանված է իմ «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» աշխատության մեջ[2]՝ ռազմական հին ճանապարհն Աղձնիքում ցույց է տրված դարձյալ Ներջիկ-Կիլդիզի վրայով։

Յերբ 68 թվի ամառը Լուկուլլոսի զորքն իջավ Տավրոսյան լեռներից այժմյան Մշո դաշտը՝ այստեղ, ինչպես վկայում է Պլուտարքոսը, հացաբույսերի ցանքերը դեռևս կանաչ եյին[3], մինչդեռ Կորդվաց յերկրում, վորտեղից հռոմեական զորքը մեկնել եր մի քանի շաբաթ առաջ արդեն հնձի ժամանակ եր։ Հայկական բարձրավանդակի այս հատուկ կլիմայական յերևույթը, վոր Լուկուլլոսի համար անակնկալ մի նորություն եր, նրան մեծ անհանգստություն պատճառեց, վորովհետև մեծապես դժվարանում եր նրա բանակի պարենավորման գործը։ Անսպասելի յեր Լուկուլլոսի համար և խիստ հուսահատեցուցիչ նաև Միհրդատի ու Տիգրանի մարտավարության նոր յեղանակը, վորը գործադրվում եր այստեղ վորձված ու հնարամիտ Միհրդատի խորհրդով։

Մենք արդեն տեսանք վերև, վոր Միհրդատը, վորին հանձնարարված եր նոր հայկական զորքի նախապատրաստումը, ուշադրություն եր առել զորքի վոչ թե քանակը, այլ վորակը։ Դաշնակից թագավորները վոչ միայն այժմ ուժեղացրել եյին իրենց հետևազորը, այլև աշխատել եյին միաժամանակ, վոր իրենց ձիավոր զորքը թվով ու մարտունակությամբ գերազանց լինի հռոմեական հեծելազորից, վորը, ինչպես հայտնի յե, հռոմեական զորքի համեմատաբար թույլ և տկար մասն եր։ Միհրդատի խորհրդով՝ այժմ հիմնովին փոխվել եր նաև հայկական զորքի պատերազմելու յեղանակը։ Վորոշված եր խույս տալ վճռական մեծ ճակատամարտից և վարել լեռնային պաշտպանողական և փոքր պատերազմ։ Յերկու դաշնակիցները պարզապես ուզում եյին հռոմեական զորքը քաշել յերկրի ներսը, դժվարացնել նրա պարենա-

[1] Տես H. Karbe, Der Marsch der Zehntausend vom Zapates zum Phasis-Araxes, 1898:

[2] Տես էջ 90—94։

[3] Լուկուլ., գլ. 31, համեմատե նաև Դ ի ո ն, գք. 36, գլ. 4, 2։



Լուկուլլոսի ճանապարհը Կորդուքից Մշո դաշտ։

վորումը և հետզհետե նրան ուժասպառ անել իրենց հզոր ու արագաշարժ հեծելազորի հանկարծակի հարձակումներով:

Ռազմական այս ծրագիրն իրագործելու համար դաշնակից թագավորները, ինչպես հաղորդում է Ապպիանոսը[1], բաժանել եյին իրենց զորաբանակը յերկու մասի: Միհրդատը, վորին հանձնըված եր ամբողջ հետևազորը և հեծելազորի մի փոքր մասը՝ կրնկակոխ հետևում եր հռոմեական զորքին, սակայն՝ բանակ դնելով ու ամրանալով բլուրների վրա՝ նա համառորեն խուսափում եր վճռական ընդհարումից: Իսկ Տիգրանը հեծելազորի մյուս մասովը սրընթաց հարձակվում եր թշնամու վրա, խանգարում եր ու խափանում նրա պարենավորումը և հասցնում նրան զգալի կորուստներ: Այսպիսով Լուկուլլոսը և նրա զորքը շարունակ գտընվում եյին Միհրդատի և Տիգրանի բանակների աքցանում, վորոնցից վորևե մեկը նրանց սպառնում եր թիկունքից:

Ուշագրավ է, վոր 68 թվի այս կռիվների մասին հռոմեական աղբյուրները, մեծ մասամբ, լուռ են և մունջ: Միայն Պլուտարքոսը, վորը Լուկուլլոսի փառաբանողն է ու գովերգուն, հիշատակել է իր հերոսի մի քանի աննշան աջողությունները:

«Տավրոսն անցնելուց հետո,—պատմում է Պլուտարքոսը[2],—Լուկուլլոսը վհատվեց, վորովհետև տեսավ վոր արտերը դեռևս կանաչ են (այստեղ ուշանում են այդքան ողի տաքության պատճառով հնձելու ժամանակները): Սակայն, այնուամենայնիվ, նա ցած իջավ, յերկու կամ յերեք անգամ յետ մղեց հայերին, վորոնք նորից համարձակվել եյին նրա դեմ դուրս գալ, անարգել կերպով ավերեց գյուղերը և, գրավելով Տիգրանի համար պատրաստված ցորենը՝ հակադարձեց թշնամիներին այն ծանր դրությունը, վորից ինքը վախենում եր»:

Այս մասնակի աջողությունները չունեյին, ինչպես տեսնում ենք, ռազմական խոշոր նշանակություն, վորովհետև նրանք բնավ չեյին թուլացնում դաշնակիցների կենդանի ուժը: Սակայն ինքը հռոմեական զորքը, վորը հաճախ յենթակա յեր Տիգրանի հեծելազորի հարձակումներին, կրում եր, ինչպես դժվար չե հետևցնել աղբյուրների վկայություններից, զգալի կորուստներ:

Պլուտարքոսի և Դիոնի պատմելով[3]՝ Լուկուլլոսն աշխատում

1 Տես Միհրդատականք, գլ. 87:

2 Լուկուլ., գլ. 31:

3 Տես Պլուտ., Լուկուլ., 31, Կասսիուս Դիոն, գք. 36, գլ. 4, 2:

եր սախպել թշնամուն ճակատելու իրեն դեմ, վորպեսզի նրա դիմադրական ուժը կարողանա խորտակել վճռական ճակատամարտում: Թշնամու աչքի առջև նա ավերում եր այդ նպատակով նրա յերկիրը: Սակայն իզուր՝ թշնամին մնում եր անշարժ իր տեղում: Նա պաշարեց այնուհետև Միհրդատի ճամբարը և սկսեց նրա շուրջը փորել խրամատներ: Բայց իզուր եր նաև այս փորձը: Միհրդատին անմիջապես օգնության հասավ Տիգրանը, սպառնալով հռոմայեցիներին թիկունքից, իսկ Միհրդատը, հավատարիմ մնալով իր ծրագրին՝ այս անգամ ևս տեղից չշարժվեց:

Լուկուլլոսի դժվարին ու ապարդյուն այս արշավանքը, վորի ընթացքում նա ավելի ինքն եր կորուստներ կրել, քան թշնամին՝ տևել եր Վանա լճի հյուսիսային կողմերում առնվազն մոտ յերկու ամիս: Արդեն սկսվել եր աշունը և հռոմեական զորքի դրությունը, վորն անսովոր եր Հայաստանի ցուրտ կլիմային՝ հետզհետե դառնում եր ավելի ու ավելի հուսահատական: Յեթե Լուկուլլոսն այժմ յետ նահանջեր, այդ համազոր կլիներ ամոթալի պարտության: Յեվ նա միայն այժմ, մոտ յերկու ամիս ապարդյուն կորցնելուց հետո, ուղղվեց շտապ դեպի Արտաշատ, ուր գտնվում եյին Տիգրանի որինավոր կանայք և անչափահաս զավակները[1]: Նա հույս ուներ, վոր հին այդ մայրաքաղաքի նվաճումը կըկարողանա վերականգնել իր զինվորական մեծ անունը և հեղինակությունը, վոր սկսել եյին արդեն նսեմանալ հռոմեական-հայկական այս նոր պատերազմում: Նա միևնույն ժամանակ կարծում եր, վոր Արտաշատին սպառնացող վտանգը Տիգրանին կըստիպե իր հետ վճռական կռվի բռնվելու:

Յեվ, իրավի, ինչպես վոր Լուկուլլոսը մտածում եր՝ այնպես ել յեղավ: Յերբ Տիգրանը տեղեկություն ստացավ, վոր Լուկուլլոսն արագացրած յերթով գնում է դեպի Արտաշատ՝ նա հասավ չորրորդ որը, ինչպես վկայում է Պլուտարքոսը[2], հռոմեական զորքի յետևից և նրա առաջը կտրեց Արածանիի գետանցքի մոտ՝ գետի այն ափին: Լուկուլլոսը, վորը դեռևս գետը չեր անցել՝ գտնվում եր հայկական զորքի դիմաց Արածանիի ձախ կողմում:

Եքհարդն իր ընդարձակ ուսումնասիրության մեջ[3] աշխատել է ճշտել թե Արածանիի ճակատամարտի այս տեղը և թե,

1 Տես Պլուտ., Լուկուլ., գլ. 31:

2 Լուկուլլոս, գլ. 31:

3 Տես Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. X, Heft 2, էջ 221—226:

ընդհանրապես, այն ճանապարհը, վորոնցով յեկած պիտի լինեյին այդտեղ Լուկուլլոսը և Տիգրանը: Նա իրավացի կերպով չի ընդունում Ռեյնաքի[1] յենթադրությունը, ըստ վորի վերոհիշյալ գետանցքի տեղը մատնանշված է այժմյան Մանազկերտի մոտ: Արածանին անցնելով այդ տեղում, ինչպես միանգամայն ճիշտ դիտել է Եքհարդը, կարելի յեր գնալ Բասեն և Հասանղալա, բայց վոչ Արտաշատ: Ինքն Եքհարդը կարծում է, վոր հռոմեական զորքը գնացել եր, հավանորեն, Մանազկերտի մոտով դեպի հյուսիս և հասել եր Արածանիի ձախակողմն այժմյան Ղարաքիլիսեյի մոտ: Նույն այս ճանապարհով գերմանական գիտականները յենթադրել են, ինչպես հայտնի յե, նաև Քսենոփոնի ու նրա հետ նահանջող հույների ուղեգիծը[2]:

Սակայն ինձ ավելի հավանական է թվում, վոր ինչպես հույների նահանջի, նույնպես և Լուկուլլոսի 68 թվի արշավանքի ճանապարհը՝ պետք է յենթադրել Պեվտինգերյան քարտեզում նշանակված Isumbo-Didyma, այսինքն Ծումբ-Դիդեմ հին հաղորդակցության գծով, վորը մանրամասն լուսաբանված է «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» իմ նոր ուսումնասիրության մեջ[3]: Այս նոր յենթադրությամբ Յեփրատ-Արածանիի ճակատամարտի տեղը վորոշվում է վոչ թե ճշտիվ այժմյան Ղարաքիլիսեյի մոտ, այլ այս գյուղից մոտ 20—30 կիլոմետր դեպի արևելք՝ այժմյան Դիդեմի հյուսիսակողմում:

Արածանիի ճակատամարտի մասին միակ մեր աղբյուրներն են Պլուտարքոսի և Կասսիուս Դիոնի վկայությունները[4], վորոնք, ինչպես կտեսնենք, հիմնապես իրար հակասում են: Այդ յերկու վկայությունները, վոր կարոտ են լուրջ ու ուշադիր քննության՝ մեջ ենք բերում բառացի թարգմանությամբ:

1. Պլուտարքոս, Լուկուլլոս, գլ. 31՝

«Լուկուլլոսի արշավանքն Արտաշատի դեմ Տիգրանին այլևս չհանդուրժեց, այլ՝ վերցնելով հետը իր զորքերը՝ նա բանակեց չորրորդ որը հռոմայեցիների մոտ, ունենալով

[1] Mithridate Eupator, եջ 368, ծանոթ. 1:

[2] Համեմատե W. Belck, Der Weg Xenophons auf seinem Rückzuge bis in die Ebene von Alaschgert, Verhandl. d. Berl. anthrop. Gesell., 1899, եջ 661 և այլն:

[3] Տես եջ 103—114:

[4] Նույն այս ճակատամարտը համառոտակի հիշատակված է նաև Սալլուստիուսի պատմության մի հատվածում, տես գք. IV, fragm. 74:



Լուկուլլոսի հաղթական արշավանքը դեպի Արտաշատ

նրանց ու իր միջև Արածանի գետը։ Այդ գետը պետք է անհրաժեշտաբար հռոմայեցիներն անցնեյին Արտաշատ գնալիս։ Զոհ մատուցանելով աստվածներին և վստահ լինելով, որ արդեն հաղթությունն իր ձեռքումն է, Լուկուլլոսը մյուս ափն անցկացրեց զորքը, առջևում դասավորելով իր տասներկու կոհորտները, իսկ մյուսները՝ վորպեսզի թշնամուց չշրջապատվի՝ տեղավորեց հետևում[1]։ Դեմ առ դեմ սրանց կանգնած էյին բազմաթիվ ձիավորներ ու ընտիր զորքեր, իսկ նրանց առջևը գտնվում էյին ձիավոր նետաձիգ մարդերը և նիզակակիր իբերները, վորոնց բոլոր օտարականներից ավելի յեր Տիգրանը վստահում և համարում էր առանձնապես մարտունակ։ Բայց իսկապես սրանք վորևե փայլուն գործ չարին, այլ կռվի բռնվելով մի քիչ հռոմեական հեծելազորի հետ՝ չդիմացան հետո հետևազորի հարձակմանը և, փախչելով ու ցրիվ գալով այս ու այն կողմը՝ հարկադրեցին հռոմեական հեծելազորին իրենց հալածելու։ Յերբ սրանք ցրվեցին, Լուկուլլոսը, տեսնելով Տիգրանի հետ առաջացող ձիավորների շքեղությունն ու բազմությունը՝ վախեցավ։ Նա յետ կանչեց իր հեծելազորը, վորը թշնամուն հալածում էր, և առաջինն ինքը դեմ կանգնեց Ատրպատականցիներին, վորոնք իր դիմացն էյին լավագույն զորքի հետ, և, առաջ քան ձեռնամարտի գնալը, նրանց ահաբեկեց և մատնեց փախուստի։ Յերեք թագավորներից, վորոնք միասին մասնակցում էյին կռվին՝ ամենախայտառակ կերպով փախել էր, ինչպես ասում են, Միհրդատ Պոնտացին, վորը չեր դիմացել մինչևիսկ հռոմայեցիների մարտական աղաղակներին։ Հետապնդումը շարունակվեց յերկար տարածության վրա և հռոմայեցիներն ուժասպառ յեղան, վորովհետև ամբողջ գիշերը վոչ միայն սպանում էյին թշնամուն, այլև առնում և բերում էյին գերիներին ու նաև ավարը և ինչքը։ Լիվիուսն ասում է, վոր թշնամու կորուստն ավելի մեծ էր յեղել առաջին կռվում, սակայն այս կռվում սպանվել ու գերի էյին բռնվել ավելի անվանիները»։

2. Կասսիուս Դիոն[2], գր. 36, գլ. 4—5՝

«Լուկուլլոսն արշավանքը սկսեց նույն տարվա ամառվա

[1] Զորքի այս հատուկ դասավորության մասին (agmen quadratum) տես V. Chapot, La frontière de l'Euphrate, Paris 1907, եջ 173։

[2] Թեև Դիոնի հատվածում չե հիշատակված ճակատամարտի տեղը, սա-

կեսին (վորովհետև գարնանն անկարելի յեր թշնամու յերկրի վրա հարձակվել ցրտերի պատճառով) և յերկրի վորոշ մասերն ավերեց, վորպեսզի ստիպե բարբարոսներին դիմադրել ու իր հետ պատերազմել։ Իսկ յերբ նրանք չշարժվեցին իսկի տեղից՝ նա ինքը գնաց նրանց վրա։

Հարձակման ժամանակ թշնամու այրուձին խիստ նեղը գցեց հռոմեական հեծելազորին, բայց հետևակների հետ վոչ վոք նրանցից դուրս չելավ ձեռնամարտի, այլ նրանք իսկույն յետ էյին քաշվում, յերբ Լուկուլլոսը հեծելազորին օգնություն էր տանում վահանակիրներին։ Չնայած դրան՝ թշնամիները վորևե վնաս չկրեցին, այլ նրանք, յետ դառնալով՝ նետեր էյին արձակում հետապնդողների վրա, և շատերին իսկույն սպանեցին և շատերին էլ վիրավորեցին։ Իսկ վերքերը ծանր էյին և դժվար էյին բուժվում, վորովհետև նետերն ունեյին յերկու ծայր, վորոնք այնպես էյին իրար կցված, վոր թե վերքի մեջ մնալով և թե դուրս հանվելով՝ արագ կերպով մահ էյին պատճառում։ Դրա պատճառն այն էր, վոր նետի ծայրերից մեկը, վորը վոչ մի կերպ չեր կարելի դուրս հանել՝ մնում էր մարմնի մեջ»։

Յեվրոպական գիտնականներից շատերը, օրինակ, Ռեյնաքը, Նիզեն և Ֆերերոն[1], հավատ ընծայելով Պլուտարքոսի վերոհիշյալ վկայություններին, կարծում են, վոր Արածանիի ճակատամարտում Լուկուլլոսը հաղթություն էր տարել և Տիգրանը Միհրդատի հետ կրել էյին ծանր պարտություն։ Ռեյնաքը, հիմնվելով, բացի այդ, Փլեգոնի վկայության վրա[2], վորը, ինչպես վերև տեսանք, վերաբերվում է վոչ թե Արածանիի, այլ Տիգրանակերտի ճակատամարտին, թյուրիմացաբար մատնացույց է արել, վոր այս կռվում Տիգրանի զորքից սպանվել էյին 5000 հոգի, իսկ մի մասը գերի էյին վերցվել։

Լուկուլլոսի տարած այս հաղթության նկատմամբ համեմա-

կայն Եքհարդը, հիմնվելով նրա բովանդակության վրա՝ հավանական է համարում, վոր նրա մեջ հաղորդված տեղեկությունները վերաբերում են Արածանիի ճակատամարտին, տես Klio, 1910, Bd. X, 2, եջ 208։ Եքհարդի յեզրակացությունը, իմ կարծիքով, միանգամայն հիմնավոր է ու համոզիչ։

[1] Տես Reinach, Mithridate Eupator, եջ 367, Б. Низе, Очерк римской истории, С.-Петербург 1910, եջ 289 և Ферреро, Величие и падение Рима, I, եջ 196։

[2] Տես Müller, Fragm. Hist. Gr., եջ 606։

տաքար ավելի զուսպ են և ձեռնպահ Մոմզենը և Եքհարդը[1], սակայն սրանք ևս, գտնվելով վորոշ չափով Պլուտարքոսի վկայությունների ազդեցության տակ՝ բավարարաչափ չեն ընդգծել հռոմեական զորքի խիստ դժվարին վիճակը, վորը պարզ կերպով մատնացույց է արված Դիոնի վերոհիշյալ հատվածում:

Արածանիի մոտ, ինչպես դժվար չե հետևցնել Կասսիուս Դիոնի վկայությունից, Տիգրանը վոչ միայն պարտություն չեր կրել, այլ ընդհակառակը, ինքն եր ծանր հարված հասցրել հակառակորդին: Տիգրանի հեծելազորը, ինչպես պարզ վկայում է Դիոնը, ինքը վորևե վնաս չեր կրել թշնամուց, սակայն՝ յետ դառնալով և հետապնդող հռոմայեցիների վրա նետեր արձակելով՝ նրանցից շատերին սպանել և շատերին էլ վիրավորել եր: Տեղի ունեցած ընդհարմանը մասնակցած է յեղել, ինչպես միանգամայն ճիշտ մատնացույց է արել Եքհարդը[2], միմիայն Տիգրանի թեթև հեծելազորն առանց հետևազորի, վորը չե հիշատակված, իրոք, վոչ Պլուտարքոսի և վոչ էլ Դիոնի վկայություններում: Հայկական հետևազորի, ինչպես և Միհրդատի բացակայությունը՝ պետք է համարել միանգամայն հավանական, վորովհետև վերոհիշյալ Պլուտարքոսի վկայությունից ևս յերևում է, վոր հռոմեական զորքին հետապնդել ու նրա հետևից հասել եր իր թեթև հեծելազորով Տիգրանը: Անհնարին եր, իհարկե, վոր դանդաղաշարժ հայ հետևազորը ևս միաժամանակ հասած լիներ Արածանիի գետափը:

Աղբյուրների մեջ բերված վկայություններից յերևում է նույնպես, վոր այս կռվում ևս Տիգրանը գործադրել եր մարտավարության հին յեղանակը, այսինքն՝ ուզեցել եր վոչ թե վճռական մարտի բռնվել, այլ հարված հասցնել թշնամուն գետից անցնելու ժամանակ: Տիգրանի հեծելազորի փախուստը պարզապես կեղծ փախուստ եր, վորի միջոցին նրա նետաձիգ արագաշարժ ձիավորները նոր ջարդ եյին տալիս թշնամուն: Կռվելու արևելյան այդ ձևը գործադրել եյին, ինչպես հայտնի յե, նաև պարթևները Կրասսոսի դեմ, վորը կատարյալ պարտություն եր կրել 53 թվին:

---

[1] Տես Моммсен, Римская история, т. III, եջ 61 և Eckhardt, Klio, Bd. X, Heft 2, եջ 208—213:

[2] Տես Klio, Bd. X, 2, եջ 210: Միանգամայն ուղիղ են ու հիմնավոր Եքհարդի առարկությունները Մոմզենի և Ռեյնաքի դեմ, վորոնց մոտ Արածանիի ճակատամարտը չի համապատասխանում աղբյուրների հաղորդած տեղեկություններին, տես Моммсен, Римская история, т. III, եջ 61 և Reinach, Mithridate Eupator, եջ 367:

Արդ՝ ընդունելով վոր հայերի կողմից Արածանիի կռվին մասնակցել եր Տիգրանի միայն թեթևաշարժ հեծելազորը՝ դժվար չե ըստ իս համոզվել, վոր Պլուտարքոսի հաղորդած տեղեկությունները, վոր իբր թե հռոմայեցիներն ամբողջ գիշերը ջարդել ու գերել եյին թշնամուն և վոր իբր թե Միհրդատ Պոնտացին առաջինն եր փախել ռազմադաշտից՝ դիտավորյալ հերյուրանքներ են, վորոնք վոչ միայն չեն հաստատվում, այլև միանգամայն հակասում են Դիոնի արժանահավատ ու անաչառ վկայություններին:

Արածանիի ճակատամարտը տեղի յեր ունեցել 68 թվի սեպտեմբերի կեսերին: Մոտենում եր արդեն Հայաստանի դաժան ձմեռն իր բուք ու բորանով, սակայն հռոմեական զորքը դեռևս վոչ վճռական կռիվ եր ունեցել հայկական զորքի հետ, վոչ էլ վորևե զգալի աջողություն: Ընդհանուր տարածությունը Մշո դաշտից մինչև Արածանիի վերին հոսանքը, այսինքն՝ հին Պատրանս ավանից մինչև Արածանիի գետանցքը Դիդեմի մոտ, ուր գտնվում եր այժմ հռոմեական զորքը, Պեվտինգերյան քարտեզում նշանակված մեծ ճանապարհով, վորը մանրամասն լուսաբանված է աշխարհագրական իմ նոր ուսումնասիրության մեջ՝ ընդամենը մոտ 250 կիլոմետր եր[1], և այդ համեմատաբար փոքր տարածությունը հռոմեական զորքն անցել եր մոտ 2—3 ամսվա ընթացքում: Յեթե հռոմեական աղբյուրները մանրամասն մեզ չեն հաղորդում այս յերկարատև արշավանքի բոլոր յեղելությունները՝ այդ ինքնին արդեն հավանական մի նշան է, վոր այդ դեպքերը նպաստավոր և պատվաբեր չեյին հռոմեական զորքի համար: Սակայն չնայած աղբյուրների լռության՝ կարելի յե վորոհիշյալ աղքատիկ իսկ վկայություններից հետևցնել, վոր Լուկուլլոսի զորքն այդ յերկու կամ յերեք ամսվա ընթացքում արդեն բավական հյուծվել ու թուլացել եր և, ըստ յերևույթին, վերոհիշյալ փոքր գուպարածներում, ինչպես շատ ճիշտ դիտել է Եքհարդը[2], ունեցել եր ավելի մեծ կորուստներ, քան նա կունենար վճռական մեծ ճակատամարտում:

Գետն անցնելուց հետո Լուկուլլոսն առաջնորդեց իր զորքը դեպի Արտաշատ: Սակայն մի քանի որից հետո, ինչպես վկայում

---

[1] Տես «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», Յերևան 1936, եջ 92—114: Տարածությունը *Patransauna-ից մինչև *Tsumbo ցույց է տրված հռոմեական քարտեզում 114 հռոմեական մղոն կամ մոտ 170 կիլոմետր, իսկ *Tsumbo-Ծումբից մինչև գետափը Didyma-Դիդեմի մոտ կլինի մոտ 80 կիլոմետր:

[2] Տես Klio, Bd. X, 2, եջ 207:

և Պլուտարքոսը, զորքը կտրականապես հրաժարվեց առաջ գնալ և պահանջեց յետ դառնալ: Զորքի մեջ ծագած այս ապստամբության, վոր հարկադրել էր Լուկուլլոսին յետ նահանջել Հայաստանից՝ Պլուտարքոսի և Կիկերոնի մոտ տրված են տարբեր բացատրություններ: Պլուտարքոսն ապստամբության պատճառ համարում է այն, վոր սեպտեմբեր ամսին, աշնանային գիշերահավասարի ժամանակ, հանկարծակի ձյուն էր ընկել և Հայաստանում սկսվել էին անժամանակ ցրտերը: Իսկ Կիկերոնը, վորի մոտ զորքի այս ապստամբությունը պարզ կերպով ակնարկված է, բացատրում է, վոր հռոմեական զորքը մերժել էր առաջ գնալ, վորովհետև նա շատ էր հեռացել իր յերկրից և կարոտել էր հայրենիքին:

Համապատասխան այդ վկայությունները մեջ եմ բերում բառացի թարգմանությամբ հունարենից և լատիներից·

1. Պլուտարքոս, Լուկուլլոս, գլ. 31՝

«Այնուհետև Լուկուլլոսը վորոշեց վստահ ու համարձակ առաջ շարժվել դեպի յերկրի ներսը և ընկճել բարբարոսներին: Սակայն աշնանային գիշերահավասարի ժամանակ վրա հասան հանկարծակի ձմեռվա վատ յեղանակները. շատ ձյուն էր գալիս և կամ պարզ յեղանակներին նստում էր յեղյամ և սառույց: Յեվ այս պատճառով ձիերը դժվարությամբ էին խմում գետերի ջուրը, վորը չափից դուրս սառն էր, և նրանք դժվարությամբ էին անցնում գետերի վրայով, վորոնց կարծր սառույցները ճղում և կտրում էին նրանց յերակները: Այդ կողմերի մեծագույն մասը խիտ ծածկված էր ծառերով, անտառապատ էր և ճանապարհները նեղ էին: Զինվորները, վորոնք ձյունով ծածկվում էին ճանապարհին՝ շարունակ թրջվում էին և, վորովհետև թաց տեղերում էին գիշերում՝ իրենց վատ էին զգում: Արդ՝ ճակատամարտից հետո նրանք մի քանի օր հետևեցին Լուկուլլոսին, բայց հետո ընդդիմացան: Սկզբում նրանք խնդրում էին և ուղարկում նրա մոտ տրիբուններին, ապա՝ մեծ աղմուկով հավաքվում էին միասին և, վերջապես՝ սկսեցին գիշերը վրաններում աղաղակ բարձրացնել, վոր նշան էր ապստամբական տրամադրության: Յեվ Լուկուլլոսը պնդում էր, ինարկե, համառորեն ու խնդրում, վոր նրանք մի փոքր էլ համբերեն, մինչև վոր կըվերցնեն Հայաստանում Կարթագենը և կըխորտակեն ամենամեծ թշնամու (այդպես էր նա անվանում Աննիբալին) գործը: Սակայն

չկարողանալով համոզել՝ յետ տարավ նրանց ու անցավ Տավրոսն այլ ճանապարհներով և իջավ Միգդոնիա»:

2. Կիկերոն, Պոմպեյոսի հրամանատարության մասին, IX, 23—24՝

«Ինչ վերաբերում է մեր զինվորներին՝ նրանց աջողվել էր, իրոք, վերցնել մեկ քաղաք, վորը գտնվում էր Տիգրանի թագավորության մեջ, և աջողվել էր նույնպես հաղթություն տանել մի քանի ճակատամարտերում, սակայն այն կողմերի անչափ հեռավորությունը վատ էր ազդել նրանց վրա և հայրենիքի կարոտը սկսել էր նրանց հաղթահարել... Թե ինչ պատահեց հետո՝ այդ մասին յես այլևս չեմ խոսի: Բանը վերջացավ նրանով, վոր մեր զինվորները, առաջ շարժվելու փոխարեն, պահանջեցին յետ դառնալ արագորեն»:

Ապպիանոսը և Կասսիուս Դիոնը տեղեկություններ են տալիս միայն Լուկուլլոսի նահանջի մասին, առանց հիշելու ապստամբության անպատվաբեր փաստը: Ապպիանոսը նահանջի պատճառ է համարում վրա հասնող ձմեռը[1], իսկ Դիոնը վիրավորների մեծ թիվը և սննդամթերքների պակասությունը[2]:

Մոմզենը, Ռեյնաքը, Ֆեռեռոն և ուրիշ պատմաբաններ ընդունելի և արժանահավատ են համարել վերոհիշյալ հաղորդագրություններից, գլխավորապես, Պլուտարքոսի վկայությունը, վորին աղբյուր էր ծառայել Լիվիուսը: Նախապատվություն տալով Պլուտարքոսին՝ նրանք դժբախտաբար աչքաթող են արել Կասսիուս Դիոնին, վորը թեև չի հիշատակել հռոմեական զորքի ապստամբությունը, սակայն նահանջի մասին տվել է ուշագրավ ու միանգամայն վստահելի տեղեկություն: Դիոնին նրա պատմության այս մասում աղբյուր էր ծառայել, անկասկած, Սալլուստիուսը, վորը հռոմեական հնագույն պատմիչների մեջ համարվում է բոլորից լըջմիտը և անաչառը:

Բոլորովին ճիշտ են այս տեսակետից Եքհարդի դիտողությունները[3], վորը հիմնական պատճառ զինվորական ապստամբության համարել է վոչ այնքան անժամանակ ցուրտը, ինչպես այդ մատնանշված է Պլուտարքոսի մոտ, վորքան հռոմեական զորքի մեծ կորուստները, վիրավորների շատությունը և սննդամթերք-

---

1 Տես Միհրդատ., գլ. 87:

2 Տես գր. 36, գլ. 6, 1:

3 Տես Klio, Bd. X, 2. էջ 213—216:

ների պակասությունը, ինչպես այդ պարզ կերպով մատնացույց է արված Դիոնի մոտ։ Իրավացի յե նույնպես և Ասատուրյանը[1], վորը կարծում է, վոր նահանջի բուն պատճառը յեղել է հռոմեական զորքի բարոյալքումը և վհատությունն իր լուրջ անաջողությունների պատճառով։ Յեթե միայն ցուրտը լիներ ապստամբության պատճառը՝ հռոմեական զորքը պետք է, ընդհակառակը, վոչ թե յետ նահանջեր, այլ առաջ գնար դեպի Արտաշատ, վորն արդեն շատ մոտ եր և վորը վոչ միայն կազատեր նրանց ցրտից, այլև կըտար պատերազմական մեծ ավար։

Արտաշատի հեռավորությունը հռոմեական բանակի վերջին ճամբարակայանից կարելի յե ըստ իս ճշգրիտ կերպով վորոշել։ Համաձայն Պեվտինգերյան քարտեզի տարածությունն Արածանիի գետանցքից մինչև Արտաշատ ընդամենը մոտ 170 կիլոմետր է։ Ըստ Պլուտարքոսի՝ Արածանիի ճակատամարտից հետո հռոմեական զորքը Արտաշատի ուղղությամբ առաջ եր շարժվել դեպի յերկրի ներսը և ապստամբության ժամանակ, ինչպես յերևում է նրա նկարագրությունից, դեռևս չեր հասել Արարատյան դաշտը։ Արածանիի ափից նա կարող եր մի քանի օրում գնացած լինել, Պլուտարքոսի մոտ նկարագրված ծանր պայմաններում, առավելն 50—70 կիլոմետր։ Ուրեմն, դժվար չե կռահել, վոր Լուկուլլոսի զորքը, վորը գնում եր Արտաշատ Պեվտինգերյան քարտեզում նշված մեծ ռազմական ճանապարհով ու հին Բագավանի և Արուճի մոտով՝ իր առաջշարժման վերջին օրում գտնվել եր, հավանորեն, ճանապարհի ամենադժվար մասում, այժմյան Կուջաղի կամ Կարվանսարայի լեռնանցքում՝ Արտաշատից ընդամենը մոտ 100 կիլոմետր հեռավորության վրա[2]։

Լուկուլլոսի նահանջի ճանապարհը Հայաստանից դեպի Միջագետք մանրամասն քննության է առնված Եքհարդի աշխատության մեջ[3]։ Այդ ճանապարհը, մատնանշված է, ինչպես վերև տեսանք, Պլուտարքոսի մոտ։ Համաձայն նրա վկայության Լուկուլլոսն իր զորքերը յետ եր տարել վոչ թե վերոհիշյալ հին ճանապարհով, այլ նոր ուղղությամբ։ Նա Տավրոսն անցել եր մի այլ լեռնանցքով և իջել եր Միգդոնիա նոր ճանապարհով։ Եքհարդն այս ճանապարհը յենթադրում է այժմյան Խոյի վրայով

1 «Քաղաքական վերաբերությունններ», եջ 63 և այլն։

2 Տես «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», եջ 17—46։

3 Տես Klio, Bd. X, 2, եջ 226—231։

դեպի Բաշկալե և այնտեղից Ջուլամերկի, Զախոյի և Ջեզիրեյի վրայով դեպի Մծբին։ Ինձ թվում է, վոր նահանջի ճանապարհը, վորը պետք է յենթադրել, անտարակույս, կամ Բերկրիի ձորով և կամ հին Արտազ գավառի միջով՝ դժվար է ճշտիվ վորոշել, վորովհետև բացի Պլուտարքոսից չկան այդ մասին վորևե այլ տեղեկություններ։

Հյուսիսային Միջագետքում, ուր Տավրոսյան լեռներից իջել եր Լուկուլլոսը 68 թվի հոկտեմբեր ամսին՝ դեռևս ամառնային տաք յեղանակներ եյին։ Հայերի ձեռքին եր գտնվում այստեղ Մծբինը, վորը նշանավոր բերդաքաղաք եր և շրջապատված եր կրկնակի՝ արտաքին և ներքին պարիսպներով։ Գերագույն իշխանությունը Մծբինում, վորն ուներ ռազմական ու ստրատեգիական մեծ նշանակություն, Տիգրանը հանձնարարել եր, ինչպես վերև տեսանք, իր յեղբորը Գուրասին։

Արդ՝ ուշագրավ է ու հետաքրքիր, վոր հռոմեական զորքը, վորն ապստամբել եր և չեր ուզեցել գնալ Արտաշատ՝ այժմ պաշարեց Մծբինն առանց վորևե հակառակության։ Սակայն այս պաշարումն[1] առաջին ամիսները չտվեց վոչ մի հետևանք։ Քաղաքը, վորի փաստական հրամանատարն եր ու պաշտպանը հռչակավոր հույն ճարտարապետ Կալլիմաքոսը, ցույց տվեց նույնպիսի ուժեղ դիմադրություն, ինչպես և Տիգրանակերտը։

Քաղաքի պաշտպանները, ինչպես վկայում է Դիոնը, միանգամայն վստահ եյին, վոր հռոմայեցիները ստիպված են լինելու հեռանալ։ Բայց անսպասելի կերպով, անձրևային ու փոթորկալից մի մութ գիշեր, յերբ վոչինչ չեր կարելի նկատել կամ լսել՝ հռոմայեցիներին աջողվեց մոտենալ քաղաքին և տիրել արտաքին պարսպին։ Այնուհետև ներքին պարիսպը ևս հնարավոր չեղավ, մթության ու հորդ անձրևի պատճառով, պաշտպանել նետաձգությամբ ու այրվող նավթով։ Հռոմայեցիները լցրին միջնապարսպային փոսը ցախով և հեշտությամբ վերցրին նաև յերկրորդ պարիսպը։ Պարիսպների գրավումից հետո՝ Գուրասը և բերդապահ զորքը, վորոնք ամրացել եյին միջնաբերդում, անձնատուր յեղան վորոշ պայմանով և ազատ արձակվեցին։ Միայն Կալլի-

1 Պաշարման մասին մանրամասն տեղեկություններ են հաղորդում Պլուտարքոսը և Կասսիուս Դիոնը, տես Պ լ ու տ., Լուկ., գլ. 32 և Դ ի ո ն, գք. 36, գլ. 6—7։

մաքոսը, վորը Մծբինից առաջ աջողությամբ ղեկավարել եր նաև պաշարված Ամիսոսի պաշտպանությունը, համարվեց հանցավոր և շղթայվեց։

Մծբինի առումը Լուկուլլոսի վերջին աջողությունն եր։ Այնուհետև նրա աստղը հետզհետե բոլորովին խավարեց և հռոմեական զորքը, ինչպես կտեսնենք, անփառունակ կերպով հեռացավ Հայաստանից։

15. ՏԻԳՐԱՆԻ ՅԵՎ ՄԻՀՐԴԱՏԻ ՀԱՂԹԱԿԱՆ ԱՌԱՋՇԱՐԺՈՒՄԸ ՅԵՎ ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ՆԱՀԱՆՋԸ

Մինչ հռոմեական զորքը յերկար ու դժվար ճանապարհներով իջնում եր Միջագետք և պաշարել եր այստեղ Մծբինը՝ Միհրդատը և Տիգրանը, փոխանակ հուսաբեկ ու բարոյալքված թշնամուն հալածելու, հարձակվեցին հռոմեական զորամասերի վրա Պոնտոսում և Տիգրիսի հյուսիսակողմում։ Նրանք դարձյալ շարունակեցին վարել տեղային մանր կռիվներ, վորոնք ունեցել եյին աջող հետևանքներ և, ինչպես տեսանք, հյուծել ու անբարոյացրել եյին Լուկուլլոսի գլխավոր բանակը։

Միհրդատը, իր հետ վերցնելով ութ հազար զորք, վորոնցից չորս հազարը հայեր եյին, վոր նա ստացել եր Տիգրանից՝ գնաց Պոնտոս, վորպեսզի վերագրավե իր թագավորությունը, իսկ Տիգրանն աշխատեց վերանվաճել իր բուն թագավորության հարավային շրջանները[1]։ Այստեղ՝ Տիգրիս գետի հյուսիսակողմում, վորը Մեծ Հայաստանի հարավամասն եր՝ Տիգրանը վերագրավեց մի շարք շրջաններ և շրջապատեց ու պաշարեց տեղական ամրություններից մեկը, վորի մեջ պատսպարվել եյին հռոմեական Լուկիոս Փաննիուս զորավարն ու նրա զորքերը։ Փաննիուսին, ինչպես վկայում է Դիոնը[2], Միջագետքից օգնության եր յեկել և ազատել ինքը Լուկուլլոսը։

Նույնպես և Միհրդատը, վորը մտել եր նախ Փոքր Հայքի արևելյան շրջանները, ահաբեկելով այստեղ հռոմայեցիների ցրված ու թույլ ուժերը և կոտորելով մաս առ մաս թշնամիներին՝ մեծ արագությամբ գրավել եր իր թագավորության արևելյան մասերը։ Այստեղից նա կոչ եր արել իր ժողովրդին զենք առնել ու ապստամբել և խոստացել եր ազատել բոլոր պոնտացիներին, վորոնք հռոմայեցիների մոտ աշխատում եյին վորպես ստրուկներ։

1 Տես Ապպիան., Միհրդատ., գլ. 88 և Կասսիուս Դիոն, գք. 36, գլ. 8—9։

2 Տես գք. 36, գլ. 10։

Ժողովուրդը, ինչպես վկայում ե Դիոնը[1], գրկաբաց ընդունում եր և ոգնում Միհրդատին, վորովհետև ատելությամբ լցված եր դեպի հռոմայեցիները ու նրանց դաժան ու հարստահարող իշխանավորները:

Յերբ Միհրդատը Փոքր Հայքից անցավ Պոնտոսի ներքին գավառները՝ նրա դեմ դուրս յեկավ հռոմեական Փաբիուս Հադրիանուս զորավարը: Սակայն Միհրդատի նախկին վարձկան թրակական զորքը և նմանապես նաև պոնտացիները, վորոնք հռոմայեցիներին սպասարկում եյին իբրև ստրուկներ՝ կապ հաստատեցին Միհրդատի հետ, ոգնեցին նրան[2] և տեղի ունեցած ճակատամարտի ժամանակ խմբերով անցան նրա կողմը: Հռոմայեցիները թեև այս ճակատամարտում մեծ կորուստներ եյին կրել, սակայն Հադրիանուսը կարողացել եր աղետալի մարտը դադարեցնել շնորհիվ միայն այն հանգամանքի, վոր թշնամին ստիպված եր մարտադաշտից դուրս տանել Միհրդատին, վորը ծանր վիրավորվել եր[3]: Հռոմեական պարտված զորքի մնացորդները փախան ու ամրացան Կաբիրա բերդաքաղաքում:

Հադրիանուսին ոգնության հասավ Տրիարիուսը, վորը նրան պաշտոնանկ արեց և փոխարինեց[4]: Սակայն սա ևս չկարողացավ դուրս վտարել Պոնտոսից թշնամուն և հարկադրված յեղավ ձմեռել Գազիուրայում՝ դեմ առ դեմ Միհրդատի զորաբանակին, վորը գտնվում եր պոնտական Կոմանայի կողմերում: Միհրդատն ամրացավ այստեղ Իրիս գետի հարավակողմում և աշխատեց նոր ուժեր հավաքել Փոքր Հայքից, վորն ամբողջովին ազատված եր հռոմեական տիրապետությունից: Նմանապես և Տրիարիուսը դիմեց Լուկուլլոսին և, հայտնելով նրան Հադրիանուսի պարտության ու հռոմայեցիների վտանգված դրության մասին՝ խնդրեց նրանից ոգնություն:

Լուկուլլոսը, տեղեկություն ստանալով հռոմեական զորքի անաջողությունների մասին՝ վճռեց Պոնտոսը փրկելու համար դուրս տանել իր զորքը Միջագետքից և հրաժարվել Անդրյեփրատյան իր նվաճումներից: Սակայն նրա լեգեոնները, վորոնք ուրախ ու հանգիստ ապրում եյին ձմեռվա տաք կայաններում՝ հրաժարվեցին արշավանքի դուրս գալ գարնանից առաջ[5]: Այս

1 Գք. 36, գլ. 9, 2:
2 Տես Դիոն, գք. 36, գլ. 9, 3—4:
3 Ապպիանոս, Միհրդատ., գլ. 88:
4 Տես նույնը, գլ. 88:
5 Համեմատե Պլուտ., Լուկուլ., գլ. 34:

արդեն յերկրորդ անգամն եր, վոր հռոմեական զորքերը չեյին հընազանդվում իրենց հրամանատարին և ըմբոստաբար ու ինքնագլուխ խախտում եյին զինվորական կարգապահությունը:

Պետք ե ասել, վոր 68 թվի հայկական անաջող արշավանքից հետո Լուկուլլոսի դրությունը սկսել եր խիստ տատանվել: Հենց հռոմեական-հայկական այս կռիվների ժամանակ Հռոմում ուժեղացել եր նորից դեմոկրատական կուսակցությունը, վորը համառորեն աշխատում եր վարկաբեկել ու տապալել այս հզոր հակառակորդ զորավարին, վորը Սուլլայի համախոհն եր ու կուսակիցը: Դեմոկրատական կուսակցությանը և, գլխավորապես, դրամատերերի ու կապալառուների ագիտացիային պետք ե վերագրել, վոր դեռևս 69/68 թվերին Լուկուլլոսին զրկել եյին Ասիայի ու Կիլիկիայի կուսակալության պաշտոններից: Զայրույթն ավելի ևս սաստկացել եր նրա դեմ 68 թվի անաջող կռիվներից հետո: Նրա հեղինակության անկումը Հռոմում անդրադառնում եր, բնականաբար, զորքի վրա: Լեգեոնարների մեջ արդեն լուրեր եյին պտտում, վոր Հռոմում վորոշված ե Լուկուլլոսին պաշտոնից հեռացնել: Այսպիսով, 68 թվի կռիվներից ու նահանջից հետո, զինվորների սանձարձակությունը շարունակ ուժեղանում եր և նրանց մեջ սաստկանում եյին ըմբոստության ու ապստամբության տրամադրությունները: Զորքն այժմ պահանջում եր, վոր իրեն թույլ տրվի վերադառնալ Իտալիա: Զինվորներից շատերը, վորոնց ծառայության ժամկետը լրանում եր 67 թվին և վորոնք իրենց զինվորության ընթացքում կողոպտել եյին բազմաթիվ հարուստ քաղաքներ ու շրջաններ՝ այժմ այլևս ընչազուրկ պրոլետարներ չեյին, այլ կարողության տեր եյին և ունևոր: Միանգամայն բնական ե, վոր նրանք չեյին ուզում վտանգի յենթարկվել նոր կռիվներում, այլ շտապում եյին վերադառնալ Իտալիա և ապրել այնտեղ կուշտ և անդորր:

Շնորհիվ իր զորքի ընդդիմությանը Լուկուլլոսը, ինչպես տեսանք, ստիպված յեղավ մնալ Միջագետքում 68/67 թվի ամբողջ ձմեռը: Միայն 67 թվի գարնան սկզբին նա թողեց Տիգրանակերտն ու Մծբինը և, անցնելով Յեփրատի աջ կողմը՝ ոգնության շտապեց Պոնտոսին: Դատարկելով Միջագետքը և հարավային Հայաստանը՝ Լուկուլլոսը, ինչպես միանգամայն ճիշտ մատնանշել ե Մոմզենը, հրաժարվում եր, անշուշտ, բոլոր իր փայլուն հույսերից, վոր կապված եյին հայկական արշավանքի հետ[1]:

1 Տես Моммсен, Римская история, III, եջ 63:

Մինչ Լուկուլլոսը Տրիարիուսին ոգնության եր գնում՝ արդեն Պոնտոսում սկսվել եյին պատերազմական գործողությունները։ Տրիարիուսը, վորն ուներ մոտ տասը հազար զորք՝ սկզբում աշխատեց խուսափել ընդհարումից և ամրացավ իր ճամբարում Գազիուրայի մոտ։ Սակայն յերբ Միհրդատն ուզեց պաշարել Դադասա ամրությունը, ուր գտնվում եյին հռոմեական զորքի հափշտակած ավարն ու գույքը՝ Տրիարիուսի զինվորները նրան հարկադրեցին ոգնության գնալ Դադասայի կայազորին։ Դուրս գալով ամրացրած ճամբարից՝ Տրիարիուսը ստիպված յեղավ մարտի բռնվել Միհրդատի հետ Գազիուրայի և Զելայի միջև խիստ վտանգավոր վայրում։ Չնայած վոր հռոմայեցիները ցույց տվին թշնամուն ուժեղ դիմադրություն՝ հայ-պոնտական զորքերը կարողացան հետ մղել հռոմեական հետևազորը մի տղմուտ ձորի մեջ, ուր նա գրեթե ամբողջությամբ կոտորվեց։ Փախուստի եյին դիմել ու ազատվել միմիայն ինքը Տրիարիուսը և հռոմեական հեծելազորը։

Ըստ Ապպիանոսի և Պլուտարքոսի վկայությունների[1] հռոմեական զորքից սպանվել եյին ճակատամարտում 24 ռազմական տրիբուններ, 150 հարյուրապետներ և մոտ 7000 զինվորներ։ Տրիարիուսի այս ծանր պարտության մասին առանձնապես ուշագրավ ե Կիկերոնի վկայությունը, վորը մատնանշում ե, վոր ինքը, հետևելով հռոմեական պատմագիրների որինակին՝ լռություն ե պահպանելու պարտության մասին։ Վերջինս, ասում ե Կիկերոնը, այնքան մեծ եր, վոր գլխավոր հրամանատարը իմացել եր նրա մասին վոչ թե ճակատամարտին մասնակցող լրաբերից, այլ ժողովրդի մեջ պտտող լուրերից[2]։ Սպանվածների դիակները, յերեք տարի անթաղ մնալուց հետո, հողին եր հանձնել Պոմպեյոսը 64 թվին։

Լուկուլլոսը դեռևս կես ճանապարհին եր գտնվում, յերբ նա տեղեկացավ, վոր Տրիարիուսը, վորին նա ոգնության եր գնում՝ ծանր պարտություն եր կրել թշնամուց։ Նա ուզեց վերսկսել ճակատամարտը և վրեժ առնել Միհրդատից Տրիարիուսի պարտության համար, սակայն Միհրդատը մարտը չընդունեց և, նախապատվություն տալով մարտավարության նախկին գործելակերպին՝ գերադասեց սպասել Տիգրանին և վերսկսել նրա հետ միա-

[1] Տես Ապպ., Միհրդ., գլ. 89 և Պլուտարքոս, Լուկուլ., գլ. 35։

[2] Տես De imp. Pompeii, IX, 25։

սին լեռնային փոքր պատերազմը, վորը, ինչպես տեսանք, փայլուն հետևանքներ եր տվել 68 թվի կռիվներում։

Գազիուրայի ու Զելայի կողմերից, ուր պարտություն եր կրել Տրիարիուսը՝ Միհրդատը շտապեց յետ քաշվել Փոքր Հայք, վերցնելով իր հետ այնքան պաշարեղեն, վորքան հնարավոր եր տանել[1]։ Իսկ այն, ինչ վոր դժվար եր տանել, նա վոչնչացրեց, վորպեսզի դժվարացնե թշնամու պարենավորումը։ Ինչպես վկայում ե Կասսիուս Դիոնը[2], նա իր զորքի հետ նահանջել եր Տալավրայի բարձունքները և, ամրանալով այնտեղ՝ սպասում եր Տիգրանի գալստյան։ Յեվ նույն այդ ժամանակ Ատրպատականի թագավոր Միհրդատը, վորը Տիգրանի փեսան եր՝ հանկարծակի հարձակումներով հալածում ու սրի յեր քշում այս ու այն կողմ ցրված հռոմեական փոքր զորամասերը[3]։

67 թվի գարնանը Լուկուլլոսը և նրա զորքը գտնվում եյին Փոքր Հայքում՝ դեմ հանդիման Միհրդատի զորաբանակի։ Իսկ թիկունքից, ինչպես և 68 թվի կռիվներում, նրան սպառնում եր Տիգրանը, վորը վերագրավել եր արդեն իր բուն թագավորության հայկական հարավային յերկրները և պատրաստվում եր ոգնության գալու աներոջը։ Լուկուլլոսի ու նրա զորքի դրությունը խիստ ծանր եր, վորովհետև հայ-պոնտական զորքերն անընդհատ ուժեղանում եյին ու ստանում թարմ զորական ուժեր, մինչդեռ հռոմեական բանակը, վորը շարունակ կորուստներ եր կրել՝ գրեթե չեր ստանում ոժանդակ նոր զորամասեր։

Արդ՝ կարիք ունենալով կորուստների լրացման՝ Լուկուլլոսը Փոքր Հայքից սուրհանդակներ ուղարկեց Կիլիկիայի նորընտիր Կվինտուս Մարկիուս Ռեքս կուսակալի մոտ և խնդրեց նրանից ոգնություն։ Այս վերջինը, վորն այդ ժամանակ գնում եր իր շրջանը՝ արդեն հասել եր Լիկաոնիա և ուներ իր տրամադրության տակ յերեք լեգեոն։ Լուկուլլոսը լիահույս եր, վոր Մարկիուս Ռեքսն իր խնդիրը չի մերժի, վորովհետև նա հետևորդ եր քաղաքական միևնույն կուսակցության և միաժամանակ իր քենակալն եր։ Սակայն այդ միանգամայն զուր հույսեր եյին։ Մարկիուս Ռեքսը մերժեց նրա խնդիրը և պատասխանեց, վոր իր զորքերը չեն համաձայնվում գնալ Հայաստան[4]։

[1] Տես Ապպիան., Միհրդ., գլ. 90։

[2] Գք. 36, գլ. 14, 2։

[3] Տես Դիոն, գք. 36, գլ. 14, 2։

[4] Տես Սալլուստիուս, V, fr. 12 և 13, համեմատե նաև Կասսիուս Դիոն, 36, 15, 1 և 17, 2։

Վատ եյին նաև Հռոմից հասած լուրերը։ Տրիարիուսի պարտության լուրը հռոմայեցիների ականջը հասնելուց հետո՝ Լուկուլլոսի հակառակորդները նոր ուժ ունեցան սաստկացնելու իրենց պայքարը նրա դեմ։ 67 թվի գարնանը նրանք կարողացան հասնել իրենց վերջնական նպատակին։ Ժողովրդական տրիբուն Գաբինիուսի առաջարկությամբ Հռոմում ընդունվեց մի նոր որենք, վորը Լուկուլլոսից յետ եր վերցնում նրա հրամանատարության իրավունքն ընդդեմ Միհրդատի, ինչպես և Բիթանիայի ու Պոնտոսի կուսակալությունները, և տալիս եր այդ իրավունքները նույն տարվա կոնսուլ Մանիուս Ակիլիուս Գլաբրիոնին։ Նույն որենքով արձակուրդ եր տրվում Լուկուլլոսի հրամանատարության տակ գտնվող այն լեգեոնարներին, վորոնց ծառայության ժամկետն արդեն լրացել եր։ Որենքը հակառակողներին սպառնում եր նրանց գույքի բռնագրավմամբ։ Հռոմի այս կարգադրությունները, ինչպես հաղորդում ե Ապպիանոսը[1], իսկույն հրապարակվել եյին ամբողջ Ասիայում։

Այսպիսով Լուկուլլոսը, վորն արդեն վարկաբեկ եր յեղել իր բանակում 68 և 67 թվերի ռազմական անաջողությունների ու պարտությունների պատճառով՝ վերոհիշյալ որենքի հրապարակումից հետո կորցրեց բոլորովին իր վարկն ու հեղինակությունը։ Գտնվելով այսպիսի ծանր դրության մեջ՝ նա տեսավ, վոր իրեն ուրիշ վոչինչ բան չեր մնում անել, քան հանձնել հրամանատարությունը կոնսուլ Գլաբրիոնին, վորն արդեն ժամանել եր Փոքր Ասիա։ Նա խնդրեց այս վերջինին, վոր համաձայն հռոմեական ժողովրդի վորոշման ընդունե իրենից զորքի գերագույն հրամանատարությունը։ Սակայն Գլաբրիոնը ևս, ինչպես և Մարկիուս Ռեքսը, մերժեց նրա խնդիրը և չհամաձայնեց վերցնել իր վրա նրա պատասխանատու պաշտոնը, վորը դարձել եր չափազանց դժվար ու վտանգավոր։

Այսպիսով Լուկուլլոսը, թողնված լինելով ինքն իրեն և վախենալով, վոր Միհրդատն ու Տիգրանն իրեն կարող են շրջապատել Տալավրայի մոտ՝ հրաման տվեց իր զորքին արշավել Տիգրանի դեմ, հույս ունենալով, վոր կաջողվի հանկարծակիի բերել նրա հոգնած զորքը, վորը շտապում եր ոգնության գալ Միհրդատին և արդեն գտնվում եր Յեփրատ գետի մոտ։ Հռոմեական լեգեոնները սկզբում, թվում եր, թե կատարում եյին նրա հրամանը։

[1] Միհրդատ., գլ. 90, համեմատե Սալլուստիուս V, fr. 14 (Kritz)։

Սակայն յերբ նրանք, դուրս գալով Փոքր Հայքից՝ հասան մեծ ճանապարհի մոտ, վորը մի կողմից գնում եր դեպի Յեփրատ գետը, իսկ մյուս կողմից՝ դեպի Գալատիա՝ նրանք հրաժարվեցին գնալ հայերի դեմ և գերադասեցին յետ դառնալ արևմուտք։ Զինվորների մեծագույն մասը, վորոնց ծառայության ժամանակն արդեն լրացել եր՝ հայտնեցին, վոր համաձայն որենքի արդեն իրենք արձակված են ծառայությունից և վոր Լուկուլլոսն այլևս իրավունք չունի իրենց առաջնորդելու։

Այնուհետև, ինչպես վկայում ե Պլուտարքոսը[1], Լուկուլլոսը, տխուր ու հուսահատված, մտնում եր նրանց վրանները, նաև դիմում եր նրանց անհատապես։ Նա լաց եր լինում, աղաչում և մինչևիսկ համբուրում եր նրանց ձեռքերը՝ բայց իզուր։ Հռոմեական զորքը մնաց անդրդվելի ու կտրականապես մերժեց գնալ Տիգրանի ու հայերի դեմ, և Լուկուլլոսը ստիպված յեղավ յետ քաշվել դեպի Գալատիա[2]։ Արձակուրդ ստացած զինվորները համաձայնեցին սակայն մնալ նրա բանակում մինչև ամառվա վերջը և հայտնեցին, վոր յեթե այդ ժամանակամիջոցում թշնամին չերևա ու չկռվի հռոմեական զորքի հետ՝ նրանք այնուհետև իրենց ազատ կհամարեն ու կցրվեն։ Լուկուլլոսը, վորը գոհ պիտի լիներ, վոր արձակուրդավորներն առժամանակ մնում են բանակում՝ հարկադրված յեղավ ընդունելու այդ պայմանները, և 67 թվի ամբողջ ամառը նրա զորքը համաձայն այդ պայմանի կանգնած մնաց անշարժ Գալատիայի արևելյան շրջաններում և, գլխավորապես, Տրոկմերի յերկրում։

Նույն այս 67 թվին, յերբ Լուկուլլոսը խաղալիք ու ծաղրի առարկա եր դառել հռոմեական բանակում՝ Միհրդատը վոչ միայն կարողացել եր տիրել իր ամբողջ թագավորությանը, այլև նրա հեծելազորն արդեն ասպատակում եր Բիթանիայի արևելյան շրջանները, իսկ Տիգրանը, Յեփրատ գետն անցնելուց հետո՝ ներս եր խուժել Կապպադովկիա[3] և իր փեսայի, Ատրպատականի Միհրդատ թա-

[1] Տես Լուկուլ., գլ. 35։

[2] Հռոմեական զորքի անվթար վերադարձը Փոքր Ասիա Մոմզենը համարում ե զինվորական գործում այնպիսի մի հրաշք, վորն իրենից շատ յետ ե թողնում մինչևիսկ Քսենոփոնի նահանջը (տես Римская история, III, եջ 64)։ Մոմզենի այս գնահատականը ակներև մի չափազանցություն ե, վորովհետև Լուկուլլոսը Միջագետքից նահանջել եր Փոքր Ասիա, գլխավորապես, Ծոփքի և Կապպադովկիայի վրայով, վորոնք բարեկամ ու դաշնակից յերկրներ եյին։

[3] Տես Պլուտ., Լուկ., գլ. 35։ Ապպիանոսի մոտ (գլ. 91) Կապպադովկիայի վրա հարձակումը վերագրված ե Միհրդատ Պոնտացուն։

դավորի հետ, նվաճում ու ավերում եր այդ յերկիրը։ Նա նորից կարողացել եր հալածել ու դուրս վտարել յերկրից Կապպադովկիայի Արիոբարզան թագավորին, վորը վոչ մի ոգնություն չեր ստացել վոչ Լուկուլլոսից, վոչ նրա փոխանորդ Գլաբրիոնից և վոչ էլ Կիլիկիայի նոր կուսակալից[1]։

67 թվի ամառը Լուկուլլոսի մոտ յեկել եյին հռոմեական ծերակույտի լիազորները, վորոնց նա խնդրել եր ուղարկել Պոնտոս, վորպեսզի նրանք համաձայն ընդունված կարգերի կազմակերպեին նվաճված յերկրի գործերը։ Սակայն այս լիազորների գալն այժմ, իհարկե, միանգամայն անիմաստ եր։ 67 թվի ամառը հռոմայեցիները Պոնտոսում այլևս չունեյին և վոչ մի թիզ հող և այդ յերկիրը հարկավոր եր վերստին նվաճել զենքի ուժով։

67 թվի ամառվա վերջին Լուկուլլոսի բանակից խմբերով հեռացան արձակուրդ ստացած զինվորները, վորոնց ծառայության ժամանակն արդեն լրացել եր։ Նմանապես և յերիտասարդ զինվորներից շատերը չուզեցին մնալ նրա մոտ և գերադասեցին շարունակել իրենց զինվորական ծառայությունը կոնսուլ Գլաբրիոնի մոտ, վորն, ինչպես տեսանք, ուղարկված եր իբրև Լուկուլլոսի փոխանորդ։ Ապպիանոսի ասելով[2]՝ հռոմեական այս մեծ զորավարի մոտ այժմ մնացել եյին միմիայն աննշան թվով զինվորներ, վորոնք բոլորովին աղքատ եյին և չունեյին փող ճանապարհածախսի համար։

Ինչպես տեսնում ենք, Լուկուլլոսի վարած պոնտական ու հայկական պատերազմները, վոր նա փայլուն կերպով սկսել եր յոթը տարի առաջ, վերջանում եյին այսպիսով բոլորովին անփառունակ կերպով։

«Հենց այսպես,—ասում է Ռեյնաքը,—յոթը տարվա կատաղի պատերազմից հետո՝ դեպքերը պարզապես հանգել եյին դարձյալ նույն մեկնակետին։ Լուկուլլոսի մեծամեծ հաղթությունները չքանում եյին ինչպես մի յերազ։ Հռոմեական արծիվները նույնպիսի արագությամբ, ինչպես նրանք գնացել եյին առաջ՝ յետ դարձան Յեփրատից դեպի Տավրոս և Տավրոսից դեպի Հալիս։ Կապպադովկիան արդեն կորցրած եր, Բիթանիան անդամատված, պրովինցիա Ասիան վտանգված»[3]։

1 Տես Դ ի ո ն, գք. 36, գլ. 17, 1 և Կ ի կ ե ր ո ն, Պոմպեյոսի հրամանատարության մասին, V, 12։

2 Միհրդատ., գլ. 90։

3 Reinach, Mithridate Eupator, եջ 377։

Թե վորքան ծանր դրություն եր ստեղծվել Փոքր Ասիայում 67 թվի վերջերին՝ այդ մանրամասն մատնացույց է արված Կիկերոնի «Պոմպեյոսի հրամանատարության մասին» ճառում։ Իր այդ ճառի մեջ[1] Կիկերոնը նշում է, վոր Բիթանիայում հրդեհված ու վոչնչացված եյին բազմաթիվ գյուղեր և վոր հռոմեական ամբողջ Ասիան սպասում եր, վոր յերկու հզոր թագավորները, վորոնք Հռոմի ամենավոխերիմ թշնամիներն եյին, կըներխուժեն շուտով և կավերեն հռոմեական շրջանները։ Վտանգ եր սպառնում, նրա ասելով, հռոմեական դրամատերերի հարստություններին, վոր նրանք դետեղել եյին պետական հարկերի հավաքման գործում։ Հուսալքվել եյին, ասում է նա, բաժնետերերը և վարձկալական ընկերությունների գործակալները, վորովհետև նրանք գիտեյին, վոր թշնամու ձիավոր ջոկատների ասպատակները կարող եյին իրենց զրկել ամբողջ տարվա յեկամուտից։ Վախենում եյին վարձակալներն անգամ իրենց ստրուկներից, վորոնց նրանք պահում եյին արոտավայրերում ու արտերում, նավահանգստներում ու պահակակետերում։

67 թվին հռոմեական հանրապետության դրությունը ծանր ու աղետալի յեր դառել վոչ միայն հռոմեական Ասիայում, այլև ծովի վրա ու նաև բուն Իտալիայում։ Չափազանց ուժեղացել եյին այդ ժամանակ ծովահենները, վորոնք պարզապես տեր ու տնորեն եյին դառել Եգեյան ու Միջերկրական ծովերի։ Նրանք հարձակվում եյին վոչ միայն առանձին նավերի, այլ նաև ռազմական նավախմբերի վրա։ Նրանք շարունակ կողոպտում եյին ծովափնյա շրջանները և գերի եյին տանում մինչևիսկ ամենաականավոր հռոմեական պաշտոնյաներին ու զինվորականներին։ Հաղորդակցությունը ծովով չափազանց վտանգավոր եր դառել և Իտալիայում ու առանձնապես Հռոմում, վորը հացահատիկ եր ստանում ոտար յերկրներից՝ հացի գները խիստ բարձրացել եյին և սկսվել եր արդեն ահավոր սովը։

Հռոմում զգացին, վոր հանրապետության սովորական պաշտոնեյությունը չի կարողանալու դուրս հանել յերկիրը ճգնաժամային այդ դրությունից, այլ հարկավոր են արտակարգ իշխանություն ունեցող պաշտոնյաներ, վորոնց պետք է տրվեն դիկտատորական լիազորություններ։

Լուկուլլոսի նահանջի հենց ժամանակ, նույն այս 67 թվին, ժողովրդական տրիբուն Գաբինիուսն անցկացրեց Հռոմում իր ա-

1 Տես De imperio Cn. Pompeii, II, 4—5. V, 12, VI, 16:

ռաջարկը, վորով Պոմպեյոսը ստացավ դիկտատորական արտակարգ իրավունքներ, վորպեսզի նա վոչնչացնե ծովահեններին և վերականգնե ծովային հաղորդակցության ճանապարհների անվտանգությունը։

Պոմպեյոսը կարողացավ, իրապես, գրավել ծովահենների ամրությունները և, ջախջախելով նրանց ուժերը՝ հարկադրեց նրանց անձնատուր լինել։ Այնուհետև, 66 թվի սկզբներին, ժողովրդական տրիբուն Մանիլիուսի առաջարկությամբ՝ Պոմպեյոսին տրվեց արտակարգ իշխանություն (imperium majus) արևելյան պատերազմը շարունակելու համար։ Համաձայն այդ օրենքի Արևելքից յետ կանչվեցին Մարկիոս Ռեքսը և Մանիոս Ակիլիոս Գլաբրիոնը և նրանց պաշտոնները հանձնվեցին Պոմպեյոսին։ Այս վերջինը, վորը Լուկուլլոսի վաղեմի հակառակորդն էր, ստացավ այժմ, բացի Գաբինիուսի օրենքով իրեն տրված նախկին լիազորություններից, զորքի բարձրագույն հրամանատարությունն առաջիկա կռիվներում ընդդեմ Միհրդատի և Տիգրանի ու նաև բացարձակ իրավունք պատերազմ հայտարարելու և հաշտություն կնքելու հռոմեական ժողովրդի անունից։

66 թվին ռազմական գործողությունները վերսկսվեցին Արևելքում Պոմպեյոսի առաջնորդությամբ։

16. ՊՈՄՊԵՅՈՍԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՊՈՆՏՈՍ ՅԵՎ ՄԻՀՐԴԱՏԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Յերբ Հռոմում ընդունվում էր Մանիլիուսի վերոհիշյալ օրենքը՝ Պոմպեյոսն ինքը գտնվում էր Կիլիկիայում։ Ստանալով տեղեկություն, վոր իր վաղեմի հույսերը լիովին իրականացել են և վոր իրեն է հանձնված պոնտական ու հայկական պատերազմների վարումը՝ իսկույնևեթ նա սկսեց նախապատրաստվել պատերազմի[1]։ Նա կարգադրեց դաշնակից և ստորադրյալ ասիական իշխանավորներին ու քաղաքներին, վոր ուղարկեն իրեն օգնական զորքեր։ Նրան աջողվեց իր դրոշների տակ հավաքել մինչև իսկ այն արձակուրդավոր զինվորներին, վորոնք հրաժարվել էյին մնալ Լուկուլլոսի բանակում։ Ամենակարճ ժամանակվա ընթացքում նա համակենտրոնացրել էր Կիլիկիայում, բացի Մարկիոս Ռեքսի վերոհիշյալ յերեք լեգեոններից և ասիական օգնական զորքերից, ավելի քան հիսուն հազար նոր զորք։

66 թվի սկզբներին, իր մեծ արշավանքը սկսելուց առաջ, Պոմպեյոսը նախապես աշխատեց, իրեն հատուկ առանձին զգուշավորությամբ, դիվանագիտական պատրաստություններ ևս տեսնել։ Նա ուղարկել էր Միհրդատի մոտ, ինչպես վկայում է Կասսիոս Դիոնը[2], իբր թե բարեկամական բանակցությունների համար փախստակ Միտրոփանեսին։ Սակայն, իրապես, նրա ուղարկած այս դեսպանը գնացել էր Պոնտոս պարզապես հետախուզական ու լրտեսական նպատակներով։ Միևնույն ժամանակ Պոմպեյոսի մի այլ դեսպանությունը գնացել էր նաև Տիզբոն բանակցելու Հրահատ Գ-ի հետ և առաջարկելու, վոր նա հռոմայեցիների հետ դաշն կնքե Պոնտոսի ու Հայաստանի թագավորների դեմ։ Այս դաշինքը գլուխ էր յեկել, ինչպես վկայում է Դիոնը[3], նույն այն պայմաններով, վոր 68 թվին պարթևաց թագավորին առա-

[1] Տես Կասսիոս Դիոն, գք. 36, գլ. 45, 1—2։

[2] Գք. 36, գլ. 45, 2։

[3] Տես գք. 36, գլ. 45, 3։

ջարկել էյին Տիգրանը և Միհրդատը։ Հրահատ Գ-ին խոստում էր տրված, վոր նա կստանա ամբողջ Միջագետքը մինչև Յեփրատ, այսինքն՝ այն յերկրները, վոր նրանից գրավել էր հարավում Տիգրանը։ Միևնույն ժամանակ առաջարկ էր արված Հրահատին, վոր նա, գործակցելով իբրև դաշնակից՝ հարձակվի հայկական թագավորության վրա հարավ-արևելքից։

Դաշինքի կնքման առաջարկը, ինչպես մատնանշվում է պատմագիտական նորագույն ուսումնասիրություններում[1], Հրահատ Գ-ին համոզել էր ընդունել Տիգրան Բ-ի վորդին, Տիգրան Կրտսերը, վորը 66 թվի սկզբներին ապստամբել էր իր հոր դեմ և փախել էր Տիզբոն։ Ինձ թվում է սակայն, վոր տիրող ու ընդհանրացած այս կարծիքը վոչ միայն վիճելի յե, այլև անհավանական։ Կասսիուս Դիոնի համապատասխան վկայության մեջ պարզ կերպով ակնարկված է, վոր վերոհիշյալ դաշինքը Պոմպեյոսի հետ կապված է յեղել Կրտսեր Տիգրանի Տիզբոն գալուց առաջ, և այս վերջինը Հրահատ Գ-ին հորդորած է յեղել միայն իրեն ոգնելու արշավել Հայաստան։

«Իսկ Տիգրանը, Տիգրանի վորդին,—վկայում է Կասսիուս Դիոնը,—վերցնելով իր հետ մեծամեծներից վոմանց, վորոնց հաճելի չէր ծերունու իշխանությունը՝ փախավ Հրահատի մոտ. և յերբ սա մտածում էր, թե ինչ պետք է անել ըստ դաշինքի, վոր կապված էր Պոմպեյոսի հետ՝ համոզեց նրան արշավել Հայաստան»[2]։

Ինչպես տեսնում ենք, 66 թվի սկզբներին քաղաքական դեպքերը դասավորվում էյին վոչ ի նպաստ դաշնակից թագավորների։ Մասնավորապես Միհրդատը, վորի դեմ շուտով արշավանք էր սկսելու Պոմպեյոսը, այլևս չէր կարող հույս դնել վոչ պարթևների վրա, վոչ էլ, առանձնապես, Տիգրանի վրա, վորի յերկրում ծագել էյին ներքին խռովություններ և ապստամբություն։

Ինչպես հաղորդում են Ապպիանոսը և Վալերիուս Մաքսիմուսը, դավադրությունները Տիգրան Բ-ի դեմ Հայաստանում տեղի էյին ունեցել մի քանի անգամ։ Այդ դեպքերը նրանց մոտ պատմված են այնպիսի վիպական մանրամասնություններով[3], վորոնք ըստ իս վիճելի յեն դարձնում նրանց արժանահավատությունը և վորոնք կարող են ընդունվել միայն վորոշ վերապահումներով։ Այս հեղինակների վկայություններից յերևում է, վոր Տիգրանի արքունիքում, վորն ամուսնացել էր Միհրդատի Կլեոպատրա դստեր հետ, սովորական էյին դառել պալատական խարդավանքներն ու արյունահեղ վոճրագործությունները, վորոնք մեծ չափերով առանձնահատուկ էյին, ինչպես հայտնի յե, նաև պոնտական, Սելևկյան և այլ արևելյան արքունիքներին։

[1] Տես Reinach, Mithridate Eupator, էջ 382, Моммсен, Римская история, т. III, էջ 104, Халатьянц, Очерк истории Армении, էջ 208 և ուրիշ.։

[2] Տես Դիոն, գք, 36, գլ. 51, 2։

[3] Տես Ապպիան., Միհր., գլ. 104 և Վալերիուս Մաքսիմուս, գք. 9, գլ. 11։

Տիգրանն ուներ Կլեոպատրայից, ինչպես վկայում է Ապպիանոսը[1], յերեք վորդիներ, վորոնք բոլորն էլ թագավորական իշխանության էյին ձգտում հոր մահից առաջ։ Նրանցից մեծը, Զարեհը[2], հայ իշխանների հետ, վորոնք դժգոհ էյին Տիգրանից, իր հոր դեմ դավադրություն էր կազմել նրան գահընկեց անելու նպատակով։ Դավակիցները, ինչպես պատմում է Վալերիուս Մաքսիմուսը[3], հավատարմության յերդում տալով միմյանց, իրենց աջ ձեռքերից, ըստ տեղական սովորության, արյուն էյին թողնում և ծծում փոխադարձաբար մեկը մյուսից։ Դավաճանությունը սակայն աջողություն չէր ունեցել և Զարեհն ու նրա դավակից ընկերները հաղթվել էյին և սպանվել։ Կլեոպատրայից ծնված Տիգրանի միջակ վորդին, վորի անունը չի պահպանվել, ուզեցել էր նույնպես գրավել հոր գահը, ոգտվելով ուրիշ առիթից։ Ծերունի Տիգրանը վորսի յեր գնացել իր այդ վորդու ու կրտսեր Տիգրանի հետ։ Վորսի ժամանակ նա վայր էր ընկել ձիուց և ուշաթափվել։ Միջակ վորդին, թողնելով իր հորն այդ ծանր վիճակում՝ վերցրել էր նրա թագը և դրել իր գլխին, իսկ կրտսերը, մնալով նրա մոտ՝ խնամել էր նրան և ոգնել։ Ծերունի թագավորը, ուշքի գալով՝ հրամայել էր միջակ վորդուն մահապատժել, իսկ կրտսերին խոստացել էր տալ իր թագն ու գահը։ Սակայն, Տիգրանի Կապպադովկիայում գտնված ժամանակ, ապստամբել էր, ինչպես տեսանք, նաև այս կրտսեր վորդին։

66 թվի սկզբներին Տիգրանը, լուր ստանալով իր վորդու ապստամբության մասին, ստիպված յեղավ ընդհատել իր հաղթական արշավանքը Կապպադովկիայում և վերադարձավ Հայաստան։

[1] Միհրդ., գլ. 104։

[2] Վալերիուս Մաքսիմուսի մոտ (գք. 9, գլ. 11) Տիգրանի այս մեծ վորդին անվանված է Sariaster, վոր համապատասխանում է հայկական Զարեհ (=Zariadris) անվան։

[3] Տես գք. 9, գլ. 11, 3։

Ապստամբ վորդին, վոր պատերազմ եր սկսել իր հոր դեմ՝ պարտություն կրեց, փախավ դավադիր հայ մեծամեծների հետ Տիզբոն և այնտեղ ամուսնացավ պարթևների թագավոր Հրահատ Գ-ի դըստեր հետ[1]։

Կրտսեր Տիգրանի այս ապստամբությունը Պոմպեյոսի արշավանքի ճիշտ նախօրյակին վոչ միայն մեծապես թուլացրեց դաշնակից թագավորների դիմադրական ուժը, այլև պատճառ դառավ նրանց բարեկամական հարաբերությունների վատացման։ Ծերունի Տիգրանը, ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը[2], կասկածում եր, վոր իր վորդուն գրգռողը և ապստամբության դրդողը հենց ինքը Միհրդատն է։ Նրա կասկածները, իսկապես, վորոշ հիմք ունեյին։ Տիգրանը, լինելով դաշնակից Միհրդատի, վարում եր, ինչպես վերև տեսանք, իր սեփական ու ինքնուրույն քաղաքականությունը։ Յեվ Միհրդատին ձեռնտու չեր, իհարկե, հայկական գահի վրա տեսնել իր յերիտասարդ թոռին, վորին նա կըկարողանար իր ձեռին խաղալիք դարձնել։

66 թվի գարնանը Պոմպեյոսը Կիլիկիայի ու Կապադովկիայի պաշտպանության համար թողեց Մարկիուս Ռեքսի յերեք լեգեոնները և ինքն իր հավաքած զորքերով առաջ շարժվեց դեպի Գալատիա, վորպեսզի փոխարինե Լուկուլլոսին և ընդունե նրանից զորքի գերագույն հրամանատարությունը։ Յերկու զորավարների հանդիպումը տեղի ունեցավ, ինչպես հաղորդում է Ստրաբոնը[3], Դանալա ամրոցում, վորը գտնվում եր Տրոքմերի յերկրում։ Թեև Լուկուլլոսի և Պոմպեյոսի ընդհանուր բարեկամներն աշխատեցին հաշտեցնել նրանց իրար հետ, սակայն, իրապես, նրանց տեսակցությունը վերջացավ փոխադարձ անարգանքով ու վիրավորանքներով։ Պոմպեյոսն անվավեր հայտարարեց Լուկուլլոսի կարգադրությունները, վոր արված եյին իր ժամանումից հետո, վերցրեց նրանից գրեթե ամբողջ զորքը և թողեց նրան միայն 1600 զինվոր, վորոնք Լուկուլլոսի հետ գնացին Իտալիա։ Վերադառնալով Հռոմ՝ Լուկուլլոսը, ինչպես հայտնի յե, այլևս քաղաքական վորևե դեր չկատարեց, այլ վարեց այնտեղ անգործ ու շռայլ կյանք և հայտնի յեղավ իր քեֆերով ու կերուխումով՝ «Լուկուլլոսյան» կոչված՝ «փարթամ խնջույքներով», վորոնց հա-

1 Տես Ա պ պ ի ա ն ո ս, Միհրդատ., գլ. 104, Դ ի ո ն, գք. 36, գլ. 51, 1. համեմատե նաև G u t s c h m i d, Geschichte Irans, էջ 83։

2 Գք. 36, գլ. 50, 1։

3 Տես XII, 5, 2 (567)։

մար նա ուներ անչափ հարստություններ, վոր իր հետ տարել եր կողոպտված Պոնտոսից ու Հայաստանից։

Տրոքմերի յերկրից, վորը սահմանակից եր Միհրդատի թագավորության, Պոմպեյոսն իր ամբողջ բանակով, վորը բաղկացած եր ավելի քան հիսուն հազար միայն բուն հռոմեական զորքից[1], մտավ Պոնտոս, իսկ նավատորմիղը, վորը բաղկացած եր մոտ 270 նավից, կարգադրություն ստացավ վերահսկել ծովափնյա շրջանների վրա և նեցուկ լինել ցամաքային զորքի արշավանքին։ Պոմպեյոսի զինական այս մեծ ուժերի դեմ Միհրդատը, վորի յերկիրն ավերվել ու ուժասպառ եր յեղել Լուկուլլոսի արշավանքների ժամանակ՝ կարողացել եր հավաքել ու դուրս բերել ընդամենը մոտ 30.000 հետևազոր և 2—3000 հեծելազոր[2]։ Հայաստանից նա այլևս չեր կարող օգնություն ստանալ, վորովհետև ծերունի Տիգրանի դեմ պատերազմ եյին սկսել Հրահատ Գ-ը և Կրտսեր Տիգրանը։

Թողնված լինելով ինքն իրեն և տեսնելով, վոր պատերազմի վախճանը թշնամու զորքի թվական մեծ առավելությամբ գրեթե կանխորոշված է՝ Միհրդատն ուզեց Պոմպեյոսի հետ հաշտություն խոսել առանց պատերազմի և ուղարկեց նրա մոտ իր դեսպաններին։ Սակայն Պոմպեյոսի առաջարկած պայմաններն այնքան ծանր եյին, վոր համաձայնությունը գլուխ չեկավ։ Պոմպեյոսը պահանջ եր դրել, վոր Միհրդատը հանձնե իրեն պոնտական զորքի մեջ գտնվող փախստականներին ու նաև ինքը անձնատուր լինի առանց վորևե պայմանի[3]։

66 թվի գարնանը վերսկսվեց Պոնտոսում պատերազմը Միհրդատի դեմ։ Ինչպես 68—67 թվերին, Միհրդատը դարձյալ վարեց պարտիզանական լեռնային պատերազմ, վորը, ինչպես տեսանք, մեծ աջողությամբ կիրառվել եր Լուկուլլոսի դեմ։ Նա շա-

1 Պոմպեյոսի զորքի թիվը Մոմզենը յենթադրում է քառասուն կամ հիսուն հազար, չհաշված դաշնակիցների օգնական զորամասերը (տես Римская история, III, էջ 104)։ Ռեյնաքը բուն հռոմեական զորքի թիվը հաշվում է 60,000 (տես Mithridate Eupator, էջ 382)։ Սխալ է, անտարակույս, Ֆեռերոյի մատնանշած 30,000 թիվը, վորովհետև այդ թիվը չի հիշատակված Դիոնի մոտ, վորի վկայության վրա նա հիմնվում է (տես Величие и падение Рима, т. I, էջ 212)։

2 Տես Ա պ պ ի ա ն., Միհրդ., գլ. 97 և Պ լ ու տ., Պոմպեյոս, գլ. 32։ Ինձ թվում է, վոր Միհրդատի հեծելազորի փոքր թիվը, վոր մատնացույց է արված աղբյուրների մեջ՝ կարող է վիճելի համարվել, վորովհետև 67 թվի կռիվների ժամանակ նա ուներ, ինչպես տեսանք, ութը հազար հեծելազոր։

3 Տես Ա պ պ ի ա ն ո ս, Միհդ., գլ. 98 և Դ ի ո ն, գք. 36, գլ. 45, 3—4։

ռունակ չէր քաշվում, հարկադրում էր Պոմպեյոսին իրեն հետապնդել, հարձակվում էր հանկարծակի, վնաս էր հասցնում թշնամուն և, ավերելով իր սեփական յերկիրը՝ աշխատում էր դժվարացնել հռոմեական զորքի պարենավորումը[1]։

Հոգնելով այս անվերջ ու ապարդյուն չերթերից՝ Պոմպեյոսը հարկադրվեց դադարեցնել թշնամու հետապնդումը և ներս խուժեց Փոքր Հայք, վորտեղ գրեթե չկային պոնտական զորքեր, բայց կային իր մեծ զորքի համար պարենի առատ պաշարներ։ Սակայն Միհրդատը ևս, ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը[2], շտապեց նույնպես գնալ Փոքր Հայք, ամրացավ դժվարամատչելի բարձր լեռան վրա և այստեղ ևս աշխատեց խափանել հռոմեական զորքի պարենավորումը։ Պոնտական թռուցիկ ձիավոր ջոկատները, վորոնք շարունակ իջնում էին բաց դաշտ, անընդհատ հարձակվում ու հարվածում էին հռոմայեցիներին և խմբերով բանակ էին բերում իրենց կողմն անցած դասալիքներին։ Շուտով Պոմպեյոսի դրությունը պարենի պակասության պատճառով այստեղ ևս ծանրացավ։ Բայց նրա բախտից Միհրդատը ստիպված յեղավ ինքը հեռանալ իր հարմար դիրքերից, վորովհետև անջրդի այդ վայրերում սպառվեցին նրա ջրի պաշարները։ Պլուտարքոսի ասելով[3]՝ Միհրդատի գրաված հենց նույն այս լեռան զառիվայրերի վրա հայտնաբերվեցին նրա հեռանալուց հետո ջրի առատ աղբյուրներ, վորոնցից օգտվեցին Պոմպեյոսի զորքերը։

Պոմպեյոսը կրնկակոխ հետապնդեց Միհրդատին, վորը նահանջում էր Փոքր Հայքի անտառախիտ ձորերի ու կիրճերի միջով, ուր նա անկարող էր օգտագործել իր հեծելազորը։ Հետապնդման ժամանակ Պոմպեյոսի հետևազորի և հեծելազորի առանձին ջոկատները, դարանամուտ լինելով՝ մեծ կորուստ պատճառեցին Միհրդատի հեծելազորին[4]։ Այս մասնակի պարտությունից հետո՝ Միհրդատը, զգուշանալով Պոմպեյոսի նոր հարձակումներից՝ գրավեց, ինչպես վկայում է Ստրաբոնը[5], «Դաստեյրայի[6] մոտ Անգոլիսենեյի ջրառատ լեռը» և, ամրանալով նոր այս տեղում՝ նորից ուզեց խանգարել հռոմեական զորքի պարենավորումը։

---

1 Տես Դիոն, գք. 36, գլ. 47, 1, համեմատե նաև Ապպ. Միհրդ., գլ. 97։

2 Գք. 36, գլ. 47, 2 և այլն։

3 Պլուտ., Պոմպեյոս, գլ. 32, 2։

4 Տես Փրոնտինուս, II, գլ. 5, 33 և Դիոն, գք. 36, գլ. 47, 4։

5 Տես XII, 3, 28 (555):

6 Օրոսիուսի մոտ Դաստրակուս է անվանված ինքը լեռը (Dastracus mons), տես գք. VI, գլ. 4, 3։

ՊՈՄՊԵՅՈՍ

Սակայն այս անգամ Պոմպեյոսը կանչեց Կիլիկիայից այնտեղ թողնված յերեք հռոմեական լեգեոնները և, ավելացնելով իր զորքի թիվը՝ չորս կողմից, մոտ 22 կիլոմետր տարածության վրա, պահապան պոստերի շղթայով շրջափակ պաշարեց Միհրդատի զորաբանակը և այժմ ինքը դժվարացրեց պարենի մատակարարումը Միհրդատի զորքին[1]: Իսկ հռոմեական զորքը պարենի անհրաժեշտ պաշարներն անարգել կերպով ստանում եր Յեկեղյաց գավառից, վորը գրավել եր Յեփրատի ձախ ափում Պոմպեյոսի զորամասերից մեկը:

Պոնտական զորքը, վորին կարողացել եր Պոմպեյոսը շրջապատել՝ ընկավ այժմ խիստ ծանր դրության մեջ և, մատնվելով սովի՝ հարկադրվեց մորթել մինչևիսկ իր ձիերը: Մնալ նրան Դաստեյրայի մոտ այլևս անկարելի յեր: Ուստի պաշարումից 45 որ հետո՝ Միհրդատը, ինչպես վկայում է Պլուտարքոսը[2], հրամայեց սպանել պոնտական բանակի թույլ ու հիվանդ զինվորներին և խորը գիշերով անցավ իր զորքով, հանդարտ ու լուռ, հռոմեական քնած պահակապոստերի շղթայի միջով և փրկեց իր բանակը սովամահությունից: Հետևյալ առավոտը Պոմպեյոսը շտապ հետապնդեց նրան և յերրորդ որը հասավ նրա յետևից ու նորից նրան շրջապատեց մի նեղ կիրճում: Միհրդատը չկարողացավ այլևս խուսափել ճակատամարտից: Վճռական ու վերջին կռիվը տեղի ունեցավ Միհրդատի հետ Գայլ գետից դեպի հարավ, Ենդերեսից մոտ 10 կիլոմետր հեռավորության վրա գտնվող այժմյան Պյուրկի մոտ, ուր հիմնված եր հետո Նիկոպոլիս քաղաքը:

Հռոմեական զորքը, անցնելով հակառակորդի թիկունքը և գրավելով շրջակա բարձունքները՝ գիշերվա լռության մեջ հանկարծակի սոսկալի մարտական աղմուկ բարձրացրեց և չորս կողմից կարկուտի նման թշնամու վրա թափեց քարեր, նետեր և տեգեր: Ապա հռոմայեցիները ցած իջան բարձունքներից և կոտորեցին պոնտական գրեթե ամբողջ ահաբեկված ու խուճապահար զորաբանակը[3]:

Ինքը Միհրդատն այս անգամ ևս կարողացավ թողնել ճակատամարտի դաշտը և իր զորքի փոքրաթիվ մնացորդներով ու

1 Տես Ապպիանոս, Միհրդ., գլ. 99 և Պլուտ. Պոմպեյոս, գլ. 32, 3:

2 Տես Պլուտ., Պոմպ., գլ. 32, 3 և Փրոնտինոս, I, 1, 7:

3 Ճակատամարտի նկարագրությունը տարբեր կերպ է տրված ղանազան աղբյուրներում, տես Ապպիանոս, Միհրդատ., գլ. 99 և 100, Դիոն, գք. 36, գլ. 48, 3—5 և 49, 1—8 և Պլուտարքոս, Պոմպեյոս, գլ. 32, 3—5:

իր սիրուհու Հիպսիկրատիայի ուղեկցությամբ, վորը տղամարդու շորեր հագած նրան միշտ հետևում եր ու նրա կողքին մարտնչում՝ փախավ Հայաստանի սահմանում գտնվող Սինորիա ամրոցը: Այս անգամ ևս նա հույս ուներ, վոր ապաստան կգտնի Հայաստանում և օգնություն կստանա ծերունի Տիգրանից[1]:

Վերև հիշված Դաստեյրայի տեղադրությունը, ինչպես և Միհրդատի նահանջի ճանապարհը Դաստեյրայից մինչև Սինորիա, սխալ ու խառնաշփոթ կերպով են լուսաբանված պատմագիտական յերկերում: Խառնաշփոթությունները առաջ են յեկել նրանից, վոր սկզբնական աղբյուրները ևս իրար հետ համերաշխ չեն և տալիս են հաճախ տեղագրական անհավաստի ու անճշգրիտ տեղեկություններ: Այս մութ խնդիրը, ինձ թվում է, աջողվել եր ինձ լուծել և պարզել աշխարհագրական իմ ուսումնասիրության մեջ, վորը նվիրված եր Պեվտինգերյան քարտեզի մանրախույզ քննությանը[2]:

Արդ՝ ի նկատի ունենալով, վոր առաջադրած իմ նոր պարզաբանումները վոչ միայն կարևոր են Փոքր Հայքի և Հայաստանի պատմական աշխարհագրության համար, այլև ճշտում են Պոմպեյոսի արշավանքների պատմությունը և վորոշում նրա զորքերի տեղաշարժումների հին ճանապարհները՝ ավելորդ չեմ համարում այստեղ ևս կանգ առնել այդ խնդրի վրա և քննության առնել սկզբնաղբյուրների վկայությունները ավելի հանգամանորեն, քան այդ արված եր աշխարհագրական իմ աշխատության մեջ:

Կարևոր այդ վկայությունները, վոր վերաբերվում են այս խնդրին, թարգմանաբար մեջ եմ բերում ամբողջությամբ, ընդգծելով այն հատվածները, վորոնց մեջ տեղեկություններ են հաղորդված Դաստեյրայի, Սինորիայի և Նիկոպոլսի մասին:

1. *Ստրաբոն* XII, *3, 28 (Լայպցիգ 1915)*՝

«Յերբ զորեղացավ Միհրդատ Եվպատորը՝ նա տիրեց Կոլխիդային և այն բոլոր յերկրներին, վոր նրան հանձնել եր Անտիպատրը՝ Սիսիդի վորդին: Նա այնքան հոգս եր քաշում այդ տեղերի մասին, վոր կառուցել եր նրանց մեջ յոթանասուն և հինգ ամրություններ, վորոնց մեջ դրել եր իր գանձերի մեծագույն մասը: Դրանցից ամենանշանավորներն եյին Հիդարան, Բասգոյդարիզան, նաև Սինորիան, վորը սահմանակից եր Մեծ Հայքին. և հենց այդ պատճառով Թեոփանեսն անվանել եր այդ տեղը Սինորիա: *Իսկ Պարխադրեսի ամբողջ լեռնային շրջանը, լինելով ջրառատ և անտառաշատ և անջատված լինելով զանազան կողմերից թեք ձորերով և սեպ լեռնագագաթներով՝ այնպիսի մեծ հարմարություններ ունի, վոր այնտեղ եր հենց շինել Միհրդատը գանձերի պահեստատեղերի մեծագույն մասը. և, իրապես, վերջ ի վերջո, ինքը ևս, յերբ նրան հետապնդում եր Պոմպեյոսը, ապավինեց պոնտական թագավորության այս հեռավոր կողմերը. և* գրավելով Դաստեյրայի մոտ Անգոլիսենեյի[1] ջրառատ լեռը (մոտ եր նաև Յեփրատը, վորը բաժանում եր Ակիլիսենեն Փոքր Հայքից)՝ *մնաց այստեղ մինչև վոր, պաշարված լինելով՝ հարկադրված յեղավ փախչել լեռներով Կողքիս և այնտեղից Բոսփոր:* Իսկ Պոմպեյոսը այս տեղի մոտ հիմնեց Փոքր Հայքում Նիկոպոլիս քաղաքը, *վորը մնում է մինչև այժմ և շատ լավ բնակված է»:*

2. *Պլուտարքոս, Պոմպեյոս, գլ. 32, 3*՝

«Այնուհետև [Պոմպեյոսը], բանակ դնելով նրա շուրջը՝ շրջափակ պաշարեց նրան: Յեվ նա [Միհրդատը], 45 որ պաշարմանը դիմանալուց հետո՝ իր զորքի ամենաուժեղ մասի հետ աննկատելի կերպով փախավ, իսկ անպետքներին և հիվանդներին սպանել տվեց: Սակայն հետո նրա յետևից հասավ Յեփրատի մոտերքում *Պոմպեյոսը և բանակեց նրա մոտ. բայց յերկյուղ կրելով, վոր նա* կարող է իսկույնեք անցնել Յեփրատը՝ *առաջնորդեց նրա դեմ կես գիշերին իր սպառազինված զորքը»:*

3. *Նույնը, Պոմպեյոս, գլ. 32, 6—7*՝

«Վերջապես նրանք [փախչելիս] հասան Սինորա ամրությունը, *վորը լեփ լեցուն եր թագավորական փողերով և թանգարժեք իրերով: .....Այստեղից նա [Միհրդատը] շարժվեց Տիգրանի մոտ Հայաստան, սակայն յերբ սա մերժեց և նրա գլխի համար հայտարարեց հարյուր տաղանդ վարձատրություն՝* նա անցավ Յեփրատի ակունքների մոտով *և փախավ Կողքիսի միջով»:*

---

[1] *Տես Պլուտ., Պոմպ., 32, 6—7, Վալերիուս Մաքսիմուս,* IV, *6, 2 և Ապպիանոս, Միհրդատ., գլ. 101:*

[2] *Տես «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», եջ 68—73:*

[1] *Մեյնեքեյի ընագիրը փոխանակ ձեռագրական* Ἀγγολισηνῆς *ընթերցվածի ունի* Ἀκιλισηνῆς *համաձայն Քսիլանդերի ուղղման, տես* Markwart, Die Genealogie der Bagratiden. *եջ 60, ծանոթ.:*

4. Կասսիուս Դիոն, գք. 36, գլ. 48, 1՝

«Արդ՝ Միհրդատը, յերբ այդ ամենը աջող անցավ՝ գրավեց առժամանակ Արմենիայի Անաhիտյան յերկիրը, վորը նվիրված եր մի ինչ վոր համանուն աստվածության, և այնուհետև այստեղ նրան հարեցին ուրիշ շատերը։ Իսկ յերբ Պոմպեյոսին եկ միացան Մարկիուսի զինվորները՝ նա վախեցավ և այլևս չմնաց այդ յերկրում, այլ խուսափելով անհնկատելի կերպով դուրս յեկավ գիշերով և ապա, առաջ գնալով գիշերները՝ ճանապարհվեց դեպի Տիգրանի Հայաստանը»։

5. Նույնը, գք. 36, գլ. 50, 3՝

«[Պոմպեյոսը] քաղաք հիմնեց այն տեղում, վորտեղ հաղթություն եր տարել[1], և տվեց իր վիրավոր ու հասակավոր զինվորներին։ Այնտեղ նրանց հետ միասին բնակություն հաստատեցին նաև ցանկացողները հարևան տեղերից։ Յեվ նրանք գոյություն ունեն և այժմ և անվանվում են Նիկոպոլսեցիք»։

6. Ապպիանոս, Միհրդատ., գլ. 101՝

«Միհրդատը, գցելով իրեն իր միայն թիկնապահների հետ դեպի Թեք լեռները՝ փախավ ու ազատվեց, և ճանապարհին նրան պատահեցին վոմանք նրա վարձկան հեծելազորից և մոտ յերեք հազար հետևակներ, վորոնք ուղեկցեցին նրան մինչև Սինորեգա ամրոցը»։

7. Որոսիուս, գք. VI, գլ. 4, 3՝

«Պոմպեյոսը... Փոքր Հայքում Դաստրակուս լեռան մոտ շրջափակ պաշարեց թագավորի [Միհրդատի] բանակը»։

Մեջ բերված այս վկայություններում հիշատակված են, ինչպես տեսնում ենք, հռոմեական-պոնտական կռիվների և Միհրդատի նահանջի յերեք գլխավոր վայրերը Փոքր Հայքում՝ Դաստեյրան, Նիկոպոլիսը և Սինորիան։ Այս յերեք վայրերից յեվրոպական պատմագիտության մեջ անվիճելի կերպով վորոշված է միմիայն Նիկոպոլսի տեղադրությունը։ Նա գտնվել է, ինչպես վերև ասացինք, այժմյան Պյուրկի մոտ, ուր հայտաբերված են արձանագրություններ, վորոնց մեջ պարզ կերպով հիշատակված է Նիկոպոլիս քաղաքի անունը[2]։

[1] Համեմատե նաև Ապպիանոս, Միհրդատ., գլ. 105։

[2] Տես Taylor J. G., Journal of a tour in Armenia, Kurdistan and Upper Mesopotamia, Journ. of Roy. Geogr. Soc., London 1868, t. 38, եջ 302։

Յեվրոպական գիտնականներից շատերը՝ Ռեյնաքը, Մարկվարտը և ուրիշները՝ կարծում են սակայն, վոր Նիկոպոլիսը հիմնըված է յեղել վոչ թե գիշերային ճակատամարտի և Պոմպեյոսի վճռական հաղթության վայրում, ինչպես վկայում են քաղաքի անունը (Νικό—πολις = «Հաղթության քաղաք») և Կասսիուս Դիոնի ու Ապպիանոսի վերոհիշյալ ցուցումները (վկ. 5), այլ Դաստեյրայի տեղում, ինչպես այդ մատնանշված է վերև մեջ բերված Ստրաբոնի վկայության մեջ[1] (տես վկ. 1)։ Այս յենթադրությունը հիմնավորելու համար Մարկվարտը մատնացույց է անում, վոր նաև Պլուտարքոսի վերոհիշյալ վկայության մեջ (վկ. 2) գիշերային կռվի տեղը ցույց է տրված «Յեփրատ գետի մոտերքում»։ Ուստի և նա կարծում է, վոր Միհրդատի վերջնական պարտության տեղը պետք է լիներ Յեփրատ գետի մոտ Յեկեղյաց հին գավառում։

Ռեյնաքի ու Մարկվարտի յենթադրության դեմ, վորը առաջին հայացքից համոզիչ է թվում, գլխավոր առարկությունը կարող է, անշուշտ, այն լինել, վոր Ստրաբոնի վերոհիշյալ մութ ու յերկդիմի վկայությունից դժվար է անել վորևէ հաստատուն հետևություն։ Ընդհակառակը, Ստրաբոնն իր այդ վկայության մեջ հենց ինքը, ինչպես տեսանք, հաղորդում է, վոր Դաստեյրային մոտ է գտնվել «Յեփրատ գետը, վորը բաժանում եր Ակիլիսենեն Փոքր Հայքից»։ Յեվ ուշագրավ է, վոր Ստրաբոնի այս ցուցմանը կատարելապես համապատասխանում է վոչ թե Ռեյնաքի և Մարկվարտի, այլ Ադոնցի նոր յենթադրությունը, վորն ուշադրության չե առնվել, դժբախտաբար, նորագույն ուսումնասիրություններում։

Ադոնցի կարծիքով[2]՝ Ստրաբոնի հիշած Դաստեյրան համապատասխանում է այժմյան Դոստալին, վորը գտնվում է Կամախի և Ակնի միջև Յեփրատի աջ ափի մոտ. ուրեմն՝ հենց համաձայն Ստրաբոնի վկայության՝ թե Յեփրատ գետի մոտ և թե Փոքր Հայքի ու Ակիլիսենեյի սահմանում։ Պետք է ի նկատի ունենալ, վոր Միհրդատի ու Տիգրանի ժամանակ Ակիլիսենեն յեղել է, ինչպես միանգամայն ճիշտ յենթադրում է Ադոնցը, խիստ ընդարձակ մի շրջան և բովանդակել է իր մեջ վոչ միայն Հին Հա-

[1] Տես Reinach, Mithridate Eupator, եջ 385, ծան. 1 և Markwart, Die Genealogie der Bagratiden, եջ 59—63։

[2] Տես Армения в эпоху Юстиниана, եջ 54։

յաստանի Յեկեղյաց գավառը, այլ, հավանորեն, նաև Դարանաղին, Մանանաղին, Աղյունը և Մզուրը[1]։

Որ Դաստեյրայի ու այժմյան Դոստալի նույնացումը կարելի չէ աչող և ընդունելի համարել՝ այդ ցույց են տալիս նաև ներքև մեջ բերված մեր դիտողությունները Դաստեյրայի հեռավորության մասին Նիկոպոլսից։

Կարևոր է նախ մատնանշել, որ այժմյան Դոստալը հիշատակված է նաև Տայլորի մոտ Զիմարայից մոտ 10—12 կիլոմետր հեռավորության վրա և այժմյան Պյուրկից (=Նիկոպոլիս) Զիմարա տանող ճանապարհի վրա, որը մանրամասն նկարագրված է նրա «Որագիր մի պտույտի մասին Հայաստանում էն» աշխատության մեջ[2]։ Տայլորի նկարագրած այս ճանապարհը պարզապես Պեվտինգերյան քարտեզի Նիկոպոլիս—Զիմարա ճանապարհագիծն է, որի ուղղությունը ճիշտ է որոշված թե Ադոնցի մոտ և թե Կոնրադ Միլլերի բացատրական քարտեզում[3]։ Պեվտինգերյան քարտեզում Նիկոպոլսի հեռավորությունը Զիմարայից ցույց է տրված 75 հռոմեական մղոն կամ մոտ 111 կիլոմետր։ Պարզ է, ուրեմն, որ տարածությունը Պյուրկ—Նիկոպոլսից մինչև այժմյան Դոստալ պետք է լիներ մոտավորապես 100 կիլոմետր և Դոստալից մինչև Զիմարա մոտ 11 կիլոմետր։

Այս տարածությունները մի նոր ապացույց են, անշուշտ, Դաստեյրայի ու Դոստալի նույնության։ Պոմպեյոսը, հետամտելով Միհրդատին, որը նահանջելու յեր, բնականաբար, արագացրած յերթով, կարող եր հասնել Դաստեյրա-Դոստալից Նիկոպոլիս-Պյուրկ ճիշտ և ճիշտ միայն յերրորդ օրը, ինչպես այդ վկայում են հին հեղինակները։

Ճիշտ պետք է համարել ըստ այսմ և Կասսիուս Դիոնի ու Ապպիանոսի հաղորդած տեղեկությունը, որ Նիկոպոլիսը հիմնված է յեղել ո՛չ թե Դաստեյրայում, ինչպես յենթադրում են Ռեյնաքը և Մարկվարտը, այլ Պոմպեյոսի հաղթության և Միհրդատի վերջնական պարտության տեղում, այսինքն՝ Դաստեյրայից մոտ 100 կիլոմետր հեռավորության վրա գտնվող այժմյան Պյուրկում։

1 Տես նույնը, էջ 54—55։

2 Տես Journal of the Royal Geographical Society, vol. 38, London 1868, նաև նույն աշխատության Астафьев-ի ռուսերեն թարգմանությունը՝ „Материалы для географии Азиятской Турции", Тифлис 1874, прил. II к тому II „Изв. Кавк. Отдел. Рус. Геогр. Общества":

3 Տես K. Miller, Itineraria Romana, Stuttgart 1916, էջ 679—680։

Վերոհիշյալ վկայությունների մեջ հիշատակված վայրերից յերրորդի, Սինորիայի, տեղադրությունը ևս քննված է ու որոշված իմ պատմական-աշխարհագրական նույն աշխատության մեջ[1]։

Սինորիա ամրությունը, ինչպես մատնացույց է արել Կոնրադ Միլլերը, համապատասխանում է, անշուշտ, Պեվտինգերյան քարտեզի Սինարա կայարանին։ Սակայն նրա և Ռ. Կիպերտի մոտ[2] սխալ է որոշված սրա տեղադրությունը։ Միլլերը Սինարայի տեղը յենթադրում է այժմյան Սընկառիճում, իսկ Կիպերտն այժմյան Ալաջայում։ Սակայն, իրապես, նա գտնվել է, ինչպես մանրամասն ցույց է տրված վերոհիշյալ իմ աշխատության մեջ, այժմյան Գաղտառիճից, որը համապատասխանում է Պեվտինգերյան քարտեզի *Chalchdiaris կայարանին, 15 հռոմեական մղոն կամ մոտ 22 կիլոմետր հեռավորության վրա և ըստ այս տարածության ընկնում է Գաղտառիճից Սատաղ տանող ճանապարհի վրա, Աշկալայից մոտ 15 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք՝ Յեփրատ գետի մոտ։ Սինորիայի մասին կարևոր է ու եական Ստրաբոնի վերոհիշյալ վկայությունը (տես վերև վկ. 1), որից յերևում է, որ նա նշանավոր մի ամրություն է յեղել Միհրդատի թագավորության մեջ և գտնվել է Պոնտոսի ու Մեծ Հայքի սահմանում։ Այս վկայությունից, ինչպես տեսնում ենք, կարելի չէ յեզրակացնել, որ Տիգրան Բ-ի ժամանակ Հայաստանի հարավ-արևմտյան սահմանը հասնում եր մինչև այժմյան Կոպ-Դաղի լեռները, որոնց հարավ-արևելյան ստորոտներում, Յեփրատ գետի մոտ, գտնվել է Սինորիա նշանավոր ամրությունը՝ Պեվտինգերյան քարտեզի Սինարա կայարանը։

Որ մեր յեզրակացությունը Սինորիայի տեղադրության մասին ստույգ է և անվիճելի՝ այդ հաստատում են Մարկվարտի նոր դիտողությունները, որ մեջ են բերված նրա վերոհիշյալ աշխատության մեջ[3]։ Մարկվարտը ևս հանգել է այժմ նոր յեզրակացության, որ Միհրդատի և Տիգրանի ժամանակ Դերջան գավառը պատկանել է, հավանորեն, Միհրդատին, իսկ սրա վերջնական պարտությունից հետո, «Ակիլիսենեն և Դերջանը և թերևս նաև Կարենիտիսը» կցվել են Հայաստանին։ Նրա յենթադրությունը հավանական չէ, ինչպես տեսնում ենք, Կարենիտիս գավառի

1 Տես «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», էջ 66—68։

2 Տես K. Miller, Itineraria Romana, էջ 676—677 և R. Kiepert, Atlas von Kleinasien in 24 Blättern, 1902—1906։

3 Տես Die Genealogie der Bagratiden, էջ 63։

նկատմամբ, վորն ըստ մեր յեզրակացության պատկանել է մինչև Սինորիան ու Կոպ-Դաղը Հայաստանին։

Տեղագրական վերոհիշյալ խնդիրների վրա մենք անհրաժեշտ համարեցինք ընդարձակ կերպով կանգ առնել, վորովհետև այդ մասում պատմագիտական յերկերը կարոտ են հիմնական սրբագրության։ Մեր նոր ուսումնասիրությամբ Միհրդատի նահանջի ճանապարհը Դաստեյրայից մինչև Սինորիա պարզ կերպով վորոշվում է Պեվտինգերյան քարտեզի և Անտոնինոսի ճանապարհացույցի Zimara-Nikopolis և Nikopolis-Satala հին ուղիգծերով, վորոնք քննված են ու լուսաբանված Ադոնցի և իմ պատմական-աշխարհագրական աշխատություններում[1]։

Սինորիա ամրոցը, ուր փախել էր Միհրդատն իր զորքի աննշան մնացորդներով՝ նրա խոշորագույն գանձապահեստներից մեկն էր։ Այստեղ պահվում էյին, ինչպես վկայում են Ապպիանոսը և Պլուտարքոսը[2], վեց հազար տաղանդ դրամ (=մոտ 25 միլիոն վոսկի մարկ կամ $12^{1}/_{2}$ միլիոն վոսկի ռուբլի) և թանգարժեք իրեր ու շորեր։ Սինորիայում Միհրդատը բաժանեց իր զորքին փող և նվերներ ու Տիգրանի մոտ ուղարկեց այստեղից սուրհանդակներ խնդրելու նրանից հյուրընկալություն։ Սակայն, ինչպես վերև հիշեցինք, ծերունի Տիգրանը կասկածում էր, և վոչ առանց հիմքի, վոր իր վորդուն դրդողն ու իր դեմ բարձրացած ապստամբության գլխավոր դրդիչն ինքը Միհրդատն է։ Ուստի և նա վոչ միայն մերժեց նրան ընդունել և ոգնել, այլև ձերբակալեց սրա ուղարկած սուրհանդակներին և ուղարկեց նրանց Պոմպեյոսին։ Նա ազդարարների միջոցով հայտարարեց, բացի այդ, վոր Միհրդատի գլխի համար նա սահմանել է 100 տաղանդ դրամավարձ (=մոտ 420.000 գերմանական վոսկի մարկ կամ 210.000 վոսկի ռուբլի)։

Ֆրանսական գիտնականներ Տուրնեբիզը և Մորգանը, ինչպես և Մոմզենը, միանգամայն իրավացի կերպով յենթադրում են[3], վոր Միհրդատի փախուստի հենց ժամանակ Տիգրանը սկսել էր արդեն վարել Պոմպեյոսի հետ հաշտության բանակցություններ։

[1] Տես Адонц, Армения в эпоху Юстиниана, էջ 75—80 և իմ աշխատությունը՝ «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», էջ 66—81։

[2] Ապպիանոս, Միհրդատ., գլ. 101 և Պլուտ., Պոմպեյոս, գլ. 32, 6։

[3] Տես Fr. Tournebize, Histoire politique et religieuse de l'Arménie էջ 774, J. de Morgan, Histoire du peuple arménien, Paris 1919, էջ 78 և Моммсен, Римская история, т. III, էջ 107։

Ըստ յերևույթին, Միհրդատը նաև ինքն այլևս հույս չուներ ընդունելություն գտնելու իր փեսայի մոտ Հայաստանում։ Առանց Տիգրանից պատասխանի սպասելու՝ նա իր փոքրաթիվ զորաբանակով առաջ շարժվեց Սինորիայից դեպի հյուսիս։ Նա հույս ուներ, վոր, հասնելով Սև ծովի հյուսիսային ափերը՝ իր Բոսփորյան նախկին թագավորությունից կըկարողանա դուրս վտարել իր ապստամբ վորդուն, վորը հռոմայեցիների հետ արդեն դաշն էր կնքել։

Միհրդատի ճանապարհը Սինորիայից մինչև Կողքիս մանրամասն նկարագրված է Ապպիանոսի մոտ[1]։ Սինորիայից նա գնացել էր Յեփրատի ափերով և հասել մինչև նրա ակունքները։ Այստեղ նա մնացել էր յերեք որ և կարգի յեր բերել իր զորքերը։ Այնուհետև նա ուղղվել էր դեպի հյուսիս Հայաստանի Խոտենե[2] գավառի միջով, ուր խոտենցիները և իբերները, զինված նետաղեղներով ու պարսատիկներով ուզեցել էյին փակել նրա ճանապարհը։ Սակայն Միհրդատը նրանց յետ էր մղել և Ճորոխ գետի յերկայնությամբ ու Սև ծովի ափերով հասել էր Փասիս (այժմյան Փոթի) և այնտեղից Դիոսկուրիաս։ Միհրդատի ճանապարհը պետք է ըստ այսմ յենթադրել այժմյան Աշկալայի և Երզրումի մոտով դեպի Թորթում և այստեղից Արդվինի ու Բաթումի վրայով դեպի Սուխում։

Միհրդատի փախուստից հետո Պոմպեյոսը պատերազմը նրա դեմ համարեց վերջացած և նույն 66 թվին առաջնորդեց իր զորքը դեպի Հայաստան։

[1] Տես Ապպիանոս, Միհրդ., գլ. 101, համեմատե նաև Պլուտ., Պոմպեյոս 32, 7 և Դիոն, գք. 36, գլ. 50, 2—3։

[2] Հյուբշմանը կարծում է, վոր Խոտենեն (Χωτηνή), վորը Հին Հայաստանի գավառներից մեկն է, գտնվել է Յեփրատ գետի ակունքների ու Ափսարոս գետի միջև (տես «Հին Հայոց տեղվոյ անունները», թարգմ. Պիլեզիկճյանի, Վիեննա 1907, էջ 19, ծան. 1)։ Իսկ Ռեյնաքը յենթադրում է, վոր Խոտենեն համապատասխանում է Ստրաբոնի հիշատակած Χορζηνή-յին, տես Mithridate Eupator, էջ 389, ծան. 2։

17. ՏԻԳՐԱՆԻ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՊՈՄՊԵՅՈՍԻ ՀԵՏ

Մինչդեռ Պոնտոսում տեղի եյին ունեցել վերև նկարագրված անցքերը՝ Հայաստանն իր հերթին յենթարկվել եր հարձակման։ Պարթևների թագավոր Հրահատ Գ-ը, իր նորափեսա կրտսեր Տիգրանի խնդրանքով և, հավանորեն, նաև Պոմպեյոսի դրդմամբ՝ պատերազմ եր սկսել Տիգրան թագավորի դեմ, վորը նրա անհաշտ ախոյանն եր ու թշնամին։ Տիգրանի ապստամբ վորդու և խռովարար հայ մեծամեծների ուղեկցությամբ՝ նա ներս եր խուժել Հայաստան և, նվաճելով նրա հարավ-արևելյան շրջանները՝ հասել եր մինչև Արտաշատ մայրաքաղաքը։

Ծերունի Տիգրանը, վորը հանկարծակիի յեր բերվել, հարկադրվեց, ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը[1], փախչել իր յերկրի լեռնային շրջանները։ Սակայն Արտաշատ քաղաքը, հավատարիմ մնալով Տիգրան թագավորին՝ ցույց տվեց համառ դիմադրություն։ Ինչպես հայտնի յե Ստրաբոնի վկայությունից, հին Արտաշատը շնորհիվ իր ամրությունների գրեթե անմատչելի յեր։

«Այս քաղաքը,—ասում է Ստրաբոնը[2],—գտնվում է թերակղզու նմանող մի խորշում, վորը, բացառությամբ պարանոցի, շրջապատված է պարիսպով ու նրա առջև հոսող գետով, իսկ պարանոցը փակված ու պաշտպանված է խրամով ու ցցապատնեշով»։

Շնորհիվ նրա ամուր այս դիրքի՝ պարթևները, վորոնք չունեյին ամրացրած քաղաքների պաշարման փորձ՝ չկարողացան նրան առնել և պաշարումը խիստ յերկարեց։

Կասսիուս Դիոնի պատմելով[3]՝ յերբ պարթևների թագավորը տեսավ, վոր պաշարումը խիստ յերկար է տևելու՝ իր ուժերի մի

1 Տես գք. 36, գլ. 51, 2։

2 XI, 14, 6 (529)։

3 Գք. 36, գլ. 51, 2։

մասը թողեց Տիգրանի վորդուն և վերադարձավ իր յերկիրը։ Սակայն հենց վոր նա հեռացավ՝ ծերունի Տիգրանը, վորն իր շուրջն եր հավաքել իրեն հավատարիմ մնացած զորական ուժերը, հարձակվեց դավաճան վորդու և ապստամբած հայ իշխանների վրա, հաղթեց նրանց և հալածեց ու իր իշխանությունը վերահաստատեց ամբողջ իր յերկրում։ Կրտսեր Տիգրանը հարկադրված յեղավ Հայաստանից փախչել և ուզեց գնալ Միհրդատի մոտ ու ուղևորվեց դեպի Պոնտոս, սակայն, իմանալով ճանապարհին, վոր իր պապը ծանր պարտություն է կրել և կարոտ է ինքը ոգնության՝ փոխեց իր ծրագիրը և գնաց Պոմպեյոսի մոտ։ Նա հույս ուներ, վոր, համաձայնության գալով հռոմայեցիների հետ՝ կկարողանա այս նոր դավաճանության գնով ստանալ իր հոր գահը և թագավորությունը։

Պլուտարքոսի կարևոր մի վկայությունից[1] յերևում է, վոր կրտսեր Տիգրանը յեկել եր հռոմեական բանակը և հանդիպել եր Պոմպեյոսին Արաքսի ափին։ Նրանց հանդիպման տեղը կարելի յե յենթադրել այժմյան Քեփրիքեյի մոտ։ Այստեղ հենց, Բարձր Հայքից Արտաշատ տանող ճանապարհի վրա, գտնվում եր, իրապես, Արաքս գետի ափին, ինչպես ցույց ենք տվել աշխարհագրական մեր աշխատության մեջ[2], Պևտինգերյան քարտեզի Ad Confluentes կամ «Գետախառնուրդի մոտ» կայարանը։

Հռոմեական զորավարն ուրախ պիտի լիներ, անշուշտ, վոր Տիգրանի ապստամբ վորդին, դավաճանելով իր հորը՝ ապավինում եր հռոմայեցիների հովանավորությանն ու ոգնությանը։ Բայց կրտսեր Տիգրանն արդեն ուշացել եր։ Նրա Պոմպեյոսի մոտ գալուց դեռ առաջ՝ ծերունի Տիգրանը, տեսնելով վոր անկարելի յե միաժամանակ պատերազմել թե պարթևների ու իր վորդու և թե հռոմայեցիների դեմ՝ սկսել եր, ինչպես վերև տեսանք, հաշտության բանակցություններ վարել Պոմպեյոսի հետ։ Բանակցությունները դեռ չավարտած՝ նա ձերբակալել ու հանձնել եր Պոմպեյոսին Միհրդատի պատվիրակներին և իր աներոջ գլխի համար վարձատրություն եր սահմանել 100 տաղանդ, այսինքն՝ ավելի քան 200.000 վոսկի ռուբլի։

Հավանորեն, Պոմպեյոսն ինքն ևս դեմ չեր հաշտության, սակայն նա, ոգտվելով Հայաստանում ծագած ներքին խռովություններից՝ ուզում եր, իհարկե, Տիգրանին առաջադրել խաղա-

1 Պլուտ., Պոմպեյոս, գլ. 33, 1։

2 Տես «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», եջ 60—62։

ղության պայմաններ ըստ իր հայեցողության։ Կասսիուս Դիոնի ուշագրավ մի վկայությունից[1] պարզ ու վորոշ յերևում է, վոր այդ բանում Պոմպեյոսին մեծապես օգնել եր Կրտսեր Տիգրանը, վորն ամեն կերպ խոչընդոտել ու խանգարել եր սկսված բանակցությունները։ Ըստ Դիոնի՝ վորդու այս հակառակությունն եր պատճառը, վոր ծերունի Տիգրանը չեր կարողացել դաշն կնքել չափավոր պայմաններով։

Կրտսեր Տիգրանը, հույս ունենալով վոր կստանա իր հոր գահը՝ ուղեցույց դառավ հռոմեական զորքին և առաջնորդեց Պոմպեյոսին ուղիղ Արտաշատի վրա։ Այս արշավանքի ճանապարհը լավ պարզ կերպով վորոշվում է Պեվտինգերյան քարտեզի Սատաղ-Բագավան-Արտաշատ հին ուղեգծով, վոր մանրամասն լուսաբանված է «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները» աշխարհագրական իմ ուսումնասիրության մեջ։ Հռոմեական բանակը յելել եր Սատաղից Գաղտառիճի վրայով Բեփրիքեյ և այնուհետև գնացել եր Ալաշկերտի դաշտը և այստեղից Հայկական Պար կամ Աղրի-դաղ լեռնաշղթայի հարավային կողմով ու Կուլջաղի լեռնանցքով մտել եր Արարատյան դաշտը։ Կասսիուս Դիոնի կարևոր մի վկայությունից[2] կարելի յե հետևցնել, վոր Պոմպեյոսը ևս, ինչպես հետագայում նաև Կորբուլոնը՝ Արաքս գետն անցել եր Արարատյան դաշտում հին Վարդանակերտի մոտ գտնվող ծանծաղուտով[3] և Արտաշատին մոտեցել եր Արաքսի վոչ թե աջ, այլ ձախ կողմից։

Յերբ Պոմպեյոսի զորաբանակը մոտեցել եր Արտաշատին՝ Տիգրան Բ-ը, տեսնելով վոր դիմադրությունն անհնպատակ է ու անօգուտ՝ վճռեց, ինչ գնով ել լինի, համաձայնության գալ Պոմպեյոսի հետ և գնաց ինքը անձամբ նրա մոտ ու կամավոր կերպով անձնատուր յեղավ հռոմայեցիներին։ Տիգրանի տեսակցության մասին Պոմպեյոսի հետ հին աղբյուրները տալիս են խառնաշփոթ տեղեկություններ, վորոնք կարևոր մի քանի կետերում իրարից զգալի չափով տարբերվում են։ Ապպիանոսը, օրինակ, թեև ինքը՝ համապատասխան Կասսիուս Դիոնի և Պլուտարքոսի հաղորդած տեղեկություններին՝ վկայում է, վոր Տիգրանի գնալը Պոմպեյոսի մոտ ինքնաբերաբար եր ու հոժարակամ, սակայն մի-

[1] Գլ. 36, գլ. 52, 1։
[2] Տես նույնը։
[3] Տես «Հին Հայաստանի գլխավոր ճանապարհները», եջ 45—46։



Պոմպեյոսի ճանապարհը Փոքր Հայքից դեպի Արտաշատ

Նույն ժամանակ մատնանշում է, վոր վոմանք վկայում են նաև, վոր Տիգրանին նախապես հրավիրել էր Պոմպեյոսը։

Ինձ թվում է, վոր այս վերջին տեղեկությունը, վորը հիշատակված է Ապպիանոսի մոտ թռուցիկ կերպով և վորը պատմագիտական յերկերում աչքաթող է արված, կարող է ճիշտ լինել, վորովհետև Պլուտարքոսի մոտ ևս մատնացույց է արված, վոր Տիգրանը, նախ քան Պոմպեյոսի մոտ գնալը, ներս էր թողել Արտաշատ նրա ուղարկած հռոմեական կայազորը։ Անհավանական չէ, ուրեմն, վոր Տիգրանը Պոմպեյոսի մոտ գնացել էր, իրոք, վոչ թե ինքնաբերաբար, այլ, հավանորեն, հատուկ հրավերով և նախնական բանակցություններից ու թերևս վորոշ հավաստիացումներից հետո։ Հռոմեական աղբյուրներն աշխատել են, ըստ յերևույթին, քողարկել նախնական համաձայնության հավանական այս փաստը և, Պոմպեյոսին մեծարելու համար, կարևոր են համարել առանձնապես շեշտել, վոր Տիգրանն ապավինել էր Պոմպեյոսի գթասրտությանը հլու ու անվերապահ կերպով։

Համաձայն աղբյուրների տված տեղեկություններին՝ ծերունի Տիգրանը—վորն այդ ժամանակ մոտ 75 տարեկան էր,—Պոմպեյոսի մոտ յեկել էր ձի հեծած, առանց արքայական ծիրանու, բայց գլխին ուներ իր խույրն ու ապարոշը։ Յերբ նա հասել էր հռոմեական զորաբանակի մուտքի առջև, նա ուզեցել էր, ինչպես այդ ընդունված էր հայերի մոտ, մտնել ճամբար ձիով։ Սակայն Պոմպեյոսի թիկնապահների պահանջով նա, համաձայն հռոմեական կարգերի, իջավ ձիուց ցած, տվեց նրանց իր սուրը ու ներս մտավ վոտքով։ Մտնելով Պոմպեյոսի մոտ, ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը[1], նա դեն գցեց իր խույրը և ուզեց խոնարհվել ու նրան վողջունել, սակայն Պոմպեյոսն իսկույն տեղից վեր կացավ, նրան բարձրացրեց և նստեցրեց իր կողքին։ Կասսիուս Դիոնի ասելով՝ Պոմպեյոսն այնուհետև Տիգրանին մխիթարեց և հայտնեց, վոր նա վոչ միայն կըմնա Հայաստանի թագավոր, այլև կըհամարվի հռոմայեցիների բարեկամ ու դաշնակից։ Ապա, ծերունուն հանգստացնելուց ու քաջալերելուց հետո՝ Պոմպեյոսը նրան հրավիրեց ճաշի։ Տիգրանի վորդին, վորը ներկա էր ու նստած էր Պոմպեյոսի մյուս կողքին և վորը հույս ուներ Պոմպեյոսից ստանալու Հայաստանի գահը, տեսնելով վոր ինքը խաբված է՝ խիստ դժգոհ մնաց և Պոմպեյոսի մոտ չգնաց ճաշի, վորին հրավիրված էր հոր հետ միասին։

1 Գք. 36, գլ. 52, 3։

Տիգրանի ու Պոմպեյոսի տեսակցության վերաբերող այս նկարագրությունը, վորը կարող է, ինչպես ասացինք, աչառու կերպով գունավորված լինել՝ մենք մեջ բերինք, գլխավորապես, համաձայն Կասսիուս Դիոնի վկայություններին։ Պետք է սակայն մատնանշել, վոր Պլուտարքոսի ու Ապպիանոսի համապատասխան հատվածներում կան աննշան շեղումներ, վորոնք պարզ ցույց են տալիս, վոր նրանց վկայություններին հիմք են ծառայել տարբեր սկզբնաղբյուրներ։ Ռեյնաքի կարծիքով, Կասսիուս Դիոնը կարող էր իր պատմության այս մասում օգտված լինել Լիվիուսից, Պլուտարքոսը՝ Պոմպեյոսի կենսագիր Թեոփանես Միտիլենացուց, իսկ Ապպիանոսը՝ Նիկոլաոս Դամասկացուց կամ Պոսիդոնիոսից[1]։

Ավելորդ չեմ համարում թարգմանաբար մեջ բերել այս յերեք աղբյուրների տեղեկությունները Տիգրանի ու Պոմպեյոսի տեսակցության մասին։

1. Կասսիուս Դիոն, գք. 36, գլ. 52, 1—4՝

«Յեվ յերբ Պոմպեյոսն անցավ Արաքսը և մոտեցավ Արտաշատին՝ Տիգրանը և քաղաքը նրան հանձնեց և ինքը ևս հոժարակամ յեկավ նրա բանակը։ Նա ցույց տվեց բացահայտ կերպով, վորքան այդ հնարավոր էր՝ իր նախկին մեծությունը և այժմյան խոնարհությունը, վորպեսզի արժանի յերևա թե հարգանքի և թե կարեկցության։ Նա հանել էր մեջընդմեջ սպիտակ իր պատմուճանը և համակ ծիրանի վերարկուն, բայց ուներ գլխին իր խույրն ու ապարոշը։ Արդ՝ Պոմպեյոսը, ընդառաջ ուղարկելով նրան իր թիկնապահներից մեկին՝ նրան իջեցնել տվեց ձիուց (վորովհետև Տիգրանը, ինչպես նրանց մոտ սովորություն է՝ ներս էր մտնում ճամբարը ձիով)։ Բայց յերբ Պոմպեյոսը տեսավ, վոր նա ներս մտնելով վոտքով՝ դեն գցեց խույրը և ուզում էր խոնարհվել իրեն վողջունելու համար՝ խղճահարվեց, վեր կեցավ տեղից, բարձրացրեց նրան, դրեց խույրը գլխին և նրստեցրեց իր կողքի բազմոցի վրա։ Նա մխիթարեց նրան և ի միջի այլոց ասաց, վոր նա վոչ միայն չէ կորցրել հայոց թագավորությունը, այլև ձեռք է բերել նաև հռոմայեցիների բարեկամությունը։ Այսպիսով Պոմպեյոսը մտերմացավ նրա հետ և հրավիրեց ճաշի։ Իսկ վորդին, վորը նստած էր Պոմպեյոսի մյուս կողքին՝ հոր առջև վեր չկեցավ տեղից, և վոչ

1 Տես Reinach, Mithridate Eupator, էջ 452։

ել Նրան վորևե այլ կերպ պատվեց։ Նա նմանապես չգնաց ճաշի, վորին հրավիրված եր։ Յեվ հենց սրանով նա մեծապես իր դեմ գրգռեց Պոմպեյոսի ատելությունը»։

2. Պլուտարքոս, Պոմպեյոս, գլ. 33, 1—4՝

«Իսկ Տիգրան թագավորը, վորին Լուկուլլոսը քիչ առաջ ջարդ եր տվել, իմանալով վոր Պոմպեյոսը բնավորությամբ մեղմ է և հեզ՝ ներս թողեց հռոմեական կայազորն իր մայրաքաղաքը և, վերցնելով իր բարեկամներին ու ազգականներին՝ գնաց, վորպեսզի անձնատուր լինի Պոմպեյոսին։ Յերբ նա հասավ ձի հեծած ճամբարի ցցապատնեշին՝ նրան մոտեցան Պոմպեյոսի յերկու թիկնապահները և հրամայեցին ձիուց ցած իջնել ու գնալ վոտքով,—վորովհետև յերբեք չի տեսնված, վոր վորևե մի մարդ հռոմեական բանակ մտնի ձի նստած։ Տիգրանը հնազանդվեց ու հանեց և նրանց տվեց նաև իր սուրը։ Յեվ հետո, յերբ նա յեկավ իրեն Պոմպեյոսի մոտ՝ հանեց իր խույրը և ուզեց դնել նրա վոտքերի մոտ[1] և, բացի այդ, խոնարհվելով—վոր ամենից ամոթալին եր—ուզում եր նաև ծունր իջնել։ Սակայն Պոմպեյոսը, բռնելով նրա աջ ձեռքից՝ կանխեց այդ, քաշեց իր մոտ և նրան նստեցրեց իր կողքին, իսկ վորդուն մյուս կողքին։ .....Բայց վորդին դժգոհ մնաց և, հրավիրված լինելով ճաշի, ասաց, վոր նա կարիք չունի նման պատիվների Պոմպեյոսի կողմից և վոր նա կգտնի հռոմայեցիների մեջ մեկ ուրիշին։

3. Ապպիանոս, Միհրդատ., գլ. 104՝

«Սակայն բարբարոսների մոտ մեծապես համբավված եյին Պոմպեյոսի արդարամտությունը և հավատարմությունը։ Հույս դնելով նրա այդ համբավի վրա՝ նրա մոտ գնաց, առանց նախապես լրատար ուղարկելու, Տիգրան հայրը։ Յեվ սա, ամեն բանում իրեն տրամադրելով Պոմպեյոսի արդարադատությանը՝ ուզում եր մեղադրել վորդուն Պոմպեյոսի առջև։ Յերբ Պոմպեյոսը, նրան պատվելու համար, իր զինվորական տրիբուններին և հեծելապետներին հրամայեց գնալ նրան դիմավորելու՝ Տիգրանի շուրջը գտնվողները ճանապարհին վախեցան, վորովհետև մտոն եյին գնում առանց լրատարի միջոցով ազդարարելու, և յետ փախան։ Իսկ

[1] Համեմատե նաև Վալերիուս Մաքսիմուսի վկայությունը (գբ. V, գլ. 1, 9), վորի սկզբնաղբյուրն է Կիկերոնի Pro Sestio ճառը (XXVII, 58)։

Տիգրանը գնաց և, համարելով Պոմպեյոսին իրենից ավելի հզոր՝ ըստ բարբարոսական սովորության վողջունեց նրան խոնարհվելով։ Վոմանք ասում են, վոր Տիգրանին, վորին նախապես հրավիրած է յեղել Պոմպեյոսը՝ առաջնորդել եյին նրա մոտ թիկնապահները»։

Պոմպեյոսի և Տիգրանի այս հանդիպման ժամանակ նրանց մեջ կայացավ հաշտություն, վորով վերջ դրվեց հայկական նորաստեղծ աշխարհակալության։ Համաձայն հաշտության պայմանների[1] Տիգրանը պետք է հրաժարվեր իր բոլոր նվաճումներից, այն է՝ Ասորիքից, Արևելյան Կիլիկիայից, Փյունիկեյից, Կապպադովկիայից, Կորդուքից ու Ծոփքից և մնալու յեր միմիայն իր հայրենի յերկրի՝ Մեծ Հայաստանի թագավոր։ Իսկ նրա վորդին, կրտսեր Տիգրանը, ստանալու յեր Ծոփքը (ըստ Ապպիանոսի[2] նաև Կորդուքը) և հոր մահից հետո ժառանգելու յեր նաև նրա գահը։ Վոմանք, հիմնվելով Ապպիանոսի անորոշ մի վկայության վրա[3]՝ կարծում են, վոր Ծոփքի թագավորությունը նա ստացել եր դեռ առաջ իր հորից[4]։

Ծերունի Տիգրանը վոչ միայն հարկադրված յեղավ հրաժարվելու իր նվաճումներից, այլև վճարելու յեր Պոմպեյոսին 6000 տաղանդ պատերազմական տուգանք, վորն անում է այժմյան դրամով մոտ 25 միլիոն գերմանական վոսկի մարկ կամ մոտ $12^1/_2$ միլիոն ռուսական վոսկի ռուբլի։ Բացի այդ, նա հռոմեական զորքերին եւ համաձայնել եր տալ հատուկ դրամական նվեր՝ ամեն մեկ զինվորին 50 դրաքմե (հավասար է մոտ 35 վոսկի մարկի կամ մոտ $17^1/_2$ վոսկի ռուբլու), հարյուրապետներին 1000-ական դրաքմե (=350 վոսկի ռուբ.) և զինվորական տրիբուններին 1-ական տաղանդ (=2100 վոսկի ռուբ.)[5]։

1 Տես Դիոն, գբ. 36, գլ. 53, 2, Պլուտարքոս, Պոմպեյոս, 33, 3—4 և Ապպիանոս, Միհրդատ., գլ. 104—105։

2 Միհրդատ., գլ. 105։

3 Նույնը, գլ. 104։

4 Տես Հ. Ասատուրյան, «Քաղաքական վերաբերություններ», եջ 77։

5 Տես Ստրաբոն, XI, 14, 10 (530), Պլուտարքոս, Պոմպեյոս, 33
3—4 և Ապպիանոս, Միհրդատ., գլ. 104։ Համաձայն վերջինիս վկայության
զինվորական տրիբուններից ամեն մեկին տրված է յեղել վոչ թե 6000 դրաքմե կամ 1 տաղանդ, այլ 10,000 դրաքմե։ Ըստ Հուլչի հանրապետական Հռոմի
դենար-դրաքմեն հավասար եր 0,70 վոսկի մարկի կամ մոտ 35 վոսկի կոպեկի,
տես Griechische und römische Metrologie, Berlin 1882, եջ 250—252, 297—
299 և 711։

Հաշտության այս պայմաններին վերաբերող վկայությունները ևս մեջ ենք բերում բառացի թարգմանությամբ։

1. Կասսիուս Դիոն, գր. 36, գլ. 53, 2՝

«Հետևյալ օրը Պոմպեյոսը, նրանց ունկնդրելուց հետո՝ տվեց մեծին հայրենի ամբողջ թագավորությունը, իսկ այն, ինչ վոր Տիգրանը նվաճել եր ինքը,—թե այլ յերկրներ և թե Կապպադովկիայի ու Ասորիքի մասերը, Փյունիկեն ու Հայաստանի սահմանակից Ծոփքը,—նրանից վերցրեց, և, բացի այդ, նրանից պահանջեց նաև փող. իսկ վորդուն տվեց միայն Ծոփքը»։

2. Պլուտարքոս, Պոմպեյոս, գլ. 33, 3—4՝

«Նա [Պոմպեյոսը] ասաց, վոր նախորդ դեպքերի համար մեղադրելու յե Լուկուլլոսին, վորովհետև նա յե նրանից [Տիգրանից] վերցրել Ասորիքը, Փյունիկեն, Կիլիկիան, Գալատիան և Ծոփքը։ Իսկ այն, ինչ վոր նա մինչև իր գալը պահպանել եր՝ կըմնա իրեն։ Բայց պետք ե հռոմայեցիներին վճարե իր հանցապարտության համար վեց հազար տաղանդ պատերազմական տուգանք։ Յեվ Ծոփքում թագավոր կլինի նրա վորդին։ Այս պայմանները Տիգրանը գոհունակությամբ ընդունեց և, յերբ հռոմայեցիները նրան վողջունեցին ու հայտարարեցին թագավոր՝ նա խիստ ուրախացավ ու խոստացավ տալ յուրաքանչյուր զինվորին կես մնաս, հարյուրապետներից ամեն մեկին 10 մնաս և զինվորական տրիբուններին, մեկական տաղանդ»։

3. Ապպիանոս, Միհրդատ., գլ. 104—105՝

«Գալով Պոմպեյոսի մոտ նա [Տիգրան թագավորը] ներողություն խնդրեց պատահած դեպքերի համար և տվեց իրեն Պոմպեյոսին 6000 տաղանդ, յուրաքանչյուր զինվորին 50 դրաքմե, վաշտապետներից ամեն մեկին՝ 1000 դրաքմե և զինվորական տրիբուններին՝ 10.000-կան դրաքմե։ Յեվ Պոմպեյոսը պատահած դեպքերը ներեց նրան, հաշտեցրեց վորդու հետ և վորոշեց, վոր վորդին թագավոր լինի Ծոփքի և Կորդուքի, վորոնք այժմ կազմում են փոքրագույն Հայաստանը, իսկ հայրը լինի թագավոր մյուս Հայաստանի ու վորդին լինի նրան հաջորդ։ Իսկ այն յերկրները, վոր նա նվաճել եր՝ հրամայեց թողնել։ Յեվ Տիգրանը ձեռք քաշեց Ասորիքից—Յեփրատ գետից սկսած մինչև ծովը. նրան եր պատկանում թե այդ յերկիրը և թե Կիլիկիայի մի մասը,

վորոնց միջից նա դուրս եր վտարել Անտիոքոսին, վորի մականունն եր Բարեպաշտ»։

4. Ստրաբոն, XI, 14, 10 (530)՝

«Իսկ յերկրի [Հայաստանի] հարստության և հզորության կարևոր մի նշանն այն եր, վոր Տիգրանը, Արտավազդի հայրը, յերբ նրա վրա 6.000 արծաթ տաղանդ դրված եր իբրև տուգանք՝ իսկույն այդ գումարը բաշխեց հռոմեական զորքերին,—յուրաքանչյուր զինվորին՝ հիսուն դրաքմե, ամեն մեկ հարյուրապետին՝ հազար դրաքմե և հեծելապետներին ու զինվորական տրիբուններին՝ մեկական տաղանդ»։

Թեև պատմական յերկերում հաճախ մատնանշվում ե, վոր Պոմպեյոսի վերաբերմունքը դեպի Տիգրանը յեղել ե արտասովոր կերպով մեղմ, սակայն, ինչպես տեսնում ենք, հաշտության վերոհիշյալ պայմանները բավական ծանր եյին։ Պետք ե ասել, վոր արտաքին մեղմությունը և արտակարգ զգուշավորությունը յեղել են Պոմպեյոսի քաղաքական ու ռազմական գործունեյության հիմնական հատկանիշները։ Լինելով հռոմեական ֆինանսիստների ու վաշխառուների կուսակիցը՝ Պոմպեյոսն ինքը ևս, ինչպես հայտնի յե, Իտալիայի ամենախոշոր վաշխառուներից մեկն եր։ Նա գերադասում եր հռոմեական իմպերիալիզմի նպատակներն իրագործել վոչ թե զենքի ուժով, ինչպես Լուկուլլոսը, վորը խիզախ զինվորական եր, այլ խաղաղ ճանապարհով և առանց ռիսկի։ Հայաստանը, ինչպես տեսնում ենք, նա մեծ աջողությամբ կարողացել եր ընկճել ու կողոպտել առանց արյունահեղության ու զոհողությունների։

Հաշտության վերոհիշյալ պայմաններից չեր կարող, իհարկե, գոհ լինել Կրտսեր Տիգրանը։ Իբրև վարձ իր դավաճանության՝ նա հույս ուներ ստանալու վոչ թե Ծոփաց յերկրի թագավորությունը, վորը նա, ինչպես տեսանք, նախ քան իր ապստամբությունը, ըստ յերևույթին, արդեն ստացել եր իր հորից, այլ հայկական մեծ ու հզոր պետությունը։ Չափազանց ծանր ու անարդար եր նա համարում նաև այն, վոր պատերազմական վերոհիշյալ տուգանքը վճարվելու յեր, գլխավորապես, Ծոփքում գտնվող գանձապահեստներից, այսինքն՝ իր թագավորության միջոցներից։ Թե վորպիսի մեծ դժվարություններով եյին դուրս տրվել դրամական հարստությունները Ծոփքի պահեստներից՝ այդ մասին մանրամասն պատմում ե Կասսիուս Դիոնը։ Նրա ընդարձակ վկայությունը, վորը խիստ հետաքրքրական ե թագավորական

գանձերի պահպանման կարգերի համար հայկական յերկրներում՝ մեջ ենք բերում թարգմանաբար առանց կրճատումների։

Կասսիուս Դիոն, գք. 36, գլ. 53, 3—5՝

«Յեվ վորովհետև պատահմամբ նրա [Ծոփքի] մեջ եյին գտնվում գանձապահեստները՝ ուստի և սրանց պատճառով վեճ ունեցավ յերիտասարդ Տիգրանը։ Յեվ աջողություն չունենալով (քանի վոր Պոմպեյոսն ուրիշ վոչ մի տեղից չեր կարող ստանալ վորոշված գումարը)՝ նա դժգոհեց և մտածում եր փախչել։ Սակայն Պոմպեյոսը, իմանալով այդ՝ նրան հսկողության տակ առավ առանց կալանքի և, սուրհանդակներ ուղարկելով գանձերի պահապանների մոտ՝ հրամայեց, վոր նրանք այդ բոլորը տան նրա հորը։ Իսկ յերբ նրանք չհնազանդվեցին, ասելով վոր այդ նրանց պետք է կարգադրե յերիտասարդ Տիգրանը, վորին պատկանում է յերկիրը՝ Պոմպեյոսը սրան ուղարկեց ամրությունների վայրը։ Յեվ սա, տեսնելով վոր դրանք փակ են՝ մոտ գնաց և հրամայեց դժկամորեն բաց անել։ Իսկ յերբ նրանք դարձյալ չլսեցին, առարկելով վոր նա այդ հրամանը տվել է վոչ թե կամովին, այլ հարկադրված՝ Պոմպեյոսը զայրացավ և հրամայեց յերիտասարդ Տիգրանին բանտարկել։ Յեվ այսպիսով գանձերը ստացավ ծերունի Տիգրանը»։

Կրտսեր Տիգրանի ձերբակալության մասին, վոր մատնանշված է Դիոնի այս վկայության մեջ՝ հին աղբյուրները տալիս են միանգամայն տարբեր տեղեկություններ։ Ըստ Կասսիուս Դիոնի այս վկայության, ձերբակալման պատճառ եր ծառայել, ինչպես տեսանք, նրա ընդդիմությունը և նրա հարուցած դժվարությունները Ծոփքում գտնվող գանձերի հանձնման ժամանակ։ Ապպիանոսն ակնարկում է, վոր նա նոր դավադրություն եր կազմակերպել իր հոր դեմ[1]։ Իսկ Պլուտարքոսը, վորի համապատասխան վկայությունը վերև մեջ եյինք բերել, մատնանշում է, վոր նա՝ հրավիրված լինելով ճաշի՝ հրաժարվել եր գնալ և անարգել ու վիրավորել եր Պոմպեյոսին[2]։ Ինձ թվում է, վոր այս բոլոր վկայությունները էլ կարող են վորոշ չափով ճիշտ լինել։ Կրտսեր Տիգրանը, վորը դժգոհ եր մնացել և թշնամացել եր Պոմպեյոսին՝ կարող եր, իրոք, կոպտաբար վերաբերված լինել սրան, հակառա-

[1] Միհրդատ., գլ. 105։
[2] Տես Պ լ ո ւ տ ա ր ք ո ս, Պոմպեյոս, 33, 4։

կած լինել իր թագավորության գանձերի հանձնմանը և, միևնույն ժամանակ, կարող եր նաև դավեր նյութած լիներ իր հոր դեմ։

Կրտսեր Տիգրանի ձերբակալությունը, վորը փաստորեն Պոմպեյոսի դաշնակիցն եր՝ բացահայտ բռնություն եր և խախտում միջազգային իրավունքի։ Միաժամանակ այդ թշնամանք եր ու վիրավորանք կալանավորի աներոջ՝ պարթևների թագավոր Հրահատ Գ-ի նկատմամբ։ Ըստ Պլուտարքոսի վկայության[1]՝

«Հրահատ պարթևը մարդ եր ուղարկել [Պոմպեյոսի մոտ] պահանջելու յերիտասարդին, վոր իր փեսան եր, նաև պահանջ հայտնելու, վորպեսզի իրենց իշխանությունների սահմանը լինի Յեփրատ գետը։ Պոմպեյոսը պատասխանել եր, վոր Տիգրանն ավելի մոտ է իր հորը, քան աներոջը, իսկ սահմանը կլինի այն, վոր կհամարվի իրավացի»։

Հակառակ, ուրեմն, Հրահատ Գ-ի բողոքներին, վորը հիշեցնում եր Պոմպեյոսին իր կնքած դաշինքը հռոմայեցիների հետ՝ Կրտսեր Տիգրանը և նրա կինն ու դուստրը[2] ուղարկվեցին շուտով Հռոմ, վորպեսզի մասնակից լինեն Պոմպեյոսի հաղթահանդեսի շքերթին։

Պոմպեյոսի վարքագծի այս անակնկալ փոփոխությունը պարթևական թագավորության հանդեպ համապատասխանում եր կատարելապես Հռոմի արտաքին, նենգ ու խարդախ քաղաքականությանը։ Քանի վոր պոնտական ու հայկական թագավորությունները թշնամի եյին Հռոմին և պատերազմում եյին նրա դեմ՝ Հռոմեվերջինս իրեն ցույց եր տալիս բարեկամ պարթևներին։ Հռոմեական զորավարները, ինչպես Սուլլան և Լուկուլլոսը, նույնպես և Պոմպեյոսը՝ կամ բարեկամական բանակցություններ եյին վարում նրանց հետ և կամ դաշինք եյին կնքում ու խոստանում նրանց թողնել Միջագետքը մինչև Յեփրատ գետը։ Բայց այժմ պոնտական թագավորությունն այլևս գոյություն չուներ, իսկ Տիգրան թագավորը ճանաչված եր իբրև բարեկամ ու դաշնակից Հռոմի։ Ուստի և Հռոմը, վորը չեր ուզում ունենալ իր շուրջը հզոր ու մեծ պետություններ՝ հիմա հովանավոր դառավ Տիգրան թագավորի և փոխեց իր վերաբերմունքը դեպի Հրահատ Գ-ը։ Պարթևական պետությունը Հռոմի համար այլևս հանդուրժելի չեր իբրև անկախ ու ուժեղ թագավորություն։ Յեվ շուտով, ինչպես կտեսնենք,

[1] Տես նույնը, 33, 4։
[2] Նույնը, գլ. 45, 4։

նրանց նախկին բարեկամությունը վերածվեց անհաշտելի թշնամության։

Դժվար չէ նաև կռահել, թե ինչու Պոմպեյոսը Հայաստանի գահը չտվեց Կրտսեր Տիգրանին։ Շատ պարզ է, որ ծերունի Տիգրանը, որը պարթևական թագավորության փոխերիմ թշնամին էր՝ հռոմայեցիների համար ավելի ցանկալի դաշնակից էր, քան Կրտսեր Տիգրանը, որը փեսան էր ու բարեկամը Հրահատ Գ-ի։

Ներգրավելով Հայաստանը հռոմեական ազդեցության շրջանակի մեջ՝ Պոմպեյոսը, ինչպես վկայում է Պլուտարքոսը[1], թողեց այստեղ իբրև վերահսկիչ Աֆրանիուսին, իսկ ինքն առաջնորդեց հռոմեական զորքը դեպի հյուսիս ընդդեմ Միհրդատ Պոնտացու, որը սակավաթիվ իր զորքերով պատսպարվել էր Կողքիսում։ Սակայն վորոմհետև ձմեռն արդեն վրա յեր հասել՝ նա ստիպված յեղավ ձմեռել Կուր գետի մոտ Արտաշատից Կողքիս տանող ռազմական հին ճանապարհի շրջավայրերում։

Ինչպես ցույց ենք տվել Պոմպեյոսի անդրկովկասյան ռազմուղիների լուսաբանությանը վերաբերող մեր ընդարձակ հոդվածում[2], հռոմեական զորքի 66/65 թվի ձմեռվա կայանատեղերը գտնվել են վոչ թե Յեփրատի վերին հոսանքի ու Կուր գետի ակունքների միջև, ինչպես այդ յենթադրում է Մոմզենը[3], այլ այժմյան Ախալցխայի ու Ախալքալաքի միջև։ Մոմզենը հիմնվել է, անշուշտ, Դիոնի վկայության վրա, վորը հռոմեական զորքերի ձմերոցի տեղը ցույց է տվել Անահիտյան յերկրում և Կուր գետի մոտ[4]։ Սակայն Դիոնի հիշատակած Անահիտյան այս յերկիրը, վորը համապատասխան է համարվում հին Յեկեղյաց գավառին, իրապես, ինչպես մատնանշված է հիշյալ իմ հոդվածում՝ գտնվել է Պևտինգերյան քարտեզի Caspiae (=այժմ. Խոսպիա) կայարանի ու Կուր գետի մոտերքում։

Համաձայն վերոհիշյալ մեր ուսումնասիրության ճշտիվ վորոշվում է նաև հռոմեական զորքի ճանապարհն Արտաշատից դեպի ձմերոցի տեղը։ Այդ ճանապարհը պետք է յենթադրել, անշուշտ, Պևտինգերյան քարտեզի Արտաշատ—Սեբաստոպոլիս ուղեգծով, վորը մանրամասն լուսաբանված է «Հին Հայաստանի

---

[1] Տես Պոմպեյոս, գլ. 34, 1։

[2] Տես „Круговой путь Помпея в Закавказье", Вестник древней истории, 1939, 4։

[3] Տես Римская история, III. Москва 1887, էջ 108։

[4] Դ ի ո ն, գր. 36, գլ. 53, 5։



Պոմպեյոսի ճանապարհն Արտաշատից Կողքիս և արշավանքը Սեբաստոպոլիս–Փասիս

գլխավոր ճանապարհները», աշխարհագրական իմ աշխատության մեջ, այն է՝ այժմյան Աշտարակի, Կոնդախսազի, Ղանլիճայի ու Խոսպիայի մոտով դեպի Կուր գետի աջակողմյան ափերը:

Ձմեռոցում Պոմպեյոսը բաժանել էր իր զորքերը, ինչպես հաղորդում է Կասսիուս Դիոնը[1], երեք զորամասերի, որոնք տեղավորված էին իրարից բավականաչափ հեռու և գտնվում էին իրեն Պոմպեյոսի ու նրա երկու օգնականների՝ Լուկիուս Փլակկուսի և Մետելլուս Կելերի հրամանատարության տակ: Այս վերջինի բանակում էր պահվում կալանավորված Կրտսեր Տիգրանը:

Նախապատրաստելով իր արշավանքը դեպի Կողքիս, ուր գտնվում էր Միհրդատը՝ Պոմպեյոսը հարաբերության մեջ մտավ Իբերների Արտոկես և աղվանների Որոյզես թագավորների հետ, որոնք խոստացան չեզոք մնալ և համաձայնեցին, որ հռոմեական զորքն անցնի անարգել իրենց երկրների միջով[2]: Սակայն, իրապես, նրանք՝ կամ Միհրդատի դրդումով և կամ Կրտսեր Տիգրանին ազատելու նպատակով՝ պատրաստվել էին դարան գործել հռոմայեցիներին և նրանց բերել հանկարծակիի:

Դեկտեմբերի կեսերին, երբ Պոմպեյոսի զորքերն անհոգ ու հանգիստ կատարում էին իրենց Սատուրնալիա տոնը՝ իբերները և աղվաններն անցան Կուր գետը և հարձակվեցին հանկարծ հռոմեական երեք զորամասերի վրա, հույս ունենալով հարվածել ու նրանց ջարդել առանձին առանձին: Սակայն հարձակումը, որը չափազանց վտանգավոր կարող էր լինել Պոմպեյոսի զորաբանակի համար՝ չաջողվեց: Արտոկեսի ու Որոյզեսի զորքերը ետ մղվեցին և նահանջելիս մեծ կորուստներ տվին, գլխավորապես, Կուրի գետանցքն անցնելիս[3], որը գտնվում էր, հավանորեն, Պեվտինգերյան քարտեզի Ad Metcurium կայարանի, այժմյան Ախալցխա քաղաքի մոտ:

Անսպասելի ու վտանգավոր այս հարձակումից հետո հռոմեական զորքերը մնացին անվրդով Կուր գետի մոտ մինչև 65 թվի գարունը:

[1] Տես գք. 36, գլ. 54:

[2] Տես Պլուտարքոս, Պոմպեյոս, 34, 2:

[3] Տես նույնը, գլ. 34, 1—3 և Ապպիանոս, Միհրդատ., գլ. 102—103 և Կասսիուս Դիոն, գք. 36, գլ. 54, 1—5:

18. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՅԵՎ ՄՅՈՒՍ ՀԱՐԵՎԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԸ ՊՈՄՊԵՅՈՍԻ ԱՐՇԱՎԱՆՔԻՑ ՀԵՏՈ

65 թվի գարնան սկզբին Պոմպեյոսը, փոխանակ առաջ շարժվելու դեպի Կողքիս՝ ուզեց նախապես ապահովել իր թիկունքը Իբերիայի կողմից և արշավանքի ելավ ընդդեմ իբերների: Հռոմեական զորքն իջավ Կուր գետի հովիտներով, առանց որևէ դիմադրության հանդիպելու, մինչև Հարմոզիկա ամրությունը, որը գտնվում էր Կուր գետի և այժմյան Մցխեթի հարավակողմում: Պոմպեյոսի այս արշավանքը մանրամասն նկարագրված է Կասսիուս Դիոնի պատմության մեջ[1]:

Արտոկես թագավորը, ինչպես հաղորդում է Դիոնը, այրելով Կուր գետի կամուրջը՝ փախավ նրա ձախ ափը: Սակայն տեսնելով որ Պոմպեյոսը, Հարմոզիկան գրավելուց հետո, պատրաստություններ էր տեսնում գետն անցնելու՝ նա իսկույն խաղաղության բանակցություններ սկսեց, ուղարկելով հռոմայեցիներին կենսամթերքներ՝ և վերականգնեց նաև Կուր գետի կամուրջը:

Բայց երբ հռոմեական զորքն անցել էր արդեն գետի մյուս ափը՝ նա վախեցավ ու նորից փախավ մինչև Պելորոս գետը: Անցնելով այս գետը ևս՝ նա այրեց նաև սրա կամուրջը: Ինչպես Պոմպեյոսի հետապնդման ժամանակ, նույնպես և Պելորոս գետն անցնելիս՝ իբերները կրեցին մեծ կորուստներ: Այնուհետև, որովհետև հռոմեական զորքերը կանգ չառան և Պելորոս գետի ափին՝ Արտոկեսն ուղարկեց Պոմպեյոսին նվերներ, տվեց իր որդիներին իբրև պատանդ և ընդունեց նրա առաջարկած պայմանները:

Պոմպեյոսի հաղթական բանակը վերջապես կարողացավ, ապահովելով իր թիկունքը հնարավոր հարձակումներից՝ շարունակել իր արշավանքը Միհրդատ Եվպատորի դեմ: Հարմոզիկայի մոտից նա գնաց Կուր գետի հովիտներով և այժմյան Սուրամի ու Շորապանի վրայով դեպի Ռիոն գետի հովիտները և այնտեղից

[1] Տես գք. 37, գլ. 1, 3—5 և գլ. 2, 1—6:

Սեբաստոպոլիս-Փոթի, ուր գտնվում էր հռոմեական նավատորմիղը։ Պոմպեյոսը կարծում էր, որ Միհրդատը, որը շրջապատված էր ծովի կողմից՝ գտնվում էր իբր ծուղակի մեջ։ Սակայն նա զարմացած մնաց, երբ իրեն հայտնեցին, որ որսն արդեն ծուղակից դուրս է եկել։ Համառ ծերունին գրեթե անմատչելի ճանապարհներով անցել էր իր սակավաթիվ զորամասի հետ մոտ 700 կիլոմետր և գտնվում էր արդեն Ղրիմում, ուր վերստին նվաճել էր Բոսփորյան իր թագավորությունը։

Պոմպեյոսն աննպատակահարմար ու վտանգավոր համարեց շարունակել իր արշավանքը և գնալ ծովով Ղրիմ, ուր ուժեղացել ու վերականգնել էր իր իշխանությունը Միհրդատը։ Կողքիսից նա վերադարձավ Հայաստան և արշավեց այնտեղից Աղվանք[1]։ Նա վճռել էր պատժել ու ընկճել Աղվանից Որոյզես թագավորին, որը, ինչպես տեսանք, հարձակվել էր հռոմայեցիների վրա, հավանորեն, Միհրդատի սադրանքով։

Պոմպեյոսի վերադարձի ճանապարհը Կողքիսից Հայաստան, ինչպես և նրա աղվանների դեմ արշավանքի ուղղությունը, որոնք դեռ մինչև այժմ լուսաբանված չեն, կարելի յե այժմ գրեթե ճշտիվ որոշել աշխարհագրական նորագույն ուսումնասիրությունների օգնությամբ։ Նրա ճանապարհը Կողքիսից մինչև այժմյան Ապարանի շրջանը պետք է կենթադրել, ինչպես վերև ասացինք, Պեվտինգերյան քարտեզի Սեբաստոպոլիս-Արտաշատ մեծ ռազմուղիով և այժմյան Աբասթումանի, Ախալքալաքի ու Ղանլիճայի վրայով։ Իսկ ճանապարհը դեպի Աղվանք հավանական է կենթադրել դարձյալ Պեվտինգերյան քարտեզի Արտաշատ-Արմաստիկա-Լազո շրջանային հին ուղեգծով, որը քննության է առնված Մարկվարտի աշխատություններից մեկում[2]։

Հռոմեական զորքը գնացած պիտի լիներ այժմյան Ղանլիճայից Կիրովականի, Դիլիջանի, Իջևանի և Աղստաֆայի վրայով դեպի Կուր գետի հյուսիսակողմը գտնվող հին Կամբեճ գավառը, որը կենթադրում են այժմյան Յորա և Ալազան գետերի միջև։

Պոմպեյոսի արշավանքն Աղվանների դեմ մանրամասն նկարագրել են Կասսիոս Դիոնը և Պլուտարքոսը[3]։ Հռոմեական զորքը,

[1] Տես Դ ի ո ն, գք. 37, գլ. 3, 3—4։

[2] Տես J. Markwart, Das Itinerar von Artaxata nach Armastica auf der römischen Weltkarte, Wien 1828։

[3] Տես Դ ի ո ն, գք. 37, գլ. 3, 3—6, 4, 1—4 և 5, 1 և Պ լ ու տ ա ր ք ո ս, Պոմպեյոս, գլ. 35, 1—2, համեմատե նաև Ա պ պ ի ա ն ո ս, Միհրդատ., գլ. 103։



Պոմպեյոսի ճանապարհը Սեբաստոպոլիսից Աղվանք։

մեջ միևնույն գավառը, վորն առաջին վկայության մեջ անվանված էր Անահիտյան յերկիր, այժմ անվանված է Ասպիս: Ինչպես մանրամասն ցույց ենք տվել «Պոմպեյոսի շրջանային ճանապարհն Անդրկովկասում» մեր ռուսերեն ընդարձակ հոդվածում[1], այս գավառը Ասպիս կամ ավելի ճիշտ Կասպիս է անվանվել, հավանորեն, Պևտինգերյան քարտեզում նշանակված Caspiae մեծ կայարանի անունով, վորը գլխավոր կենտրոնավայրն է յեղել այժմյան Խոսպիայի շրջանի: Կասպիսը, ըստ յերևույթին, նույնպես՝ ինչպես և Յեկեղյաց գավառը, կոչվել է Անահիտյան յերկիր: Յեվրոպական պատմագետների յերկերում Պոմպեյոսի զորքերի 65/64 թվի ձմեռոցի տեղը հակառակ Դիոնի վկայության ցույց է տրված Փոքր Հայքում, վոր պարզապես սխալ է:

64 թվին Պոմպեյոսի զորամասերը, վերադառնալով Հայաստանից Պոնտոս՝ պաշարեցին ու նվաճեցին Պոնտոսում և, գլխավորապես, Փոքր Հայքում, Միհրդատի հարուստ գանձապահեստները և հռչակավոր արխիվները, վորոնք գտնվում էին Տալավրայում, Նոր Ամրոցում, Սինորիայում և այլ տեղերում: Այդ ամրություններում պահվում էին հազարավոր ոնիքսե սկահակներ, վորոնք ներզարդված էին վոսկով, հսկայական քանակությամբ անոթներ, մահիճներ, գահեր, նաև զրահներ ու սպառազինություններ, վորոնք, մեծ մասամբ, վոսկեզօծված էին և զարդարված թանկագին քարերով: Այս բոլոր հարստությունները և հելլենիստական արվեստի բոլոր թանկարժեք իրերը, վորոնք կողոպուտի չէին մատնվել Լուկուլլոսի արշավանքի ժամանակ՝ ուղարկվեցին բոլորը Պոնտոսից Հռոմ:

Մինչ Պոմպեյոսը պատերազմ էր վարում իբերների և ալվանների դեմ ու նվաճում էր Պոնտոսի ամրությունները՝ պարթևները գրավել էին Միջագետքը, վորն, ինչպես տեսանք, համաձայն Պոմպեյոսի հետ կնքած դաշինքի մինչև Յեփրատ գետը պատկանելու յեր նրանց: Պարթևները ներխուժել էին նաև Կորդվաց յերկիրը, վորի տիրապետության համար վեճ էր առաջացել իրենց ու հայերի մեջ: Սակայն Պոմպեյոսը պահանջեց Հրահատ Գ-ից մաքրել Կորդուքը, առարկելով վոր այդ յերկիրը պատկանում է, իրապես, Տիգրան Բ-ին: Չսպասելով նույնիսկ Հրահատ Գ-ի պատասխանին՝ նա հրամայեց իր ոգնականներից մեկին,

[1] Տես „Круговой путь Помпея в Закавказье", Вестник древней истории, Москва 1939, 4:

Աֆրանիուսին, գրավել ու հանձնել Կորդուքը հայոց թագավորին: Պլուտարքոսի պատմելով[1], հռոմեական այս զորապետը հալածեց պարթևներին մինչև Արբելա քաղաքը, վորը գտնվում էր Ադիաբենեյում:

Այստեղից Աֆրանիուսը պետք է անցներ հյուսիսային Միջագետքի վրայով Ասորիք, ուր նույն այդ ժամանակ, 64 թվին, պետք է գար նաև Պոմպեյոսը: Բայց 65/64 թվի ձմեռվա կեսին, ինչպես վկայում է Կասսիուս Դիոնը[2], Աֆրանիուսը և նրա զորքը ճանապարհը կորցրին ու մոլորվեցին և կարող էին ցրտի ու կենսամթերքների պակասության պատճառով Միջագետքի անապատներում կորստի մատնվել, յեթե նրանց չոգնեյին Կարրա քաղաքի (այժմյան Խառան) մակեդոնացի գաղթականները: Սրանք հյուրընկալեցին Աֆրանիուսին և առաջնորդեցին Ասորիք:

Չնայած Պոմպեյոսի գրգռիչ վոտնձգություններին և դաշնագրության անպատկառ խախտմանը, վորի համաձայն հյուսիսային Միջագետքը մինչև Յեփրատ գետը ճանաչված էր վորպես պարթևներին պատկանող յերկիր՝ Հրահատ Գ-ը չհամարձակվեց պատերազմել հռոմայեցիների դեմ: 64 թվի գարնանը նա դիմեց իր զորքերով Հայաստան և հարձակվեց Տիգրանի վրա, վորն ոգնություն խնդրեց դաշնակից հռոմայեցիներից: Այս դեպքը Պոմպեյոսի համար մի հարմար առիթ էր պատերազմ սկսելու նաև պարթևների դեմ, ինչպես այդ ցանկանում էին, իրապես, նրա կուսակիցներից ու սպաներից շատերը: Սակայն Պոմպեյոսը, վոր խիստ զգույշ էր և չուներ Լուկուլլոսի հանդուգն համարձակությունը, չուզեց բախտախաղի դնել իր ձեռք բերած աջողությունները և խուսափեց կռվից: Նա արդարանում էր նրանով, վոր հռոմեական ժողովուրդն այդ իրեն չէ հանձնարարել և վոր դեռևս վերջնականապես զինաթափ չէ արվել Միհրդատ Պոնտացին[3]: Պատերազմից հռոմայեցիների հետ, ինչպես ասացինք, խույս էր տալիս նաև պարթևների թագավոր Հրահատ Գ-ը, վորը նույնպես չունեցավ արիություն վոտքի յելնելու հռոմեական ուխտանենգ զորավարի դեմ: Յեվ վորովհետև նա նորից դեսպաններ էր ուղարկել Պոմպեյոսի մոտ՝ վերջինս հայտնեց նրան, վոր կուղարկե յերեք միջնորդ դատավորներ, վորոնք կըհարթեն սահմանների

[1] Պոմպեյոս, գլ. 36, 1:

[2] Գր. 37, գլ. 5, 5:

[3] Տես Կասսիուս Դիոն, գր. 37, գլ. 7, 1:

վերաբերյալ նրա ու Տիգրանի վեճը[1]: Հրահատ Գ-ը և Տիգրանը դադարեցրին պատերազմը և համաձայնեցին ընդունել միջնորդների վճիռները:

Այնուհետև ուղարկված դատավորները քննարկման յենթարկեցին նրանց գանգատներն ու պահանջները և կայացրին իրենց վճիռը հօգուտ Տիգրանի: Համաձայն նրանց վորոշման հայոց թագավորը ստացավ վոչ միայն Կորդվաց յերկիրը, այլև հյուսիսային Միջագետքի մի մասը: Ուշագրավ ե, վոր Հրահատը հենց ինքը ևս, ինչպես վկայում ե Կասսիուս Դիոնը[2], չառարկեց և հավանություն տվեց այդ վճռին, հույս ունենալով, վոր հետագայում գուցե կաջողվի իրեն հաշտվել հայերի հետ և ստանալ նրանցից օգնություն ընդդեմ հռոմայեցիների:

Յերբ կատարվում եյին այս անցքերը, Միհրդատ Պոնտացին, վորը վերահաստատել եր իր իշխանությունը Բոսփորյան թագավորության մեջ՝ խաղաղության նոր առաջարկություններ արեց հռոմայեցիներին և հայտնեց, վոր յեթե Պոմպեյոսը համաձայնի վերադարձնել իրեն Պոնտական թագավորությունը՝ ինքը պատրաստ ե հպատակվելու Հռոմին վորպես վասսալ և հարկատու: Պոմպեյոսը, ինչպես և 66 թվին, նրան պատասխանեց նորից, վոր նախ քան բանակցություններ վարելը՝ նա պետք ե անձամբ գա և հնազանդվի Հռոմին: Հաշտությունն այլևս անհնարին եր: Յեվ Միհրդատը վճռեց նախապատրաստվել Հռոմի դեմ նոր կռվի և մշակեց նոր արշավանքի հանդուգն մի ծրագիր: Նա մտադիր եր, դաշն կապելով սկյութների, թրակացիների և կելտերի հետ՝ արշավել Իտալիա Դանուբ գետի հովիտներով և Ալպյան լեռների վրայով, ինչպես այդ իրենից առաջ արել եր կարթագենացի Հաննիբալը: Այդ մեծ արշավանքի համար հարկավոր եյին, իհարկե, թե մարդկային և թե նյութական վիթխարի ուժեր ու միջոցներ: Յեվ 63 թվին, յերբ Միհրդատը վերջացնելու վրա յեր ռազմական իր պատրաստությունները, վորոնց ամբողջ ծանրությունն ընկնում եր Բոսփորի բնակչության ու քաղաքների վրա՝ հանկարծակի նրա դեմ բռնկվեց տարերային կատաղի ապստամբություն, վորին մասնակից եյին վոչ միայն գրեթե բոլոր քաղաքները, այլև նրա զորքն ու նրա վորդին Փառնակը: Ծերունի Միհրդատը հասկացավ, վոր իրեն չեն խնայելու և վոր այլևս

[1] Տես Դիոն, գք. 37, գլ. 7, 3, Ապպիանոս, Միհրդատ., գլ. 106 և Պլուտարքոս, Պոմպեյոս, գլ. 39, 3:

[2] Գք. 37, գլ. 7, 4:

փրկվելու վոչ մի հնար չկա: Պաշարված լինելով Պանտիկապեյոն (այժմյան Կերչ) քաղաքի իր ամրոցում՝ նա չուզեց անձնատուր լինել ապստամբներին և իր կյանքին վերջ տվեց ինքնասպանությամբ (63 թվի գարնանը):

Նրա դիակը, վոր ուղարկել եր Փառնակն Ասորիք՝ Պոմպեյոսի հրամանով թաղեցին Սինոպի մոտ գտնվող պոնտական թագավորների դամբարանում: Այժմ արդեն մեծ ու բազմամյա պատերազմը Միհրդատի դեմ, վորը սկսվել եր դեռ քսան և հինգ տարի առաջ՝ կարելի յեր համարել վերջացած:

Պատերազմը կարելի յեր ավարտված համարել նաև ամբողջ Արևելքում և Ասորիքում: 65 և 64 թվերին Պոմպեյոսի զորապետները՝ Գաբինիուսը, Սկավրուսը, Աֆրանիուսը և ուրիշները՝ նվաճել եյին հարավում Փյունիկիան, Պաղեստինան և Ասորիքի ու Միջագետքի մի քանի մանր իշխանությունները և քաղաքները: Հռոմեական հանրապետության սահմանները հասնում եյին այժմ Արևելքում մինչև Միջագետքի անապատները և գրեթե մինչև Յեգիպտոս:

64 և 63 թվերին Պոմպեյոսը քաղաքականապես կազմակերպեց իր նոր նվաճած յերկրները և կարգավորեց նրանց վարչական ներքին գործերը: Դեռևս 64 թվին, յերբ նա գտնվում եր դեռ Պոնտոսում, նա դարձրել եր Նիկոմեդեսի նախկին թագավորությունը, Բյութանիան, և Միհրդատի պոնտական թագավորության արևմտյան մասը հռոմեական նահանգ: Պոմպեյոսից առաջ թե Լուկուլլոսը և թե հռոմեական ծերակույտը Ասորիքի օրինական թագավոր եյին ճանաչել, ինչպես վերև տեսանք, Սելևկյան Անտիոքոս Ասիացուն: Իսկ այժմ Սելևկյանների իշխանությունը հայտարարվեց Ասորիքում վերացված և այս ամբողջ յերկիրը վերածվեց հռոմեական նահանգի: Վերոհիշյալ Սելևկյան Անտիոքոսը դառավ Հռոմի վասսալ և փոխանակ Ասորիքի ստացավ Կոմագենի փոքր թագավորությունը, վորի կենտրոնն եր Սամոսատ մայրաքաղաքը: Այս թագավորության սահմաններումն եր գտնվում Յեփրատի հռչակավոր գետանցքը Սելևկիա ամրոցի մոտ (այժմյան Բիրեջիկ), վորն ուներ ռազմական և առևտրական խոշոր նշանակություն:

Ընդարձակ նոր յերկրամասեր ստացան Հռոմի բարեկամ և դաշնակից Կապպադովկիայի Արիոբարզանես թագավորը և Գալատիայի Դեյոտարոս իշխանը, վորոնք մեծ ծառայություններ եյին մատուցել հռոմայեցիներին պոնտական և հայկական պա-

տերազմների ընթացքում։ Պոմպեյոսը տվեց Արիոբարզանեսին Կիլիկիայից անջատված մի քանի շրջաններ և ամբողջ Ծոփաց թագավորությունը։ Սրան եր այժմ պատկանում Յեփրատի նշանավոր գետանցքը և Տոմիսա ամրոցը։ Իսկ Դեյոտարոսը, վորը հայտարարվեց թագավոր՝ ստացավ Պոնտական թագավորության արևելյան մասը՝ արևելյան ծովափնյա Պոնտոսը, վորի մեջ եյին Փառնակիա և Տրապիզոն քաղաքները, ու նաև Փոքր Հայքը։ Դեյոտարոսի թագավորության հյուսիսակողմում գտնվող Կողքիսը տրվեց իբրև առանձին իշխանություն Արիստարքոսին, վորի անունով հայտնի յեն և հիշատակված են դրամագիտական յերկերում մի քանի դրամներ։

Յեփրատ գետի արևելակողմում Հռոմի գերիշխանությունը ճանաչել եյին. և նրա ազդեցության շրջանակի մեջ եյին համարվում վոչ միայն Հայաստանը, վորը հայտարարված եր բարեկամ ու դաշնակից հռոմեական ժողովրդի՝ այլև Ատրպատականը, Իբերիան, Աղվանքը, Օսրոենեն և մի քանի այլ արաբական փոքր ցեղեր հյուսիսային Միջագետքում։

Հայաստանը, վորը բարեկամ ու դաշնակից եր հայտարարվել Հռոմի և անվանապես ընդունել եր սրա գերիշխանությունը՝ դառավ այժմ հռոմեական աշխարհակալության ռազմական առաջապոստը։ Պոմպեյոսը հիմնապես այնուհետև փոխեց իր քաղաքականությունը նրա հանդեպ։ Տիգրանը ևս, ինչպես և Արիոբարզանեսը և Դեյոտարոսը, ստացավ Պոմպեյոսից և կամ սրա աջակցությամբ վոչ միայն Կորդուքը և հյուսիսային Միջագետքը, վորոնց միացումը Հայաստանին վերև հիշատակել եյինք, այլև Դերջանը և Ակիլիսենը[1], վորն այդ ժամանակ, հավանորեն, պարունակում եր իր մեջ բացի հին Յեկեղյաց գավառից նաև Դարանաղին, Մանանաղին, Աղյունը և Մզուրը[2]։ Այսպիսով Մեծ Հայաստանը, ինչպես տեսնում ենք, Տիգրան Բ-ի ժամանակ ևս իր սահմաններն ընդարձակել եր թե հայկական լեռնաշխարհի հարավակողմում և թե Փոքր Հայքի ու Ծոփաց աշխարհի հարակից շրջաններում։

Պոմպեյոսի սիրաշահական նոր քաղաքականությունը Մեծ Հայաստանի հանդեպ արտահայտվեց նաև նրանով, վոր «արքայից արքա» պատվանունը, վորը մինչև Տիգրանը կրել եյին պար-

[1] Տես J. Markwart, Die Genealogie der Bagratiden, եջ 63 և «Հին-Հայաստանի գլխավոր ճանապարհները», եջ 73։

[2] Տես Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, եջ 54—55։

թևների թագավորները և վորը, Տիգրանի աշխարհակալության տապալումից հետո, հռոմայեցիները սկզբում ճանաչել եյին իբրև Հրահատ Գ-ի տիտղոս՝ այժմ վերապահվեց միմիայն Տիգրանին, իսկ Հրահատ Գ-ին սկսեցին անվանել լոկ «թագավոր»։

Պարթևների թագավորը հարկադրված յեղավ անտրտունջ կերպով տանել այդ ակներև վիրավորանքներն ու թշնամանքները։ Հռոմի այս խաբված դաշնակիցը այժմ ինքն եր գտնվում յերկու կրակի մեջ, ինչպես 66 թվին նրա ախոյանը՝ Տիգրանը։ Ասորիքի սահմանում կազմ և պատրաստ կանգնած եր Պոմպեյոսի մեծ զորաբանակը, իսկ Միջագետքի և Ատրպատականի կողմից սպառնում եյին պարթևներին Հռոմի նոր դաշնակցի՝ Տիգրանի հայկական զորքերը։ Հրահատ Գ-ը հիմա նոր միայն հասկացած կլիներ, վոր իր դաշնակցությամբ հռոմայեցիների հետ նա, ինչպես նախազգուշացրել եր իրեն Միհրդատը՝ կորստյան եր մատնել վոչ միայն իր հարևաններին, այլև ինքն իրեն։

Պոմպեյոսի բացառիկ զգուշավորությունը պետք ե վերագրել, վոր նա չոգտվեց հանգամանքների բարեհաջող զուգադիպումից և հրաժարվեց հարձակվել պարթևների վրա, վորոնք մեծ պատերազմի համար դրեթե անպատրաստ եյին։ Իր յետևում նա վողջ ու անվթար թողեց անարգված ու անպատված նախկին իր դաշնակցին, վորը հնարավորություն եր ստանում նախապատրաստվելու և հարմար ժամանակ ընտրելու ընդդիմադրության և փոխվրեժի։ Ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վոր առաջիկա անխուսափելի պատերազմի ժամանակ Հայաստանի բարեկամությունն ու ոգնությունը բացառիկ մեծ կարևորություն եյին ստանում ինչպես հռոմայեցիների, նույնպես և պարթևների համար։ Հենց այդ եր պատճառը, վոր Հրահատ Գ-ը, ինչպես վերև տեսանք, դեռևս 64 թվին հարկադրվել եր փոխել իր թշնամական քաղաքականությունը Հայաստանի հանդեպ և լռելյայն համաձայնել եր զիջել Տիգրանին Կորդուքը և հյուսիսային Միջագետքը։ Շնորհիվ բարի հարևանական այդ նոր քաղաքականության հայերի և պարթևների մերձեցումը հնարավոր յեղավ, ինչպես հայտնի յե, Տիգրանի վորդու Արտավազդի թագավորության ժամանակ[1]։

[1] Մոմզենի և այլ պատմագետների յենթադրությունը, վոր Հրահատ Գ-ի վորդին Միհրդատ Գ-ը (57—54 թ.) պատերազմ եր սկսել Արտավազդ Բ-ի դեմ՝ մի պարզ թյուրիմացություն ե։ Յուստինուսի համապատասխան վկայությունը (գք. 42, գլ. 4, 1), ինչպես մատնանշել ե Գուտշմիդը՝ վերաբերվում ե, իրապես, Միհրդատ Բ-ի կռիվներին ընդդեմ Արտավազդ Ա-ին. տես Gutschmid, Ge-

Պոմպեյոսի Իտալիա վերադառնալուց հետո (61 թ.)՝ Տիգրան Բ-ը խաղաղ ու անվրդով թագավորեց Հայաստանում մինչև խորին ծերություն, հավանորեն, մինչև 56 կամ 55 թիվը: 56 թվին նա դեռ կենդանի յեր և հիշատակված ե Կիկերոնի ճառերից մեկում[1]: Իսկ Կրասսոսի արշավանքի ժամանակ, 54 թվին, Հայաստանում, ինչպես հայտնի յե, միանձնորեն թագավորում եր նրա վորդին Արտավազդ Բ-ը: Լուկիանոսը վկայում ե, վոր Տիգրանը վախճանվել եր խոր ծերության մեջ 85 տարեկան հասակում[2]: Յեթե այս վկայությունը, վորը կարող ե կասկածելի համարվել, հնարավոր լինի հետագայում հաստատել՝ կարելի կլինի յենթադրել, վոր նա ծնված պիտի լիներ 141 կամ 142 թ. (նախ քան մեր թվ.) և, ուրեմն, մոտ տասը տարով մեծ յեղած պիտի լիներ Միհրդատ Եվպատորից, վորը ծնվել եր համաձայն Ռեյնաքի 132 թվին[3]:

Տիգրանի կինը Կլեոպատրան, ըստ յերևույթին, թողած ե յեղել իր ամուսնուն և հեռացած ե յեղել իր հոր մոտ, հավանորեն, Կրտսեր Տիգրանի ապստամբության ժամանակ: 63 թվին, իր հոր ինքնասպանության ժամանակ, նա ևս, ինչպես հայտնի յե, գտնվել ե իր հոր հետ Պանտիկապեյոն քաղաքում[4]:

Տիգրան Բ-ի հետ վերջանում եր Հայաստանի մեծապետական վերելքի խիստ կարճատև շրջանը: Շատ պարզ ե, վոր այս հզոր թագավորը, վորը Հայաստանը դարձրել եր լայնածավալ պետություն և իրեն նպատակ եր դրել զարգացնել իր յերկրում հելլենիստական քաղաքային կուլտուրան և դուրս հանել հայ ժողովուրդը հետամնաց կացությունից՝ չե կարող համարվել միջակ ու սովորական մի դեմք: Սակայն պատմական խոշոր ու առաջավոր այս դեմքը, դժբախտաբար, աղավաղված ու խեղաթյուրված ե պատմագիտական գրեթե բոլոր օտար և հայ յերկերում:

Տիգրանի սխալ բնութագրերը բոլոր այդ յերկերում պետք ե ըստ իս անվերապահ կերպով մերժվեն, վորովհետև դրանք, ինչպես տեսանք, հիմնված են, գլխավորապես, Պլուտարքոսի և նրա սկզբնաղբյուրների չարամիտ և հնարովի հերյուրանքների վրա, վորոնք չունեն պատմական նշանակություն:

schichte Irans, էջ 86, ծան. 2 և Моммсен, Римская история, III, Москва 1887, էջ 292:

1 Տես Pro Sestio, 27, 59:

2 Տես Lucianus, Makrobioi, Bibl. Teubn.:

3 Տես Mithridate Eupator, էջ 52:

4 Տես նույնը էջ 405:

Տիգրան Բ-ը, ինչպես և Միհրդատ Եվպատորը, անտարակույս, հելլենիստական տիպի միապետներ եյին, վորոնք բուռն թափով առաջ եյին տանում Աղեքսանդր Մակեդոնացու ու նրա հաջորդների քաղաքակրթական մեծ գործը: Թե ինչպիսի խոր արմատներ եր ունեցել հելլենական կրթությունը հայկական արքունիքում՝ այդ յերևում ե նրանից, վոր Տիգրանի վորդին Արտավազդը, ինչպես վերև ասացինք, գրած ե յեղել հունարեն լեզվով վողբերգություններ, ճառեր և պատմական յերկեր, վորոնցից մի քանիսը հայտնի յեն յեղել Պլուտարքոսին[1]:

Տիգրանի և Միհրդատի վերանորոգչական ու առաջադիմական գործունեությանը վերջ դրին Լուկուլլոսի և Պոմպեյոսի արշավանքները: Հաղթող ու աշխարհակալորեն առաջ շարժվող Հռոմը վոչ միայն ամայացրեց և ավերակների կույտ դարձրեց Պոնտոսի և հարավային Հայաստանի հարուստ ու փարթամ քաղաքները ու գյուղերը, այլև, հաստատվելով մշտականապես Ասորիքում՝ հետզհետե առաջ բերեց ինչպես Հայաստանում, նույնպես և ամբողջ Առաջավոր Ասիայում, հելլենիստական քաղաքակրթության թուլացում և կուլտուրական հետադիմություն[2]: Հատկապես Հայաստանում ու նրա հարևան պարթևական թագավորության յերկրներում հելլենիզմը և հելլենական քաղաքային կուլտուրան հետզհետե զիջեցին իրենց տեղն իրանական հին կենցաղին ու ավանդություններին, վորոնք խոր արմատներ ունեյին առանձնապես այս յերկրներում:

* * *

Հռոմեական աշխարհակալության հաստատմամբ Յեփրատ ու Տիգրիս գետերի մոտ Հին Հայաստանի համար ստեղծվեց քաղաքական ծանր ու տանջալից բուֆերական կացություն, վորն այնուհետև տևեց յերկար դարեր: Գտնվելով յերկու հզոր թշնամիների՝ Հռոմի և Իրանի միջև՝ Հայաստանը հարկադրված յեղավ, հակառակ հայ ժողովրդի կենսական շահերին, մասնակից լինել կատաղի ու անվերջ պատերազմներին, վոր պարբերաբար վերսկսում եյին իրար դեմ հարևան մեծ պետությունները:

Հայկական լեռնաշխարհը հենց ինքը դառավ այնուհետև մի-

1 Տես Կրասսոս, գլ. 33, 1:

2 Տես Eduard Meyer, Blüte und Niedergang des Hellenismus in Asien, Berlin 1925, էջ 62 և այլն:

ջազգային պայքարի ու մրցությունների առարկա և կատարում էր հաճախ հենարան յերկրի և ռազմադաշտի ծանր դեր։ Կռվող պետությունների համար Հայաստանին տիրապետելը խիստ կարևոր էր և պայմանավորված էր վոչ միայն այն հանգամանքով, վոր նրա մեջ գտնվում էր համաշխարհային առևտրական ճանապարհների հյուսիսային մեծ գիծը, այլ, գլխավորապես, նրա ռազմական ու ստրատեգիական մեծ կարևորությամբ։ Շնորհիվ աշխարհագրական իր առանձնահատկությունների հայկական լեռնաշխարհը, ինչպես հայտնի յե, հսկայական բնական մի միջնաբերդ էր և ուներ առաջնակարգ նշանակություն ինչպես պաշտպանողական, նույնպես և հարձակողական պատերազմի համար։ Իբրև բարեկամ պարթևների՝ նա անհանդուրժելի մի վտանգ էր հռոմեական արևելյան նահանգների համար, իսկ իբրև դաշնակից Հռոմի՝ նա դարձյալ ահավոր սպառնալիք էր Պարթևական թագավորության համար։ Ուստի և քաղաքական մերձեցումը Հայաստանի հետ կամ նրա բռնի նվաճումը այնուհետև ամենահիմնական հարցը յեղավ թե Հռոմի և թե պարթևների ու Պարսկաստանի արտաքին քաղաքականության։

Հայաստանի այս աղետալի դրությունը, վոր ստեղծվել էր Պոմպեյոսի հաղթական արշավանքներից ու 66 թվից հետո, շարունակվեց վոչ միայն հռոմեական-պարթևական, այլև բյուզանդական-սասանյան, բյուզանդական-արաբական և հետնագույն շրջաններում։ Իբրև մարտադաշտ համառ ու արյունահեղ կռիվների՝ նա պարբերաբար ավերվում էր ու կողոպտվում և նրա բնակչությունը սրի յեր մատնվում և գերվում։ Հայաստանի բուֆերական դրությունն էր գլխավոր պատճառը, վոր նա անկարող յեղավ իր ձեռքն առնել սեպհական իր ճակատագրի տնորինումը և նրա քաղաքական վիճակը կարգավորում եյին դրեթե միշտ շահագրգռված մեծ պետությունները։

Վորպեսզի Հայաստանը կարողանար ազատվել բուֆեր-պետության իր դրությունից՝ հարկավոր էր, անշուշտ, վոր Արևմուտքի և Արևելքի սահմանը և նրանց մշտական կռիվների բեմը Հայաստանի մոտից տեղափոխվեր մի այլ տեղ։ Հայաստանի համար ցանկալի յեր, իհարկե, վոր Առաջավոր Ասիայում վերականգնվեր քաղաքական այն կացությունը, վոր նա ունեցել էր Աղեքսանդր Մակեդոնացու և կամ Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ժամանակ։

Սակայն այդ նրան այլևս բնավ չվիճակվեց։ Դարեր շարունակ արևմտյան և արևելյան մեծ աշխարհակալությունները մնացին անշարժ իրենց նույն հին դիրքերում՝ Յեփրատ ու Տիգրիս գետերի մոտերքում։ Յեվ Հայաստանը, վոր Պոմպեյոսի հաղթությունից և 66 թվից հետո կորցրել էր մեծապետական իր նախկին անկախությունը՝ մշտական զոհը դառավ արևմտյան և արևելյան մրցող մեծ պետությունների։

ՑԱՆԿ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Տիգրան Երկրորդի դարաշրջանը քաղաքական ու սոցիալական ցնցումների ալեկոծ մի ժամանակաշրջան էր, յերբ վճռական ու արմատական փոփոխություն էր յենթարկվում վոչ միայն Հայաստանի, այլև Արևմտյան Ասիայի ճակատագիրը: Սակայն այդ մեծ հեղաշրջումը և, մասնավորապես, այն պատմական անցքերը, վոր տեղի եյին ունեցել Հայաստանում, խեղաթյուրված են մեծ չափով պատմագիտական բոլոր յերկերում և մինչևիսկ դասական համարված ուսումնասիրություններում:

Խեղաթյուրումների գլխավոր պատճառներից մեկը պետք է համարել, անտարակույս, սկզբնաղբյուրների կողմնապահ ու աչառու տեղեկությունները, վոր անվերապահ կերպով հյուրընկալվել են պատմական նորագույն յերկերում:

Միհրդատ-Տիգրանյան դարաշրջանի հիմնական սկզբնաղբյուրներն են ականատեսների և ժամանակակից հեղինակների գրությունները:

1. Սուլլայի, Լուկուլլոսի, Պոմպեյոսի պաշտոնական տեղեկագրերը,

2. Սուլլայի հիշատակարանը,

3. Թեոփանես Միտիլենացու գրած Պոմպեյոսի կռիվների պատմությունը,

4. Արքիաս Անտիոքացու վիպերգը,

5. Սալլուստիուսի պատմությունը և

6. Կիկերոնի ճառերը:

Գլխավորապես, հենց այս սկզբնաղբյուրներից օգտված պիտի լինեյին, անշուշտ, մեծագույն մասը հետագա պատմիչների: Բայց հիշյալ զեկուցագրերը, ինչպես և նման կարգի գրությունները, համաձայն քննական նոր հետազոտությունների՝ միանգամայն անվստահելի յեն:

«Զեկուցագրերի հեղինակները,—ասում է Ռեյնաքը[1],—

---

[1] Տես Mithridate Eupator, եջ 418—419:

վստահ լինելով, որ իրենց սուտը չեն մերկացնի՝ ուռցնում էին իրենց աջողությունները, թաքցնում իրենց անաջողությունները, իսկ յերբեմն իրենց պարտությունները հայտարարում էին հաղթություններ,— Մուրենան, օրինակ, վորը պարտություն էր կրել՝ արժանացել էր հաղթահանդեսի: Նրանք, ծայր աստիճան չափազանցրել են թշնամիների զորաթվերն ու կորուստները, իսկ իրենցը համապատասխան չափերով պակասեցրել: Օրինակ, Տիգրանակերտի կռվի մասին իր զեկուցագրում Լուկուլլոսը Տիգրանի զորքերի թիվը ցույց է տվել մոտ 250.000 մարդ, մինչդեռ ուրիշ աղբյուրներ նույն զորքի թիվը հաշվում են միայն 80.000 մարդ[1]: Նույն այս կռվում իր կորուստը նա համարում է 5 սպանված և 100 վիրավոր, մինչդեռ թշնամու կորուստը յենթադրում է առնվազն 30.000 մարդ: Յեվ Լուկուլլոսն այդ արել է, հետևելով Սուլլայի օրինակին, ու կարելի յե վստահ լինել, վոր Պոմպեյոսը՝ միևնույն ուսուցչի աշակերտը, առավել ևս գերազանցել է իր նախորդներին»:

Նման չափազանցված ու սուտ տեղեկություններ հաղորդում են իրենց հովանավորների՝ Լուկուլլոսի և Պոմպեյոսի մասին՝ նաև Արքիաս Անտիոքացին ու Թեոփանես Միտիլենացին:

Համեմատաբար ավելի արժանահավատ են համարվում Սալլուստիուսը և Կիկերոնը: Սակայն հռոմեական այս հեղինակները ևս, վորոնք ոգտվել եյին, հավանորեն, վերոհիշյալ զեկուցագրերից կամ նման աղբյուրներից՝ զերծ չեն ըստ իս վորոշ չափազանցություններից:

Հռոմեական և հունական ավելի ուշ շրջանի աղբյուրները պետք է բաժանել յերկու խմբի:

Առաջին խմբին են պատկանում հռոմեական սկզբնաղբյուրների վրա հիմնված յերկերը, իսկ յերկրորդ խմբին՝ այն հունական աշխատությունները, վորոնց աղբյուր են ծառայել փոքրասիական բանավոր ավանդությունները և կամ գրավոր կորած յերկերը:

Առաջին խմբի պատմական աղբյուրներից առանձնապես կարևոր է համարվում հայրենասիրական վոգով գրված, աչառու ու կողմնապահ Տիտոս Լիվիուսի պատմությունը, վորը համառոտել են կամ մեծ չափով ոգտագործել Ֆլորուսը, Եվտրոպիուսը, Օրոզիուսը, Փրոնտինուսը և ուրիշները: Նույն այս խմբի աղբյուրներ են համարվում նաև Պլուտարքոսը և Ապպիանոսը, վորոնց մոտ Տիգրան Բ-ի ու Հայաստանի վերաբերյալ մանրամասն տեղեկությունները պահպանված են ամբողջությամբ:

[1] Տես Մ ե մ ն ո ն, գլ. 57:

Առաջինն այս հեղինակներից, Պլուտարքոսը, գրել է, ինչպես հայտնի յե, Սուլլայի, Լուկուլլոսի և Պոմպեյոսի կենսագրությունները: Սակայն Պլուտարքոսի այս գրվածքները պարզապես ներբողներ են ու խրատական պատմվածքներ, վորոնց մեջ պատմական փաստերը հաճախ քողարկված են կամ գունավորված են, մեծ մասամբ, հոգուտ մեծարված ու հերոսացված հռոմեական զորավարների: Յեվ ուշագրավ է, վոր հենց Պլուտարքոսի չափազանցություններն ու ակներև հերյուրանքները մեջ են բերվում շարունակ պատմագիտական նորագույն յերկերում:

Մյուս հեղինակը, Ապպիանոսը, ոգտվել է բացի Լիվիուսից նաև փոքրասիական կորած աղբյուրներից, հավանորեն, Նիկոլայոս Դամասկացուց և Պոսիդոնիոսից: Հատուկ ուշադրության արժանի յեն, անշուշտ, Ապպիանոսի պատմության այն մասերը, վորոնք քաղված են փոքրասիական չեզոք այս հեղինակներից:

Յերկրորդ խմբի՝ հելլենիստական Արևելքի հունական յերկերը՝ դժբախտաբար, շատ քիչ են և չեն պահպանված իրենց ամբողջական բովանդակությամբ: Այս աղբյուրներից կարևորագույնն է Մեմնոնի «Հերակլեյայի պատմությունը», վորի մեջ միջանկյալ կերպով ուշագրավ տեղեկություններ են հաղորդված Լուկուլլոսի արշավանքների մասին Հայաստանում: Մեմնոնի այն վկայությունները՝ վորոնք քաղված են Հերակլեյայի հին ժամանակագրություններից, ավելի ճիշտ են ու արժանահավատ, քան հռոմեական ինքնապարծ ու միտումնավոր հաղորդագրությունները:

Միանգամայն վստահելի յե ու արժանահավատ բացի Մեմնոնից նաև Ստրաբոնը, վորը ծնվել էր պոնտական Ամասիա քաղաքում 63 թվին (նախ քան մեր թվ.): Սրա նախնիքները վարել են Պոնտական թագավորության մեջ բարձր պաշտոններ և յեղել են ականավոր զինվորականներ: Իր ազգականներից ու հայրենակիցներից նա լսած կլիներ, անշուշտ, և հավաքած տեղեկություններ Միհրդատյան մեծ դարաշրջանի մասին, վորը նա նկարագրել էր իր «Պատմական հիշողություններ» (Ἱστορικὰ ὑπομνήματα) աշխատության մեջ: Նա ոգտվել էր միաժամանակ բազմաթիվ պոնտական հին պատմագիրների յերկերից, վորոնց նա իր աշխարհագրության մեջ անվանում է «Միհրդատյան մատե-

նագիրներ» (τὰ Μιθριδατικὰ συγγράφαντες, տե՛ս XI, 2, 14)։ Նրա պատմական մեծ աշխատության կորուստը պետք է համարել, անշուշտ, պատմական գրականության ամենամեծ կորուստներից մեկը։

Ստրաբոնի երկերից պահպանվել է միմիայն նրա աշխարհագրությունը, որի մեջ կան, բարեբախտաբար, միջանկյալ ու համառոտ տեղեկություններ թե Միհրդատյան կռիվների և թե Արտաշեսյան Հայաստանի ու Տիգրան Բ-ի մասին։

Մի քանի կարևոր վկայություններ, որ քաղված են, ըստ երևույթին, փոքրասիական չեզոք աղբյուրներից՝ ունի նաև Փլեգոն Տրալլեսցին իր «Ոլիմպիականք»-ում։

Ինչպես տեսնում ենք, երկրորդ խմբի երկերից մնացել են միմիայն հատուկտոր և ընդմիջվող վկայություններ, որոնք չեն կարող հիմք ծառայել պատմական անցքերի մանրամասն վերականգնման։ Սակայն պահպանված այս վկայությունները, որոնք դիմակազերծ են անում հռոմեական աղբյուրների ստերն ու աղավաղումները՝ պարզ ցույց են տալիս, որ այս վերջինների մինչև իսկ ընդունելի համարված վկայություններից պետք է օգտվել ամենամեծ զգուշությամբ։

Այդ անհրաժեշտ զգուշավորությունը բնավ չի պահված, դժբախտաբար, ո՛չ եվրոպական և ո՛չ էլ հայկական գիտական երկերում։

Մեր աշխատության մեջ ճշտված են ըստ հնարավորության, աղբյուրների համեմատական ուսումնասիրությամբ, հռոմեական հեղինակների հերյուրանքներն ու չափազանցությունները և Տիգրան Բ-ի ու նրա դարաշրջանի պատմությունը տրված է նոր լուսաբանությամբ։

ՑԱՆԿ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Ա. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Սուլլայի, Լուկուլլոսի, Պոմպեյոսի պաշտոնական տեղեկագրերը՝ ուղարկված հռոմեական սենատին Դարդանոսի դաշնագրից, Տիգրանակերտի առումից և Միհրդատի մահից հետո։

Այս գրություններից, որոնք չեն հասել մեր ձեռքը, օգտվել են Կիկերոնը, Ապպիանոսը, Պլուտարքոսը և ուրիշները։

2. Սուլլայի հիշատակարանից (Commentarium rerum gestarum), որը նույնպես կորած է, օգտվել են Պլուտարքոսը, Լիվիուսը և ուրիշները։ Որոշ հատվածներ, որ պահպանվել են այդ հիշատակարանից՝ հրատարակել է Պետերը, տե՛ս Peter, Historicorum Romanorum fragmenta, երկրորդ հրատարակություն, էջ 127 ևն։

3. Սալլուստիուս (87—34 թ. մեր թվ. առաջ), տե՛ս Historiarum fragm., ed. Fr. Kritzius, Leipzig 1853 և Historiarum reliquiae, ed. B. Maurenbrecher, fasc. I—II, 1891, 1894: Սալլուստիուսի երկը, որից պահպանվել են կարևոր հատվածներ՝ լավագույն աղբյուրն է համարվել Լուկուլլոսի արշավանքների։

4. Կիկերոն (106—43 մեր թվ. առաջ) — ճառեր, նամակներ ևն, տե՛ս Pro lege Manilia կամ De imperio Cn. Pompeii, Pro Murena, Pro Sestio, Pro Archia poeta, Pro Flacco և Academicorum libri duo: Հմմտե ճառերի ռուսերեն թարգմանությունը՝ „М. Туллий Цицерон, Полное собрание речей в русском переводе", под редак. Ф. Зелинского, т. I, СПБ 1901:

Բ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՈՒՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Պոսիդոնիոս Ապամեացին (մոտ. 135—51 մեր թվ. առաջ), որը գրել է Պոլիբիոսի պատմության շարունակությունը, նաև, հավանորեն, ինչպես ենթադրում է Ռեյնաքը (Mithridate Eupator, էջ 426), Պոմպեյոսի արշավանքների պատմությունը (տե՛ս

Str. XI, 1, 6): Պահպանված են և հրատարակված են հատվածներ, տես C. Müller, Fragmenta historicorum graecorum, III:

2. Թեոփանես Միտիլենացին, վորն անձամբ մասնակցել եր Պոմպեյոսի արշավանքներին, տվել ե սրանց պատմությունը՝ գունավորված ի նպաստ Պոմպեյոսի: Պահպանված հատվածները հրատարակված են Մյուլլերի ժողովածուի յերրորդ հատորում, տես Fragm. hist. graec., III:

3. Արքիաս Անտիոքացին, վորն ուղեկցել եր Լուկուլլոսին և մասնակցել նրա արշավանքներին, գրել ե հատուկ մի վիպերգ ի մեծարումն Լուկուլլոսի, իր հովանավորի: Ուշագրավ ե, վոր նաև այս կորած բանաստեղծական ներբողն աղբյուր ե ծառայել Լիվիուսին և Պլուտարքոսին (տես Reinach, Mithridate Eupator, եջ 427):

Գ. ՀՌՈՄԵԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ՈԳՈՍՏՈՍՅԱՆ ՅԵՎ ԱՎԵԼԻ ՈՒՇ ՇՐՋԱՆՆԵՐԻ

1. Տիտուս Լիվիուսի (59 թ. նախ քան մեր թվ.—17 մեր թվ. հ.) ընդարձակ պատմությունից, վոր վերաբերվում ե Տիգրան Բ-ի շրջանին՝ պահպանվել են համապատասխան գրքերի համառոտ բովանդակությունները (periochae) և քաղվածքներ Ֆլորուսի, Եվտրոպիուսի, Որոզիուսի և ուրիշ հեղինակների յերկերում:

2. Պոմպեյուս Տրոգուսը, վորը ժամանակակից եր Լիվիուսին՝ գրել ե ընդհանուր պատմություն (Historiae Phiippicae), վորի նախաբանները և համառոտ բովանդակությունը պահպանվել են Յուստինուսի յերկում, տես M. Juniani Justini, Epitoma historiarum Philippicarum Pompeii Trogi, ex recen. Fr. Ruehl, Lipsiae. 1915:

3. Վելլեյուս Պատերկուլուսը, վորը ժամանակակից եր Տիբերիուս կայսեր (14—37 մեր թվ. հ.), գրել ե համառոտ հռոմեական պատմություն, տես Vellei Paterculi, Ex historiae Romanae libris duobus quae supersunt, ed. C. Halm, Bibl. Teubn.:

4. Ֆրոնտինուսը, վորը ժամանակակից եր Դոմիտիանոսի (81—96 մեր թվ. հ.)՝ գրել ե Strategematon libri 4, Bibl. Teubn.:

5. Ֆլորուսը գրել ե յերկրորդ դարի առաջին կիսում (մեր թվ. հ.) հռոմեական պատերազմների պատմությունը մինչև Ոգոստոս: Նա ոգտվել ե, գլխավորապես, Լիվիուսի ընդարձակ պատմությունից: Տես Հալմի հրատարակությունը՝ Flori Juli, Epitomae de T. Livio bellorum annorum DCC libri II, ex rec. C. Halm, Bibl. Teubn.:

6. Եվտրոպիուսը կազմել ե չորրորդ դարում համառոտ մի ձեռնարկ հռոմեական պատմության մինչև 364 թ. (մեր թվ. հ.), տես Eutropii, Breviarium histor. Roman. Rec. Fr. Ruehl, Bibl. Teubn.

7. Որոզիուս քահանայի Սպանիայում գրված հեթանոսական աշխարհի համառոտ պատմությունը պարունակում ե իր մեջ քաղվածքներ հնագույն յերկերից և ունի կարևոր մանրամասնություններ Լուկուլլոսի և Պոմպեյոսի արշավանքների մասին, տես Orosii Pauli, Historiarum adversus paganos libri VII, recen. C. Zangemeister, Bibl. Teubn.

Դ. ՀՈՒՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ՈԳՈՍՏՈՍՅԱՆ ՅԵՎ ԱՎԵԼԻ ՈՒՇ ՇՐՋԱՆՆԵՐԻ

1. Ստրաբոն (63 նախ քան մեր թվ.—19 մեր թվ. հ.), տես Strabonis, Geographica, recogn. A. Meineke, vol. I—III, Lipsiae 1915—1925:

2. Նիկոլաոս Դամասկացին, Հերովդես Մեծի (37—4 մեր թվ. առ.) քարտուղարը, գրել ե ընդհանուր պատմություն, վորից մնացել են միայն հատվածներ, տես C. Müller, Fragm. hist. graec., III: Այս պատմությունն աղբյուր ե ծառայել Ապպիանոսին:

3. Պլուտարքոսը (մոտ 46—120 մեր թվ. հ.) գրել ե Սուլլայի, Լուկուլլոսի, Պոմպեյոսի, Սերտորիուսի, Կրասսոսի և այլ կենսագրություններ, տես Plutarchi vitae, graece et latine, Փարիզի հրատ. Th. Döhner-ի և F. Dübner-ի, հտ. I—V, 1846—1855:

4. Հովսեպոս Փլավիոսը (ծնվ. ե 37/38 թվ. մեր թվ. հ.) գրել ե «Հրեական պատերազմ» և «Հրեական հնախոսություն» յերկերը, տես Josephi Flavii, opera omnia, recogn. Eman. Bekker, Bibl. Teuhn.

5. Փլեգոն Տրալլեսցին, Հադրիանոս կայսեր (117—138 մեր թվ. հ.) ժամանակակից հեղինակը՝ գրել ե ժամանակագրական մի յերկ «Ոլիմպիադներ» վերնագրով (’Ολυμπιάδες), վորից մնացել են հատվածներ, տես C. Müller, Fragm. hist. graec., III:

6. Ապպիանոս Ալեքսանդրիացին, վորը ժամանակակից եր Հադրիանոս (117—138 թ. մեր թվ. հ.) և Անտոնինոս (138—161 մեր թվ. հ.) կայսրների՝ գրել ե հռոմեական պատմություն, վորի մեջ Տիգրան-Միհրդատյան դարաշրջանի անցքերը նկարագրված են 11-րդ և 12-րդ գրքերում (XI—Συριακή, XII—Μιθριδάτειος), տես Appiani Alexandrini, Historia Romana, ed. L. Mendelssohn, 2 vol., Bibl. Teubn.

7. Մեմնոնը (ժամանակն անհայտ) գրել է Հերակլեյայի պատմությունը, տես Memnonis, Historiarum Heracleae Ponti, ed. C. Orellius, Lipsiae 1816.

8. Կասսիուս Դիոնը (մոտավ. 155—235 մեր թվ. հ.) գրել է հռոմեական պատմություն, տես Cassii Dionis Cocceiani, Historiarum Romanorum quae supersunt, ed. Boissevain, vol. I, Berolini 1895:

Ե. ՕԺԱՆԴԱԿ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Diodorus, Biblioth. histor., ex recensione L. Dindorfii.
2. Isidori Characeni, Stathmoi Parthicoi, *տես* C. Müller, Geogr. graeci min., I.
3. Lucianus, Makrobioi, Bibl. Teubn.
4. Herodoti, Historiarum libri IX, Bibl. Teubn., *տես նաև ռուսերեն թարգմանությունը՝* Ф. Г. Мищенко-*յի,* Москва 1885.
5. C. Plinii Secundi Naturalis Historiae, *տես* Histoire naturelle de Pline, avec la traduction en francais, par M. É. Littré, t. I—II, Paris 1883.
6. Polybii historiae, Bibl. Teubn., *տես նաև* Всеобщая история в 40 книгах, перевод Мищенка, т. I—III, Москва 1890—1899.
7. Ptolemaei, Geographia, *հրատ.* C. Müller-*ի:*
8. Valeri Maximi factorum et dictorum memorabilium libri IX, rec. C. Kempf, Bibl. Teubn.
9. C. Cornelii Taciti opera, adc. Weise, T. I, Annalium libri XVI, Lipsiae 1829.
10. *«Մովսիսի Խորենացւոյ, Պատմութիւն Հայոց», աշխատութ. Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս 1913:*
11. *«Փաւստոսի Բուզանդացւոյ, Պատմութիւն Հայոց», չորրորդ տպագր., Վենետիկ 1889:*

ՑԱՆԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Աբեղյան Մ., Հայ ժողովրդական առասպելները, Վաղարշապատ 1899—1901:

Адонц Н., Армения в эпоху Юстиниана, СПБ 1908.

Kévork Aslan, Études historiques sur le peuple arménien, Paris 1909.

Հ. Յ. Ասատուրյան, «Քաղաքական վերաբերութիւններ ընդմէջ Հայաստանի և Հռովմայ 190-էն ն. Ք. մինչև 428 յ. Ք.», Վենետիկ 1912:

Belck W., Majafarkin und Tigranokerta, Zeitschrift für Ethnologie, 1899.

Նույնի, Der Weg Xenophons auf seinem Rückzuge bis in die Ebene von Alaschgert, Verhandl. der Berl. anthrop. Gesellschaft, 1899.

Брюсов В., Летопись исторических судеб армянского народа, Москва 1918.

Գարագաշյան Ա. Մ., «Քննական պատմութիւն Հայոց», II, *Թիֆլիս 1895:*

Գելցեր Հ., «Համառօտ պատմութիւն Հայոց», թարգմ. Հ. Գր. վ. Գալեմքյարյանի, Վիեննա 1897:

Gutschmid Alf. von, Geschichte Irans und seiner Nachbarländer von Alexander dem Grossen bis zum Untergang der Arsaciden, Tübingen 1888.

Նույնի, Untersuchungen über die Geschichte des Königreichs Osroëne, Mém. de l'Acad. Imp. des sciences de St.-Pétersbourg, 1887.

Դադբաշյան Հ., Սուղյգ Հայոց պատմություն, Թիֆլիս 1914:

Dolens et Khatch, Histoire des anciens Arméniens, Genève 1907, *տես նաև հայերեն թարգմանությունը Ռ. Բաջբերունու, Թիֆլիս 1909—1910:*

Duruy Victor, Histoire des Romains, t. II, Paris 1890.

Drumann, Geschichte Roms, bearbeitet von P. Groebe, Band IV, Berlin 1899.

Eckhardt Kurt, Die armenischen Feldzüge des Lukullus, Klio, Bd. IX, Heft 4 und Bd. X, Heft 1 und 2. *Տես նաև Վ. Գարանֆիլյանի հայերեն թարգմանությունը՝ «Տիգրան Բ. և հայ-լուկուլլեան պատերազմները», Վիեննա 1926. Ազգ. մատ. ՃԺԳ։*

Lehmann-Haupt C. F., Armenien einst und jetzt, Bd. I, Berlin 1910.

Լեո, Հայոց պատմություն, հատ. առաջին, Թիֆլիս 1917.

Халатьянц Г., Очерк истории Армении, Москва 1910.

Նույնը, Армянские Аршакиды, Москва 1903.

Karbe Hans, Der Marsch der Zehntausend vom Zapates zum Phasis-Araxes. Wissenschaftliche Beilage zum Jahresbericht des Königstädtischen Gymnasiums zu Berlin, 1898.

Կարրիեր Ա., «Հեթանոս Հայաստանի ութ մեհեաններն Ագաթանգեղոսի և Մ. Խորենացւոյ համեմատ»։ Թրգմ. Հ. Հ. Վ. Տաշյանի, Վիեննա 1899. Ազգ. մատ. ԼԵ։

Kiepert H., Ueber die Lage der armenischen Hauptstadt Tigranokerta, Monatsberichte der Akademie der Wissenschaften zu Berlin, 1873.

Kiepert R., Atlas von Kleinasien in 24 Blättern, 1902—1906.

Ковалев С. И., История античного общества, эллинизм и Рим, Ленинград 1936.

Հյուբշման Հ., «Հին Հայոց տեղւոյ անունները», թարգմ. Հ. Բ. Պիլեզիկճյանի, Վիեննա 1907, Ազգ. մատ. ԾԳ։

Hultsch Fr., Griechische und römische Metrologie, zw. Bearb., Berlin 1882.

Манандян Я. А., О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Эривань 1930.

Նույնի, Ֆեոդալիզմը Հին Հայաստանում, Յերևան 1934։

Նույնի, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեյտինգերյան քարտեզի, Յերևան 1936։

Նույնի, Круговой путь Помпея в Закавказье, Вестник древней истории, Москва 1939, 4.

Markwart J., Eranschahr nach der Geographie des Ps. Moses Xoren., Berlin 1901.

Նույնի, Untersuchungen zur Geschichte von Eran, I, Göttingen 1896, Philologus, Bd. 54—55.

Նույնի, Südarmenien und die Tigrisquellen nach griechischen und arabischen Geographen, Wien 1930.

Նույնի, Die Entstehung und die Wiederherstellung der armenischen Nation, Potsdam 1919.

Նույնի, Das Itinerar von Artaxata nach Armastica auf d. römischen Weltkarte, Skizzen zur historischen Topographie und Geschichte von Kaukasien, Handes Amsorya, 1927, № 11.

Նույնի, Die Genealogie der Bagratiden und das Zeitalter des Mar Abas und Ps. Moses Xoren., Caucasica, fasc. 6, 2 Teil, Leipzig 1930.

Meyer Ed., Blüte und Niedergang des Hellenismus in Asien, Berlin 1925.

Merivale Ch., General history of Rome, 1875.

Miller Konrad, Itineraria Romana, Römische Reisewege an der Hand der Tabula Peutingeriana, Stuttgart 1916.

Moltke H. von, Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei (1835—1839), Berlin.

Моммсен Ф., Римская история, том второй, перевод В. Н. Неведомского, Москва 1887.

Моммсен Ф., Римская история, том третий, перевод А. Веселовского, Москва 1887.

Mommsen Th., Römische Geschichte, Bd. V, Dritte Auflage, Berlin 1886.

Նույնի, Die Lage von Tigranokerta, Hermes IX, 1887.

Morgan J., Histoire du peuple arménien, Nancy-Paris-Strasbourg 1919.

Низе Б., Очерк римской истории и источниковедения, издание третье, СПБ 1910.

Нич К. В., История римской республики, Москва 1908.

Chapot Victor, La province romaine proconsulaire d'Asie, depuis ses origines jusqu' à la fin du Haut-empire, Paris 1904.

Չամչյան Մ., Պատմություն Հայոց, I—III, *Վենետիկ 1784—1786։*

Spiegel F., Eranische Alterthumskunde, Bd. III, Leipzig 1878։

Reinach Th., Mithridate Eupator roi de Pont, Paris 1890.

Sachau E., Ueber die Lage von Tigranocerta, Abhandl. der kgl. Akademie der Wissensch. zu Berlin, 1880.

Страбон, „Всеобщая история в 40 книгах“, перевод Мищенка, т. I—III, Москва 1890—1899.

Taylor J. G., Journal of a tour in Armenia, Kurdistan and upper Mesopotamia, *տես ռուս. թարգմ.* Н. Астафьев-*ի*, Матер. для географии Аз. Турции, прил. к тому II Изв. Кавк. Отд. Рус. Геогр. Общ., Тифлис 1874.

Tournebize, F., Histoire politique et religieuse de l'Arménie, Paris 1900.

Fabricius, Theophanes von Mitylene und Q. Dellius, als Quellen der Geographie des Strabons, Strassburg 1888.

Ферреро Г., Величие и падение Рима, т. I, перевод А. Захарова, Москва 1915.

ՑԱՆԿ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ

Աբաս, Աբանտ գետ 204
Աբասթումանի 202
Աբեղյան Ման. 69
Ագաթանգեղոս 45, 58
Ադիաբենե 29, 48, 57, 62, 113, 121, 141, 207
Ad Confluentes *կայարան* 187
Ad Metcurium *կայարան* 200
Ադոնց Նիկ. 58, 105, 181, 182, 184
Ad Tygrem *կայարան* 97
Ադրաբանա ամրոց 48
Աթենաս 44, 45, 68
Աթենք 41, 45, 67, 88
Ալագան գետ 202, 204
Ալաշկերտ 188
Ալաջա 183
Ալպյան լեռներ 208
Ալքաուդոնիոս, Ալքայդամնոս՝ ցեղապետ արաբների 137
Ախալցխա 198, 200
Ախալքալաք 198
Ակիլիսենե ('Ακιλισηνὴ) 21, 179, 181, 183, 210
Ակիսենե ('Ακισηνή) 20
Ակն 181
Աղբակ ('Αλβάκη=Συμβάκη) 48, *Մեծ Աղբակ* 47
Աղեքսանդր Մակեդոնացի, Աղեքսանդր Մեծ 11, 13, 20, 40, 41, 60, 61, 139, 213, 214
Աղեքսանդր՝ «որդի Յոհաննու» 92
Աղեքսանդրիա՝ «դշխոյ Հրէից» 92
Աղձնիք 28, 64, 65, 72, 98, 146
Աղյուն 182, 210
Աղստաֆա 202
Աղվանք 28, 29, 113, 202, 204, 210
Աղրի-Դաղ 188, *տես Հայկական Պար*
Ամասիա քաղաք 60
Ամաստրիս քաղաք 38, 59
Ամիդ քաղաք 97, 98, *տես Դիարբեքիր*
Ամիսոս քաղաք 17, 31, 59, 85, 88, 90, 91, 160, *Ամիսոս նավահանգիստ* 80
Ամնիաս գետ 39
Ամփիկրատես հռետոր 67
Անահիտ 67, 143
Անահիտյան յերկիր 180, 198, 206
Անգոլիսենե ('Αγγολισηνὴ) 176, 179
Անդրկովկաս 206
Անի ամրոց 44, *Անի-Կամախ* 45, 181
Աննիբալ 23, 156, *տես Հաննիբալ*
Անտիոք քաղաք 50, 51, 56, 63, 86, 136, 137, *Անտիոք, որն անվանվում է Եպիդափնե* 85
Անտիոքոս Մեծ 15, 20, 23
Անտիոքոս Դ. Եպիփանես 25
Անտիոքոս Եվսեբես 137, *Անտիոքոս Բարեպաշտ* 195
Անտիոքոս Ասիացի 137, 209
Անտիոքոս Գրիպոս 137
Անտիոքոս՝ իշխան Կոմագենի 137
Անտիպատր՝ Սիսիդի որդին 178
Անտիտավրոս 21
Անտոնինոսի ճանապարհացույց 184
Աշկալա 183, 185
Աշտարակ 200
Ապարան 202
Ապարն կամ Պարն ցեղ 14
Ապոլլոն 68
Ապոլլոնիդես պատմագիր 8
Ապպիանոս պատմագիր 24, 27, 28,

34, 39, 51, 52, 54, 63, 74, 90, 91, 96, 98, 100, 101, 105—108, 113, 116, 117, 120, 121, 123, 126—128, 130, 132, 134, 139, 140, 142, 143, 148, 157, 164, 166, 167, 168, 172, 173, 180—182, 184, 185, 188, 190—194, 196
Ապպիոս Կլավդիոս՝ Լուկուլլոսի դեսպանը 28, 84—88, 90, 97, 137, 138
Առաջավոր Ասիա 11, 13, 24, 81, 136, 213, 214
Ասդրապատ քաղաք 14
Ասիա 10, 11, 15—17, 37, 40, 43, 44, 61, 73, 91, 100, 111, 143, 163, 166, պրովինցիա Ասիա 15, 16, 75, 77, 78, 89, 168, հռոմեական Ասիա 70, 89, 90, 169
Ասորիք 14, 49—54, 61, 62, 87, 88, 93, 137, 193, 194, 207, 209, 211, 213
Ասպիս ("Ασπις) 204, 206
Астафьев 182
Աստղիկ 68
Աստուրյան Հ. 7, 49, 51, 86, 107, 119, 158
«Ատալանդ փոքրիկ կղզեակ» 45
Ատտալոս Գ.՝ Պերգամոնի թագավոր 15
«Ատտիկե» 44
Ատրպատական 14, 23, 24, 26, 28, 29, 31, 47—49, 50, 113, 143, 167, 210, 211
Արաբիա 113
Արածանի գետ 117, 119, 145, 149, 150, 152—155, 158
Արամազդ 67
Արարատյան դաշտ 24, 61, 158, 188
Արաքս գետ 23, 187, 188, 191
Արաքսի դաշտ 23
Արբելա 48, 50, 207
Արդոատես ('Αρδοάτης)՝ արմենների թագավոր 18
Արզվին 185
Արևելք 9—11, 13, 15—17, 29, 31, 34, 36, 37, 57, 94, 141, 143, 144, 170, 209, 214
Արևմուտք 10, 11, 13, 15, 57, 143, 214
Արգն քաղաք 65
Արիոբարզան Ա. Հռոմեասեր՝ թագավոր Կապպադովկիայի 30, 32—35, 38, 74, 94, 95, 119, 168, 209, 210
Արիարաթ Բ., հիմնադիր Կապպադովկիայի թագավորության 18
Արիարաթ Ե., թագավոր Կապպադովկիայի 22, 59
Արիարաթ Թ., որդի Միհրդատ Եվպատորի՝ թագավոր Կապպադովկիայի 30, 33, 35, 39—41
Արիարաթների թագավորություն 30
Արիստարքոս 210
Արդանա 97
Արմաստիկա 202, տես նաև Հարմոզիկա
Արմավիր 25, 67
Արմենիա 21, 24, 26—29, 31, 48, 180, Արևելյան Արմենիա 29, Արևմըտյան Արմենիա 29
Արշակ Ա., հիմնադիր Պարթևական թագավորության 14
Արշակունի (հայ) 71
Արշակունիներ (պարթև) 14, 47, 48
Արուճ 158
Արսլան Գեվորգ 7
Արտագ գավառ 159
Արտանես՝ թագավոր Ծոփքի 28
Արտաշատ քաղաք 23—25, 31, 61—63, 66, 104, 145, 149, 150, 152, 155, 158, 159, 186—188, 190, 191, 198, 202
Արտաքսատա կամ Արտաքսասատա 23
Արտաշես Աշխարհակալ՝ թագավոր Հայոց 44, 45
Արտաշես Ա., թագավոր Մեծ Հայաստանի 20—28, 47, 57, 61
Արտաշեսյան թագավորություն 22, 28, 57
Արտաշեսյան Հայաստան 23, 25, 98
Արտաշեսյան հարստություն 20, 24
Արտաշեսյան տոհմ 69
Արտավազդ Ա., որդի Արտաշես Ա-ի 26, 27, 211
Արտավազդ Բ., որդի Տիգրան Բ-ի 67, 195, 211, 212, 213
Արտավան Ա., թագավոր Պարթևաց 26
Արտեմիդե 44, 45, 60, 67, Արտեմիս 96
Արտոքես՝ թագավոր Իբերիայի 200, 201, 204
Արքեղայոս, պոնտական զորավար 42
Արքիաս Անտիոքացի, բանաստեղծ 95
Արքսատա քաղաք 23
Ափսարոս գետ 185
Ափրանիուս 198, 207, 209
Աֆրոդիտե 44, 45, 68
Աքեմենյան Պարսկաստան 17, 19, 20, 67, 97, 214
Աքեմենյաններ 17, 18, 29, 30, 57

Բաբելոն 63, 64
Բաբելոնիա 48
Բագադատես (*Βαγαδάτης)՝ ստրատեգ և կուսակալ Ասորիքի ու Արևելյան Կիլիկիայի 51, 137
Բագարատ 51, 52, 56
Բագառիճ 45
Բագավան 158, 188
Բագոաս՝ զորավար Տիգրան Բ-ի 33, 34
Բագրատունիներ 51
Բաթում 185
Բալկանյան թերակղզի 19
Բակտրիա 14
Բաշքալե 47, 159
Բասգոյղարիզա 178
Բասեն 150
Բասորոբեդա (Βασοροπέδα) 21
Բատման-սու 113, 115
Բարձր Հայք 187
Բելք Վ. 65, 114, 115
Բեովտիա 42
Բերեջիկ 209
Բերկրի 159
Բիթանիա 16—19, 24, 34, 38, 75, 76, 77, 79, 166—169, 209
Բիթանիայի թագավորություն 19, 37
Բիթլիս 145
Բնաբեղ բերդ 107
Բոսփոր 71, 76, 77, 79, 179, 208
Բոսփորյան թագավորություն 80, 91, 185, 202

Գաբինիուս՝ ժողովրդական տրիբուն 166, 169, 170
Գաբինիուս՝ զորավար Պոմպեյոսի 209
Գազիուրա գյուղաքաղաք 60, 162, 164, 165
Գալատիա 16—19, 76, 167, 174, 194, 209
Գաղտառիճ 183, 188
Գայլ գետ 177, տես նաև Լիկոս գետ և Կելկիտ
Գարագաշյան Ա. 130
Գետախառնուրդի մոտ 187, տես Ad Confluentes
Գլաբրիոն տես Մանիուս Ակիլիուս Գլաբրիոն
Գոգարենե Γωγαρηνὴ տես Գուգարք
Գողթն 25
Գորդիոս՝ խնամակալ Միհրդատ Եվպատորի փոքրահասակ որդու Արիարաթի 32, 33, 35
Գուգարք=Գոգարենե (Γωγαρηνή) 21
Գուտշմիդ Ա. 49, 81, 211
Գուրաս, յեղբայր Տիգրան Բ-ի 56, 137, 159
Գրաքխոս տես Կայոս Գրաքխոս

Դադասա ամրություն 164
Դաղբաշյան Հ. 130
Դանալա ամրոց 174
Դանուբ գետ 208
Դաշտային Կիլիկիա (Cilicia Pedias), տես Կիլիկիա
Դաստեյրա, Դաստրակուս 176, 177—182, 184
Դարանաղի 182, 210
Դարդանոս 43, 73, 76

Դեմետրիոս Սկեփսացի 110
Դեյոտարոս 209, 210
Դերջան գավառ (Δερξηνὴ) 21, 183, 210
Դիարբեքիր (Ամիդ) 97, 98
Դիարբեքիրի գետ 115
Դիդեմ (Didyma) կայարան 150, 155
Դիլիջան 202
Դիոդորոս Սիկիլիացի 18, 22, 24, 25, 61
Դիոն տես Կասսիոս Դիոն
«Դիոնիս, որդի Կղէոպատրեայ» 92
Դիոնիսիոս 40
Դիոս 44, 45
Դիոսկուրիաս 18, 185
Դիոփանտես պատմագիր 8
Դոլենս և Խաչ 7, 86
Դոստալ 181, 182
Դորիլաոս 60
Դրուման 127

Եգեյան ծով 41, 77, 169
Եդեսա 49
Ելլադա (Հելլադա) 41, 44, 45
Ելիմայիս 143
Եկբատանա 31, 48
Ենդերես 177
Եպիդափնե տես Անտիոք քաղաք
Եվտրոպիոս 64, 65, 116, 117, 139
«Երէզ» 45
Երզրում 185
«Եւրիու», Եվբեա մեծ կղզի 45
Եփեսոս 93, 100, 101
Եքհարդ Կուրտ 7, 33, 82, 86, 98, 107, 111, 113, 117, 118, 127, 128, 130, 139, 143—146, 149, 150, 153—155, 157, 158

Զագրակարտա քաղաք 14
Զախո 159
Zanserio կայարան 66
Զարբիենոս, թագավոր Կորդվաց 85, 88, 137, 138
Զարեհ՝ թագավոր Ծոփքի, Ակիլիսենեյի և Ոդոմանտիսի 20, 21, 23, 27, 28, Զարիադրես 98
Զարեհ՝ որդի Տիգրան Բ-ի 173
Զարիադրես տես Զարեհ
Զարմանալի դղյակ 45
Զելա 164, 165
Զեվգմա 25, 49, 51, 54, 135
Զևս 67, Զևս Ստրատիոս 60
Զիմարա (Zimara) 182, 184

Թեմիսկիրա նավահանգիստ 80
Թեոփանես Միտիլենացի 179, 191
Թերմոդոնդ գետ 74
Թիլ ավան 45
Թորթում 185
Թրակիա 19, 41, 45

Իբերիա 28, 29, 31, 54, 135, 201, 204, 210
Իգողլու (Իգոլի) 94
Իջևան 202
Իսավրիա 78
Isumbo տես *Tsumbo
Իսպանիա 73, 75
Իտալիա 11, 43, 89, 163, 169, 174, 195, 208, 212
Իրան 13, 213
Իրիս գետ 162

Լագո կայարան 202
Լամփսակոս քաղաք 78, 79
Լեման-Հաուպտ Կ. 7, 63, Լեման 65
Լեո 145
Լեռնային Կիլիկիա (Cilicia Tracheia), տես Կիլիկիա
Լիկաոնիա 18, 111, 165
Լիկոս գետ 82
Լիվիոս տես Տիտոս Լիվիոս
Լուկիանոս 212
Լուկիոս Փաննիոս 161
Լուկիոս Փլակկոս 200
Լուկուլլոս 7, 9, 12, 53, 54, 63, 64, 72, 77—80, 82, 84—97, 100—109, 112, 114—130, 132—139, 141—146, 148—150, 152, 153, 155—171, 174, 175, 192, 194, 195, 197, 206, 207, 209, 213
Լուրիստան 144
Լուցիոս Մագիոս 75
Լուցիոս Փաննիոս 75

Խալաթյանց Գր. 7, 53, 57, 92, 100, 145
*Chalchdiaris 183, տես Գաղտառիճ
Խառան 207, տես նաև Կարրա
Խարբերդ 97
Խարոնդաս 59
Խոյ 158
Խոսպիա 198, 200, 202, 206
Խոտենե (Χωτηνὴ) գավառ 185
Խորենացի տես Մովսես Խորենացի
Χορζηνὴ 185, տես Քորձենե

Ծումբ (*Tsumbo=Isumbo) կայարան 150, 155
Ծոփք 18, 20, 22, 24, 28—30, 33, 35, 52—54, 61, 94, 96—98, 103, 107, 119, 137, 138, 144, 167, 193—196, 210
Ծոփաց Զարեհյան թագավորություն 30

Կաբիրա գյուղաքաղաք 60, 82, 84, 94, 162
Կալլիմաքոս 159
Կամախ տես Անի-Կամախ
Կամրեճ 202, 204
Կամբյուզես գետ 204
Կայոս Գրաքխոս, ժողովրդական տրիբուն 16, 17
Կապադովկիա 14, 16—19, 22—25, 28—39, 41, 47, 52—55, 59, 62, 68, 74—77, 93—95, 105, 119, 136, 167, 168, 173, 174, 193, 194, 209, Մեծ Կապադովկիա 30, 60, Պոնտական Կապադովկիա 30
Caspiae 198, 206
Կասպիանե (Κασπιανὴ) 21, Կասպյան յերկիր 21
Կասպիս 206
Կասպից ծով 54
Կասսիոս Դիոն 49, 132, 133, 134, 137, 139, 141, 146, 148, 150, 152, 154, 155, 157, 158, 159, 161, 162, 165, 171, 172, 174—176, 180—182, 186, 188, 190, 191, 194, 195, 198, 200—202, 204, 206—208
Կարենիտիս (Καρηνῖτις) 21, 183
Կարթագեն 156
Կարրիեր Ա. 45
Կարկաթիոկերտ 61
Կարնո գավառ 21
Կարվանսարայի (կամ Կուջաղի) լեռնանցք 158
Կարրա 207, տես նաև Խառան
Կելկիդ (Լիկոս) գետ 82
Կեպիոնոս 121
Կեսար 48
Կերչ քաղաք 209
Կիզիկոս քաղաք 79, 106
Կիլդիզ (*Cyldiza=Cymiza) կայարան 66, 146
Կիլիկիա 14, 18, 33, 52, 62, 76, 78, 93, 105, 111, 133, 134, 137, 163, 165, 168, 171, 174, 177, 193, 194, 210, Դաշտային Կիլիկիա (Cilicia Pedias) 51, 52, 53, 54, Լեռնային Կիլիկիա (Cilicia Tracheia) 51, 54
Կիկերոն 40, 41, 144, 145, 156, 157, 164, 169, 192, 212
Cymiza կայարան տես Կիլդիզ
Կիպերտ Հ. 65
Կիպերտ Ռ. 183
Կիրովական 202
Կլեոպատրա՝ դուստր Միհրդատ Եվպատորի 31, 32, 173, 212
Կլեոպատրա (Սելենե) թագուհի 52, 92
Կղարջք 21
Կյուրոս՝ թագավոր Պարսից 69
Կոզիս՝ Աղվանքի Որոյզես թագավորի յեղբայրը 204
Կողքիս 18, 28, 42, 179, 185, 198, 200, 201, 210, Կոլխիդա 178
Կոմագեն 51, 52, 54, 93, 137, 209
Կոմանա գյուղաքաղաք 60, 82, 162
Կոնդախսազ 200
Կոպ-Դաղ 183, 184
Կովալեվ Ս. Ի. 89

Կոտտա պրոկոնսուլ 77, 78
Կորբուլոն 188
Կորդուք 29, 48, 50, 62, 64, 85, 88, 97, 137, 138, 139, 144, 145, 146, 193, 194, 206—208, 210, 211
Կուջաղի (կամ Կարմանսարայի) լեռնանցք 158, 188
Կուր գետ 21, 24, 54, 198, 200—202, 204
Կվինտուս Մարկիուս Ռեքս տես Մարկիուս Ռեքս
Կրասսոս 154, 212
Կրեսոս («Կրիսոս») թագավոր 45

Հալիս գետ 168
Հայաստան, Հին Հայաստան 7, 8, 10—12, 14, 20—26, 28, 31, 33, 35, 43, 45, 48—51, 53—59, 61—64, 66—68, 72, 74, 75, 81, 82, 84, 87—94, 97, 98, 101, 103, 106—108, 112, 114, 118, 135, 138, 140, 142, 145, 146, 149, 150, 155, 156, 158, 160, 163, 165, 171—173, 175, 178—181, 183, 185—187, 190, 194, 195, 198, 201, 202, 204, 206, 207, 210—215
Հայկական Պար 188, տես Աղրի-Դաղ
Հայկական Տավրոս տես Տավրոս
Հայք 44, 72
Հաննիբալ 208, տես Աննիբալ
Հասանղալա 150
Հարմոզիկա 201, տես նաև Արմաստիկա
Հելլադա 11, տես նաև Ելլադա
Հերակլեա քաղաք 88
Հերակլես 68
Հերակլիդես 8
Հերոդոտ 64
Հեփեստոս 44, 45, 67
Հիդարա 178
Հիպսիկրատիա 178
Հյուբշման Հ. 98, 185
Հնդկական Կովկաս 14
Հնդկական Օվկիանոս 13
Հովհաննես («Յովհաննէս, որդի Շմաւոնի, եղբօր Յուդայ Մակաբէի») 92
Հովնան մարգարե 64
Հովսեպոս Ֆլավիոս 8, 53, 54
Հորացիուս 81
Հուլչ Ֆր. 89, 134, 193
Հունաստան 15, 17, 37, 40, 42, 46, 68
Հռամբայցիք՝ վաչկատուն ցեղ 137
Հռոդոս 41
Հռոմ 8—11, 14—16, 18, 29, 31—35, 37—40, 42—45, 55, 73, 75, 76, 77, 83, 87, 88, 93, 112, 119, 163, 166, 169, 171, 174, 193, 197, 204, 206, 208—211, 213, 214
Հրահատ Գ., թագավոր Պարթևաց 141, 142, 171, 172, 174, 175, 186, 197, 198, 206—208, 211
Հրեաստան 53

Ղանլիճա 200, 202
Ղարայազի դաշտ 204
Ղարաքիլիսե 150
Ղրիմ 202

Ճորոխ գետ 185

Մա աստվածուհի 60
Մագնեսիա 15, 20
Մաժաք քաղաք 52, 59, 74
Մակեդոնիա 15, 41, 45
Մամիկ 105
Մամիկոնյաններ 105
Մանազկերտ 150
Մանանաղի 182, 210
Մանիլիուս՝ ժողովրդական տրիբուն 170, 171
Մանիոս Ակվիլիոս 32, 34, 36, 38
Մանիուս Ակիլիուս Գլաբրիոն 166, 168, 170
Մանլիոս Մալթինոս 32, 34
Մանկայոս՝ զորավար Տիգրան Բ-ի 101, 104, 105, 132, 133
Մասիոս լեռ 65
Մար Աբաս 51, 98
Մարաստան 25, 28, 61, Մարաստան-Ատրպատական 47, 48, Մեծ Մարաստան 54
Մարկիուս Ռեքս 165, 166, 170, 171, 174, 180
Մարկուս Մարիուս 77, 78
Մարմար ծով 79
Մարկվարտ 21, 26, 28, 45, 47, 51, 58, 98, 101, 103, 115, 181—183, 202
Մաքարես՝ որդի Միհրդատ Եվպատորի 80, 91
Մելիտենե 53, 94, 97
Մեծ Կապպադովկիա տես Կապպադովկիա
Մեծ Հայք 20, 21, 22, 25, 28, 61, 179, 183, Մեծ Հայաստան 24, 28, 29, 30, 31, 35, 37, 43, 61, 98, 125, 137, 161, 193, 210
Մեմնոն Հերակլեացի 80, 86, 87, 92, 94, 105—108, 111, 113, 117, 118, 120, 121, 125, 127, 130, 132, 133, 134, 139, 140
Մեյնեքե 179
Մեսաղինա 92
Մետելլուս Կելլեր 200
Մետրոդորոս Սկեփսացի 8, 67, 80, 109, 110, 111, անվանվում է «ատող հռոմայեցիների»՝ Misoromaeus 8, 67
Մերիվել՝ պատմաբան 40
Մերձավոր Արևելք 11, 13
Մեհրուժան, որդի Զարեհի թագավորի 23
Մեհրուժան (Mithrobouzanēs) 101, 102, 103, Mithrobarzanes 101
Մզուր 182, 210
Միգդոնիա 49, 64, 157, 158
Միթրաոս՝ զորավար Տիգրան Բ-ի 33, 34
Միլլեր Կոնրադ 182, 183
Mithrobouzanēs, Mithrobarzanes տես Մեհրուժան
Միհր 67
Միհրդատ Ա., թագավոր Պարթևաց 14
Միհրդատ Բ. Մեծ՝ թագավոր Պարթևաց 26, 47, 142, 211
Միհրդատ Գ., որդի Պարթևաց Հրահատ Գ. թագավորի 211
Միհրդատ Ա., հիմնադիր Պոնտական թագավորության 17, 18
Միհրդատ՝ թագավոր Փոքր Հայքի 20, 24
Միհրդատ թագավոր Ատրպատականի 49, 143, 165, 167
Միհրդատ Եվպատոր կամ Մեծ 8—11, 17, 18, 29—43, 45, 47, 50—52, 54, 59—61, 68, 73—89, 91—94, 104, 106—114, 118, 125, 127, 129, 133—135, 139—143, 146, 148, 149, 152—155, 161, 162, 164—167, 170—185, 187, 198, 200—202, 206—209, 212, 213
Միջագետք 24, 26, 33, 49, 50, 51, 57, 61, 62, 136, 137, 140, 141, 158, 159, 161—163, 167, 172, 197, 206—211, Հյուսիսային Միջագետք 137, 159
Միջերկրական ծով 15, 54, 55, 94, 169
Միջին Ասիա 24, 31
Միսիա 19
Misoromaeus տես Մետրոդորոս Սկեփսացի
Միտրոփանես 171
Մծբին 49, 56, 64, 65, 137, 159, 160, 161, 163
Մշո դաշտ 113, 145, 146, 155
Մոափերնես 61
Մոլտքե՝ ֆելդմարշալ 65
Մոմզեն Թ. 7, 8, 10, 11, 17, 35, 37—39, 41—43, 52, 53, 63, 65, 68, 86, 91, 94, 100, 117, 119, 130, 131, 139, 140, 143—145, 154, 157, 163, 167, 175, 184, 198, 211
Մովսես Խորենացի 25, 27, 44—46, 58, 62, 69, 72, 92, 98
Մորգան Ժ. 7, 11, 35, 184
Մուրենա 73, 103, 116, 118
Մցխեթ 201

Յեգիպտոս 50, 54, 209
Յեկեղյաց գավառ 21, 177, 181, 182, 198, 206, 210

Յեվրոպա 10, 40, 61
Յերվանդ 25
Յեփրատ գետ 14, 33, 49, 50, 53, 85, 94, 95—97, 104, 135, 144, 145, 150, 166—168, 172, 177, 179, 181, 183, 194, 197, 198, 206, 207, 209, 210, 213, 215
«Յուդա Մակաբէ» 92
Յուստինոս 26, 31—34, 36, 39, 41, 49, 50, 52, 68, 211
Յորա գետ 202, 204

Նեմանես կամ Նայմանես 39
Նեոկեսարիա տես Նիկսար
Ներջիկ 104, 113, 146
Նիզե Բ. (Niese B.) 153
Նիկեփորիոս գետ 65, 114, 115
Նիկսար (Նեոկեսարիա) 82
Նիկողայոս Դամասկացի 127, Նիկոլայոս Դամասկացի 191
Նիկոմեդես Բ., թագավոր Բիթանիայի 32, 34
Նիկոմեդես Գ., թագավոր Բիթանիայի 32, 34, 38, 76, 209
Նիկոպոլիս (Νικόπολις, Nicopolis) 177, 178—182, 184
Նինուե 48, 50, 63, 64
Նիչ Գ. (Nitsch G. V.) 119
Նոր ամրոց 206

Շաբիան 98
Շապո Վ. (Victor Chapot) 90
Շենիկ 104
«Շմաւոն, եղբայր Յուդայ Մակաբէի» 92
Շորապան 201
Շպիգել Ֆ. (Spiegel F.) 37

Ոդոմանտիս 20
Ոսրոյեն, Ոսրոյենե 29, 49, 210
Որմուզդ 60
Որոբազոս՝ Միհրդատ Բ-ի դեսպանը 33
Որոյզես՝ թագավոր Աղվանքի 200, 202, 204
Որոնտաս 25
Որոսիուս 130, 176, 180

Չամչյան Մ. 7
Չինաստան 24

Պաղեստին 54, 209
«Պաղեստինացւոց աշխարհ» 92
Պանտիկապեյոն քաղաք 209, 212
Պատրանս ավան (*Patransauna) 155
Պարթենիոս գետ 65
Պարթև Արշակունիներ տես Արշակունիներ
Պարթևական թագավորություն 14, 26, 94, 197, 214
Պարթևստան 14
Պարիադրես 21, 22, 179
Պարիում քաղաք 78, 79
Պարն տես Ապարն
Պարսկաստան 214
Պափլագոնիա 19, 75
Պելորոս գետ 201
Պևտինգերյան քարտեզ 65, 66, 94, 97, 146, 150, 155, 158, 178, 182—184, 187, 188, 198, 200, 202, 206
Պետրոս Մեծ 59
Պերգամոն 15, 24
Պիմոլիս գյուղաքաղաք 60
Պիսիդիա 78
Պլինիոս 49, 57, 58, 65, 67
Պլուտարքոս 9, 23, 28, 33, 35, 49, 58, 63, 67, 72, 79—82, 84, 86—88, 90, 91, 95—98, 100—103, 105, 107—114, 116—118, 120, 121, 126—130, 132—135, 137—140, 146, 148—150, 153—159, 164, 167, 176, 177, 179, 181, 184, 187, 188, 190—192, 194, 196—198, 202, 204, 207, 212, 213
Պյուրկ 177, 180, 182
Պոլիբիոս 20, 21, 24
Պոմպեյոս 12, 57, 72, 157, 164 169—172, 174—182, 184—188, 190—198, 200—202, 204, 206, 207, 209—215
Պոնտական Կապպադովկիա տես Կապպադովկիա

Պոնտական թագավորություն 17, 18, 134, 208, 210,
Պոնտոս 8, 9, 11, 14, 18, 19, 22, 29—31, 37, 38, 54, 59—61, 67, 68, 75, 76, 78—82, 84, 88, 90, 94, 101, 108, 110, 111, 139, 161—164, 166, 168, 171, 175, 183, 186, 187, 206, 209, 210, 213
Պոսիդոնիոս 191
Պտղոմայիդ քաղաք 53, 54, 92
Պտոլեմեոս աշխարհագետ 64, 65
Պտոլեմեոս 50
Պրիապուս քաղաք 78
Պրոպոնտիս 19, 77, 78
Պրոտոպաքիոն 39

Ջեզիրե 159
Ջուլամերկ 159

Ռեյնաք 7, 8, 10, 11, 27, 31, 32, 39, 41, 52, 59, 76, 81, 82, 86, 91, 95, 104, 107, 110, 111, 117, 118, 127, 130, 134, 139, 140, 143, 144, 150, 153, 154, 157, 168, 175, 181, 182, 185, 191, 212
Ռիոն գետ 201
Ռուփուս 139

Սալլուստիուս 53, 81, 92, 94, 95, 117, 119, 126, 129, 141, 150, 157
Սամոսատ 209
Սանատրուկ՝ թագավոր Պարթևաց 141
Սասանյաններ 21
Սատաղ (Satala) 183, 184, 188
Սեբաստոպոլիս 198, 202
Սելլենե (Կլեոպատրա) թագուհի 52, 53, 54, 137
Սելևկիա քաղաք 25, 50, 136
Սելևկիա ամրոց 54, 137, 209
Սելևկյաններ 13, 14, 18, 20, 25, 29, 51, 52, 57, 63, 67, 93, 137, 173, 209
Սելևկյան թագավորություն 14, 20, 24, 61, 72, Սելևկյան պետություն 51, Սելևկյան յերկրներ 26

Սելևկոս Բ. Կալլինիկոս 14
Սեմպրոնիուս 16
Սև ծով 17, 19, 22, 24, 28, 185
Սերտորիուս 73, 75, 77, 78
Սընկառիճ 183
Սղերդ 65
Սեքստիլիուս 102, 103, 105, 106, 142
Συμβάκη տես Աղբակ
Սինոպ 17, 31, 59, 88, 91, 209
Սինորիա ամրոց, Սինարա, Սինորեգա 178—180, 183—185, 206
Սիսիդ 178
Սկավրուս 209
Սոգդիանե 14
Սոկրատես՝ Նիկոմեդես Բ-ի փոքր վորդին 34
Սոլի քաղաք 53
Սորնատիուս՝ տեղակալ Լուկուլլոսի 139
Սուլլա 33, 35, 42, 43, 45, 51, 52, 55, 73, 75, 77, 91, 129, 131, 142, 163, 197
Սուխում 185
Սուրամ 18, 201
Ստրաբոն 20, 21—24, 26—28, 47, 48, 50, 54, 57, 59, 60, 62, 64, 65, 95, 110, 111, 119, 135—137, 141, 174, 176, 178, 181, 183, 185, 186, 195

Վալերիուս Մաքսիմուս 172, 173, 192
Վահագն 68
Վանա լիճ 145, 149
Վայկուն յելուզակ 92
Վայկունիք 92
Վասպուրական 21
Վարդանակերտ 188
Վրաստան 113
Վրկան 14

Տալավրա գյուղաքաղաք 60, 82, 206
Տալավրայի բարձունքները 165, 166
Տակիտոս 53, 64, 65, 136
Տամոնիտիս (Ταμωνῖτις փխ. Ταμωρῖτις) տես Տմորիք
Տայլոր Taylor J. 182
Տայք 21

Տավրիկյան Խերսոնես 18
Տավրոս 97, 103, 148, 157, 158, 168, Հայկական Տավրոս 98, Տավրոսյան լեռներ 104, 118, 137, 145, 146, 159
Տարոն 104
Տաքսիլես 113, 121
Տեվկրոս 8
Տիանա քաղաք 8
Տիբիոս 61
Տիգրան՝ հայր Տիգրան Բ-ի 27
Տիգրան Բ. կամ Մեծ 7--11, 13, 20, 25—37, 39, 43, 47—59, 61—63, 66—69, 72, 75, 80—88, 90—94, 96—98, 100—118, 120, 121, 123, 125, 127—132, 134—144, 146, 148—150, 152, 153—155, 157, 159, 161, 164—167, 170, 172—174, 178—181, 183—188, 190—198, 206—208, 210—213
Տիգրան Կրտսեր՝ որդի Տիգրան Բ-ի 172, 174, 175, 186, 187, 188, 193, 195—198, 200, 212
Տիգրանակերտ 10, 28, 53, 56, 59, 62—67, 72, 93, 96, 98, 100—107, 112—121, 125—127, 129, 131—137, 140, 143, 145, 153, 159, 163
Տիգրանուհի՝ քույր Տիգրան Բ-ի 72
Տիգրիս գետ 65, 96—98, 100, 137, 161, 213, 215
Տիգրոն 136, 139, 142, 171, 172, 174
Տիմարքոս 25
Տիտոս Լիվիոս 16, 117, 126, 127, 130, 152, 157, 191
Տիր 68
Տիրան 27
Տմորիք (Ταμωρῖτις=Ταμωνῖτις) 21
Տոմիսա ամրոց 94, 95, 119, 210
Տուրնեբիզ Ֆ. 7, 184
Տրապիզոն 17, 22, 59, 210
Տրդատ (Արշակ Բ.)՝ Թագավոր Պարթևաց 14
Տրիարիուս 162, 164—166
Տրոքմերի յերկիր 167, 174, 175

Փարիուս Հադրիանուս 163
Փայտակարան 21
Փառնակ Պոնտացի 20, 24, 208, 209
Փառնակիա 22, 210
Փասիս 185
Փաւնիտիս 21
Փավստոս 58, 62, 64, 65
Փլեգոն Տրալլացի 117, 118, 130, 143, 153
Փյունիկիա, Փյունիկե 50, 52—54 85, 194, 209
Փոթի 185, 202
Փոքր Ասիա 15, 16—20, 39—44, 52, 54, 68, 76—78, 90, 91, 111, 112, 169
Փոքր Հայք 17, 18, 20—22, 24, 29, 30, 39, 41, 74, 84, 161, 162, 165—167, 176, 178—181, 204, 206, 210
Փռյուգիա 19, 77
Փրոնտինուս 117, 118, 120, 121, 125, 127, 130

Քաղկեդոն քաղաք 77, 78, 110
Քերոնեա 129
Քեփրիքեյ 187, 188
Քիոս կղզի 42
Քորձենե (Χορζηνὴ) 21, 185
Χολαρζηνὴ փխ. Χορζηνὴ=Կղարջք 21
Քսենոփոն 146, 150, 167
Քսերքսենե (Ξερξηνὴ) 21
Քսիլանդեր 179

Ֆարկին 28, 65, 66, 68, 70, 71, 100, 104, 114, 115
Ֆարկին-սու 113—115
Ֆեռեռո 7, 9, 11, 76, 90, 117, 139, 153, 157, 175

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

	Նախ քան մեր թվ.
Անտիոքոս Մեծի պարտությունը Մագնեսիայի ճակատամարտում	190
Արտաշեսը և Զարեհը իրենց հայտարարում են անկախ թագավորներ Մեծ Հայքի ու Ծոփքի	189
Արտաշես Ա-ի մասնակցությունը Փոքր Ասիայի հինգ թագավորների խաղաղության դաշինքին	180
Արտաշատ քաղաքի հիմնումը	166
Սելևկյան Անտիոքոս Դ-ի արշավանքը Հայաստան	165 (?)
Տիգրան Բ-ի ծնունդը	142/141
Տիգրան Բ-ի գահակալությունը	95
Տիգրան Բ-ի դաշինքը Միհրդատ Եվպատորի հետ	95/94
Ծոփքի միացումը Մեծ Հայաստանին	94
Տիգրան Բ-ի առաջին արշավանքը Կապադովկիա	93
Կիլիկիայի փոխպրետոր Սուլլան վերագրավում է Կապադովկիան	92
Միթրաաս և Բագոաս զորավարների նոր հարձակումը Կապադովկիայի վրա	91
Տիգրան Բ-ի հաղթական կռիվներն ընդդեմ պարթև Արշակունիների և նրանց արևելյան յերկրների նվաճումը	89—85
Հռոմեական-պոնտական առաջին պատերազմը	88—84
Դարդանոսի բանավոր դաշնագրությունը	84
Տիգրան Բ-ը նվաճում է Ասորիքը և Դաշտային Կիլիկիան	84/83
Հռոմեական-պոնտական յերրորդ պատերազմը	73—71
Մետրոդորոս Սկեփսացին ուղարկվում է Հայաստան իբրև դեսպան	71 (ամառը)
Միհրդատ Եվպատորի պարտությունը և փախուստը Հայաստան	71 (աշնանը)
Դեսպան Ապպիոս Կլավդիոսը պահանջում է, որ Միհրդատը հանձնվի Լուկուլլոսին	71 թվի վերջերին
Լուկուլլոսի վերադարձը պրովինցիա Ասիա և պատերազմի ավարտման հանդիսությունները	70
Լուկուլլոսի գաղտագողի ու անսպասելի արշավանքը Հայաստան	69 (գարնանը)
Մեհրուժանի և հայկական փոքրաթիվ հեծելազորի գրոհը թշնամու վրա	» »
Տիգրանակերտի պաշարումը	» »

Հայկական հեծելազորի գիշերային մուտքը Տիգրանակերտ և Տիգրանի կանանոցի ազատումը	69 (գարնանը)
Տիգրան Բ-ի տեսակցությունը և խորհրդակցությունը Միհրդատի հետ	69 (ամառը)
Ճակատամարտը Տիգրանակերտի մոտ	69 (հոկտ. 6-ին)
Հռոմեական-հայկական կռիվներն Արածանիի հովիտներում	68 (ամառը)
Արածանիի ճակատամարտը	68 (սեպտեմբերին)
Լուկուլլոսը պաշարում և գրավում է Մծբինը	68 թվի վերջերին
Հռոմեական զորքի (Տրիարիուսի հրամանատարությամբ) ծանր պարտությունը Պոնտոսում	67 (գարնանը)
Հռոմեական զորքերի բարոյալքումը և Լուկուլլոսի նահանջը դեպի Գալատիա	67 (ամառը)
Պոմպեյոսի արշավանքը Միհրդատի դեմ	66 (գարնանը)
Կրտսեր Տիգրանի ապստամբությունը հոր դեմ	» »
Միհրդատի նահանջը Դաստեյրայից և պարտությունը Լիկոս գետի մոտ	66 (աշնանը)
Պոմպեյոսի արշավանքը Հայաստան և հաշտությունը Տիգրանի հետ	» »
Իբերների ու աղվանների հանկարծակի հարձակումը Պոմպեյոսի ձմեռող զորամասերի վրա	66 (17—24 դեկտ.)
Պոմպեյոսի արշավանքն Իբերիա	65 (գարնանը)
Պոմպեյոսի արշավանքն Աղվանք	65 (ամառը)
Պոմպեյոսի վերադարձը Փոքր Հայք	64 (գարնանը)
Տիգրան Բ-ի մահը	56/55

ПРЕДИСЛОВИЕ К ИССЛЕДОВАНИЮ „ТИГРАН ВТОРОЙ И РИМ“

История древней Армении в эпоху Тиграна Второго изложена, крайне сжато и мимоходом, в трудах, главным образом, европейских ученых, имевших целью изучение не специально истории Армении, а истории Рима и Понтийского царства. Из этих трудов наиболее важными являются работы трех крупнейших историков[1]—Моммсена, Рейнака и Ферреро. Имеется, кроме того, подробное исследование о походах Лукулла в Армении молодого германского ученого, ученика К. Леманна-Гаупта, Курта Экградта, которое напечатано в германском журнале „Клио“ (т. IX, 1909 г. и т. X, 1910 г.).

Почти во всех исторических и филологических работах самих армян, как и в трудах, посвященных истории древней Армении, на русском и французском языках—Халатьянца, Геворка Арслана, Доленс-Хача, Турнебиза, Ж. Моргана и др.—изложение событий эпохи Тиграна взято почти без изменений из вышеозначенных трудов Моммсена или же Рейнака. Исключение составляют, преимущественно, армянские историки Чамчян и Асдурян, которыми использованы также греческие и латинские первоисточники и попутно указаны их недостатки и недостоверность.

Как совершенно правильно отмечают сами европейские ученые, сообщения основных первоисточников, написанных спустя почти целое столетие или же несколько веков после событий эпохи Тиграна и Митридата, сомни-

[1] Моммсен, Римская история, т. II и III, Москва 1887 г., Th. Reinach, Mithridate Eupator roi de Pont, Paris 1890. Ферреро, Величие и падение Рима, т. I, Москва 1915.

тельны часто и ненадежны, так как исторические происшествия описаны в них пристрастно и в пользу римлян. И, действительно, Рим, как известно, с большим мастерством умел насаждать у себя тенденциозную историографию, которая, вопреки исторической правде, услужливо преувеличивала и особо отмечала военные успехи республики и обходила молчанием исторические факты, невыгодные для нее. В этом отношении показательно и крайне любопытно признание Цицерона в его „Речи за Манилиев закон". „Позвольте мне тут, Квириты,—говорит Цицерон в этой речи,—последовать примеру наших поэтов-летописцев и умолчать о нашем поражении"[1].

Тенденциозность римских источников отмечена, как известно, еще в первом веке нашей эры, еврейским историком Иосифом Флавием. В своей книге „О войне иудейской" он указывает, что даже у римских писателей очевидцев сильно искажены подлинные исторические факты и даны, в угоду римлянам, или хвалебные тенденциозные описания или же клеветнические измышления об их врагах.

Следует отметить, что не только Рим, но и Армения и Понт, имели в эту эпоху свою собственную историографию. Плутарх (Lucull. 22,3—6), Страбон (XIII, I, 55) и др. упоминают, например, исторический труд о Тигране Великом, написанный Метродором Скепсийским, прозванным „ненавистником римлян" (Misoromeos), которого они считают талантливым и блестящим писателем. Имеются также сведения об утраченных исторических трудах Гераклида, Тевкра, Аполлонида, Диофанта и др., сторонников Митридата Понтийского. Однако, после завоевания римлянами Понта и подчинения Армении римскому влиянию сохранились, к сожалению, лишь те исторические произведения, авторы которых были приверженцами или же явными панегиристами империалистического Рима. История эпохи Тиграна Второго могла бы, несомненно, предстать пред нами в совершенно новом свете, если бы сохранились также и произведения вышеуказанных историков Митридата и Тиграна.

[1] См. Полное собрание речей Цицерона в русском переводе, под редакцией Ф. Зелинского, т. I, С.-Петербург 1901, стр. 511.

Несмотря на вышеотмеченные недостатки сохранившихся источников, исторические концепции и обобщения Моммсена, Рейнака и других ученых основаны, как подробно указано в моем исследовании, почти исключительно, на этих именно ненадежных источниках, сообщения которых использованы ими без предварительного и тщательного критического разбора. Безоговорочно использованы ими сомнительные и недостоверные свидетельства даже Плутарховых биографий, в которых дано не правдивое отображение событий Тиграновой эпохи, а тенденциозная и злостная каррикатура Тиграна Второго и феодального строя его государства. Европейские ученые, к сожалению, упустили из виду, что использованные ими сообщения римских авторов опровергаются очень часто при помощи свидетельств нейтральных эллинистических источников, в которых имеются объективные и правдивые сведения об этой же эпохе.

В данной работе мы опираемся на сравнительное и критическое изучение всех вышеуказанных источников и, как нам кажется, посредством тщательного подбора их, представляется возможным дать историю Армении в эпоху Тиграна Второго в новом освещении и более подробно и основательно, чем это было сделано в предыдущих исследованиях.

Освещение, данное европейскими учеными историческим событиям эпохи Тиграна, имеет и другой существенный дефект. Вышеуказанные историки не только безоговорочно пользовались тенденциозными и ненадежными сведениями римских источников, но они и сами относились враждебно к Востоку и к восточным народам. Одновременно они симпатизировали, соответственно своим политическим склонностям, тем или другим историческим лицам римской рабовладельческой республики и явно идеализировали их. Итальянский, например, ученый Ферреро, считающийся одним из крупных буржуазных историков,

называет Лукулла, который был грабителем и могильщиком богатых и пышных городов и эллинистической культуры Понта, защитником и покровителем эллинизма. „Повсюду он (Лукулл),—говорит Ферреро,—разграблял великие сокровища, наслаждался ролью великого покровителя эллинизма, по своему высказывая капризные выходки великодушия, беспримерного в военной истории Рима“[1]. Моммсен и Рейнак не только не обратили внимания на культурную и прогрессивную деятельность Тиграна в Армении, но они даже основание им эллинистического города Тигранокерта, который должен был стать центром и опорой эллинизации и развития культуры в его отсталой стране, склонны были приписать деспотической прихоти и кичливой надменности Тиграна. В „Римской истории“ Моммсена ясно заметно, кроме того, его явно неприязненное отношение к Востоку и народам Азии. Он особо подчеркивает, например, что на Востоке „подданный верен как собака, и фальшив, как собака“[2]. По его мнению, азиатцам свойственна „готовность принимать на себя в угодливость султану роль палача“[3]. Такое произвольное и необоснованное принижение „подданных“ феодального Востока и, наоборот, явная идеализация Лукулла и Помпея, а также и республиканского рабовладельческого Рима, являясь антинаучной тенденцией, мешали, конечно, выяснению в работах Моммсена, Рейнака и Ферреро действительной и неприкрашенной истории Рима и Востока в эпоху Тиграна Второго.

Нам кажется, кроме того, что следует решительнейшим образом отвергнуть господствующее в европейской историографии мнение, будто бы понтийско-римские и армяно-римские войны имели характер крайне ожесточенной обще-национальной и священно-религиозной борьбы Востока с Западом[1]. Моммсен находит даже возможным утверждать, что эти войны „были началом восстания против римлян, вызванного совершенно иными и гораздо более глубокими причинами несочувствия,—они были началом реакции азиатцев против западных народов“[2]. Точно также указывает и Рейнак, что эти войны были проявлением „старого антагонизма Азии и Европы“[3]. На самом же деле эти войны, предпринятые рабовладельческим республиканским Римом с целью ограбления и финансовой эксплоатации восточных стран, велись не против „варварского“ Востока, а против двух прогрессивных монархов, которые всячески стремились преобразовать свои государства путем широкого насаждения в них городов греческого типа и эллинистической культуры, а также и развития торговли, ремесл и промышленности. Об этой преобразовательной деятельности Митридата и Тиграна следует, как нам кажется, признать правильным мнение французского ученого Моргана. „Сокрушив Митридата и Тиграна,—говорит Морган,—римляне клали конец македонской культуре в Азии, в которой из всех прежних государств, возникших после завоевания Александра Великого, оставались лишь обломки и только царьки, неспособные поддержать былую славу эллинов. Два великих царя Понта и Армении были последними монархами, которые были способны возродить в своих государствах передовую цивилизацию Эллады“[4].

Из сказанного видно, что главная ответственность за позднейший культурный регресс Ближнего Востока всецело ложится на Рим. Империалистическая республика не только разграбила и опустошила ближневосточные страны во время завоевательных походов, но она продолжала разорять их и после подчинения римской власти путем жесточайшей финансовой и ростовщической эксплоатации.

[1] См. „Величие и падение Рима“, т. I, перевод А. Захарова, Москва 1915. стр. 184.

[2] „Римская история“, т. II, перевод В. Н. Неведомского, Москва 1887, стр. 271.

[3] Ibidem, стр. 290.

[1] См. Моммсен, Римская история, т. III, Москва 1887, стр. 59—60 и Reinach, Mithridate Eupator, стр. 365.

[2] Ibidem, т. II, перевод Неведомского, Москва 1887, стр. 273.

[3] Mithridate Eupator, стр. XI.

[4] См. Jackues de Morgan, Histoire de peuple arménien, Paris 1919, стр. 80.

Как известно, беспрерывным потоком направлялись в Италию и Рим расхищенные богатства и сокровища Востока и уводилось в рабство его сельское, рабочее и ремесленное население. Нетрудно поэтому заключить, что причиной ненависти и антагонизма, как и глубокого разрыва, существовавшего в последующие века между Востоком и Западом, был, главным образом, рабовладельческий и ростовщический Рим.

В заключение мы считаем нужным отметить также, что в отличие от работ Моммсена, Рейнака, Ферреро и др., в которых история Тигранидской Армении изложена бегло и сжато, в зависимости и связи с историей Рима или же Понта, в нашем исследовании она впервые подробно изучена в рамках истории самой Армении, с которой названные ученые не были обстоятельно знакомы.

Не считаем излишним также указать, что при помощи выводов недавно изданного историко-географического моего исследования, в котором точно определены направления древних магистральных путей Армении и установлены названия и местоположения большинства станционных пунктов мировой римской карты Tabula Peutingeriana, в настоящей нашей работе выяснены впервые также невыясненые маршруты римских войск в Армении и Закавказье и приведены семь маршрутных карт, иллюстрирующих военные походы Лукулла и Помпея.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Առաջաբան	7—12
2. Առաջավոր Ասիայի քաղաքական ու տնտեսական դրությունը Տիգրան Բ-ից առաջ	13—19
3. Արտաշեսյան հարստությունը և Տիգրան Բ-ը	20—29
4. Հայ-պոնտական դաշինքը և Տիգրան Բ-ի արշավանքը Կապադովկիա	30-36
5. Միհրդատյան առաջին պատերազմը (88—84 թ.)	37—46
6. Տիգրան Բ-ի նվաճումները	47—55
7. Հելլենիզմի զարգացումը Հայաստանում և Տիգրանակերտ քաղաքի հիմնումը	56—72
8. Միհրդատյան երրորդ պատերազմը և Միհրդատի փախուստը Հայաստան	73—83
9. Լուկուլլոսը պահանջում է հանձնել իրեն Միհրդատին և նախապատրաստվում է պատերազմի	84—92
10. Լուկուլլոսի հանկարծակի հարձակումը և առաջին ընդհարումը հայերի հետ	93—103
11. Տիգրանակերտի պաշարումը և Տիգրանի տեսակցությունը Միհրդատի հետ	104—112
12. Մեծ ճակատամարտը Տիգրանակերտի մոտ	113—131
13. Տիգրանակերտի առումը և Տիգրանի աշխարհակալ մեծ պետության քայքայումը	132—139
14. 68 թվի կռիվները Հայաստանում և Միջագետքում	140—160
15. Տիգրանի և Միհրդատի հաղթական առաջխաղացումը և Լուկուլլոսի նահանջը	161—170
16. Պոմպեյոսի արշավանքը Պոնտոս և Միհրդատի պարտությունը	171—185
17. Տիգրանի հաշտությունը Պոմպեյոսի հետ	186—200
18. Հայաստանը և մյուս հարևան երկրները Պոմպեյոսի արշավանքից հետո	201—213 201—213
19. Վերջաբան	213—215

ՑԱՆԿ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ

Աղբյուրների համառոտ տեսություն	219—222
Ցանկ աղբյուրների	223—226
Ցանկ գրականության	227—230
Ցանկ հատուկ անունների	231—240

	Էջ
Ժամանակագրական աղյուսակ	241—242
Предисловие к исследованию „Тигран второй и Рим" . .	243—248

ՆԿԱՐՆԵՐ ՅԵՎ ՔԱՐՏԵԶՆԵՐ

Ֆարկին-Տիգրանակերտ քաղաքը	66
Ֆարկին—հյուսիսային պարիսպի ավերակները	68
Ֆարկին—արևելյան պարիսպի ավերակները	70
Արշակունի հայ թագավորի հունարեն արձանագրությունը (Ֆարկինի հյուսիսային պարիսպի վրա)	71
Լուկուլլոսի ճանապարհը Ծոփքի վրայով դեպի Տիգրանակերտ .	99
Տիգրանակերտի ճակատամարտն ըստ Պլուտարքոսի և Էքհարդի .	123
Տիգրանակերտի ճակատամարտն ըստ Ապպիանոսի . . .	125
Լուկուլլոսի ճանապարհը Կորդուքից Մշո դաշտ	147
Լուկուլլոսի ճանապարհը դեպի Արտաշատ	151
Պոմպեյոսի ճանապարհը Փոքր Հայքից դեպի Արտաշատ , .	189
Պոմպեյոսի ճանապարհը Արտաշատից Իբերիա և այնտեղից Սեբաստոպոլիս-Ֆազիս	199
Պոմպեյոսի ճանապարհը Սեբաստոպոլսից Ազվանք . . .	203
Պոմպեյոսի ճանապարհն Ազվանքից Փոքր Հայք	205

ՀՍՍՀ-ССРА им. А. Мясникяна

Տեխ. խմբագիր և սրբագրիչ՝ Վ. Մանուկյան

Հանձնված է արտադրության 2 նոյեմբերի 1939 թ., ստորագրված է տպագրության 9 հունվարի 1940 թ., գլավլիտի լիազոր Ե. 1075, հրատ. № 51, պատվեր № 72, տիրաժ 3000, տպագրական 16 մամուլ, 1 մամուլում 38,400 տպագրական նիշ։

Արմֆանի տպարան, Երևան, Լենինի փ. № 67,

76

9(47.9

ՀՀ Ազգային գրադարան
NL0410082

12.191